



ԵՈ

ՂԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐՑԻ
ՎԱԿՆԵՐԱԳՐԵՐԸ



Լ Ե Ռ

Հայկական հարցի վավերագրերը

(վերահրատարակություն)

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2014

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Լ 380

Հրատարակվել է պետական պատվերով
Издано по государственному заказу

Լ 380 Լեռ

Հայկական հարցի վավերագրերը (վերահրատարակություն):
Կազմող՝ Է. Մինասյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2014, 272 էջ:

Գրքում ներկայացված են Հայկական հարցի վավերագրերը Լեռյի ուսումնասիրությամբ: Վերատպվում է 1915 թ. հրատարակությունից: Նախատեսված է պատմաբանների և առհասարակ Հայկական հարցով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-5-8084-1894-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2014

© Կազմողի համար, 2014

Լեոյի «Հայոց հարցի վավերագրերը» աշխատությունը

Լինելով հայագիտության խոշոր դեմքերից մեկը՝ Լեոն ավելի քան կես դար բեղմնավոր գործունեություն է ծավալել հայոց գրական, մշակութային կյանքի տարբեր ոլորտներում՝ հանդես գալով որպես գրող, գրականագետ, հրապարակախոս ու պատմաբան: Լեոյի պատմագիտական ու գրական ծավալուն ժառանգության մեջ (բազմաթիվ մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ և այլն) նշանակալի տեղ են գրավում հայկական հարցին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությանը նվիրված աշխատությունները: Այդ աշխատությունները ընթերցելիս մեր աչքի առջև հառնում է ոչ միայն մեծ հայագետ գիտնականը, այլև պատմաբան մտավորականը իր պայծառ մտածողությամբ, նյութերի խորն ու համակողմանի վերլուծությամբ, կուռ տրամաբանությամբ, սեփական դատողություն անելու անվիճելի կարողությամբ, հոգեկան թռիչքով ու արևելահայ լեզվի աննման հմայքին տիրապետելու օժտվածությամբ, վարպետորեն, հյութեղ ու մատչելի շարադրելու կարողությամբ: Տաղանդավոր պատմաբանը դեռևս 1980-ական թթ. առաջ քաշեց այն նշանաբանը, որ «պատմաբանը պետք է ճանաչի իր ժողովրդի ոգին, նրա կյանքի հոսքը և կեցության կերպը»¹:

Առաջնորդվելով այդ սկզբունքով 1895-1906 թթ. «Մշակ» թերթում տպագրված որոշ հոդվածներում և 1906 թ. գրած «Հայոց հարցը» աշխատության մեջ Լեոն քննել է ոչ միայն Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության հանգուցային խնդիրները, արևմտահայերի ծանր վիճակի, նրանց ճակատագրի հետ կապված իրադարձությունների ամբողջ ընթացքը, այլև Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարը: Այս նույն հիմնախնդիրները ավելի խորությամբ Լեոն ներկայացրեց 1915 թ. հրատարակած «Հայոց հարցի վավերագրերը» արժեքավոր աշխատությունում, որն ընդգրկում է 1878-1914 թթ. պատմական իրադարձությունները: Նախա-բանում հիմնավորում է աշխատությունը գրելու շարժառիթը՝ նշելով, որ «Ներկա եվրոպական ահեղ պատերազմը, շնորհիվ այն հանգամանքի,

¹ «Փորձ», 1983, N19, էջ 118:

որ նրա մեջ մասնակցում է Թուրքիան իբրև Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի թշնամի, օրվա հրատապ հարց է դարձել Թուրքահայաստանի բախտը: Նորից այդ բազմաչարչար երկիրը միացրել է աշխարհի բոլոր կողմերում ցրված հայությունը, որը անհամբեր սպասում է, թե այսօր-վաղը ինչ լուծում կստանա հայոց արյունոտ հարցը»:² Հեղինակը անցյալի պատմության միջոցով փորձում է իր ժողովրդին խորհելու նյութ տալ, որպեսզի նա պատմական այդ տազնապալի օրերին կարողանա ճիշտ ըմբռնել թուրքահայ դատը և հնարավոր այն ուղիները, որոնցով պիտի ընթանա հայոց հարցի լուծումը³: Այստեղ չի տրվում Հայոց հարցի ամբողջական պատմությունը, այլ, ինչպես ինքն է նշում, դրվում է ավելի համեստ խնդիր «մեկ տեղ հավաքելու թուրքահայոց հարցին վերաբերող դիվանագիտական վավերագրերը, որոնք շատ կարևոր են այդ միջազգային հարցը ուսումնասիրելու համար»⁴:

Լեոն Հայկական հարցի վերաբերյալ վավերագրերը ամփոփել է Ներածություն և Հավելված բաժիններում:

Առաջին բաժնի մեջ ցույց է տվել, թե մինչև 19-րդ դարը ինչ դրության մեջ է եղել առհասարակ Հայկական հարցը և թե հայ գործիչները ինչ հայացքներ են ունեցել Հայկական հարցի լուծման ուղիների և հայրենիքի «քաղաքական կազմակերպման»⁵ վերաբերյալ: Այստեղ նշանավոր պատմաբանը ներկայացրել է պատմական հնարավորինս ամփոփ վավերագրերը: Երկրորդ բաժնում ամփոփ տեղեկություններ է հաղորդում, թե ինչպես և ինչ սկզբունքներով են լուծվել Թուրքիայի հպատակ մյուս ազգությունների հարցերը: Այստեղ «Ուրիշ ազգությունների օրինակները» վերնագրի տակ առանձնացրել է ինքնուրույնություն ստացած երկրները՝ Եգիպտոսը, Մոլդովիան և Վալախիան, Սերբիան, Սամոս կղզին ու Բուլղարիան, իսկ ավտոնոմ (ինքնավար) նահանգների տակ թվարկել է Լիբանանը, Կրետեն, Արևելյան Ռումելիան, Բուլղարիան և Բոսնիան ու Հերցեգովինան⁶: Նա ընդ-

² Լեո, Հայկական հարցի վավերագրերը (վերահրատարակություն), Երևան, 2014, էջ 5:

³ Տես նույն տեղում:

⁴ Տես նույն տեղում:

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես նույն տեղում, էջ 261:

գծում է այն միտքը, որ «Եվրոպական դիվանագիտությունն աշխատել է թուրքահպատակ ազգերի վիճակը բարելավել բարենորոգումների (ռեֆորմների) միջոցով»⁷: Այստեղ զետեղել է այդ բարենորոգումների համառոտ բովանդակությունը: Դրանով պարզորոշ երևում է, թե ընդհանրապես ազատագրական ինչ ձևեր ու ուղիներ է մշակել եվրոպական դիվանագիտական միտքը մոտ մեկ դարաշրջանի ընթացքում Թուրքիայում ապրող ազգերի ճակատագիրը արդարացիորեն լուծելու համար:

Հեղինակը ցավով արձանագրում է, որ հակառակ իր ցանկության չի կարողացել Հայոց հարցին վերաբերող բոլոր վավերագրերը ներառել այս ժողովածուի մեջ: Ներածության առաջին մասում Լեոն զարգացնում է այն տեսակետը, թե Հայկական հարցը հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է, որը նույնքան հին է, որքան հայ ժողովուրդը, Քրիստոսից 6 դար առաջ դուրս եկավ խավարի անհայտությունից պատմության լուսավոր ասպարեզ⁸: Հայոց հարցի պատմությունը պատմաբանը համարում է հայ ազգի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, որը 25 դարերի ընթացքում ենթարկվել է մեծ կերպարանափոխությունների, ունեցել մի քանի մեծ շրջաններ:

Այն շրջանը, որի մեջ գտնվում է Հայկական հարցը իր ապրած ժամանակահատվածում հեղինակը, անվանում է Միջինասիական: 11-րդ դարը համաշխարհային պատմության մեջ առանձնացվում է երկու մեծ շարժումներով՝ Արևելքից դեպի Արևմուտք սելջուկ-թուրքերի ներխուժումով, որոնք նվաճեցին Պարսկաստանը, Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը և այլն: Մահմեդական այս հզոր առաջխաղացման ընթացքում խորտակվեցին հայկական անկախությունները Վասպուրականում, Շիրակում ու Վանանդում⁹: Այս շարժումից դրդված՝ ոտքի է կանգնում Արևմտյան Եվրոպան որպես քրիստոնյա աշխարհ և շարժվում է դեպի Արևելք՝ կազմակերպելով խաչակրած արշավանքներ՝ Քրիստոսի գերեզմանն ազատագրելու նպատակով: Այս պայմաններում ահա հայերի մեջ նորից վերակենդանանում է հին հույսը քրիստոնյա Արևմուտքի հզոր աջակցությամբ ազատագրվելու օտար լծից:

⁷ Տես նույն տեղում, էջ 6:

⁸ Տես նույն տեղում, էջ 9:

⁹ Տես նույն տեղում:

Այստեղ Լեոն մեջ է բերում հայ ազատագրական լեգենդը, հիշատակարան, որը վերագրում է Մեսրոպ երեցին: Նա ապրում էր տասներորդ դարում, երբ դեռ կանգուն էր Բագրատունյաց թագավորությունը: Այդ երկասիրությունը վերաբերում է IV դարի հռչակավոր հոգևորական, հայոց կաթողիկոս Ներսես Ա Մեծին (353-373), որն իր մահվան մահճում գուշակել էր ոչ միայն հայկական պետականության կործանումը, այլև Հայաստանում օտարների դաժան տիրապետության հաստատումը և հայերի արտագաղթը, աշխարհով մեկ ցրվելը: Տեսիլի համաձայն Հայաստանը կարող էր ազատագրվել միայն երկար տարիներ անց, բայց առանց քրիստոնյա հզոր պետության օգնության, սեփական ուժերով դա հնարավոր չէր: «Արևմուտքից պիտի գան քաջարի հռովմայեցիները կամ ֆրանկները, որոնք, պիտի ազատեն Երուսաղեմն ու վերականգնեն հայկական անկախությունը,- գրում է Լեոն,- ապա ավելացնում, որ հայ ժողովուրդը սխալված չէր իր ակնկալության մեջ, քանզի Խաչակիրների օգնությամբ հայերը վերականգնեցին իրենց կորցրած անկախությունը, եթե ոչ բուն Հայաստանում, գոնե Կիլիկիայում, Միջերկրական ծովի ափին»¹⁰: Այդ անկախությունն էլ, սակայն վերջ ի վերջո խորտակվեց մահմեդականության և քրիստոնեության բախումների ժամանակ: Իսկ բուն Հայաստանը, որը ենթարկված էր նվաճողների կամքին, դժբախտություն ունեցավ կրել մոնղոլների, Լենկ Թեմուրի և ուրիշ թուրքմեն ոչ պակաս անգութ նվաճողների լուծը, որոնք ոչնչացրին հայ ազգի մեծ մասը: Բայց ամենից ահավորը, որ ցնցեց քրիստոնյա Արևելքն ու Արևմուտք այն էր, որ տեղի ունեցավ 1453 թվականին, երբ Կ.Պոլիսն ընկավ օսմանյան թուրքերի ձեռքը: Այդ ժամանակվանից հայ ազգին և նրա հետ Ասիայում տանջվող քրիստոնյա ազգերին բախտակից են դառնում նաև Բալկանյան թերակղզում ապրող քրիստոնյաները՝ հույները, սերբերը, բուլղարները և այլ սլավոնական ցեղեր»¹¹:

Ազատագրական առաքելությունը հերթականությամբ վերապահվում էր մերթ շուրջ պապին ու Վենետիկին դոժին, մերթ շուրջ Բուրբոններին, Հաբսբուրգներին ու գերմանական տարբեր մեծ իշխաններին և ի վերջո ռուսաց ցարին:

¹⁰ Տես նույն տեղում, էջ 10:

¹¹ Տես նույն տեղում, էջ 10,11:

Ըստ Լեոյի՝ քրիստոնյա ազգերի ջանքերը մահմեդական լծից ազատվելու համար ունեն գործողությունների նույն եղանակը, ռազմավարությունն ու մարտավարությունը: Ինչպես Բալկանյան թերակղզում, այնպես էլ Հունաստանում և Հայաստանում դիմում են Եվրոպայի օգնությանը թուրքական լծից ազատվելու համար¹²: 17-րդ դարի երկրորդ կեսին, երբ թվում էր, թե պետք է իրականանա ֆրանկների ազատագրական արշավանքը, որ ծրագրել էր Ֆրանսիայի Լյուդովիկոս 14-րդ թագավորը Թուրքիայի դեմ, տեղի չունեցավ, բայց Լեոյի խոսքերով՝ «Ֆրանսիական այդ ազատարար ծրագրից ծնունդ առավ այն մեծ շարժումը, որի ակունքներում կանգնած էին Հակոբ կաթողիկոսն ու Իսրայել Օրին»¹³: Սկզբում Հայաստանից պատգամավորություն է գնում Եվրոպա՝ խնդրելու, որ քրիստոնեության անունով ազատագրվի հայությունը: Երբ դա չի հաջողվում, Իսրայել Օրին Հայաստան է վերադառնում՝ բերելով իր հետ մի ծրագիր, որ նման էր Բալկանյան ազգերի ծրագրին. «Առաջին անգամ է, որ մեր աջքի առջև հանդես է գալիս գրավոր փաստերով հարուստ, պարզ ու լայն գծադրված մի քաղաքական ծրագիր,- գրում է նշանավոր պատմաբանը, որը հայ ժողովրդի կողմից առաջարկվում էր իբրև իր հայրենի երկրի ճակատագիրը տնօրինելու մի տենչանք»¹⁴: Լեոն կարևորելով Օրու Հայաստանի ազատագրման ծրագիրը՝ ընդգծում է այդ փաստաթղթի հիմքը կազմող «հայ ժողովրդի նվիրական ցանկությունը՝ սկզբում արևմտյան քրիստոնեական երկրի, ապա Ռուսաստանի օգնությամբ և նրա միջոցով Հայաստանի անկախության վերականգնումը»¹⁵: Օրու ծրագիրը վերաբերում էր միայն Արևելյան Հայաստանին, որը գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ: «Հայոց հարցի այս մասնակի լուծումը պետք է ընդունել իբրև միակ հնարավորը այն ժամանակվա պայմանների մեջ,- գրում է Լեոն և ապա շարունակում՝ ասելով, որ Օրիի այս ծրագիրը օղային չէր: Պետրոս Մեծը ընդունեց այդ պայմանները իրագործեց ծրագրի ամենադժվարին մասը՝ ամենակարճ միջոցում էլ հայ զինվորական

¹² Տես նույն տեղում, էջ 11:

¹³ Տես նույն տեղում, էջ 12:

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես նույն տեղում:

գնդեր կազմակերպվեցին Ղարաբաղի լեռնաշխարհում: Թեև Պետրոս մեծը չկատարեց իր տված խոստումը և նույնիսկ դաշինք կնքեց թուրքերի հետ ի վնաս Վրաստանի ու Հայաստանի, բայց կազմակերպեց զինվորական գնդեր, ինչը նախատեսում էր Օրիի ծրագիրը: Դավիթ Բեկը Սյունիքում կատարյալ անկախություն ստեղծեց նույնիսկ դրամ կտրելու իրավունքով¹⁶: Սակայն դա մասնակի երևույթ էր, քանզի երբ Պարսկաստանում ուժեղացավ կենտրոնական իշխանությունը, Ղարաբաղի և Սյունիքի ազատագրական շարժումները մոռացության մատնվեցին: Շատ շուտով տեղի է ունենում հայկական հարցի լուծման համար պայքարի վերելք: Այս շրջանում պատմական ասպարեզ եկան հայ քաղաքական գործիչներ՝ ամբողջ Հայաստանի ազատագրության մեկ միասնական համահայկական պետություն ստեղծելու ծրագրերով: Այդ գործիչներն էին հնդկահայ Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, մոսկվաբնակ Հովսեփ Արղությանը և ուրիշներ: Ամբողջ Հայաստանի անկախության ծրագրերով հանդես էին գալիս ինչպես Հայաստանի, այնպես էլ գաղթօջախների ներկայացուցիչները: Ըստ Լեոյի՝ ամբողջ Հայաստանի անկախության, միասնական պետության ստեղծման պահանջը հայ ազատագրական շարժման զարգացման օրինաչափ արդյունքն էր, Հայկական հարցի լուծման ուղին: Անդրադառնալով Հովսեփ Էմինի Հայաստանը Վրաստանի միջոցով ազատագրելու ծրագրին՝ Լեոն բարձր է գնահատում այն և համարում է հնդկահայ վաճառական Շահամիր Շահամիրյանի Հայաստանի ազատագրության գաղափարի հիմքը¹⁷: Նշանավոր պատմաբանը հանգամանորեն քնարկում է Մովսես Բաղրամյանի «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» գրքերն ու արժևորում՝ դրանցից առաջինը համարելով հայոց ազատագրության ուղենիշ հանդիսացող աշխատություն, իսկ երկրորդը՝ ապագա ազատագրված Հայաստանի Սահմանադրության նախագիծ, Սահմանադրական Հանրապետության կառավարման լավագույն օրինակ¹⁸:

¹⁶ Տես նույն տեղում, էջ 13:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 15:

¹⁸ Տես նույն տեղում, էջ 16:

«Որոգայթ փառացի» առաջին մասում հեղինակը կոչ է անում իր հայրենակիցներին՝ ելնել ազատագրական պայքարի և լուծել Հայկական հարցը՝ վերականգնելով հայկական պետականությունը: Երկրորդ մասը ազատագրված Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կառուցվածքի ծրագիրն է, որտեղ սահմանված են պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ «Որոգայթ փառացի»՝ պետության գլխավոր նեցուկը զորքն է, որը 90 հազար է՝ ձիավոր ու հետևակ: Դրոշակների գույներով բանակը բաժանվում է երեք սպարապետության՝ կարմիր, կապույտ և դեղին: Սպարապետությունն էլ է ընտրովի: Լեոն նշում է, որ «առաջին անգամ զարմանալի է թվում, որ հրամանատարներ ընտրողը զորքը չէ, այլ պատգամավորների ժողովը: Բայց պետք է իմանալ, որ հնդկահայ օրենսդիրների դրած կարգն այն էր, որ զինվորությունը առանձին կաստա չէ, յուրաքանչյուր հայ զինվոր է, 12 տարեկան հասակից պիտի զինավարժություն և զինվորական ծառայություն սովորի: Գործող բանակի մեջ երիտասարդները մտնում են ընդհանուր զինվորագրության կանոնով՝ վիճակահանությամբ 100-ից 5-ը՝ զինվոր պիտի գնան վիճակով և ծառայեն զորքի մեջ 7 տարի: Հոգևորականությանը պատվավոր տեղ էր հատկացվում հայկական հանրապետության մեջ, պատգամավորական ժողովում նախարարից հետո առաջին տեղը պատկանում էր կաթողիկոսի ներկայացուցիչ եպիսկոպոսին, որը ինչպես և նախարարը, երկու ձայն ուներ»¹⁹:

Գնահատելով այս կարևորագույն ծրագրային փաստաթուղթը՝ Լեոն ընդգծում է. «Թեև նա առանձին ընդունելություն չգտավ ազգի մեջ, ընդհակառակն՝ գրգռեց Սիմոն Երևանցի կաթողիկոսի բարկությունը, բայց և այնպես վերին աստիճանի հետաքրքրական է իբրև հայ մարդկանց իդեալ, իբրև գաղափար հայրենի երկիրը ազատելու և բարեկարգելու մասին: Նա մեզ ցույց է տալիս, թե որքան մեծ և վեհ հասկացողություն է կազմում մեր մեջ հայրենիքի գաղափարը: Նա ներկայացնում էր խիզախ, որոնող և պահանջող միտքը, որ ազատվելով կրոնական կապանքներից, սպառնում էր

¹⁹ Տես նույն տեղում, էջ 17:

քաղաքական լայն հորիզոնների վրա լուծելու հայկական հարցը»²⁰:

Աշխատության լույս ընծայումից ընդամենը 6 տարի անց՝ 1779թ. ծնունդը, Պետրոգրադում կարևոր բանակցություններ սկսվեցին Հայաստանի ազատագրության վերաբերյալ: Հայ ազգի դատը ներկայացնում էին հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ հայրենասեր արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը (1743-1801), Ռուսահայոց հոգևոր թեմի առաջնորդը և Հովհաննես Լազարյանը (1735-1807)՝ Մոսկվայի նշանավոր Լազարյան ճեմարանի հիմնադիրը: Ռուսների կողմից իշխան Պոտյոմկինի հանձնարարությամբ բանակցում էր հռչակավոր զորավար Սուվորովը: Ոգևորված Եկատերինա II կայսրուհու արքունիքի դրական խոստումներից՝ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և Հովհաննես Լազարյանը կազմեցին մի դաշնադրություն, որը պիտի որոշեր անկախ Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները: Դաշնադրությունը բաղկացած էր երկու մասից՝ մեկը Հայաստանի, մյուսը Ռուսաստանի կողմից և սահմանում էր երկու երկրների իրավունքներն ու պարտականությունները: Նա հայտնի էր «Կերպ դաշնադրության ի մեջ երկու ազգաց՝ Ռուսաց և Հայոց» խորագրով, ծանոթ էր նաև «Հյուսիսային ծրագիր» անունով: Դաշնադրությունն ամբողջովին մեջ է բերված Լեոյի աշխատության մեջ²¹: 18 հոդվածից բաղկացած այս նախագծով ռուսական զինված ուժերը Հայաստանը ազատագրելու էին պարսկա-օսմանյան տիրապետությունից և վերականգնելու էին հայկական թագավորությունը:

Լեոյի խոսքով՝ «Այս թղթերը երբեք ստորագրված ու վավերական փաստաթղթերի նշանակություն չստացան, որովհետև ռուսաց կառավարությունը հայտնեց Հ. Արղությանին, թե պետությունները կարող են դաշնադրություն կնքել պետությունների հետ, այնինչ հայերը դեռ պետություն չեն կազմում, բայց և այնպես, այդտեղ արտացոլված են այն ժամանակվա հայ գործիչների քաղաքական իդեալները իրենց հայրենիքի ազատագրման, հայկական հարցի լուծման վերաբերյալ»²²:

Այսպիսով, հայ ազատագրական շարժման, Հայկական հարցի լուծման գաղափարը չհասավ իր նպատակին, մնաց որպես

²⁰ Տես նույն տեղում, էջ 18:

²¹ Տես նույն տեղում, էջ 21-ից 29:

²² Տես նույն տեղում, էջ 21:

ցանկալի երազ մինչև 19-րդ դարի սկիզբները: Միայն 1827թ. հոկտեմբերի 1-ին, երբ ռուսական զորքը գրավեց Երևանը, այդ երազանքը փոխվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կողմից նվաճվելու ռեալ իրողության: «Անդրկովկասում այլևս հայկական հարց չէր մնում,- գրում է Լեոն՝ նկատի ունենալով մահմեդական տիրապետության լծից Արևելյան Հայաստանի ազատագրումը»²³:

«Հայոց հարցը Թուրքիայում» բաժինը Լեոն բաժանել է հինգ գլխի, որտեղ, ըստ ժամանակագրության, ներկայացրել է հայկական հարցի ընթացքը 1829-1914 թվականներին: Երկրորդ գլխից, սկսած 1878 թվականից, նա վավերագրերը մեջ է բերել իրենց բնագրերով ու սեփական մեկնաբանությամբ:

Առաջին գլխում, որն ընդգրկում է 1829-1878 թվականները, քննարկվում է 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի հետեվանքները, ընդգծելով այն հանգամանքը, որ Պարսկաստանի համեմատ Թուրքիան ուներ առավելություններ, քանզի նրան պաշտպանում էր Արևմտյան Եվրոպան՝ ընդդեմ Ռուսաստանի: Հայոց հարցը միայն այս պատերազմի հետևանքով շեշտվեց, առանց պարզ ձևակերպելու: Չնայած պատերազմի հաղթական ելքին՝ Ռուսաստանը չկարողացավ հողային խոշոր գրավումներ անել Թուրքիայի սահմաններում,-նշում է Լեոն»²⁴: Միակ դրական բանը նա համարում է Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածը, որով թույլատրվում էր 18 ամսվա ընթացքում հայերին իրենց ընտանիքներով և շարժական կայքով տեղափոխվել մյուս պետության (Ռուսաստանի) սահմանները՝ Արևելյան Հայաստան: Պատահական չէ, որ մոտ հարյուր հազար թուրքահայեր Բայազետի և Էրզրումի կողմերից (1830թ.) տեղափոխվեցին Անդրկովկաս: Նշանավոր պատմաբանը ընդգծում է, որ «այս փուլում հայկական հարցը չի մտել միջազգային դիվանագիտության ոլորտը, չի դարձել ընդհանուր քննարկման առարկա և, բնականաբար, դրա մասին չի ընդունվել որևէ որոշում: Իհարկե, տերությունները տեղյակ էին հայերի դրությանը և պայքարին, որոշ դեպքերում էլ առանձին երկրներ փորձել են միջամտել իրադարձություններին, ինչպես, օրինակ, Ֆրանսիան (Նապալեոն 3-րդը)՝ 1862թ. Չեյթունի հայտնի

²³ Տես նույն տեղում, էջ 29:

²⁴ Տես նույն տեղում, էջ 33:

դեպքերի ժամանակ: Սակայն այս փուլում Հայկական հարցը, ըստ Լեոյի, այդպես էլ մնաց որպես հայերին հետաքրքրող ու վերաբերող ներքին հարց²⁵:

Առաջին անգամ արևմտահայ նշանավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանն էր, որ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853-1855) ֆրանսիական կառավարության ներկայացրեց մի «հիշատակագիր», որի մեջ ցույց էր տալիս թե ինչ պետք է աներ եվրոպական դիվանագիտությունը Հայաստանի համար: «Դժբախտաբար այսքանից ավելի բան հայտնի չէ այդ հետաքրքիր ծրագրի մասին,-գրում է Լեոն»²⁶: Նրանից հետո Հայկական հարցով զբաղվում է Միքայել Նալբանդյանը, որը ոգևորված էր Ջեյթունի ապստամբությամբ: Ջեյթունի լուսավորչական հոգևորականությունը կարողանում է կանգնեցնել կրոնափոխական շարժումը (կաթոլիկություն ընդունելու Ֆրանսիայի առաջարկը), Ջեյթունի հարցն էլ է մոռացվում: Երկրորդ գլուխը սկսվում է 1878 թվականով, որը նշանավորվում է Հայկական հարցի արծարծման երկրորդ փուլով: Այն ընդգրկեց ռուս-թուրքական պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, երբ միջազգայնացվեց Հայկական հարցը և դարձավ դիվանագիտական քննարկման առարկա՝ վերաբերելով միայն արևմտահայությանը՝ Օսմանյան կայսրության հայկական նահանգների հայությանը և ոչ երբեք արևելահայությանը: Խոսելով 1878թ. հունվարին ռուսական զորքերի հաղթանակների և դեպի Կ.Պոլիս շարժվելու մասին՝ Լեոն ընդգծում է, որ «վերջնականապես ջարդված Թուրքիան ստիպված ընդունելու էր այն պայմանները, որոնք կթելադրվեին հաղթող Ռուսաստանի կողմից, որը տանելու էր Օսմանյան բռնապետության նոր անդամահատություններին և նոր ազատություն կբերեր նրա լծի տակ հեծող քրիստոնյաներին»²⁷:

Քանի որ 1878թ. հունվարի 19-ին Ադրիանապոլսում ստորագրված ռուս-թուրքական զինադադարի պայմանների մեջ, որոնք կազմելու էին ապագա հաշտության պայմանագրի հիմքը, չէր արձարծվում Հայկական հարցը, ուստի Կ.Պոլսի հայերը՝ Ներսես

²⁵ Տես նույն տեղում, էջ 36:

²⁶ Տես նույն տեղում:

²⁷ Տես նույն տեղում, էջ 37:

պատրիարքի ղեկավարությամբ սկսեցին ավելի եռանդով գործել, որպեսզի նոր ստեղծված քաղաքական իրավիճակում մոռացության չտրվեր «թուրքահայը իր դարավոր արյունոտ հարցով»²⁸:

Աշխատության մեջ Լեոն ներկայացնում է Ներսես Վարժապետյան պատրիարքի հանձնարարությունը՝ Ադրիանապոլսի առաջնորդական տեղապահ Գեորգ վարդապետ Ռուսնուգլյանին՝ ռուսական կողմի հետ բանակցություններ վարելու, Հայկական հարցը հաշտության բանակցություններում ընդգրկելու և արդյունքների վերաբերյալ իրեն զեկուցելու մասին: Ապա մեջ է բերվում քաղվածքներ Գևորգ Վ. Ռուսնուգլյանի հիշատակարանից, որտեղ վարդապետը պատմում է, թե ինչպես «Փիլիպոպոլսի նախկին ռուսական հյուպատոս հայասեր Կիրովի օգնությամբ ծանոթացել է կոմս Իգնատևի հետ և նրան պատմել հայերի ծանր վիճակի մասին ու խնդրել տեսակցելու ցարի եղբայր մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի հետ և բուլղարների նման հայերին ևս ազատել օսմանյան լծից՝ ինքնավարություն տալով»: Այս տեսակցությունից և մեծ իշխանի հավաստի խոստումներից հետո, որը համոզված նշում էր, թե ռուսական կայսրին կտեղեկացնի այդ մասին և կարող է նախապես հայտնել նրա համաձայնությունը, ոգևորված վարդապետը նամակ է գրում Ներսես պատրիարքին և տասը օր անց պատրիարքի հանձնարարությամբ իբրև խորհրդականներ (հունվարի 31-ին) Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրեյանը, տեսակցել են նրա հետ և խնդրել փոխանցել ռուսական դեսպանին և մեծ իշխան Նիկոլային պատրիարքի ներկայացրած հայոց ինքնավարության ծրագիրը: Շուտով վարդապետը կարողանում է կազմակերպել Կ.Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովի երկու ատենապետների՝ Հ.Նուրեյանի և Ս.Ասլանյանի տեսակցությունը կոմս Իգնատևի, կոմս Նելիտովի և մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի հետ, վերջինիս միջոցով ստանալ կայսեր համաձայնությունը Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի հաշտության բանակցություններում ընդգրկելու համար: 1878թ. փետրվարի 1-ին պատրիարք Ներսես Վարժապետյանը Ալեքսանդր II է ներկայացնում 9 եպիսկոպոսների և իր կողմից մի աղերսագիր, որտեղ հայտնում է Ռուսաստանի միջամտությունը Արևմտյան Հայաստանում բարե-

²⁸ Տես նույն տեղում:

նորոգումներ կատարելու համար: Ալեքսանդր II տվեց պաշտոնական համաձայնություն և հանձնարարվեց ռուսական պատվիրակության ղեկավար կոմս Ն.Իգնատևին «Թուրքերի հետ կնքվելիք դաշնակցային պայմանագրում ընդգրկել հայերի համար այս անչափ կարևոր հարցը»: «Սկզբում,- ինչպես գրում է նշանավոր պատմաբանը,- հայկական կողմն ակնկալում էր ինքնավարության խոստում կորզել տերություններից, բայց թուրք լիազորների դիմադրության պայմաններում ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան այդպիսի խոստումներ չտվեցին և ինքնավարության հարցը մեջտեղից դուրս եկավ: Մնում էր միայն բարենորոգումների խոստումը»²⁹:

Լեոն մեջ բերում է «Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը, որը ամբողջովին վերաբերում էր թուրքահայության հարցին: «Բարձր դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայա-բնակ մարզերում տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

Խոսելով պայմանագրի 16-րդ հոդվածի նշանակության մասին Լեոն ընդգծում է, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Թուրքիան պաշտոնապես ճանաչեց Օսմանյան կայսրության սահմաններում Հայաստան երկրի գոյությունը: Առաջին անգամ Հայկական հարցը վերածվեց քաղաքական գործոնի, տեղ գտավ միջազգային պայմանագրում և դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը: Այս բոլորով հանդերձ հոդվածը լի էր անորոշություններով: «Բարելավումներ և բարենորոգումներ» անորոշխոստումը, ըստ Լեոյի, հայգործիչները ըմբռնեցին այն մտքով, թե Հայաստանը այդ հոդվածով պետք է ստանա ինքնավարություն: Նույնիսկ Հայկական հարցի նշանավոր գործիչներից մեկը՝ Գրիգոր Արծրունին, մարտի 10-ին «Մշակի» առաջնորդողում գրում էր, թե հայերին խոստացվածը նահանգական ինքնավարություն է: Ինքնավարության սկզբունքը 16-րդ հոդվածից հետո էլ մնաց թուրքահայ գործիչների ցանկությունը: Ուստի Լեոն մեջբերում է Ներսես պատրիարքի կողմից պատգամավորի պաշտոնով Պետրոզբաղ մեկնած Խորեն արքեպիսկոպոս Նարպեյի կողմից Ալեքսանդր 2-րդ կայսեր ներկայացրած պատրիարքարանում

²⁹ Տես նույն տեղում, էջ 45:

մշակված ծրագիրը: Աշխատությունում ներկայացված «Ծրագիր կազմակերպական Կանոնակարգի Օսմանեան Հայաստանի» փաստաթուղթը, որտեղ սահմանվում էր հայկական նահանգների ինքնավարությունը, հատուկ պատվիրակության ձեռքով (Խրիմյան արքեպիսկոպոս և Մինաս Չերազ քարտուղար) ուղարկվեց եվրոպական վեց մեծ պետությունների կառավարություններին մինչև Բեռլինի վեհաժողովի գումարումը: Դրա հետ միասին ներկայացվում է Ներսես պատրիարքի կազմած 1) Մի առանձին հիշատակագիր (մեմորանդում), որի մեջ նա ապացուցում էր, թե ինչու է ինքնավարությունը Հայաստանի համար մի արդար և օրինական անհրաժեշտություն, 2) Հայաստանի վիճակագրությունը և 3) Հայաստանի քարտեզը: Վերլուծելով հայկական այս ծրագիրը՝ Լեոն հանգում է այն եզրակացության, որ դրանով չէր դրվում Թուրքիայից Արևմտյան Հայաստանի անջատման խնդիր, չէր առաջարկվում հայկական նահանգները միացնել Ռուսաստանին, այլ դրվում էր միայն բարենորոգումների խնդիր, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին բալկանյան սլավոնների շրջանում կատարված բարենորոգումները: Ծրագրին կցված տեղեկագիրը պարունակում էր Օսմանյան կայսրությունում բնակվող հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի վիճակագրություն: Դրա համաձայն՝ կայսրության 3 միլիոն հայերից Արևմտյան Հայաստանում բնակվում էր 1մլն 330 հազարը: Նույն տարածքում թուրքերի թիվը կազմում էր 530 հազար, քրդերինը՝ 120 հազար, մյուս ազգություններինը՝ 82 հազար³⁰: Փաստորեն հայերն Արևմտյան Հայաստանում բացարձակ մեծամասնություն էին կազմում: Հայոց պատվիրակությունն ամբողջ կազմով Բեռլին ժամանեց մայիսի կեսերին և Կոնգրեսի մասնակիցներին բաժանեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության նախագիծն ու կից փաստաթղթերը, որոնք հենց սկզբից բավարար ուշադրության չարժանացան: Կոնգրեսի աշխատանքները տևեցին մեկ ամիս՝ հունիսի 1-ից հուլիսի 1-ը: Հայ պատվիրակների բոլոր փորձերը մասնակցելու Կոնգրեսին մերժվեցին: Բեռլինի կոնգրեսում վերանայվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի համարյա բոլոր դրույթները, այդ թվում և Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը: Կոնգրեսում տնօրինում էին անգլիական

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 61:

դիվանագետները և հենց նրանց թելադրանքով ընդունվեց բանաձևի 61-րդ հոդվածը: Վերլուծելով 61-րդ հոդվածի բովանդակությունը՝ Լեոն նշում է, որ կոնգրեսը որոշեց «հայաբնակ մարզերում» բարենորոգումները չպայմանավորել ռուսական զորքերի առկայությամբ, այլ, ընդհակառակը, դրանք անցկացնել այնտեղից ռուսական բանակի դուրս գալուց հետո: Փաստորեն հայկական բարենորոգումների իրագործման իրավական երաշխիքը՝ ռուսական բանակի ներկայությունը, փոխարինվում էր տերությունների՝ բարենորոգումներին վերահսկելու անորոշ երաշխավորությամբ: Բացի այդ 61-րդ հոդվածում Հայաստան անվանումը այլևս չէր հիշատակվում, այլ օգտագործվում էր «հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությունը»³¹: Հայկական հարցի շահարկման դիմաց ամեն կերպ չեզոքացնելով Ռուսաստանին՝ Անգլիան խլեց նրանից հաղթության պտուղները վայելելու հնարավորությունը, առանձին պաշտպանողական դաշնագիր կնքեց Թուրքիայի հետ, նրանից ստացավ Կիպրոսն ու տնտեսական, առևտրական բազում առանձնաշնորհներ: Լեոն իր աշխատության մեջ բերում է այդ դաշնագրի ամբողջ տեքստը, քաղվածքներ Բեռլինի վեհաժողովի արձանագրություններից, 1878թ. հուլիսի 21-ին Ներսես արքեպիսկոպոս պատրիարքի Կոստանդնուպոլսի հայոց ազգային ժողովում կարդացած ատենախոսությունը:

Վերլուծելով Բեռլինի կոնգրեսի որոշման հետևանքները Հայկական հարցում Լեոն եզրակացնում է. «Մեծ տերությունները նպատակ էին հետապնդում բոլոր միջոցներով կանխել 1877-1878 թթ., ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակների հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական վերընթացը»³²:

Լեոն վավերագրերի լեզվով և զորեղ տրամաբանությամբ ընթերցողի առջև բացում է աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոյամարտի բռնված եվրոպական տերությունների հանցավոր դիվանագիտության խարդավանքները Հայկական հարցում³³:

³¹ Տե՛ս Սարուխանյան Ն., Լեոն և հայկական հարցը, Երևան, 1998, էջ 9:

³² Տես նույն տեղում:

³³ Տե՛ս Սարուխանյան Ն., Լեոն և հայկական հարցը, Երևան, 1998, էջ 9:

Ժամանակի քննությանն են դիմացել Լեոյի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր, պատրվակ Օսմանյան կայսրության գլխին մտրակ ճոճելու, նրա ներքին գործերին միջամտելու համար:

Երկրորդ գլխում Լեոն ներկայացնում է Հայկական հարցի քննարկումները 1880-1895 թվականներին: 1880 թ. թուրքական կառավարությունը Հայաստանի դրությունը ուսումնասիրելու և բարենորոգումների ծրագիր կազմելու համար՝ այնտեղ ուղարկեց կոմիսարներ՝ ընդարձակ լիազորություններով: Կարինում կոմիսարներին ներկայացվեց Կ.Պոլսի հայոց պատրիարքությունում Ներսես Վարժապետյանի ու Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի կողմից կազմած ծրագիրը, որը Լեոն բերում է իր աշխատության մեջ՝ այն համարելով նշանավոր երևույթ, ժողովրդական ձգտումների լավագույն արտահայտություն: Այստեղ էին նաև Կարինի ու Վան նահանգների բարենորոգումների ծրագրերը, որոնք վերաբերում էին վարչական ոլորտի, դատական, ոստիկանական և այլ բնագավառների բարենորոգումներին:

Լեոն պարզաբանում է, որ 36 տարվա ընթացքում Բեռլինի վեհաժողովից հետո եվրոպական դիվանագիտությունը երեք անգամ է լուրջ քայլեր արել Հայոց հարցը գործնականում լուծելու համար: Առաջին անգամ Հայկական հարցը քննարկվեց 1880 թվին Անգլիայի նախաձեռնությամբ, բոլոր վեց մեծ տերությունների դեսպանների հավաքական գործակցությամբ: Պատմական այդ փաստի վերաբերյալ երեք փաստաթղթեր են ներկայացված աշխատությունում³⁴:

Չորրորդ գլուխը վերաբերում է 1895-1912 թվականներին: Լեոն գրում է, որ 1880 թ. դիվանագիտական գրագրություններից հետո Հայոց հարցը դադարում է եվրոպական պետությունների գործնական ձեռնարկումների առարկա դառնալուց և այս դրությունը շարունակվում է ամբողջ 15 տարի³⁵: Այդ ընթացքում Հայկական հարցը Թուրքիայում ստանում է քաղաքական պայքարի բնույթ: Ըստ Լեոյի՝ թուրքական կառավարությունը, իր վաղեմի սովորության համաձայն, չի բավարարվում իր միջազգային պարտավորությունը ստանձնելով, այլ դիմում է բռնության միջոցներին՝

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 110, 115, 124:

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 127:

հայերի մեջ սկսված շարժումը արմատախիլ անելու համար»:

Էրզրումում, Կ.Պոլսում սկսված ջարդերին հաջորդում են 1894թ. Սասունի արյունոտ դեպքերը, որոնք ստիպում են եվրոպական պետություններին երկրորդ անգամ ձեռնամուխ լինեն Հայկական հարցին: Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները Կ.Պոլսում միասին մշակեցին բարենորոգումների ծրագիր հայերի համար Թուրքիայում փոքր ի շատե տանելի դրություն ստեղծելու համար:

1995թ. մայիսի 11-ին Կ. Պոլսի անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպանները հայկական վեց նահանգներում (Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) բարենորոգումների ծրագիր ներկայացրեցին Բ.Դռանը: 13 գլուխներից և 40 հոդվածներից բաղկացած բարենորոգումների վերոնշյալ ծրագիրը նախաձեռնում էր բարեփոխել նահանգների կառավարումը, բարելավել դատական գործը, հարկային համակարգը և այլն: Չնայած ծրագիրը խիստ սահմանափակ էր, բայց 61-րդ հոդվածի բովանդակության կիրառման առաջին փորձի իրագործելու դեպքում անշուշտ որոշ օրինականություն կմտցվեր Արևմտյան Հայաստանում և կչափավորեր կամայականությունը: Սակայն սուլթանը ձգձգում էր դրա իրականացմանն ուղղված գործնական քայլերի կատարումը՝ խոստանալով մյուս նահանգներում ևս կիրառել դրանք:

Ամփոփելով այս գլխում Հայկական հարցի քննարկումները՝ նշանավոր պատմաբանը շեշտադրում է եվրոպական դիվանագիտության կատաղի պայքարը Հայկական հարցում մի կողմից Անգլիայի, որի ազդեցությունը այդ տարիներին գնալով մեծանում էր հայկական շրջանների վրա, մյուս կողմից՝ ռուս-ֆրանսիական ալյանսի միջև, որը փորձում էր զսպել Անգլիայի ակտիվությունը և իր հովանավորության տակ վերցնել Թուրքիան:

Այս և հաջորդ՝ հինգերորդ գլխում՝ 1912-1914թթ., Հայկական հարցի քննարկումներում Լեոն խոսույն փաստերով բարձրացնում է վարագույրն այն խարդավանքների վրայից, որոնցով նույն այդ տերությունները 1894-1896 և 1915 թվականներին արևմտահայությանը ոչ միայն չպաշտպանեցին թուրքական բարբարոսությունից, այլև իրենք անմիջական մեղսակիցը դարձան հայկական ցեղասպանության իրականացմանը: Խոսելով 1908 թ. ամռանը

Կ.Պոլսում երիտթուրքերի կազմակերպած հեղափոխության և դրա հետևանքների մասին՝ Լեոն ցավով արձանագրում է, որ «Սահմանադրությունը, պառլամենտը, ազատությունները համարյա ոչինչ փոփոխություններ չէին մտցրել հայ-թուրքական և հայ-քրդական հարաբերությունների մեջ: Ընդհակառակն, ավելի սուր կերպարանք էին ընդունում հայ-քրդական հարաբերությունները շնորհիվ այն հանգամանքի, որ քրդերը գրավել էին կոտորածների ժամանակ փախած հայերի հողերը և այժմ չէին ուզում վերադարձնել, իսկ թուրք կառավարությունը ոչ միայն միջոցներ չէր ձեռնարկում դրա դեմ, այլև խրախուսում էր քրդերին: Ադանայի ահռելի ջարդերը որոնց զոհ գնացին 20 հազարից ավելի հայեր, վկայում են, որ պանթուրքիզմը գործողության մեջ է, որ հայերի դրությունը Թուրքիայում նորից մնում է նույնը, նույնիսկ ավելի վատթար: Դա փաստում է, որ Հայոց հարցը դեռ լուծված չէ, և այն մնում է միջազգային հրատապ Հարց»³⁶:

Հինգերորդ գլխում հեղինակը ընդգծելով 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմի կարևորությունը Թուրքիայի դեմ պատերազմում Հայկական հարցի վերաբացման համար նշում է, որ «այս անգամ հաջողության մի գրավական կար, այն է, որ ռուսական քաղաքականությունը, 1880-ական թթ. սկզբից իր բռնած ուղղությունը թողնելով, այժմ շատ բարյացակամ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի հայոց հարցը, իր պետական շահերի տեսակետից անհրաժեշտ համարելով հարցը լուծել հայերին ցանկալի եղանակով»³⁷: Այստեղ Լեոն մեջ է բերում ինչպես Կ.Պոլսի ռուսաց դեսպան Գիրսին, արտաքին գործերի մինիստր Սազոնովին» ներկայացրած գրությունը՝ հայկական հարցի վերաբացման մասին 1912թ. նոյեմբերի 26-ի թվագրումով, այնպես էլ թուրքական կառավարության ներկայացրած «Հայկական բարենորոգումների ծրագիրը», 1913թ. հունիսի 8-ին Կ.Պոլսի Ռուսաց կայսերական դեսպանատան առաջին թարգման Պ.Ա.Մանդելշտամի ներկայացրած «Նախագիծ - ծրագիրը Անատոլիայի մեջ մտցվող ռեֆորմների», 1914թ. հունվարի 26-ին ռուսաց հավատարմատարի և մեծ վեզիր Սայիդ-Համիլ փաշայի ստորագրած վավերագիրը՝ «Բնագիր հա-

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 95:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 96:

մածայնություն» Հայաստանի ռեֆորմների մասին, «Հրահանգ ընդհանուր տեսուչների իշխանության և ձեռնահասության մասին»: Այս փաստաթղթերի վերլուծությամբ մեկ անգամ ևս Լեոն եզրակացնում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով նորից ոտքի տակ տրորված է Հայաստանի բարեկարգման թույլ փորձերի ծրագիրը, սկսվում է նահատակված թուրքահայ ժողովրդի արյունոտ պատմության ամենասարսափելի երկունքը, երբ նորից ու նորից նրա գոյությունն անգամ սաստիկ վտանգված է»³⁸:

Այսպիսով, ընդհանրացնելով Հայկական հարցի մասին իր մտորումները՝ նշանավոր պատմաբանը կատարում է արժեքավոր շատ եզրակացություններ, որոնք կենսունակ են նաև մեր օրերի համար և ունեն արդիական հնչեղություն ու կարևորություն: Արժեքավոր այս աշխատության վերահրատարակումը մեծ նշանակություն է ստանում Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին, Հայոց անկախ պետության պայմաններում և օգտակար կարող է լինել Հայոց դատի բոլոր պաշտպաններին պատմության դառը դասերով համոզվելու Թուրքիայի ոճրագործ քաղաքականության և արևմտաեվրոպական դիվանագիտության թողտվության կամ անտարբեր վերաբերմունքի նկատմամբ, որոնք ինչ-որ ձևով դարձան ցեղասպանության քաղաքականությունը խրախուսելու մեղսակիցներ: Հայ ժողովրդի ներկա սերունդը պարտավոր է Հայկական հարցի լուծման համար գործադրել բոլոր ջանքերը, դասեր քաղելով նման աշխատություններից, պայքարել այդ հարցի արդարացի լուծման համար:

Աշխատությունը հրատարակվում է իր բնօրինակով՝ արևմտահայերենով, քանզի Լեոն «Հայկական հարցը» ներկայացնում է որպես «Թուրքահայոց դատ»՝ ժամանակի ոգուն համապատասխան: Այսպիսով՝ ընթերցողն արևմտահայերենով կձանոթանա դեռևս 1915 թվականին հրատարակված Հայկական հարցին՝ որպես Արևմտյան Հայաստանի ազատագրության հիմնախնդիր:

**պ.գ.դ. պրոֆեսոր
Էդիկ Մինասյան**

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 231:

Լ Է Օ

Հայոց Հարցի _____
_____ Վաւերագրերը

Ներկայ երոպական ահեղ պատերազմը, շնորհիւ այն հանգամանքի, որ նրա մէջ մասնակցում է եւ Թիւրքիան իբրեւ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի թշնամի, նորից օրուայ հրատապ հարց է դարձրել Թիւրքաց Հայաստանի բախտը: Նորից այդ բազմաչարչար երկիրը միացրել է աշխարհի բոլոր կողմերում ցրուած հայութիւնը, որ անհամբեր սպասում է թէ այսօր-վաղը ինչ լուծում կը ստանայ հայոց արիւնոտ հարցը:

Պատմական այս մեծ օրերին մենք գալիս ենք հայ ժողովրդին նիւթ տալու թէ ինչպէս պիտի նա ըմբռնէ թիւրքահայ դատը եւ թէ ինչ հնարաւոր ուղղութեամբ կարող է եւ պիտի ընթանայ հայոց հարցի լուծումը: Այդ նիւթը պարունակում է իր մէջ անցեալի պատմութիւնը:

Մենք սակայն չենք տալիս այստեղ հայոց հարցի ամբողջական պատմութիւնը: Մեր նպատակն անելի համեստ է. – մի տեղ հաւաքել թիւրքահայոց հարցին վերաբերեալ դիւանագիտական վաւերագրերը, որոնք այնքան կարեւոր են այդ միջազգային հարցը ուսումնասիրելու համար:

Բայց այդ վարերագրերը պատշաճաւոր շրջանակների մէջ դնելու համար մենք դրինք եւ մի Ներածութիւն ու մի Յաւելուած:

Առաջինի մէջ ամփոփուած է համառօտ մի տեսութիւն, որ ցոյց է տալիս թէ մինչեւ XIX դարը ինչ դրութեան մէջ է եղել առհասարակ հայկական հարցը եւ թէ հայ գործիչները ինչ հայեացքներ են ունեցել իրանց հայրենիքի քաղաքական կազմակերպման մասին: Այստեղ մենք տալիս ենք պատմական, հնար եղածին չափ ամփոփ, վաւերագրեր:

Իսկ յաւելուածի մէջ ընթերցողը կը գտնէ ամփոփ տեղեկութիւններ թէ ինչպէս եւ ինչ հիմունքներով են լուծուել Թիւրքիայի հպատակ միւս ազգութիւնների հարցերը: Երոպական դիւանագիտութիւնն աշխատել է թիւրքահպատակ ազգերի վիճակը բարելաւել բարենորոգումների (րէֆորմների) միջոցով: Մենք դրել ենք եւ այդ բարենորոգումների համառօտ բովանդակութիւնը: Այսպիսով ընթերցողի առջեւ պարզում է թէ ընդհանրապէս ազատագրական ինչ ձեւեր մշակեց երոպական դիւանագետների միտքը մօտ մի դարի ընթացքում՝ Թիւրքիայում ապրող ազգերի ճակատագիրը արդարութեամբ կարգադրելու համար:

Ի վերջոյ յայտարարում ենք որ մենք, հակառակ մեր ցանկութեան, չը կարողացանք մըտցնել այս ժողովածուի մէջ հայոց հարցին վերաբերեալ բոլոր վաւերագրերը:

ԼԵՕ

1915, մայիս.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայոց հարցը նոյնքան հին է, որքան ինքը հայ ազգը: Քրիստոսից 6 դար առաջ էր, որ հայ ազգը դուրս եկաւ խաւարի անյայտութիւնից պատմութեան լուսաւոր ասպարէզը և հէնց այդ առաջին քայլերի հետ նա անյայտութեան մութից իր հետ լոյս է բերում իր ազգային գոյութիւնը պահպանելու մեծ հոգսը: Իսկ հայոց հարցը, ինչպէս գիտէք ամենքդ, հայ ժողովրդի ազգային գոյութեան հարցն է:

Այսպիսով հայոց հարցի պատմութիւնը հայ ազգի պատմութիւնն է սկզբից մինչև մեր օրերը: Հայոց պատմութիւնը 25 դարերի ընթացքում մի քանի մեծ կերպարանափոխութիւններ է ներկայացրել: Այսպէս է և հայոց հարցը, որ ունեցել է մի քանի մեծ շրջաններ:

Այն շրջանը, որի մէջ հայոց հարցը գտնուում է և այսօր, մենք անուանում ենք Միջին-Ասիական:

Տասնամէկերորդ դարը համաշխարհային պատմութեան մէջ հռչակուած է երկու մեծ շարժումներով: Արևելքից դէպի Արևմուտք շարժում են սելջուկեան թիրքերը, նուաճելով Պարսկաստանը, Հայաստանը, Սիրիան, Պալեստինը: Դա մահմեդականութեան հզօր առաջընթացութիւնն էր, որի ժամանակ խորտակուեցին հայկական անկախութիւնները Վասպուրականում, Շիրակում և Վանանդում:

Այդ ահեղ շարժումից դրդուած՝ ոտքի է կանգնում Արևմտեան Եւրոպան, իբրև քրիստոնէայ աշխարհ, որ շարժում է դէպի Արևելք, սելջուկեան արշաւանքների դէմ, քրիստոնէութեան գործը ազատելու համար: Այդ գործի մարմնացումը Քրիստոսի գերեզմանն էր, որի ազատութեան համար էլ կազմակերպուած են խաչակրաց արշաւանքները:

Կորցնելով իրանց ազգային անկախութիւնը, ընկնելով սելջուկների տիրապետութեան տակ, հայերը չը կորցրին իրանց յոյսը, որ մի ժամանակ իրանց հայրենիքը պիտի ազատուի և դարձեալ դառնայ իրանց անկախութեան որրան: Մի փոքրիկ ու թոյլ ազգ, իհարկէ, չէր կարող իր այդ ազատութեան յոյսերը ամբողջովին իր ձեռքով իրականացնել: Ինչ կարող էին անել նրա սեփական ոյժերը, երբ նոյն իսկ Բիզանդական կայսրութիւնը ահեղ հարուածներ էր ստանում սելջուկեան գոռ բաղխումներից: Խաչակրաց արշա-

լանքները յուսադրում էին ամբողջ քրիստոնեայ Արևելքը: Եւ ահա հայերի մէջ նորից վերակենդանանում է հին յոյսը քրիստոնեայ Արևմուտքի հզօր աջակցութեան և պաշտպանութեան վրայ:

Մեր գրականութիւնը պահպանել է իր մէջ հայոց ազգային յոյսերի մի շատ հետաքրքրական յիշատակարան: Դա Մեսրոպ Երէցի անունով մեզ հասած երկասիրութիւնն է, որ պատմում է Ներսէս Մեծի կեանքը: Այդտեղ կայ մի գլուխ, որ տալիս է չորրորդ դարի այդ բազմահոջակ հայ հոգևորականի գուշակութիւնը Հայաստանի ապագայի մասին: Հայերը, ըստ այդ գուշակութեան, պիտի կորցնեն իրանց ազատութիւնը և ենթարկուեն Արևելքից եկած մի դաժան և անողորմ ազգի լուծին: Բայց վերջը Արևմուտքից պիտի գան քաջարի հռովմայեցիները կամ ֆրանկները, որոնք պիտի ազատեն Երուսաղէմը և վերականգնեն հայկական անկախութիւնը:

Մեսրոպ Երէցը, որ պատմում է այս գուշակութեան մանրամասնութիւնները, ապրում էր տասներորդ դարում, երբ դեռ կանգուն էր Բագրատունեաց թագաւորութիւնը: Սակայն գուշակութեան մանրամասնութիւնները ոչ մի կասկած չեն թողնում, որ նրանք ներկայացնում են խաչակրաց արշաւանքների ժամանակները, այսինքն XI դարից յետոյ սկսուող դէպքերը: Կասկած չը կայ, ուրեմն, որ այդ գուշակութիւնը յետոյ է աւելացրած Մեսրոպի գործին և պարզ ի պարզոյ արտայայտութիւն է այն անկախութիւնների, որ հայ ժողովուրդը փայփայում էր իր մէջ իր անկախութիւնը բուն Հայաստանում կորցնելուց յետոյ:

Եւ նա սխալուած չէր իր այդ անկախութիւնների մէջ: Խաչակիրների օգնութեամբ հայերը վերականգնեցին իրանց կորցրած անկախութիւնը եթէ ոչ բուն Հայաստանում, գոնէ Կիլիկիայում, Միջերկրական ծովի ափին:

Այդ անկախութիւնն էլ, սակայն, վերջ ի վերջոյ խորտակուեց մահմեդականութեան և քրիստոնէութեան բաղխումների մէջ: Իսկ բուն Հայաստանը, որ միանգամայն ենթարկուած էր նուաճողների կամքին, դժբախտութիւն ունեցաւ ընդունել մոնղոլներին, Լէնկաթմուրի և ուրիշ, պակաս հոջակուած, բայց ոչ նուազ անգութ նուաճողներին, որոնք ոչնչացրին հայ ազգի մեծ մասը: Այս զարհուրելի աղէտների մէջ, որոնք դարեր տևեցին, հայ ազգը չը կորցրեց իր վաղեմի յոյսը և շարունակեց ապրել նրա մէջ այն նուիրական անկախութիւնը թէ պիտի գան արևմտեան ֆրանկ

ազգերը և ազատեն քրիստոնեաներին: Բայց քրիստոնեայ Արևելքին վիճակում էր աղէտ աղէտի ետևից: Ամենից ահաւորը, որ ցնցեց Արևելքն էլ, Արևմուտքն էլ, այն էր, որ տեղի ունեցաւ 1453 թուականին, երբ Կ. Պօլիսն ընկաւ օսմանեան թիրաքերի ձեռքը:

Այս ժամանակից հայ ազգին և նրա հետ Ասիայում տանջուող միւս քրիստոնեայ ազգերին վիճակակից են դառնում և Բալկանեան թերակղզում ապրող քրիստոնեաները, յոյները, սերբերը, բուլգարները և այլ սլաւոնական ցեղերը: Կ. Պօլսի առումը նորից վերարժարծում է հայերի մէջ յոյսը քրիստոնեայ ֆրանկների ազատարար արշաւանքի վրայ: Այս ակնկալութիւնը արտայայտուած է այն ողբերի մէջ, որ հայերը յօրինեցին Կ. Պօլսի անկման վրայ¹: Եւ միևնոյն այդ յոյսը ինքնաբերաբար տարածուած էր և յոյների ու սլաւոնների մէջ:

Սկսում են այս քրիստոնեայ ազգերի ջանքերը մահմեդական լուծից ազատուելու համար: Եւ մենք տեսնում ենք որ գործողութեան եղանակը միևնոյն է ամեն տեղ: Հայերը թէև շատ հեռու են յունական և սլաւոնական երկիրներից, թէև ոչինչ կապ չունին նրանց հետ, բայց նրանց ընդգրկած գաղափարներն ու տակտիկան միևնոյն կերպարանքն ունին, ինչ Բալկանեան թերակղզում: Այսպէս, նախ լինում են դիմումներ Եւրոպային: XVI դարի կէսում յոյները յանուն իրանց հին քաղաքակրթութեան, յանուն հելլենականութեան խնդրում էին Եւրոպայի օգնութիւնը թիրաքական լուծից ազատուելու համար: Համարեա միաժամանակ հայոց կաթողիկոսներն էին դիմում նոյն Եւրոպային, աղերսելով հայերի ազատութեան մասին յանուն քրիստոնէութեան:

XVII դարի երկրորդ կէսում կարծես սկսում էր իրականանալ Արևելքի ակնկալած ֆրանկների ազատագրական արշաւանքը: Ֆրանսիական Լուդովիկոս XIV թագաւորը ծրագրել էր Թիւրքիայի նուաճումը և Արևելքի ամբողջ քրիստոնէութեան ազատութիւնը իր հզօր իշխանութեան տակ: Ֆրանսիական գործակալները, գլխաւորապէս հոգևորականներ, եռանդով տարածում էին այդ միտքը Արևելքում²: Քրիստոնէութիւնը լցուեց մեծամեծ յոյսերով:

¹ Օր. Աբրահամ Անկիւրացիին («Պատմութիւն Հայերէն Նոր Դպրութեան», Վենետիկ, 1878, եր. 169:)

² L. Drapeyron - «Un Projet Francais de Conquête de l'Empire Ottoman au XVI et XVII

Հայաստանում գործող ֆրանսիացի հոգևորականներից մէկը գրում էր թէ ազատուելու տենչանքը շատ մեծ է հայ ժողովրդի մէջ, թէ նա դեռ խորապէս հաւատում է որ պիտի կատարուի Ներսէս Մեծի գուշակութիւնը³:

Սակայն ֆրանսիական ազատարար արշաւանքը տեղի չունեցաւ: Եւ Լուդովիկոսի տարածած պրոպագանդան միայն օգուտն ունեցաւ որ Բալկանեան թերակղզում կազմակերպուեցին ազատագրական շարժումներ, որոնք ներկայացնում էին այսպիսի մի ծրագիր. իրանք, ընկճուած ժողովուրդները կազմակերպում են զինուորական ոյժ, ազատագրական կոիւններ են սկսում տիրողների դէմ, իսկ քրիստոնեայ պետութիւններից մէկն ու մէկը իր հովանաւորութեան տակն է առնում այդ շարժումը, օգնական զօրք է ուղարկում, որ միացնում է իր գործողութիւնները ապստամբուած քրիստոնեաների հետ, դեկավարում է պատերազմական գործողութիւնները:

Ֆրանսիական ազատարար ծրագրին հայերին էլ հաղորդակից են անում Լուդովիկոս XIV-ի գործակալները⁴: Այստեղից ծնունդ է առնում այն մեծ շարժումը, որի սկզբում կանգնած են Իսրայէլ օրին և Յակոբ կաթողիկոսը: Սկզբում Հայաստանից պատգամաւորութիւն է գնում խնդրելու, որ քրիստոնէութեան անունով ազատուի հայութիւնը: Եւ երբ այդ բանը չէ աջողում, Իսրայէլ Օրին Հայաստան է վերադառնում, բերելով իր հետ մի ծրագիր, որ նման էր Բալկանեան ազգերի ընդգրկած ծրագրին:

Առաջին անգամն է որ մեր աչքի առջև հանդէս է գալիս գրաւոր փաստերով հարուստ և պարզ ու լայն գծագրուած մի քաղաքական ծրագիր, որ հայ ժողովրդի կողմից առաջադրում էր իբրև իր հայրենի երկրի ճակատագիրը տնօրինելու մի տենչանք: Այս ծրագրի հիմքը կազմում էին հայ ժողովրդի վաղեմի նուիրական ակնկալութիւնները – արևմտեան քրիստոնէութեան օգնութիւն և նրա միջոցով՝ Հայաստանի անկախութեան վերականգնում: Այս նպատակին հասնելու համար հայ երկիրը լարում է իր ամբողջ ռազմական կարողութիւնը, իր վրայ է վերցնում ազատարար

siècles» («Revue de Deux Mondes», Paris, 1876 liv. du 1 Nov., p. 122-147.

³ Michel Febvre - «L'Etat Present de la Turquie», Paris 1675 p. 407.

⁴ P. Du Mans - «Estst de la Perse en 1660». Paris, 1890, p. 302.

պատերազմի ծանրութեան մեծ մասը, բայց պատերազմ սկսում է այն ժամանակ, երբ նրա սահմաններին մօտենում է քրիստոնեայ պետութեան ուղարկած զօրքը: Ազատարար պատերազմի վերջնական նպատակն է հաստատել անկախութիւն հայ աշխարհի սահմաններում: Հարց չէ թէ ով կը լինի այդ անկախութեան գլուխը: Հայերը ամենայն յօժարութեամբ տալիս էին իրանց իշխանութեան թագը հէնց այն պետութիւններին, որոնք յանձն կառնէին իրանց զօրքերով ազատել Հայաստանը⁵:

Օրիի ծրագիրը վերաբերում էր Հայաստանի այն մասին միայն, որ գտնւում էր պարսից տիրապետութեան տակ: Հայոց հարցի այս մասնակի լուծումը պէտք էր ընդունել իբրև միակ հնարաւորը այն ժամանակուայ պայմանների մէջ: Բայց թիրքահայերը միանգամայն անմասնակից չէին մնում ազատագրական շարժման. նրանք զիւորական ոյժ էին հանում պարսկահայերի հետ միասին գործելու համար. նրանց հարուստները միացնում էին իրանց խոշոր նուիրաբերութիւնները պարսկահայերի տուած գումարներին:

Օրիի այս ծրագիրը օգային չէր: Պետրոս Մեծը ընդունեց այդ պայմանները, և սրա հետևանքով իրագործուեց այդ ծրագրի ամենադժուար մասն էլ, այն է հայ զինուորութիւնը, որ կազմակերպուեց Ղարաբաղի լեռնաշխարհում ամենակարճ միջոցում: Թէև Պետրոս Մեծը չը կատարեց իր ժամադրած խոստումը և նոյն իսկ դաշնադրութիւն կնքեց թիրքերի հետ ի վնաս Վրաստանի և Հայաստանի, բայց հայ զինուորութիւնը իրագործեց և Օրիի ծրագրի այն մասը, որ հայկական անկախութիւնն էր նախատեսում: Դաւիթ-բէկը Սիւնիքում կատարեալ անկախութիւն ստեղծեց՝ նոյն իսկ դրամ կտրելու իրաւունքով⁶: Սակայն սա եղաւ մի մասնակի երևոյթ. և երբ Պարսկաստանում ուժեղացաւ կենտրոնական իշխանութիւնը, Ղարաբաղի և Սիւնիքի ազատագրական շարժումները դատապարտուեցին մոռացութեան:

XVIII դարի երկրորդ կէսում դարձեալ արծածում է հայ հայրենիքի ազատագրութեան հարցը: Այս անգամ գործիչն է մի հնդկաստանցի հայ, Յովսէփ Էմինը: Նրա ծրագիրը միայն

⁵ Г. Эзовъ - «Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ», СПб. 1898, с. 28-44.

⁶ Հ. Մ. Չամչեան - «Պատմութիւն Հայոց», Հատ. Գ. Վենետիկ, 1786, եր. 797:

Պարսկական Հայաստանին չէր վերաբերում: Անձամբ շրջելով Թիւրքաց Հայաստանի շատ տեղերը, նա արձարժում էր հայրենիքի ազատութեան գաղափարը, հասկացնում էր ամենքին որ այդ գործը կատարել կարելի է միայն ապստամբական շարժումներով: Այդ քարոզութիւնը գտնում է համակրութիւն և Մուշի ս. Կարապետի վանքը դառնում է ծրագրուած կերպով գործողութիւններ պատրաստելու մի կենտրոնավայր:

Մնում էր դարձեալ այն հարցը թէ պետութիւններից ո՞րը կարող կը լինի Հայաստանի ապստամբական շարժման գլուխն անցնել: Էմինը դիմում է ռուսաց արքունիքին, բայց այստեղ մոռացուած էին Պետրոս Մեծի քաղաքական ծրագիրները և Էմինը հասկանում է որ պէտք է որոնել մի ուրիշ օժանդակիչ պետութիւն: Այդ պետութիւնը, նրա կարծիքով, կարող էր լինել Վրաստանը, ուր այդ միջոցին թագաւորում էր իր քաջարի գործողութիւններով անուն վաստակած Հերակլը: Ենթադրում էր որ Հերակլը կանցնի հայ զինուորութեան գլուխը և կը նուաճէ Հայաստանի երկու բաժիններն էլ, պարսկականը և թիւրքականը: Այս ուղղութեամբ էլ Էմինը բանակցութիւններ էր վարում Հերակլի հետ Թիֆլիսում⁷:

Այսպիսով, մենք տեսնում ենք որ նորից փորձ է լինում կենդանացնելու Իսրայէլ Օրիի ծրագիրը: Սակայն այդ միջոցին Էջմիածնում կաթողիկոսն էր Սիմէօն Երևանցին, որ ուզում էր հայերի ազատութիւնը, բայց մի հզօր պետութեան ձեռքով, առանց հայերի գործօն մասնակցութեան. Էմինի ապստամբական ծրագրին նա հակառակուեց իր ոգու ամբողջ կարողութեամբ:

Բայց Էմինի քաղաքական ծրագիրը միանգամից չը թաղուեց, երբ նա, չը գտնելով ոչ մի տեղ օգնութիւն, վերադարձաւ Հնդկաստան: Այդտեղ այդ ծրագիրը յայտնի է դառնում հայ վաճառական Շահամիրեանի նեղ շրջանում և հիմք է լինում որ Հայաստանի ազատագրութեան գաղափարը ստանայ գրական կերպարանք: Շահամիրեանի ընտանիքում ուսուցչի պաշտօն էր վարում մի դարաբաղցի հայ, Մովսէս Բաղրամեան անունով: Շահամիրեանը բաց է անում տպարան, իսկ Բաղրամեանը, Շահամիրեանի աջակցութեամբ, կազմում է երկու գիրք, որոնք առաջին անգամ հանդէս են բերում հայ քաղաքական միտքը: Այդ գրքերից մէկը,

⁷ Տ. իմ յօդուածները «Հայոց Գրականութիւն XVIII դարում»: («Մուրճ» ամսագիր 1903 թ. N 11 և 12):

որ կոչում էր «Նոր Տետրակ, որ կոչի Յորդորակ», լոյս տեսաւ Մադրասում 1772 թուին: Նրա մէջ Բաղրամեանը կրկնում էր այն քարոզութիւնները, որ արել էր Յովսէփ Էմինը Հայաստանի զանազան կողմերում: Յանդիմանելով հայերի անշարժութիւնը, ծուլութիւնը, տգիտութիւնը, նա հայ ազգի երեսին էր տալիս նրա ստրկութիւնը և ապացուցանում էր որ նա ինքն է իր դժբախտութեան պատճառը, որ ազատութիւն գտնելն էլ դարձեալ նրա ձեռքին է, մնում է դրա համար շարժուել, զգալ, գործել: Ազատագրութիւնը կատարում էր, ճիշտ ինչպէս Էմինն էր կարծում, Հերակլ թագաւորի միջոցով:

Բայց հնդկաստանցի գրողը բաւական չէր համարում այդքանը: Ինչ տեսակ կազմակերպութիւն պիտի ստանար ազատուած Հայաստանը: Այս հարցին նա նուիրում էր ամբողջ մի մեծ հատոր, որ կրում էր «Որոգայթ Փռոց» տարօրինակ անունը և որ լոյս տեսաւ Շահամիրեանի տպարանից հետևեալ տարին, 1773-ին: Սա արդէն ընթերցանութեան գիրք չէր, այլ յատուկ նպատակով էր տպուած շատ սահմանափակ թուով: Շահամիրեանը այդ օրինակներից ուղարկեց Հերակլ թագաւորին: Սիմէօն կաթողիկոսին, Ղարաբաղի մէլիքներին և այլ այնպիսի մարդկանց, որոնք կարող էին ազդեցութիւն ունենալ գրքի մէջ դրուած ծրագիրն իրագործելու համար: Այդ հատորը պարունակում էր իր մէջ օրէնքներ ազատուած Հայաստանի համար, օրէնքներ, որոնք կրում էին իրանց մէջ XVIII դարի ամենառաջադէմ հոսանքների ազդեցութեան խոր հետքերը: Ազատուած Հայաստանը, ըստ այդ օրէնքների, ոչ միայն անկախ է միանգամայն, այլ և ստանում է սահմանադրական-հանրապետական կառավարութիւն: Գործադիր իշխանութեան գլուխն է միայն որ կարող է լինել միանգամ ընտրուած և այնուհետև ոչ միայն անփոփոխ. այլ և ժառանգական: Այդ իշխանութիւնը յանձնում էր Հերակլ թագաւորին, որ Հայաստանի վրայ իրաւունք ունէր նախ և առաջ իբրև Բագրատունեաց ցեղի ներկայացուցիչ և երկրորդ՝ իբրև մի զինուորական գործիչ, որի ձեռքով իրագործուելու էր Հայաստանի ազատութիւնը:

Պետական կազմակերպութիւնը խիստ ազգայնական գոյն ունի. խղճի և անձնաւորութեան կատարեալ ազատութիւն է, բայց իւրաքանչիւր մարդ, որ ապրում է Հայաստանում, պիտի իրան պատիւ համարէ հայ կոչուելը և պիտի սովորէ հայերէն: Բոլոր

պետական և հասարակական պաշտօնները տրուում են միմիայն լուսատրչական-ազգային եկեղեցուն պատկանող հայերին, թէև միւս կրօնները ազատութիւն են վայելում: Կառավարչական ամբողջ մեքենան հիմնուած է ընտրողական սկզբունքի վրայ: Ձայնատութեան իրաւունքը չէ սահմանափակուած, ընդհանուր է: Սահմանում է պատգամատրների, կամ ինչպէս ասուած է «Որոգայթի» մէջ, փոխանորդների օրէնսդիր ժողով: Պատգամատրները ընտրուում են երեք տարով և գրկուած չեն վերընտրուելու իրաւունքից: Ամբողջ պաշտօնէութիւնը ընտրուում է պատգամատրներից, երեք տարուց յետոյ պաշտօնեաները փոխուում են, եթէ չեն վերընտրուում իբրև պատգամատր: Գործադիր իշխանութեան գլուխը (հանրապետութեան նախագահ այժմեան խօսքերով) կոչուում է նախարար: Միւս պաշտօնէութիւնները (մինիստրութիւն) են. լրտեսապետութիւն, զինապետութիւն, վառօդապետութիւն, կառապետութիւն, վրանապետութիւն, կերակրապետութիւն, գանձնապետութիւն, երկրաչափութիւն, պետ տկարների և աղքատների: Առաջին հինգ հիմնարկութիւնները զինուորական էին. կերակրապետութիւնը մի տեսակի երկրագործական մինիստրութիւն էր, գանձնապետութիւնը-ֆինանսների: Ընտրովի պաշտօնեաներ ամեն տեղ են՝ թէ՛ զօրքի, թէ՛ քաղաքացիական վարչութեան և թէ՛ դատարանի մէջ: Կայ և մի պատուատր պաշտօն, որ կոչուած է «Հայր Հայաստանեայց». սա ընտրուում է երեք օրուայ ժամանակով և պաշտօն ունի երդուեցնելու բոլոր պաշտօնեաներին: Ժողովրդապետութեան ամենազխատր սկզբունքը-պաշտօնեաների պատասխանատուութիւնը ազգի առաջ-չէր մոռացուած օրէնսդրութեան մէջ, պաշտօնը չէր արգելում որ զանցառու կամ կաշառակեր պաշտօնեան, սկսած նախարարից, դատի ենթարկուի և հրաժարեցուի իր տեղից: Նախարարի պաշտօնի հետ կապուած են հետևեալ պարտատրութիւններն ու իրաւունքները. խստութեամբ պահպանել օրէնքները, լինել հայ ազգի ներկայացուցիչ և բերան, վարել արտաքին քաղաքականութիւնը՝ պատերազմ հրատարակելու և հաշտութիւն կնքելու իրաւունքով: Նախարարը զօրքերի ծայրագոյն հրամանատարն է, իրաւունք ունի ներում շնորհել մահապարտներին, բայց տարին եօթն անգամից ոչ ակել:

Պետութեան գլխատր նեցուկը զօրքն է: Բանակը 90 հազա-

րից է, ձիաուր և հետևակ: Դրօշակների գոյներով բանակը բաժանում է երեք սպարապետութեան–կարմիր, կապոյտ և դեղին: Սպարապետութիւնն էլ ընտրովի է: Առաջին անգամից զարմանալի է թու՛մ որ հրամանատարներ ընտրողը զօրքը չէ, այլ պատգամաւորների ժողովը: Բայց պէտք է իմանալ որ հնդկահայ օրէնսդիրների դրած կարգն այն էր, որ զինուորութիւնը առանձին կաստա չէ, իւրաքանչիւր հայ զինուոր է, 12 տարեկան հասակից պիտի զինավարժութիւն և զինուորական ծառայութիւն սովորէ: Գործող բանակի մէջ երիտասարդները մտնում են ընդհանուր զինուորագրութեան կանոնով-վիճակահանութեամբ. 100-ից 5-ը զինուոր պիտի գնան վիճակով և ծառայեն զօրքի մէջ 7 տարի:

Պետական եկամուտները գոյանում են հարկերից և տուրքերից: Գլխահարկ չը կայ, որովհետև նա ստրկութեան նշան է, իսկ Հայաստանի իւրաքանչիւր բնակիչ միանգամայն ազատ մարդ է: Ազգաբնակչութիւնը հարկ է տալիս իր կերած կերակրից, հագած զգեստից և գործ աճած աղից: Այստեղ մենք տեսնում ենք հարկային ծանրութիւնը անելի ունևորների վրայ դնելու ձգտումը. թէև կեանքի ամենաանհրաժեշտ պիտոյքները հարկի ենթարկելը զգալի ծանրութիւն է աղքատ ազգաբնակչութեան համար, բայց կայ և այն հանգամանքը, որ ունևոր դասակարգը, իբրև անելի շատ սպառող, շատ էլ հարկ էր տալիս: Նոյն սկզբունքին էր ձգտում և կողմնակի հարկերի սիստեմը, որ համարեա միայն շքեղութեան, արդուզարդի առարկաների վրայ է ծանրացած:

Հոգևորականութեան պատուաւոր տեղ էր յատկացւում հայկական հանրապետութեան մէջ: Պատգամաւորների ժողովում նախարարից յետոյ առաջին տեղը պատկանում էր կաթողիկոսի ներկայացուցիչ եպիսկոպոսին, որ, ինչպէս և նախարարը, երկու ծայն ունի: Բայց և այդպէս, եկեղեցին բաժանուած է պետութիւնից, ո՛չ պետութիւնը պիտի խառնուի հոգևորականութեան գործերի մէջ, ոչ հոգևորականութիւնը՝ պետութեան գործերի մէջ:

Այսքանն էլ բաւական է՝ այդ կանոնադրութեան մասին մի հասկացողութիւն կազմելու համար: Թէև նա առանձին ընդունելութիւն չը գտաւ ազգի մէջ, ընդհակառակն՝ գրգռեց Սիմէօն կաթողիկոսի բարկութիւնը, թէև նա անելի մի ուսօպիա էր՝ երոպական ձևերի վրայ կարակատած, բայց և այնպէս, վերին աստիճանի հետաքրքրական է իբրև հայ մարդկանց իղէալ, իբրև գաղափար՝

հայրենի երկիրը ազատելու և բարեկարգելու մասին: Նա մեզ ցոյց է տալիս թե որքան մեծ և վեհ հասկացողութիւն էր կազմում մեր մէջ հայրենիքի վերաբերմամբ: Նա ներկայացնում էր խիզախ, որոնող և պահանջող միտքը, որ ազատուելով կրօնական կապանքներից, սաւառնում էր քաղաքական լայն հորիզոնների վրայ:

Այս քաղաքական գրականութիւնը լոյս էր տալիս ժամանակին, երբ նորից սկսուել էր արծարծուել հայոց հարցը: Եկատերինա II-ի և Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ժամանակներն էին: Եւ հանրապետական Հայաստանի կանոնադրութիւնից հազիւ մի 6 տարի անցած, 1779-ի ձմեռը Պետոգրադում վերին աստիճանի կարևոր բանակցութիւններ սկսուեցին Հայաստանի ազատութեան մասին: Հայ ազգի դատը ներկայացնում էին Արղութեան արքեպիսկոպոսը և Յովհաննէս Լազարեանը, իր փայլուն դիրքով, իր հարստութիւնով և խելքով աչքի ընկնող այն հայրենասէր հայը, որ Լազարեան ճեմարանի հիմնադիրը դարձաւ: Ռուսների կողմից, իշխան Պօտեմկինի յանձնարարութեամբ բանակցում էր հռչակաւոր զօրավար Սուվորովը: Ահա ինչպէս էին ձևակերպում հայերը իրանց հայրենիքի կազմակերպումը.

«Հայաստանը մի քանի դար է, ինչ գրկուել է իր թագաւորից և առանձին կառավարութիւնից, շատ տեղերի տիրել են թիրքերը և պարսիկները, իսկ մի փոքրիկ մասը, այսինքն Ղարաբաղը, այժմ էլ մնում է անկախութեան մէջ: Բայց եթէ ազգից մի որ և է գլխաւոր դուրս գայ, շատ հեշտ միջոցով կարող է Հայաստանը նորից վերականգնել և մի կարճ միջոցում տեղի կունենայ ժողովրդի մի ոչ փոքր հոսանք դէպի Հայաստան: Բնական ամուր տեղերը բաւական լաւ միջոց կարող են դառնալ ինքնապաշտպանութեան համար, հողի յատկութիւնը և կլիման, առանց որ և է պակասութեան, կարող են տալ բոլոր հարկաւոր մթերքները, նոյն իսկ սեփական վառօդ, երկաթ և արճիճ էլ կարող են ստանալ: Ղարաբաղի մէլիքները թէև ոչ ոքից կախում չունին, բայց իրանց անմիաբանութեամբ պատճառ են դարձել, որ իրանց ոյժերը ջլատուեն: Բացի դրանից, այդ հայ տիրողների տգիտութիւնը բոլորովին անպէտք է դարձնում նրանց՝ թէ իրանց և թէ ամբողջ ազգի համար: Միւս տեղերի հայերը, լինելով պարսիկ խաների իշխանութեան տակ, հարստահարուած են և նրանց մեծ մասը փախել է Թիւրքիա:

«Եթէ ժողովրդի ընտրութեամբ կամ բարձրագոյն (կայսրուհու) բարեհաճութեամբ ազգից մի գլխաւոր դուրս գար, առաջին անգամի համար բաւական կը լինէր որ նա կարողանար հաստատուել Դերբենդում և նրան օգնութիւն տրուէր տիրելու Շամախուն ու Գանձակին: Այն ժամանակ Ղարաբաղից և Սղնախից, որոնք անկասկած կը միանան, բաւականաչափ զօրք հաւաքելով, կարող է Երևանն ու ուրիշ քաղաքները գրաւել: Դրա համար հարկաւոր է երկու կամ երեք հազարից ոչ ւել զօրք երկու տարուայ ընթացքում, մինչև որ այդ գլխաւորը կը գրաւէ Երևանը. գրաւելուց յետոյ, հայկական զաւառների եկամուտներով, առանց որ և է պակասութիւն զգալու, կարելի է պահել զօրքերի մի մեծ քանակութիւն: Բայց հայոց պետը սկզբում պիտի ունենայ մի քիչ թնդանօթածիզ և հետևակ զօրք, որպէս զի կարողանայ պաշտպանուել և ապահով լինել, մինչև որ ազգային զօրքը կը սովորէ կանոնաւոր կրթութիւն և այնուհետև նա ինքը կարող կը լինի ամրացնել իր սահմանները և պաշտպանուել Թիւրքիայի և Պարսկաստանի յարձակումներից:

«Այսպիսի մի ձեռնարկութիւն կարող է կայսերական մի խօսքով և ամենահեշտ միջոցով, առանց ամենափոքր կասկածի անգամ, գլուխ գալ և նրա (կայսրուհու) հովանաւորութեամբ մի կարճ միջոցում ոչ միայն կամրապնդուի ի յաւիտենական փառս Ռուսաստանի, այլ և ապագայում կարող է ծառայել Թիւրքիան և Պարսկաստանը ճնշելու համար, որովհետև երբ հայ ժողովուրդը կը համախմբուի իր կառավարութեան իշխանութեան տակ և մի քիչ էլ կը տարածէ իր սահմանները, այն ժամանակ կը ստանայ անելի մեծ եկամուտներ, քանի որ կունենայ առատ բերքեր բերող շատ տեղեր և մշտապէս կը պահէ 15-ից մինչև 20 հազար զօրք, իսկ Թիւրքիայի կամ Պարսկաստանի դէմ պատերազմ լինելու դէպքում, ժամանակով կարող կը լինի գործ ածել մինչև 60,000 և ւել զօրք: Բացի դրանից նոր ազգը պարտաւորուել կարող է, հարկաւոր դէպքերում, Ռուսաստանին տալ զօրք այնքան, որքան կարող կը լինի ամեն մի անգամ, և միշտ երախտապարտ կը մնայ Ռուսաստանին իր փրկութեան և վերականգման համար: Իսկ թիւրքաց պետութիւնը ժամանակով այս փոփոխութիւնից առաջացած մեծ վնասը կը նկատէ թէ իր ժողովրդի և թէ իր եկամուտների մէջ»⁸:

⁸ “Собрание актовъ, относящихся до обозрѣнія Исторіи Армянскаго народа” ч. II,

Ռուսաց կառավարութեան կողմից դրական հաւաստիացումներ եղան որ այդ միտքն ընդունուած է և Անդրկովկասում պիտի կազմակերպուի մի անկախ Հայաստան՝ Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Յայտնի էր դառնում որ Հայաստանի թագը ստեղծուած էր կայսրուհու մտերիմ իշխան Պօտեմկինի համար: Հայաստանին այսպիսի կազմակերպութիւն տալու հետ միասին Ռուսաստանը ծրագրում էր ուժեղացնել Վրաստանը և այսպիսով, այս անդրկովկասեան երկու քրիստոնեայ պետութիւնների միջոցով մի հզօր պատուար ստեղծել մահմեդականութեան դէմ:

Քանի որ այստեղ մեր նպատակն է ներկայացնել այն ծրագիրները, որոնք կազմուած էին ազատուած Հայաստանին քաղաքական մի որոշ կերպարանք տալու համար, չենք կարող անտես անել հէնց այդ բանակցութիւնների ժամանակ կազմուած երկու դոկումենտներ: Ոգետրուած Եկատերինայի արքունիքի արած դրական խոստումներից, Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, ոչ, իհարկէ, առանց Յովհաննէս Լազարեանի գիտութեան և թելադրութեան, կազմեց մի դաշնադրութիւն, որ պիտի որոշէր անկախ Հայաստանի և Ռուսաստանի յարաբերութիւնները: Դաշնադրութիւնը բաղկացած էր երկու կտորից-մէկը Հայաստանի կողմից, միւսը Ռուսաստանի կողմից և սահմանում էին երկու երկիրների իրաւունքներն ու պարտականութիւնները: Այս թղթերը երբէք ստորագրուած ու վաւերական դոկումենտների նշանակութիւն չը ստացան, որովհետև ռուսաց կառավարութիւնը յայտնեց Արղութեանին թէ պետութիւնները կարող են դաշնադրութիւն կնքել պետութիւնների հետ, այն ինչ հայերը դեռ պետութիւն չեն կազմում⁹, բայց և այդպէս, այդտեղ արտացոլում են այն ժամանակուայ հայ գործիչների քաղաքաման իղէալները իրանց հայրենիքի վերաբերմամբ, ուստի և բերում ենք այստեղ այդ երկու թղթերն էլ.

Москва, 1838, с. 68-70.

⁹ Տ. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նամակները Շահամիրեանին, Հնդկաստան.-Էջմիածնի գրադարան:

Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց, Ռուսաց եւ Հայոց

I

Ա) Նախքան զամենայն հաստատել զսէր և զմիաբանութիւնն ի մէջ երկուց ազգացս՝ ըստ այնմ՝ «Դուք ամենքին եղբարք էք». որք ի մէջ իրեանց չունիցին ամենևին խտրութիւն օրինաց ոչ Ռուսաց առ հաւատս և յեկեղեցիս մեր, և ոչ մեր առ նոսա. «զի Քրիստոս ոչ այլ ինչ է եթէ ո՛չ հաւատ սիրով յաջորդեալ» (Գաղատացւոց 7 գլուխ 6 համար) այլ համարել զմիմեանս միոյ և նոյնոյ հաւատոյ և եկեղեցւոյ ծնունդ հիմնեալ ի վերայ Փրկչական բանի թէ «այսու ծանիցեն զձեզ թէ իմ աշակերտ էք, թէ զմիմեանս սիրեցէք». վասն որոյ և համարձակեալ և մուտ առնել յեկեղեցիս իրերաց, որպէս զի մի՛ մնասցէ նիւթ խռովութեան, վասն զի միապէս դաւանեմք զպաշտելի սուրբ երրորդութիւն և մարդեղութիւն բանին Աստուծոյ՝ Աստուած և մարդ կատարեալ, և վասն մեր չարչարեալ զոր ի Հաւատամք-ի պաշտի և ի նոցանէ ի մէնջ որ հիմն քրիստոնէական ազգաց են ի վերայ կածեցեալ դատողութեան մարդկան:

Բ) Զհետտալս յիրաքանչիւր ազգացս չնկալնուլ ի հաղորդութիւն իբր զպղտորիչս և զխռովարարս սիրոյ և խաղաղութեան:

Գ) Ի հաւատս զալ ոմանց տաճկաց և հեթանոսաց, որ ազգի կրօն կամիցին ըմբռնել նա նովաւ մկրտել, թարց գայթակղութեան արգելման լիցին ըստ հաճոյից նոցա որպէս միևնոյն քրիստոնէական օրինաց պաշտօնէից:

Դ) Կապակցութիւն երկուց թագաւորութեանց մեծ դաշամբ յախտենականաւ:

Ե) Լինիցին ի Հայաստան չափաւոր զօրք Ռուսաց երանալով միով յազգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց՝ Պարսից և Օսմանցոց և ի ժառանգաց թագաւորութեան մինն դնիցի ի դրունս Կայսեր:

Զ) Հպատակութիւն մեր այնպէս եղիցի, որպէս լինիր երբեմն Յունաց և Պարսից տալով ի յարքունիս հարկացն և ի հանքաց

ոսկւոյ և արծաթոյ. և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանեն որքան և հարկն պահանջեսցէ:

Է) Մինչ ամենաողորմած և օգոստափառ Կայսրուհին կամի օգնութիւն առնել տարաբախտ աշխարհի մերոյ և կործանեալ թագն նորոգել, ընտրութիւն թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամաց նորա միայն, եթէ յազգէ մերմէ և եթէ դրան իւրոյ հաւատարմաց:

Ը) Որ ոք թագաւոր կացուցի լինիցի հայոց օրինօք և ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն, ի սուրբ Էջմիածին օծանիցի որպէս նախնի թագաւորքն մեր:

Թ) Զթագաւորական քաղաքն պատրաստեալ ի Վաղարշապատ կամ յԱնի թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յԱյրարատ գաւառի:

ժ) Սահմանեալ կաւալերն (օրդըն նշան) լինել տապան Նոյի, և լենտն երեք գոյն կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյն աղեղան որ զկնի ջրհեղեղին տաւ Աստուծ Նոյի ի նշան հաշտութեան:

ժԱ) Եթէ հաստատեսցի և այլ կաւալեր լինիցի յանուն սուրբ Լուսաւորչին օրտն պատկեր նորա և լենտն որպէս հաճոյ լինիցի:

ժԲ) Հաստատեսցի և առաջին նշան մեր դաստառակի Քրիստոսի, զոր և առաքեաց առ Աբգար թագաւորն մեր, տացի յաղթանակողացն միայն կարմիր լենտի:

ժԳ) Յարմարեսցի կնիք թագաւորական ըստ սովորութեան առաջնոց թագաւորացն մերոց Արշակունեաց արծիւն միագլխի, որ նախքան զքրիստոնէութիւնն, գառն ի ժամանակի քրիստոնէութեան և երկու առիծն ի Փոքր Հայաստան և նօքօք զարդարեսցին հանդերձք թագաւորաց մերոց և դրոշակքն և դրամքն:

ժԴ) Յազգէ առաջնոյ նախարարացն մերոց և իշխանաց յայտնեսցի ոք որքան հայրենիք ունեցեալիցէ որ վկայութեամբ հաստատեսցէ վերադարձուցեալ եղիցի առ նա և պատիւ նախագահութեան ազգին պահպանեսցի:

ժԵ) Ի նորոգել իշխանութեան մերոյ մի լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել ի նոցանէ, այլ

լինիցին այնպես որպես յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցւոց և Պարսից, որք թագաւորին միայն են ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել զգիւղ ինչ, բնակչան շնորհեսցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարող է զգիւղն ընդ բնակչաց ի միասին ծախել և ոչ թէ բնակիչսն. այլ գիւղն ընդ մլըոյն այսինքն ընդ հողոյն և ջրոյն, զոր գործեն մարդիկք. Յոյնք յորժամ տիրեցին մեզ զկնի անկման թագաւորութեան Արշակունեաց՝ կամեցան զմեզ սեփական ծառայ իշխանաց իրեանց առնել. ուստի ազգ մեր ոչ հաճեցաւ առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բաղդադու խալիֆային զի ազատ մնասցեն:

ԺԶ) Յաղագս վաճառականութեան սահմանեցի օրէնք ի մէջ երկուց թագաւորացս և յատկացուցի մաքս իւրաքանչիւր վաճառելի իրաց և տացի մեզ նաւահանգիստ ի Կասպիսական ծովուն:

ԺԷ) Փախուցեալ զինւորաց և հպատակաց սահմանել օրէնք, և վասն որպիսաբար ընդունելոյ և ռուսաց իշխանս, զազնիս և զպատուոր անձինս ազգի մերում:

ԺԸ) Ընտրութիւն Հայրապետին մերոյ լինիցի յառաջարկութիւն թագաւորին մերոյ (որպէս յայնմ ընտրի ի բոլոր ազգէն): Որովհետև պայծառափայլ Գրիգոր Ալեքսանդրիչ Պոտեմկինն է յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենաողորմած Կայսրուհոյն է կառավարիչ գործոյս այսմիկ, և ազգի մերում յատուկ խնամակալ և բարերար, զոր ինչ նա տնօրինեսցէ, զի շնորհ ողորմութեան մարդասէր Կայսրուհոյն, նորին միջնորդութեամբ յառաջանայ որպէս յաթոռոյ Աստուծութեան ի հրեշտակաց առ մարդիկ:

II

Ա) Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակաւ ի տանէ հայոց ըստ օրինացն Հայաստանեայց:

Բ) Նախարարն Հայոց լիցի ի բուն ազգէն և ի ժառանգութենէ Հայոց դաւանութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ:

Գ) Ի զօրաց Կայսերութեան Ռուսաց 2000 ձիաւորք, 2000

հետևակք և 2000 ոմբածիզք (թնդանօթածիզ) ըստ կարգի պետօք թօփխանայիք, ճեպխանայիք և կերակրովք, և այլ ամենայն հարկաւոր գործովք և պիտոյիք, քսան ամ ժամանակօք կայսերական ծախիք կալով մնասցեն յերեսս երկրին Հայաստանեայց վասն պահպանութեան երկրին և ազգին Հայոց:

Դ) Ամենայն ամրոցք և պատրաստութիւնք զինուց լինիցին ի ներքոյ հրամանի սպարապետին ռուսաց մինչև ելանել նոցա ի Հայաստան աշխարհէ:

Ե) Ի տանէն Հայոց հատուցումն լինի կայսերութեան վասն ծախուց 6000 զինուրաց և պետաց ռուսաց իւրաքանչիւր տարւոյ 60000 թուման յորոց 30000 լիցի ոսկի և արծաթ իսկ մնացեալ 30000 հաց, միս և գինի:

Զ) Վերոյիշեալ 6000 զօրքն Ռուսաց անդրէն դառնան առ կայսրութիւն իւրեանց այսպիսի կերպիւ. 2000 զօրքն յետ տասն ամաց, 2000 հնգետասաներորդ տարին և 2000 քսաներորդ տարին. և իւրաքանչիւր ի վերոյիշեալ ժամանակաց ելանողին լիցին չափաւորութեամբ իւրաքանչիւր պաշտօնի զինուրաց, և նմանապէս պակասեցի ի տանէն Հայոց հատուցումն վասն ծախուց նոցին իւրաքանչիւր ելանողաց 2000 զօրաց 20000 թուման տարեկան:

Է) Ի լրանալ քսան ամի վերոյիշեալ հատուցումն ի տանէն Հայոց մեծի կայսերութեան, եթէ զքոլորն ոչ լինիցի արարեալ, որ ինչ լինի մնացեալն, այն պարտք լիցի անժխտելի ի վերայ տան Հայոց: Զի հատուցէ գանձարանի կայսեր տասնևվեց տարի ժամանակաւ իւրաքանչիւր տարւոյն այն պարտք ի տասն բաժնէն մէկն առանց շահի:

Ը) Ի տանէն Հայոց իւրաքանչիւր տարւոյ մի անգամ ընծայեցուցեալ լինի Կայսեր Ռուսաց և ի նշան հնազանդութեան քսան մսխալ զուտ ոսկի, երեք ձի և վեց խոյ:

Թ) Տունն հայոց ծանիցէ զկայսերութիւն Ռուսաց զիւր ազատիչ ի գերութենէ կալով մնացէ բարեկամ ընդ բարեկամս, և թշնամի ընդ թշնամիս Կայսեր և մեծ Կայսրն սիրեսցէ զբարեկամս և ատեսցէ զթշնամիս Հայոց:

Ժ) Եթէ հրամանն ի կայսերութեան ելանէ ընդունել ի տանէն Հայոց զգինուրս, տունն Հայոց պարտական լիցի տալ մինչև ց6000 զօրս և միննոյն կերպի ստանալ ծախս նոցա ի կայսերութենէ, որպէս կայսերութին ի հայոց զհարդ ի վերն ի հինգերորդ պայմանին գրեալ է:

ԺԱ) Ամենայն ոք թէ կարգաւորք և թէ զինուորք որ ընդ հաւանութեամբ Կայսեր է պարտաւոր լիցի ի մէջ աշխարհի և ազգին Հայոց, սոյնպէս զկարգաւորս և զզինուորս, որ յազգէն Հայոց լիցի պատուելի ի մէջ ազգին Ռուսաց որպէս զազգըս իւրեանց:

ԺԲ) Զկերպ աստուածաշտութեան Ռուսաց պատուեցեն Հայք և Հայք պաշտեցեն զամենայն ըստ սովորութեան իւրեանց եկեղեցւոջ և զնոյն պատուեցեն Ռուսք:

ԺԳ) Ընդարձակապէս մտցեն և ելցեն ամենայն արիեստաւորք և վաճառականք յաշխարհէ Ռուսաց, որ և իցէ ամենայն ձեռագործք աշխարհին Հայոց հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին Հայոց, նմանապէս և Հայք մտցեն և ելցեն աներկիւղ և անկասկած յաշխարհ Ռուսաց և ինչնիցէ ձեռագործք հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին Ռուսաց:

ԺԴ) Քրէական մեղապարտք, փախստականք եթէ ի ռուսաց աշխարհն հայոց և ի հայոց յաշխարհ ռուսաց ընկալնուն պահպանութիւն միայն կենաց. բայց զրկեալքն ի պատույ և զոր ինչ պաշտօնէ իցէ, կամ փախստական եթէ լինիցի պարտաւոր ոսկւոյ և արծաթոյ, և եթէ հայոց, պարտ է նմա դատել ըստ օրինաց աշխարհին, յորում գտանիցի անձն նորա, և փախստականն իցէ եկեղեցական պարտ իցէ դարձուցանել զնա առ առաջնորդն իւր:

ԺԵ) Տունն Հայոց կառավարեցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի Հայոց և զոր ինչ աւելին յայնմանէ դիպած և կառավարեցին ի հաստատութեան նոյնոյ օրինաց:

ԺԶ) Կայսերութիւն Ռուսաց ծանիցէ զտունն Հայոց իբրև զթագաւոր Հայաստանեայց, և որոց զդեսպանն մեծ, բերան հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ:

ժԷ) Որովհետև երկրակցությունը և ազգաբնակչությունը Հայոց, Աղանից և Վրաց ի հնոյ ժամանակէ իբրև զմի են, որ և այժմոյս սիրելի են միմեանց, վասնորոյ ի հարկաւոր ժամանակի տալով Հայոց 6000 զօրս Ռուսաց, ունիցին ևս ազատութիւն օգնական լինելոյ Աղանից և Վրաց որքան կարող լինիցին:

ժԸ) Վասն հատուցումն լինելոյ զտարեկան ծախսուց 6000 զօրաց Կայսեր գրաւ լիցի չորս ի տասն մասնէ բոլոր եկամտից Հայաստան աշխարհին, այսպէս տասնէն զչորս մասն Հայրապետին Հայոց վասն ծախսուց կրօնաւորաց, տնանկաց, աղքատաց և նորոգութեան վանօրէից և այլոց պիտոյից. իսկ մասն գանձարանին ընդհանուր տանն Հայոց:

ժԹ) Հատուցմունք որ ի վերայ պարտին լինիլ ի չորս եղանակս տարւոյն, այսինքն նախ՝ ի մարտի 20երորդ, յունիսի 20րդ, սպետեմբերի 20րդ և չորրորդ դեմկտեմբերի 20:

Ի) Եթէ հանդիպեսցի ինչ սխալանք յանդիմանութիւնք կամ զանազանութիւնք ի մէջ երկուց ազգաց տէրութեանց Ռուսաց և Հայոց, առ որս խռովութիւնք բոլորովմբ արգելեալ է և վրէժխնդրութիւնք փակեալ, պարտ լիցի երկուց կողմանց զգանգատս և զպատասխանիս իրեանց ընծայել առ ի սպաս ամենայն փառաց արժանի Կայսերն Հռովմայ այսինքն Գերմանիոյ. և ի վերայ որոց ի նմանէ լեալ վճիռն լիցի երկուց կողմանց արդարութեան. արդ եթէ հաճոյ թեսցի կամաց Հայրապետին և իշխանաց և տանուտէրանց Հայոց յայսմանէ տպեսցի երկու հարիւր հատ յամի տեառն 1779¹⁰:

Հայաստանի ազատութիւնը վճռուած էր իրագործել 1784-ին, երբ ռուսական զօրքերը Ղզլարից և Մոզդուկից պիտի արշաւէին դէպի Անդրկովկաս: Հաստատապէս վճռուած էր ոչնչացնել Շուշու Իբրահիմ խանին և Ղարաբաղից ու Ղարադաղից կազմել մի հայկական պետութիւն, որ ոչ ոքից կախում չունենար, բացի Ռուսաստանից: Պետութեան տալ մի այնպիսի ժողովրդական կազմակերպութիւն, որ միւս տեղերի հայերն էլ ենթարկուէին

¹⁰ «Դիւան Հայոց Պատմութեան» հրատ. Գիւտ ա. քահ. Աղանեանի, գիրք Դ., Թիֆլիս 1899, էր. 731-737 (Տ. նաև «Հայոց Պատմութիւն» Վարդան եպիս. Օծնեցու, ձեռագիր Էջմիածնի մատենադարանում):

Ղարաբաղի օրինակին, այսինքն՝ նոյնպես ձգտելին անկախութեան¹¹:

Բայց արշաւանքը չը կայացաւ և հայկական հարցը դարձեալ սկսեց ձգձգուել: Իշխան Պօտեմկինի մահը (1791) չը վերացրեց հարցը: Նրան յաջորդեցին ուրիշ մարդիկ, որոնք նրա ծրագիրներից աւելի համարձակ և անիրագործելի ծրագիրներ էին կազմում, որոնց մէջ իր տեղն ունէր և Հայաստանը: Բայց այս միջոցին առաջ է գալիս դարձեալ հնդկահայ միտքը՝ հայրենիքի ազատութեան վերաբերեալ: Դարձեալ նոյն Շահամիրեանն է, որ այժմ սկսում է ապացուցել թե հայոց հարցի լուծման ամենահեշտ միջոցն այն է, որ Հայաստանը տրուի վրաց Հերակլ թագաւորին: Ղուկաս կաթողիկոսին գրած իր նամակում նա ասում էր թէ պէտք է որոնել Հայկի սերունդներից մէկին, եթէ այդպիսին չը գտնուի, պէտք է կանգ առնել Բագրատունեաց ազգատոհմի վրայ և նրան առաջարկել Հայաստանի կառավարութիւնը: Այդպիսին կարող էր լինել Հերակլը, որ նոր մտել էր Ռուսաստանի հովանաւորութեան տակ և հետևաբար այս ծրագիրն իրագործելու ժամանակ կը գտնէ Ռուսաստանի կողմից կատարեալ աջակցութիւն: Անմիջական բանակցութիւններ սկսելով և Հերակլի հետ, Շահամիրեանն այսպէս էր նրան ներկայացնում իր ծրագիրը. Հերակլը պիտի գրէր «գիր շնորհաց», այսինքն բոլոր հայերին ուղղած մի նամակ, որի մէջ նա խոստանում էր իր հովանաւորութիւնը հայ ազգին և հրաւիրում էր հայրենիքից հեռացածներին վերադառնալ իրանց երկիրը: Այդտեղ հայերն ստանում էին արտօնութիւններ, վճարում էին չափաւոր հարկ: Ապա Հերակլը պէտք է կանոններ պատրաստէր ժողովրդի համար և այդ կանոնները, իհարկէ, պէտք է վերցուած լինէին իր հրատարակած «Որոգայթ Փառաց» գրքից, ուր, ինչպէս գիտենք, որոշում էր Հայաստանի համար հանրապետական կառավարութիւն: Ամբողջ Հայաստանը Շահամիրեանը համարում էր Հերակլի ժառանգութիւն: Եւ յիշեցնելով, որ այդ ժառանգութեան մի մասը դեռ գտնուում է պարսից տիրապետութեան տակ, յիշեցնելով թէ որքան ամօթալի բան է որ քրիստոնեաները ենթարկուած լինեն մահմեդականների լուծին, Շահամիրեանն ասում է որ այժմ, երբ վաղուց վերջացած է Սէֆէվիների տոհմը և Պարսկաստանը երերուն պիքների է նմանում, եկել հասել է ժամանակը որ Հերակլը տարածէ իր իշխանութիւնը և պարսիկների վրայ: Դա հեշտ է,

¹¹ П. Бутковъ—“Матеріалы по новой исторіи Кавказа” томъ II, Спб. 1869, с. 142.

պէտք է միայն գոյքի, կեանքի ապահովութիւն և դաւանական ազատութիւն խոստանալ: Ինչ վերաբերում է ժառանգութեան այն բաժնին, որ գտնուում է Թիւրքիայի տիրապետութեան տակ, Շահամիրեանը խորհուրդ էր տալիս կամաց կամաց պատրաստուել և այդ ժառանգութեան ստանալու: Պէտք էր սպասել յարմար ժամանակի, իսկ մինչև այդ՝ հարկաւոր էր գրաւել այն կողմերի հայերի սիրտը: Գրաւելու ամենագեղեցիկ միջոցը դարձեալ նոյն ազատ, ժողովրդական օրէնսդրութիւնն էր: Երբ միանգամից այդ օրէնքները կը մտցուեն Հերակլի ազատած Հայաստանի մէջ, այն ժամանակ Թիւրքիայի հայերն էլ կը հասկանան թէ ինչ գեղեցիկ բան է դա և հարկաւոր դէպքում արդէն միանգամայն համոզուած կը լինին թէ պէտք է իրանց երկիրն էլ միացնել ազատ Հայաստանին:¹²

Այս բանակցութիւնների գործնական արդիւնքն այն եղաւ որ Հերակլը Շահամիրեանին ընծայեց ամբողջ Լօռին իր բոլոր գիւղերով: Հարուստ հնդկահայը, ունենալով բաւական ընդարձակ սեփական հող, կարող էր այնտեղ փորձել իր ծրագիրների գործադրութիւնը, բայց չը կարողացաւ թողնել իր առևտուրը Հնդկաստանում և երբէք չը տիրապետեց իր ստացած կալուածին:¹³

Երևի այս նոյն աղբիւրից էր բղխում և այն թուղթը, որ 1792 թուին ուղարկուեց Եկատերինա կայսրուհուն և որի մէջ բացատրում էր թէ ինչ ահագին օգուտներ կունենայ Ռուսաստանը, եթէ ուժեղացնէ Վրաստանը և վերականգնէ հայոց թագաւորութիւնը, տալով նրա թագը վրաց թագաւորին: Այս դէպքում հայերը միշտ հաւատարիմ կը մնան Ռուսաստանին, կը ծաղկեցնեն նրա առևտուրը. ամեն կողմից կը հաւաքուեն իրանց թագաւորի շուրջը¹⁴:

Բայց վրաց թագաւորութիւնն անբուրեց Աղա-Մամէդ-խանի արշաւանքից 1795-ին: Յաջորդ տարին ռուսական զօրքը սկսեց արշաւանք դէպի Անդրկովկաս, պարսից Շահին պատժելու համար: Արդութեանն էլ հրաւիրուեց մասնակցելու այդ արշաւանքին: Վաղուց էր սպասում այդ ազատարար շարժումը և Արդութեանը նորից ոգևորուեց, կարծելով թէ այժմ արդէն եկել է վաղեմի խոստումների

¹² «Դիւան Հ. Պատմ.» Հ. Դ. եր. 600:

¹³ Ս. Վ. Թէոդորեան-«Պատմութիւն Մուրատեան վարժարանին», Հատ. Ա., Պարիզ, 1866 եր. 594:

¹⁴ А. Цагарели-“Граматы и другіе историческіе документы XVIII столѣтія, относящіяся до Грузіи”. т. II, Спб. 1902, с. 73.

իրագործումը: Բանակի մէջ նա ամեն կերպ աջակցում էր ռուսական զօրքի աջողութեան և իր ցուցմունքների մէջ նա յիշեցնում էր թէ պէտք է ոյժ տալ Ղարաբաղի մէլիքներին, գործադրել նրանց գինուորական ոյժը, կազմակերպել նրանց իշխանութիւնը և այլն:

Արդէն ռուսաց մի զօրաբաժին հրաման էր ստացել արշաւել դէպի Գանձակի կողմերը: Այս արշաւանքով էլ պիտի իրագործուէր հայերին խոստացած ազատութիւնը¹⁵: Բայց այդ միջոցին վախճանուեց Եկատերինա Կայսրուհին: Նրա որդի Պաւել կայսերը իսկոյն յետ պահանջեց զօրքերն Անդրկովկասից և վերջ տուեց իր մօր քաղաքականութեան: Սկսում էր քաղաքական նոր ուղղութիւն, որի մէջ կար Անդրկովկասը, բայց չը կար այնտեղ քրիստոնէայ պետութիւն հիմնելու միտքը: Ռուսաստանը ձեռնարկեց այդ երկրի նուաճման՝ պարզապէս իր երկիրներին կցելու համար:

Այս գործողութիւնը վերջանում էր 1827 թուի հոկտեմբերի 1-ին, երբ ռուսական զօրքը գրաւեց Երևանը: Անդրկովկասում այլ ևս հայկական հարց չէր մնում, հասկանալով այս հարցը իր դարաւոր մտքով, այսինքն մահմեդական տիրապետութեան լուծից ազատուելու մտքով:

¹⁵ Бутковъ—“Матеріалы по новой исторіи Кавказа”, т. II СПб. 1869, с. 209.

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ
ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1829–1878

Ռուս-պարսկական պատերազմին իսկոյն յաջորդեց ռուս-թիւրքականը (1828-1829): Բոլոր նշանները ցոյց էին տալիս որ այս պատերազմը Թիւրքաց Հայաստանի գոնէ մի նշանաւոր մասի վերաբերմամբ պիտի առաջացնէ նոյն հետեանքները, ինչ ռուս-պարսկականը առաջացրել էր Արարատեան երկրի նկատմամբ:

Դեռ մինչև 1828-1829-ի պատերազմը Թիւրքաց Հայաստանի արևելեան մասի հայ ազգաբնակչութիւնը բանակցութիւններ ունէր Անդրկովկասի ռուս իշխանութիւնների հետ և այդ բանակցութիւնների մէջ արտայայտում էին թիւրքահայերի կողմից միևնոյն ձգտումները, այսինքն որ ռուսական տիրապետութիւնը տարածուի և Թիւրքաց Հայաստանի վրայ: Այս տրամադրութեան ժողովրդական արտայայտութիւնն այն էր, որ Բայազէտի հայերը զէնք վերցրին թիւրքերի դէմ և միացան ռուսական զօրքին:

Սակայն Թիւրքիան Պարսկաստան չէր ամենից առաջ հէնց այն պատճառով, որ նրան պաշտպանում էր Արևմտեան Եւրոպան յատկապէս ընդդէմ Ռուսաստանի: Չը նայած պատերազմի յաղթական ելքին, Ռուսաստանը չը կարողացաւ հողային խոշոր գրաւումներ անել Թիւրքիայի սահմաններում: Հայոց հարցը այս պատերազմի հետևանքով միայն շեշտուեց, առանց, սակայն, պարզ ձևակերպուելու: Միակ բանը, որ անում էր նրանց համար 1829 թուի Անդրիանուպոլսի դաշնադրութիւնը, այն էր որ նրա 13-րորդ յօդուածով արգելում էր որ Թիւրքիան կամ Ռուսաստանը հալածեն և պատժեն առհասարակ իրանց այն հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ միացել են թշնամուն և վսասներ պատճառել իրանց պետութեան: Այդպիսիներին թոյլատրում էր 18 ամսուայ ընթացքում իրանց ընտանիքներով ու շարժական կայքով փոխադրուել միւս պետութեան սահմանները¹⁶:

Այս արտօնութիւնից ամենալայն չափերով օգտուեցին թիւրքահայերը.–մոտ 100 հազար հոգի Բայազէտի և Էրզրումի կողմերից գաղթեցին (1830) Անդրկովկասի ռուսական հողերը:

¹⁶ Т. Юзефовичь—“Договоры России съ Востокомъ”, Спб. 1869, с. 79.

Բայց սրանով իհարկէ չէր լուծուում հայոց հարցը: Միջազգային յարաբերութիւնների մէջ նա դեռ չունէր իր որոշ տեղը իբրև քրիստոնեայ մի ժողովրդի հարց: Բայց նրա ճակատագիրը կապուում էր հայ հայրենիքի աշխարհագրական դիրքի միջազգային նշանակութեան հետ: Այս տեսակէտով հայկական բարձրաանդակը ներկայանում էր այնպիսի մի ռազմագիտական վայր, որ արևմտեան պետութիւնները և մասնաւորապէս Անգլիան չէին կարող զիջել Ռուսաստանին կամ թողնել նրա բացառիկ ազդեցութեան տակ:

Միս կողմից Թիւրքաց Հայաստանը առանձնապէս կարևոր նշանակութիւն ստանում էր հէնց հայ ժողովրդի համար. XIX դարում հայութիւնը տոգորուում է եւրոպական կրթութեամբ և գաղափարներով: Գլխաւոր պաշտամունքը դառնում են *հայրենիքը, ազգութիւնը*: Հայոց ամբողջ նոր գրականութիւնը տոգորուում է այդ սկզբունքներով և դաստիարակուում է սերունդներ՝ հայրենիքի ազատութեան գաղափարին ծառայելու համար Հայաստանի անցեալ փառքը, հայ երկիրը ազատ տեսնելու տենչանքը-ահա միակ հզօր, տիրապետող շեշտը գրականութեան մէջ: Հայ մարդու համար Հայաստանը հայկական լեռնաստանի այն մասն էր, որ պատկանում էր Թիւրքիային: Այդտեղ էր որ պիտի վերակենդանանար հայի քաղաքական կեանքը: Եւ մենք տեսնում ենք որ հայ լաւագոյն գործիչների համար հէնց այդ Հայաստանի ազատութիւնն է, որ դառնում է քաղաքական պաշտամունք:

Առաջին անգամ թիւրքահայ նշանաւոր հրապարակախօս Ստեփան Ոսկանն էր, որ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853-1855) ներկայացրեց ֆրանսիական կառավարութեան մի «յիշատագիր», որի մէջ ցոյց էր տալիս թէ ինչ պէտք է անէ եւրոպական դիւանագիտութիւնը Հայաստանի համար¹⁷: Տարաբախտաբար, այսքանից անելի բան յայտնի չէ այդ հետաքրքրական ծրագրի մասին:

Նրանից յետոյ Հայաստանի հարցը նահատակ է դարձնում Միքայէլ Նալբանդեանին: 1859 թուին նա արտասահմանում ծանօթանում է ռուս յեղափոխական գործիչներ Բակունինի, Հերցէնի և ուրիշների հետ և դառնում է նրանց գործակիցը: Ծրագրուում էր սլաւոնական ազգերի ազատագրութիւն, իւրաքանչիւրը նրանցից պիտի ստանար ինքնավարութիւն և ամենքը միասին պիտի

¹⁷ «Արևմուտք» լրագիր, Պարիզ, 1859, թիւ 17, եր. 134:

կազմէին մի ընդհանուր դաշնակցութիւն: Այս ահագին յեղաշրջումը պիտի կատարուէր սլաւոնական ազգերի ապստամբութեան միջոցով ընդդէմ Աւստրիայի, Թիւրքիայի և մասամբ Պրուսիայի: Նալբանդեանը մտցնում է այդ ինքնավարութիւնների մէջ և Հայաստանը: 1860-ին նա Կ. Պօլսում կազմակերպում է գաղտնի մի միարմին, որ պիտի պատրաստէր յեղափոխութիւնը: Այդ մարմնի գլուխն էր Կ. Պօլսի «Մեղուի» խմբագիր Յարութիւն Սվաճեանը, որ ամենայն եռանդով կպաւ այդ գործին: Ծրագրուած էր հայկական ապստամբութիւն սկսել Կիլիկիայից, այն է՝ Ջէյթունից: Եւ իրաւ, 1862-ի մայիսին Ջէյթունից Կ. Պօլիս գնաց մի վարդապետ, որ ստացաւ Սվաճեանից փող՝ զէնքեր գնելու համար և մօտ 30 հոգի կուողներ¹⁸: Բայց յուլիս ամսին Նալբանդեանը ձերբակալուեց Ռուսաստանում՝ Բալկոնինի հետ յարաբերութիւններ ունենալու համար: Մինչդեռ նա նստած էր բանտում, օգոստոսին Ջէյթունում ծագեց այն նշանաւոր ապստամբութիւնը, որ անհուն ոգևորութիւն տարածեց հայ աշխարհում և ամբողջ մի քաղաքական շարժման պատճառ ու դրդիչ հանդիսացաւ: Հայ բանաստեղծը գեղեցիկ, սրտառույց նուագներ էր նուիրում զէյթունցի քաջին, սրբացնում էր նրա ազատագրական գործը իբրև ազգային իդէալ, իսկ հայ քաղաքական միտքը, առաջին անգամ թիրքահայերի մէջ, գործնական աշխատանքներ էր կատարում Հայոց Հարցը միջազգային քաղաքական հողի վրայ դնելու համար: Պարիզում խմբուած թիրքահայ մտաւորականութիւնը, ֆրանսիացի, հայասերների միջոցով, մի պրօպագանդ սկսեց յօգուտ հայ ժողովրդի, որ դասում էր Թիւրքիայի այն քրիստոնէայ ազգերի շարքում, որոնք հարստահարուած ու կեղեքուած են և արժանի են ազատութեան¹⁹: Եւրոպայի հասարակական միտքը, որ յուզուած էր Ջէյթունի դէպքերով, համակրութեամբ էր ընդունում այդ պրօպագանդը: Միաժամանակ քաղաքագիտական միջոցներն էլ գործադրել սկսուեցին: Ջէյթունից պատգամաւորներ գնացին Եւրոպա և դիմումներ արին մեծ պետութիւններին²⁰: Այս դիմումները լաւ

¹⁸ Жур. “Былое” 1906.

¹⁹ «Փարիզ» շաբաթաթերթ Մուրադեանի, 1862:

²⁰ Victor Langlois—«Les Arméniens de la Turquie et les Massacres du Taurus» (Revue des Deux Mondes, 1863, 15 Fevr. P. 990).

հետևանքներ էին առաջացնում, գոնէ Ֆրանսիայում: Նապոլեօն III, որ նոր էր ազատել Լիբանանը թիրաքական վայրագութիւններից, ծեռք առաւ և Ձէյթունի հարցը: Ֆրանսիական կառավարութեան մի շատ եռանդուն ծանուցագիրը յայտարարում էր թէ ինքը «միշտ ճանաչել է Ձէյթունի անկախութիւնը և ապահարկութիւնը»²¹: Եւ եթէ այս տրամադրութիւնը Ձէյթունի համար չը ստեղծեց մի նոր անկախ կացութիւն, դրա պատճառն այն էր, որ հարցը շուտով ստացաւ կրօնական կերպարանք: Հայ-կաթոլիկների պատրիարք Հասունը կամեցաւ շահագործել այդ դէպքը՝ կաթոլիկութիւնը տարածելու համար: Ձէյթունցիները համաձայնուեցին դաւանափոխ լինել, միայն թէ իրականանան իրանց անկախական տենչանքները և այս մտքով իրանց իշխաններին ուղարկեցին Կ. Պօլիս²²: Բայց այստեղ լուսաւորչական հոգևորականութիւնը կարողանում է կանգնեցնել այդ կրօնափոխական շարժումը և Ձէյթունի հարցն էլ մոռացում է:

²¹ Victor Bérard-«L. Politique du Sultan» Paris 1900, p. 129.

²² Ibid. p. 129.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1878

1878 թուականի յունվարի 7-ին Բօլզարիայի Կազանիկ քաղաքը հասան սուլթան Աբդուլ-Համիդի լիազօրները, Սերվեր և Նամիկ փաշաները՝ ռուսաց բանակի գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի հետ հաշտության բանակցութիւններ սկսելու համար: Կ. Պօլսի հայութիւնը լարուած ուշադրութեամբ հետևում էր դէպքերին, որոնք իրար յաջորդում էին տենդային արագութեամբ: Վերջնականապէս ջարդուած Թիւրքիան ստիպուած էր ընդունելու այն պայմանները, որ թելադրում էր յաղթող Ռուսաստանը. իսկ այդ պայմանները բերում էին օսմանեան բռնապետութեան նոր անդամահատութիւններ, նոր ազատութիւն նրա լուծի տակ հեծող քրիստոնեաներին: Եւ Կ. Պօլսի հայերը, Ներսէս պատրիարքի ղեկավարութեամբ, սկսեցին, թէև մի քիչ ուշ, եռանդով գործել, որպէս զի նոր ստեղծուող քաղաքական պայմանների մէջ մոռացուած չը մնայ թիրքսահայը իր դարաւոր արիւնոտ հարցով:

Բանակցութիւնները Կազանիկում որոշ հետևանքների չը յանգեցին: Ռուսական բանակը առաջանում էր Կ. Պօլսի ուղղութեամբ: Յունվարի 14-ին գլխավոր հրամանատարի բանակետող փոխադրուեց Ադրիանուպօլիս, ուր գնացին և թիրքական լիազօրները: Այստեղ էր յունվարի 19-ին ստորագրուեցին այն պայմանները, որոնցով հաստատուում էր երկու պատերազմող կողմերի մէջ զինադադար: Այդ պայմանները որոշում էին բոլոր այն հիմքերը, որոնց վրայ պիտի կառուցուէին ապագայ հաշտութեան մանրամասնութիւնները:

Հայերի համար մեծ անաջողութիւն էր որ իրանց հարցը տեղ չը գտաւ զինադադարի պայմանների մէջ: Բայց ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ միայն այդ պատմական վաւերագիրը ստորագրելուց յետոյ էր որ հայերը քաղաքագիտական լուրջ քայլեր սկսեցին անել:

Սկզբում այդ քայլերը թողնուած էր անելու Անդրիանուպօլսի առաջնորդական տեղապահ Գէորգ վարդապետ Ռուսնուզեանին, որ և իր յիշողութիւնների մէջ այսպէս է ներկայացնում իր սկսած և վարած բանակցութիւնները:

№ 1

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԳԵՈՐԳ Վ. ՌՈՒՍԱՃՈՒԳԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ²³

Հարկ կը լինէր ինձ ըստ քաղաքական պարտականութեանց ներկայանալ կրան տիւք Նիքօլայի և քօնթ Իկնաթիէֆի բարի գալուստ մաղթելու: Մինչդեռ կը սպա սէի պատեհ առթի ահա Փիլիպպուպօլսոյ նախկին ռուսական հիւպատոս Մ. Կիրօֆ հայասէր բարեկամս, որ պուլղարական գործերուն մէջ դեր ունեցած էր, իբր խորհրդական ռուսական դեսպանի յԱդրիանուպօլիս եկած էր: Ինչդեռ որ բարեհաճի քօնթ Իկնաթիէֆի զիս ներկայացնել և Հայաստանի ապագայ վիճակին համար ստոյգ տեղեկութիւններ առնելու շնորհ ընել: Մ. Կիրօֆ ընդունեց մեր այս առաջարկութիւն և հետևեալ գիշեր ներկայացուց զիս քօնթ Իկնաթիէֆի, ինքն թարգման լինելով մեր խօսակցութեանց, ապահովելով միանգամայն զքօնթն թէ իբր գաղտնապահ կրնայ խօսիլ մեզ հետ: Ըստ օրինի նախ փութացինք ջերմ բարեմաղթութիւններ ընել ի բարօրութիւն կենաց Ռուսիոյ Կայսեր, որ ի սէր քրիստոնէութեան պատերազմ հրատարակեց յազատումարևելեան քրիստոնէից և աստուծապարզ և յաջողութեամբ ազատեց պուլղար քրիստոնեաներին, ինչպէս նաև ասիաբնակ հայերն, որք մի քրիստոնեայ ազգ են ոչ նուազ հարստահարեալ և թշուառ քան զպուլղարն, և շարունակելով խօսքս, ինչպէս կը լսեմք, ըսի, Ռուսիոյ բանակն Հայաստանի մէկ մասը գրաւած է, ընդ որս Կարս և Կարին և գուցէ ուրիշ գաւառներ ևս. քաղցր է մեզ յուսալ, թէ Հայք ևս, ինչպէս պուլղարք, այն ազատութիւնը կը վայելեն և որքան փափաքելի է մեզ գիտնալ այն, քանզի մեր ամեն յարաբերութիւնք ընդ Կ. Պօլսոյ խզուած լինելով՝ բնաւ տեղեկութիւն մը չեմ կարող ստանալ Հայաստանի մէջ բնակող մեր եղբարց վրայ:

Առ որ քօնթն պատասխանեց թէ, այո՛ր, Ռուսիոյ բանակն մինչև Կարին յառաջացած է և գրաւած է. Հայաստանի այդ մասն այժմ ազատութիւն կը վայելէ, բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասը պիտի չկարենայ գտնել առայժմ այն ազատութիւնը, զոր ունեցած են պուլղարք, վասն զի հայք ան-

²³ «Ծագումն Հայկական Ինչորոյ» («Ռազմիկ» լրագիր, Փիլիպպէ, 1907. Տ. և «Երկրի Ձայնը» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1907, № 26-29):

պատրաստ գտնուեցան և Հայաստանի մէջ դարձած են մեռեալ տարերք. ես երեք տարիէ ի վեր հայոց դատին պաշտպանն և փաստաբանն եղած էի, թողունք գաւառացի հայոց աղքատութիւնն և անտարբերութիւնն, մանաւանդ ցիր ու ցան պանդխտութեան դատապարտեալ վիճակն. մինչև իսկ Կ. Պօլսոյ հայոց ողջախոհ և գործօն մասն՝ սկսեալ Նուպար փաշայէ, արգելք եղած են իմ բարենպատակ գործոցս. բայց մի՛ վհատիք, կը յուսադրեմ զՁեզ, քանի որ Թուրքիոյ հպատակ էք: Ապագային յուսով՝ այս վայրկեանէս սկսեցէք պատրաստ լինել, պատրաստ դաստիարակութեամբ, ուսմամբ և քաղաքագիտութեամբ, պատրաստ՝ նիւթապէս և բարոյապէս, պատրաստ՝ ներքին կազմակերպութեամբ, պատրաստ եղիք այն օրուան համար՝ յորում քաղաքականութիւնն պիտի առաջնորդէ զձեզ յազատութիւն, և ես պատրաստ եմ միշտ օգնել ձեզ. պատրիարքնիդ թող ժամանավաճառ չլինի, թող սկսէ գործելու, ժամ է:

1878 Յնվր. 20 թուականաւ հաղորդեցին Ս. Պատրիարքին ինչ որ լսած և հրահանգ ընդունած էի քօնթ Իկնատիէֆէ, խնդրելով միանգամայն որ եթէ արժան կը դատէ շարունակել մեր բանակցութիւնը ի մասին Հայաստանի հարստահարեալ հայ ժողովրդեան՝ փութայ հրահանգել զմեզ յայն, ապահովելով զինք թէ Ռուսական Իշխանութեան հետ մեր յարաբերութիւնն մշակուած է ի շնորհս Մ. Կիրօֆի՝ մեր մտերիմ վաղածանօթ բարեկամին, չփախցնել առիթը ձեռքէն: Մեզ համար յայտնի չէ թէ ինչ կերպով յաջողած է Ներսէս Պատրիարք, կամ ինչ զուգահիւսութիւն եղած է որ իմ նամակս ստանալէ տասն օր վերջ Վսեմ. Ստեփան փաշա Ասլանեան և Նուրեան Յովհաննէս էֆ. Բ. Դրան կողմանէ մասնաւոր պաշտօնով մը Ա. Պօլիս եկան Սաֆֆէթ և Սէրվէր փաշաներու տրամադրութեան տակ, Ա. Պօլսոյ մէջ մնացած հիւանդ թիրք զօրքերն ի Կ. Պօլիս փոխադրելու. այս երկու անձինք Պատրիարքէն յանձնարարեալ մի այլ պաշտօն ևս ունէին գաղտնի, և որք 1878 Յնվր. 31 թուակիր Պատրիարքին յանձնարարականաւ իբր խորհրդական Հայկական Խնդրոյն ինձ ներկայացան: Մեր վսեմ. խորհրդականաց պատմեցինք քօնթ Իկնատիէֆի հետ մեր տեսակցութեանց արդիւնքը. նոքա ևս յայտնեցին մեզ Ս. Պատրիարքի գաղափարներն և հրահանգն թէ՛ Պատրիարքն կը փափագի և կարտօնէ Ռուսիոյ դեսպանին և կրան տիւք Նիքօլայ

Իշխանին ներկայացնել Հայոց թշուառ և հարստահարեալ վիճակն, և Ռուսիոյ Կայսեր գթութիւնն հայցել. որոյ ի շնորհս միայն հայերն, իբրև Արևելեան քրիստոնէայ ազգ, պիտի կարենան ազատութեան հասնիլ, նման պուլդարաց:

Եւ որովհետև տասն օր անցած էր յորմէ հետէ Ս. Պատրիարքին տեղեկագրած էի, առանց սպասելու պատասխանին, փութացի Ռուսական Իշխանութեան հետ մեր յարաբերութեան թելն ամրապնդելու ջանարար լինել, ուստի այս նպատակաւ և խորհրդով մեր բարեկամ Մ. Կիրօֆի և հաւանութեամբ քօնթ Իկնատիէֆի՝ դարձեալ ներկայացայ կրան տիւք Նիքօլայ Իշխանին և խնդրեցի որ ըստ ռուսական սովորութեան բարեհաճի իր կողմանէ պաշտօնեայ մը ղրկել վաղն յերկեղեցի մեր, ուր բարեմաղթութիւնք պիտի կատարուին Ռուսիոյ Կայսեր կենաց և պաշտօն ի հանգիստ հոգւոց ի պատերազմին անկեալ ռուս զօրաց:

Այս միջոցին կրան տիւք իշխանին քով կը գտնուէր Իկնաթիէֆ դեսպանն, որ արդէն գիտէր իմ ներկայանալուս պատճառն և որոշեալ ժամն, և Կ. Պօլսոյ այժմեան դեսպան կոմս Նելիսօֆ: Սոքա երեքն բաւական ջերմ խօսակցութիւն մը ունեցան միմեանց հետ ռուսերէն լեզուաւ, ապա կրան տիւք իշխանն այսպէս պատասխանեց մեր հրաւերին. «Շատ գոհ եմ հայ հասարակութենէն, սիրալիր ընդունելութիւն մը ըրած են և կընեն մեր զօրաց, իրեանց տուներն բանալով նոցա առջև և ամեն պարագայի մէջ դիւրութիւններ ընծայելով նոցա. ես կը սիրեմ հայերը և կը յարգեմ. այդ բարեմաղթութեան օրն ես անձամբ կը փափագիմ ներկայ գտնուիլ Ձեր եկեղեցին, բայց օրն պէտք է անորոշ մնայ, վասն զի պատերազմի մէջ եմք. յետաձգեցէք առ այժմ. ես կորոշեմ և օր առաջ կիմացնեմ Ձեզ». առ այս պատասխան շնորհակալութիւն յայտնելով մեկնեցայ:

Այս լուրն հաղորդեցին մեր վսեմ. խորհրդականաց թէ այսպէս խոստում մը առած եմ կրան տիւք իշխանէն, և իշխանի մեր յեկեղեցի գալէն յառաջ պէտք էր զիրենք ներկայացնել քօնթ Իկնատիէֆի, թէև դժուար էր: Վասն զի չէին կրնար տեղ մը երթալ առանց գիտութեան և հրամանի Սաֆֆէթ և Սէրվէր փաշաներու, այլ հակառակ ամէն հսկողութեան՝ յաջողեցանք զիշեր մը գաղտնաբար ներկայացնել Նուրեան էֆէնտին քօնթ Իկնատիէֆի, և Ասիաբնակ հայ ժողովրդեան թշուառ և հարստահարեալ վիճակն յայտնելով՝

Ռուսիոյ Կայսեր գթութիւնն խնդրեցինք. մէկ ժամ ունկնդրութենէն վերջը խոստացաւ կրան տիւքի հետ խօսելով յաջող ելք տալ մեր խնդրոյն, պատուիրելով որ երկու օր վերջը դարձեալ գիշերատեն, նոյն ժամուն, ներկայանանք իրեն՝ Ստեփան փաշան ևս մէկտեղ առնելով: Կատարեցինք իր առաջարկութիւնն և մեր երկու խորհրդականաց հետ ներկայացանք քօնթին, որ յայտարարեց թէ «տեսնուած եմ կրան տիւքի հետ և մինչև մէկ աստիճան յաջող է Ձեր խնդիրն. Կայսեր հետ բանակցութեան մէջ եմք. մէկ երկու օրէն Կայսեր հաւանութիւնն և հրահանգն կը յուսամ որ պիտի ընդունիմք: Աղօթեցէք որ Աստուած յաջողէ»:

Այս գեղեցիկ յուսադրութեան վրայ յուզուելով սիրտերնիս՝ խնդրեցինք դարձեալ թախանձանօք՝ Կայսեր գթութիւնը առ Հայ ժողովուրդն կեղեքեալ և ուրախութեամբ մեկնեցանք:

Այս տեսակցութեան արդիւնքը անմիջապէս տեղեկագրեցի Ներսէս Ս. Պատրիարքին՝ ռուսական մասնաւոր թղթատարի միջոցաւ և, ի պատասխանի իմ տեղեկագրութեան՝ մի շնորհակալութեան գիր ընկալայ նորին Սրբազնութենէն:

Ինչպէս կրան տիւք Նիքօլայ խոստացած էր մեզ յառաջագոյն՝ փետրվար 8-ին հաճեցաւ գալ յեկեղեցի մեր. նորին Բարձրութեան ընկերացած էին քօնթ Իկնատիէֆ, կոմս Նելիսով, 16 ժէներալ և բարձրաստիճան պաշտօնեայք. յետ բարեմաղթութեան, որ շատ կանոնաւոր տեղի ունեցաւ, հրաւիրեցի գնորին բարձրութիւնն յառաջնորդարան ուր թէյ պատրաստուեցաւ. ներկայ գտնուեցան նաև Ստեփան փաշա Ասլանեան, Յովհաննէս էֆ. Նուրեան, որոց համար Սաֆֆէթ փաշա թոյլատուութիւն ըրած չէր ներկայ գտնուիլ բարեմաղթութեան. անշուտ ինչպէս կը ցանկայինք իսկ, այս տեսակցութեան նիւթն Հայաստանի Հայ կեղեքեալ ժողովուրդն պիտի լինէր. ի մէջ այլոց կրան տիւք այնպիսի հարցումներ ուղղեց ինձ Հայաստանի աշխարհագրական դրից և բնակչաց վիճակին նկատմամբ, որ զինքն գոհացնելու չափ տեղեկութիւններ չունէի, ուստի այս յարմար առիթ եղաւ ինձ Ստեփան փաշան և Նուրեան էֆէնտին կրան տիւք Նիքօլայ իշխանին ներկայացնելու. ուստի նորին բարձրութեան պատասխանեցի թէ «Ձեր մեծութեան այս հարցման լիովին տեղեկութիւններ կրնան տալ Կ. Պօլսոյ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ երկու ատենապետներն՝ Ստեփան փաշա և Նուրեան էֆէնտին, որք հոս կը գտնուին Սաֆֆէթ փաշայի

քով. եթէ հրաման կընէք անմիջապէս կրնան գալ և ներկայանալ»: «Այո՛, կը փափաքիմ տեսնել, թող գան», պատասխանեց Դուքսն. և անմիջապէս նորին մեծութեան թիկնապահներէն մին ղրկուեցաւ Սաֆֆէթ փաշայի տուն, ուր մեր խորհրդականք լուր կը սպասէին արդէն ի մէջ: Սաֆֆէթ փաշա այս բարձրագոյն հրամանին չկրնալով դէմ դնել, կարտօնէ որ ներկայանան:

Կրան տիւք սիրով ընդունեց մեր վսեմ, խորհրդականներն և առաւել քան կէս ժամ խօսեցան մէկտեղ և պաղատանօք խնդրեցին Հայաստանի ազատութիւնը. ի պահուն երբ մեծ դուքսն Նիքօլայ կը մեկնէր՝ դարձեալ կրկնեցի որ չմոռանայ Հայ տառապեալ ժողովուրդն. այն ատեն իմ ձեռք սեղմելով ըսաւ. « ո՛չ ես և ո՛չ եղբայրս՝ Կայսրն չեմք մոռնար զձեզ»:

Հետևյալ օր քօնթ Իկնատիէֆի երթալով, կրան տիւք Նիքօլայի ներկայանալու և շնորհակալութիւն յայտնելու համար՝ հրաման և ժամադրութիւն խնդրեցի. սիրով ընդունելով որոշեց օրն և ժամ. և որոշեալ ժամուն երբ ներկայացանք նորին բարձրութեան՝ Իկնատիէֆ և Նելիտօֆ կոմսերն դարձեալ հոն գտնուեցան. յանուն Հայ հասարակութեան շնորհակալութիւն յայտնեցին այս մեծ պատուոյն զոր ընծայեց ազգին որ այժմ լի է յոյսով և սիրով առ բարեխնամ ռուս կառավարութիւնն. Յայնժամ իշխանն համակրանօք սեղմեց ձեռքս և ըսաւ. «Հայոց սիրալիր ընդունելութենէն շատ գոհ մնացի և Կայսեր՝ եղբօրս անմիջապէս հեռագրեցի իմ գոհունակութիւնս թէ՛ այսպիսի ընդունելութիւն, սէր և համակրութիւն չտեսայ ոչ ի յոյնս և ոչ յայլ ազգս. յետ մի քանի ատուրց պիտի մեկնիմ քաղաքէս յԱլ-Ստեֆանօ ուր մօտ պիտի լինիմք ի Գում-Գաբու ձեր Պատրիարքին. գրէ Պատրիարքին թէ ձեր խնդիրն և յոյսն ի դերև չի պիտի ելնեն, անհոգ եղիք, եղբօրս հետ բանակցութեան մէջ եմք»:

Այս կէս պաշտօնական յարաբերութիւններն աւելի յոյս տուին մեզ. ուրախութեամբ մեկնեցայ. յետ երկուց ատուրց քօնթ Իկնատիէֆ հրաւիրած էր զիս առ ինքն, փութացի. «աչքդ լոյս, գոչեց քօնթը, գործերնիդ յաջող է, Կայսեր հաւանութիւնն ստացանք և Ձեր խնդիրն պիտի անցնի ի կարգս յօդուածոց ռուս-թուրք դաշնագրութեան մէջ. ընդ փոյթ պարտիք մի ծրագիր ներկայել կրան տիւք իշխանին թէ՛ ինչ են Հայոց իղծն ու փափագն»:

Ներսէս Պատրիարքը, իր լիազօրներին ուղարկելով Ադրիանուպօլիս, միաժամանակ դրեց և պաշտօնական դիմումների հիմնաքարը, որի վրայ պիտի կառուցուէր հայոց հարցի նոր կերպարունաւորումը: 1878 թ. փետրվարի 1-ին ինն եպիսկոպոսներ, որոնց թում և, անշուշտ, ինքը, Ներսէսը, ուղարկեցին Ալէքսանդր II կայսրի անունով հետևեալ աղերսագիրը.

№ 2

ԱՂԵՐՍԱԳԻՐ ԹԻՒՐՔԱՀԱՅ ԻՆՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՅԱՆՈՒՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ Բ. ԿԱՅՍՐԻ

Տէր Արքայ,

Այն պատերազմէն յետոյ, ը վախճան առաւ Ձեր Կայսերական Մեծութեան զինուց յաղթութեամբը և որ ամենէն անելի փառաւորն է, թող ներուի Թուրքիոյ Հայոց եկեղեցական գլխաւոր պաշտօնէիցս ներկայացնել իրենց զարմացումը, յարգանքը և խոնարի շնորհաւորութիւններն յոտս Ձեր Կայսերական Մեծութեան Աթոռոյն, որոյ հետ կը միանան նաև Հայոց ազգի ուխտն և փափագներն:

Տէր Արքայ, Ձեր զէնքերն յաղթանակեցին այնպիսի մի ժողովրդեան, որ քաջ պատերազմիկ ժողովրդոց մին է, որով Ձեր Կայսերական զօրութիւնը նոր փայլ մը ստացաւ աշխարհի վրայ: Ձեր սուրը յաղթանակ կանգնեց թէ Եւրոպիոյ և թէ Ասիոյ մէջ և Ձեր զօրապետներն ու զէնքերը, ինչպէս Պուլկարիոյ դաշտաց մէջ իրենց ամենամաքուր արիւնն թափեցին, նոյնպէս թափեցին Հայաստանի այն հինօրեայ հողոյն վրայ, որ մեր ծնունելն տեսաւ և զոր մեր հայրերն ի սկզբանէ դարուց իրեանց քրտամբք և արտասուօքն ոռոզեցին:

Տէր Արքայ, Ձեր խոստումներն ամենուն համար էին. Ձեր խնամքը պէտք է ամենուն համար հաւասար տարածուի. Հայերն ալ ունին այնչափ իրաւունք, որչափ ունին Թիւրքիոյ միւս քրիստոնեայ հասարակութիւնք՝ այն հոգատարութեան որ կը գործէ աշխարհի վրայ առանց շահասիրութեան, և այս անշահասիրութիւնը ամենէն անելի գեղեցիկ յատկութիւնն է իշխանի մը, որ աշխարհի զօրաւորն է և զոր Աստուած մեծութեան տիտղոսով պսակած է:

Այո՛, Տէր Արքայ, Հայերն այս նշանաւոր պարագայի մէջ, յորում

իրենց կրօնակից եղբարց վիճակն կորոշուի, կը համարձակին Ձեր Կայսերական Մեծութեան զօրաւոր պաշտպանութիւնն հայցել: Նոքա ալ վշտացած են, նոքա ալ կը յուսան խառնադանճ վայրենիներէ շրջապատեալ և Երոպայէն հեռի մի անկիւն նետուած, իրենց տառապանքներն աւելի անգթաբար կը գործուին, քան թէ միւս քրիստոնէից, առանց իրենց աղաչանքներն լսելի լինելոյ:

Ինչ բան որ այսօր կը խնդրենք և ինչ բան որ համարձակութիւն առած կը հայցենք Ձերդ Կայսերական Մեծութենէն յանուն նոցա, ուրիշ բան չէ, եթէ ոչ Երոպական Թիրօքիոյ քրիստոնէից վիճակին նմանութիւն: Եթէ Երոպական Թիրօքիոյ գաւառաց միւսնոյն ինքնօրէն վարչութիւնն, միւսնոյն երաշխաւորութիւններով տրուի Հայոց հասարակութեան, այն ատեն նոցա սրտեռանդն ցանկութիւններն լսուած պիտի լինին և վախճան պիտի ստանան իրենց ընդ երկար նահատակութիւնքն:

Տէր Արքայ, խիստ դառն է մեզ համար որ խաբուինք մեր յուսոյն մէջ, բայց այս կարելիութեան չենք ուզեր հաւատալ միայն Ձեր վեհանձնութեան վրայ ունեցած հաւաստիներու շնորհիւ:

Կաղաչենք Ձեր Մեծութիւնը հաճիլ ընդունելոյ մեր սրտաբուլիս օրհնութեան հետ մեր խորին յարգանքներն, ընդ որոյ պատիւ ունիմք լինել,

Տէր Արքայ,

Ձեր Կայսերական Մեծութեան
ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք²⁴

Պատրիարքարան Հայոց Կ. Պօլիս
1/13 փետր. 1878

Ինչպէս յայտնի է, այս դիմումերի հետևանքով էր որ Սան-Ստեֆանօի մէջ տեղի ունեցած բանակցութիւնների պայմաններից մէկը դարձաւ հայոց հարցը և թիրքաց լիազօրները, յամառ դիմադրութիւնից յետոյ, կարողացան դուրս գցել տալ այդ պայմանից ամեն ինչ, որ կարող էր որոշ, կոնկրէտ պարտաւորութեան ձև ունենալ. նրանք մերժելով մերժեցին խօսք բաց անել ինքնավա-

²⁴ Գործ Դիւանատան Վեհափառ Հայրապետի ամենայն հայոց Տ. և Տ. Գէորգայ Դ-ի, 1878, թ. 5:

րութեան մասին²⁵: Եւ երկու կողմերի համաձայնութիւնը կանգ առաւ այն խմբագրութեան վրայ, որով լոյս տեսաւ փետրվարի 19-ին ստորագրուած դաշնագրի 16-դ յօդուածը: Ահա նրա բառացի թարգմանութիւնը.

№ 3

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՕԻ ԴԱՇՆԱԳՐԻ 16 ՅՕԴՈՒԱԾԸ

Նկատելով որ ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած, բայց Թուրքիոյ վերադարձուելիք տեղերէն մեկնիլը կրնայ կոխներու և երկու տէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վնաս բերող կնճիռներում ծնունդ տայ, Բ. Դուռը պարտաւորութիւն յանձն կանոն՝ Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարւոքումներն և բարենորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Քիւրդերուն ու Չէրքէզներուն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորել²⁶:

Շատ նշանակալից է որ այստեղ բերուած «բարւոքումների և բարենորոգումների» անորոշ խոստումը առաջին իսկ քայլից հայ գործիչներն ըմբռնեցին այն մտքով թէ Հայաստանը այդ յօդուածով պիտի ստանայ ինքնավարութիւն: Այսպէս, դեռ Սան-Ստեֆանօի դաշնագրութեան ամբողջութիւնը պաշտօնապէս չէր հրատարակուած, դեռ գերմանական լրագրներից մէկը միայն կարողացել էր այդ դաշնագրի բովանդակութիւնը պատմել, այն էլ որ շատ մեծ հարազատութեամբ, և ահա հայոց հարցի նշանաւոր գործիչներից մէկը, Գրիգոր Արծրունին, մարտի 10-ին «Մշակի» առաջնորդողի մէջ ասում էր թէ հայերին խոստացուածը նահանգական ինքնավարութիւն է, այսինքն՝ «քրիստոնեայ նահանգապետ, սեփական քաղաքային և գիւղական վարչութիւններ, կայքերի և անձնական ապահովութիւն, կալուածների ազատելը քուրդ և թիւրք բէյերի աւատական իշխանութիւնից, սեփական կամ խառն դատարաններ, դատաստանի առջև քրիստոնեաների

²⁵ «Երկիր Ձայնը» շաբ. 1907 № 29:

²⁶ Թարգմանութիւն Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի:

և մահմեդականների հալասարութիւնը, ուսումնարանների ազատութիւնը, ամբողջ երկրից Թիւրքիային տրուող տարեկան որոշուած հարկը, որ հիմնած լինէր հաստատ և անփոփոխ հիմքերի վրայ և ոչ թէ կամայականութեան վրայ: Դաշնագրի երկրորդ կէտին, այն է որ հայերին տրուելու է ապահովութիւն չէրքէզների և քուրդերի դէմ, Թիւրքիայի հայերը կարող են հասնել միայն նրանով որ կը պահանջեն Թիւրքիայից իրանց սեփական տեղական պահապան զօրք ունենալու իրաւունքը»:

Միևնոյն ինքնավարական սկզբունքն էր, 16-դ յօդուածից յետոյ էլ, թիւրքահայ գործիչների ցանկութիւնը: Մարտի 15-ին Խորէն արքեպիսկոպոս Նարպէյը, որ Ներսէս պատրիարքի կողմից պատգամաւորի պաշտօնով Պետոգրադ էր գնացել, ներկայացրեց Ալէքսանդր II Կայսրին պատրիարքարանում մշակուած մի ծրագիր, որի բովանդակութիւնն այսպէս է պատմում ինքը Նարպէյը.

№ 4

ԱԼԷՔՍԱՆԴՐ II ԿԱՅՍՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ԾՐԱԳԻՐԸ

Ա. Տալ Հայաստանի ընդհանուր կառավարիչ, հայ-լուսաւորչական յազգէ, մարզպան և վալի անուանակոչութեամբ և աստիճանաւ միւշիւրի, որոյ ընտրութիւնն լինի ի Սուլթանէ, համահաճութեամբ Կայսերն Ռուսաց:

Բ. Կուսակալք և գաւառապետք՝ լինիցին հայ-լուսաւորչականք ազգաւ, ընտրեալք յերեսփոխանական ժողովոյ Հայաստանի և վաւերացեալք ի Բ. Դրանէ:

Գ. Բարեկարգարանն լինիցի ի ձեռն Հայոց, յորոց լինիցին և քաղաքապահ զինուորքն:

Դ. Դատաստանատունք բացցին և վարեցին օրինօք քրիստոնէից ընդ նախագահութեամբ հայ դատաւորաց Քաղըք և այլ կրօնական պաշտօնեայք չունիցին անդ մասն և բաժին:

Ե. Ձնջեցին արտօնութիւնք քիւրդից, չորպաճըլից և տէրէպէլից:

Զ. Նոր և արդար բաշխումն հարկաց:

Է. Բարեկարգություն վաքըֆի և քննություն կալուածական և հողային:

Ը. Զինաթափություն տաճկաց և առ հասարակ ի Հայաստան:

Թ. Պատրաստություն կանոնագրաց ի կառավարությունն երկրին, զոր վաւերացուցէ Սուլթանն հաճութեամբ Ռուսիոյ:

Ճ. Երաշխատրություն ինքնավարութեան Զէյթունի, ըստ հնադարեան վարչութեան²⁷:

Միաժամանակ պատրաստուեց մի համառօտ «Ծրագիր Կազմակերպական Կանոնագրի Օսմանեան Հայաստանի», որի մէջ սահմանուեալ էր ինքնավարական կազմակերպություն հայկական նահանգների համար և այդ ծրագիրը յատուկ պատուիրակութեան ձեռքով (Խրիմեան արքեպիսկոպոս և Մինաս Չերազ քարտուղար) ուղարկուեց եւրոպական վեց մեծ պետութիւնների կառավարութիւններին մինչև Բերլինի Վեհա-ժողովի գումարումը: Դրա հետ միասին Ներսէս Պատրիարքը ներկայացնում էր՝ 1) Մի առանձին Յիշատակագիր (Մեմորանդում), որի մէջ ապացուցում էր թէ ինչ պատճառներով ինքնավարութիւնը Հայաստանի համար մի արդար և օրինաւոր անհրաժեշտութիւն էր, 2) Հայաստանի վիճակագրութիւնը և 3) Հայաստանի քարտէզը:

№ 5

ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա.

Օսմանեան Հայաստանը, ըստ ներփակեալ աշխարհացուցին, կը պարունակէ Էրզրումի և Վանի վիլայէթները, Տիարպէքիի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն Խարբերդի սանճագին

²⁷ Գործ Դիւանատան Գէորգ Դ. կաթողիկոսի, 1878 թ. 5:

արևելեան մաս (որուն սահմանագլուխն է Եփրատ արևմտեան կողմէն), Արդանայի սանճագը և Սղերդի սանճագին հիւսիսային մասը, որք կը կազմեն Մեծ Հայաստանի տաճկական մասը, որպէս նաև Բիզէի նաւահանգիստը՝ Տրապիզոնի և Պաթումի միջև, տուրևառը դիրացնելու համար:

Հայաստանի վարչութիւնը պիտի յանձնուի Հայ ընդհանուր կառավարչի մը, զոր Բ. Դուն պիտի անուանէ երաշխաւոր պետութեանց հաւանութեամբը: Նորա բնակավայրը պիտի լինի Էրզրում:

Ընդհանուր կառավարիչը պիտի ունենայ գործադիր իշխանութեան բոլոր ստորոգելիքը, նահանգին ամբողջ ընդարձակութեանը մէջ հանրային ապահովութեան և կարգապահութեան պահպանութեանը պիտի հսկէ. տուրքերը պիտի հաւաքէ, և իր պատասխանատուութեան տակ պիտի անուանէ վարչական գործակալները. ինք պիտի կարգէ դատաւորները, պիտի գումարէ ընդհանուր ժողովը և անոր պիտի նախագահէ, և նահանգին բոլոր վարչական ճիւղերուն պիտի հսկէ:

Հինգ տարուան համար պաշտօն ստանձնելով, ընդհանուր կառավարիչը չը պիտի կարենայ հրաժարուիլ Բ. Դրան կողմէն, առանց հաւանութեան երաշխաւոր պետութեանց:

Կեդրոնական վարչական ժողով մը պիտի հաստատուի, որուն պիտի նախագահէ ընդհանուր կառավարիչն և անոր պիտի անդամակցին՝ 1. Ելևմտից Տեսուչը, 2. Հանրային շինութեանց Տեսուչը, 3. Մի օրէնսգէտ խորհրդական, 4. Հանրային զօրութեան հրամանատարը, 5. Քրիստոնեայ դպրոցներու Վերատեսուչը, 6. Մահմէտական դպրոցներու Վերատեսուչը: Սա ալ պիտի անուանի ընդհանուր կառավարչէն, այլ նահանգին մէջ Շէրիի օրէնսդրութեան գլխաւորին առաջարկութեամբ:

Նահանգը սանճագներու և ասոնք այլ գազաներու պիտի ստորաբաժանուին. ընդհանուր կառավարիչն պիտի անուանէ սանճագներու կառավարիչները և գազաներու փոխ-կառավարիչները:

Կառավարիչներն և փոխ-կառավարիչներն ընդհանուր կառավարչէն կարգուած գործակալներ են, և ամեն կերպով զինքը կը ներկայացունեն նահանգին ստորաբաժանումներուն մէջ. ընդհանուր կառավարչէն կարգուած երկու խորհրդականներ կ'օժանդակեն նոցա՝ իրեանց վարչութեան մէջ:

Բ.

Նահանգին ընդհանուր կառավարության անկ ըլլալով հանրային կարգապահութիւնը և ապահովութիւնը պահպանել, ընդհանուր եկամուտներու 20%ին չափ գումար մը ամեն տարի պիտի վճարուի Կայսերական գանձուն:

Նահանգին մնացած եկամուտին մէջէն քաղաքային ու դատական վարչութեան և ոստիկանութեան և բանակի պահպանութեան պէտք եղած ծախքերը դուրս հանելէ յետոյ, մնացորդը սա պէս պիտի գործածուի.

1. 80%ին պիտի յատկանայ հաղորդակցութեան ուղիներու և ուրիշ հանրագուտ շինուածոց հաստատութեանը և պահպանութեանը.

2. 20%ին պիտի յատկանայ դպրոցներու հաստատութեան և պահպանութեան. բարձրագոյն դպրոցներու յատկացեալ գումարները մէկդի դնելով, մնացորդը իբր նպաստ պիտի բաշխուի մահմէտական և քրիստոնէայ դպրոցներուն, անձնիւր կրօնի մնայուն հասարակութեան թուոյն համեմատութեամբ:

Գ.

Մահմէտական օրէնսդրութեան գլխաւոր մը պիտի կարգուի, զոր Վեհափառ Սուլթանը կ'անուանէ և որոյ պաշտօնն է նահանգին մէջ բոլոր *Շէրիի* դատարաններուն վրայ հսկել:

Շէրիի դատարանները լոկ մահմէտականաց իրարու հետ ունեցած վեճերը պիտի ճանաչեն:

Հասարակ դատարանները պիտի դատեն քրիստոնէից, կամ մահմէտականաց և քրիստոնէից մէջ պատահած բոլոր քաղաքային, եղեռնական և վաճառականական դատերը: Ամեն դատարան պիտի բաղկանայ երեք դատաւորէ, որոնց մէկը նախագահի պաշտօն պիտի վարէ. ընդհանուր կառավարիչը կ'անուանէ դատաւորները և կ'որոշէ այս դատարանաց նախագահները:

Գազային փոխ-կառավարիչը և իւր խորհրդականները հաշտարար դատաւորի պաշտօն պիտի վարեն:

Յատուկ կանոնագիրներով պիտի որոշուին *Շէրիի* և հասարակ դատարանաց և հաշտարար դատաւորաց թիւը, իրաւասութիւնը

և ստորոգելիները: Քաղաքային Օրինագիրք մը և Եղեռնական Օրինագիրք մը պիտի խմբագրուին Եւրոպայի իրաւագիտական արդի սկզբունքներուն համաձայն:

7.

Կրօնի կատարեալ ազատութիւն պիտի լինի:

Անձնիր հասարակութիւն պիտի հոգայ կղերին և կրօնական հաստատութեանց ծախքերը:

Ե.

Նահանգին հանրային զօրութիւնը կը բաղկանայ՝ 1. Ոստիկանութենէ մը և 2. Բանակէ մը:

Քիւրտերը, Չէրքէզները և միւս թափառիկ ցեղերը մէկդի թողլով, բանակը պիտի բաղկանայ՝ 1. Հայերէն՝ և 2. նահանգին մէջ հինգ ամէ ի վեր բնակութիւն հաստատած ոչ-հայ տարրէն:

Ոստիկանութեան պաշտօնն է նահանգին ամբողջ ընդարձակութեանը մէջ կարգապահութիւնը և ապահովութիւնը պահպանել:

Ասոր հրամանատարն է ոստիկանապետ մը, զոր կանուանէ ընդհանուր կառավարիչն, նահանգին հանրային զօրութեան ընդհանուր հրամանատարին առաջարկութեամբ, և որ անոր անմիջական հրամանին տակ կը գործէ:

Բանակը պիտի դրուի հանրային զօրութեան ընդհանուր հրամանատարի հրամանին տակ և իւր պաշտօնն է ի հարկին օգնել ոստիկանութեան:

Սովորական ժամանակի մէջ գործող բանակը պիտի բաղկանայ 4000 զինուորէ, ի բաց առեալ այն կանոնաւոր բերդապահները, զորս Կայսերական կառավարութիւնը կրնայ իւր ծախքովը դնել նահանգին բերդերուն և ամրոցներուն մէջ:

2.

Ընդհանուր ժողովը պիտի կազմուի հետևեալ կերպով՝

Անձնիր գազա պիտի յղէ երկու պատգամաւոր, մէկ մահմէտական և մէկ հայ, զորս գազային մահմէտական և քրիստոնեայ

ժողովուրդները կ'ընտրեն յատկապէս:

Պատգամաւորները սանճագին գլխաւոր քաղաքին մէջ գումարուելով, միատեղ պիտի ընտրեն երկու խորհրդական ոռ սանճագ, մէկը քրիստոնեայ և միւսը մահմէտական:

Ընտրող և ընտրելի են հաասարապէս.

1. Նահանգին բոլոր բնակիչները որք 25 տարին լրացուցած են, կալուած մը ունին, կամ ո և է ուղղակի տուրք մը կը վճարեն.

2. Զանազան կրօնից պաշտօնեաները և կղերը.

3. Դասատուները և դաստիարակները, ճանաչուած կրօնական հասարակութեանց գլուխներն իրաւամբ անդամ պիտի լինի այս ժողովին, մի գլուխ անձնիւր կրօնի համար:

Տարին անգամ մը ընդհանուր ժողով կը գումարի նահանգին գլխաւոր քաղաքին մէջ, նահանգին ելմտացոյցը (budget) և տուրքի բաշխումը քննելու և ստուգելու համար: Ընդհանուր կառավարիչը պարտաւոր է տարեկան ելմտական տեղեկագիր մը ներկայացնել անոր:

Տուրքի հաւաքման և բաշխման դրութիւնը պիտի բարեփոխուի երկրին ճոխութեանց զարգացումը դիւրացնելու նպատակաւ:

Ընդհանուր կառավարիչը և ընդհանուր ժողովը հինգ տարին անգամ մը համաձայնութեամբ պիտի որոշեն՝ ըստ վերոյիշեալ տրամադրութեանց՝ Բ. Դրան յանձնուելիք գումարները:

Է.

Երաշխաւոր պետութիւնները միամեայ պաշտօնով Համագային Յանձնաժողով մը պիտի կարգեն, որպէս զի հսկէ տոյն Կանոնագրին գործադրութեանը, որ Դաշնագրին ստորագրուելէն երեք ամիս յետոյ ի գործ պիտի դրուի²⁸

²⁸ «Ծրագիր Կազմակերպական Կանոնագրի Օսմանեան Հայաստանի», հրատ. Պատրիարքարանի, Կ. Պօլիս, 1878, եր. 8-16:

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՎՐԱՅ

Արևելեան խնդիրն ահա մտաւ նոր կերպարանց մէջ, որ լուծումն կը պահանջէ անյապաղ և վերջնական: Եթէ մինչև ցայսօր դարէ մը ի վեր առկախեալ մնացած էր իբր սպառնալիք, այդ սպառնալիքն, կրնամք ըսել, թէ ահա շառաչեց այսօր:

Դիւանագիտական յարդարմունք իրաւախոհութիւնք բարենորոգմունք պահանջեալք կամ խոստացեալք առ ոչինչ այլ ծառայեցին, բայց ի յապաղել տալ առ վայր մի զայդ շառաչումն, բայց և ծառայեցին միանգամայն իրենց ընդունայնութեամբն արդա-րացի երևցունելու զսա ամենուն աչաց: Վերջին պատահեալ դէպք, այնու իսկ զի պատահեցան զայս անխուսափելի երկսայրաբանութիւն դրին առաջի Երոպիոյ, թէ կամ այն է, որ պէտք է անհետ կորընչին իրենց ետևէն ընդ քարշ տանելով բոլոր իրենց հետևանքները, և կամ այն է որ պէտք է իրենց արդիւնքը յառաջ բերեն լի և անթերի:

Երոպիոյ աչալրջութեան չէ կարելի այլ ևս իւրոց շահուց նկատեալ փրկութեան ելքը ուրիշ կերպ լուծման մէջ բնտուել՝ քան անթերի լուծման մէջ, այսինքն է, յայնմ որ բանաւորն է, որ բնականն է որ կարելի՝ և դա խնդրոյն բնութենէն իսկ յառաջ կը բղխի:

Արևելեան խնդիրն է՝ խնդիր տկարացման Օսմանեան ինքնակալութեան, յոր ընդխառն կնճռեալ է նաև քրիստոնէից մահմէտականաց հետ բնակութիւնն ի զանազան կողմանս Թուրքիոյ: Այն որ խնդրոյն մարմաջեցուցիչ կողմն է, այն որ զվտանգն մօտալուտ կընէ, այն որ Երոպիոյ պահպանողական շահուց վնաս կըսպառնայ իւր հապճեպ լուծմամբն, ահա այդ կնճռումն է, այդ բնակակցութիւնն, որ անհնարին դարձած է, այլևս տևել արդի պայմանաց մէջ: Մեծամեծ աղէտներ են, որոց դա ձայն կուտայ:

Թուրքիա բազմաթիւ պետութիւններ ունի իւր դրակից՝ մեծ կամ փոքր: Յարդ դրակցութեան կամ նիւթական շահու խնդիր՝ բնաւ պատրուած եղած չէ կամ առիթ տուած չէ դարէ հետէ լուրջ մաքառմանց: Միւս կողմանէ, Թուրքիոյ զուտ ի մահմէտականաց բնակեալ կողմանք՝ զերծ մնացած են արևելեան խնդրոյն յուզմանէն: Աստի պէտք է զհետ բերել թէ որ և է դղրդման մը կամ հապճեպ լուծման մը վտանգն կը փարատի, եթէ հնար ըլլայ գիտել

թէ ինչ եղանակաւ կարեն մահմէտականք բնակիլ ի միասին ընդ քրիստոնեայս:

Երոպական պետութիւնք որ զՂրիմի պատերազմն մղեցին ի պաշտպանութիւն Թուրքիոյ ընդդէմ Ռուսիոյ, հասու եղան թէ իրենց լոկ յաղթութեամբք՝ վտանգն չփարատիր իսպառ, և արևելեան խնդիրն զիր վերջնական լուծումն չգտներ երբէք. ուստի քրիստոնէից վիճակին վրայ խորհելու զբաղեցան: 1856-ի Խաթթի Հիմայունը արտայայտութիւն եղաւ այդ աշխարհագիտութեան. – աշխարհագիտութիւն խաղաղութեան և նախատեսութեան: Չեմք կարող ըսել որ այդ բարենորոգմանց մէջ չեն գտնուիր և ծիւք այն սկզբան թէ ապահովել պարտ է քրիստոնէից իրենց ստացուածքը, կեանքը և պատիւը և զհաւասարակցութիւնն ընդ մահմէտականս:

Այդ ժամանակէն ի վեր ատեն ատեն նորանոր բարենորոգմունք հրատարակուեցան նոյն ոգով յղացեալ, որք զնախորդ բարենորոգմունսն կամրացունէին, և վերջինն, – իսկ գերագոյն ճիգն հաւասարակցութեան և ձուլման իսկ, – կատարուեցաւ, հրատարակմամբ Օսմանեան Սահմանադրութեան:

Սակայն այս ամենայն ճգունք ոչ յայլ ինչ կըլանգէին, բայց զիրեանց ապիկարութիւնն ցուցնելու: Տակաւին կը հեծէ քրիստոնեայն զիր ստորնութիւնն մահմէտականին առջև, և աշխարհավարական կամ քաղաքական հաւասարակցութիւնն ոչ այլ ինչ նկատուած է, բայց բառ սին: Ամենուրեք ուր իշխանութիւնն ի ձեռս մահմէտականաց է, նոյն անյեղի և անփոփոխելի արգասիք և օրէնք անգոր գտնուած են զքրիստոնեայն պաշտպանելու յերեսաց մահմէտականին:

Նոր օրէնսդրութիւնք և արդարութեան գործոյն երաշխիս տալու ջանք՝ զիսլամութեան ոգին մղած են մինչև յիւր վերջին ամրութիւնսն, բայց նա անց զամենայն պատ ի պատ հնարս ի գործ դրած է զայդ օրէնսդրութիւնսն և զայդ երաշխիս ի դերև հանելու:

Չոր օրինակ, եթէ վճռատու դատաւորն քրիստոնեայ ոք կարէ լինիլ, զվճիռն գործադրող ձեռքն մահմէտական է միշտ:

Բարձրագոյն Դուռն, – չարամտութիւն կը լինի եթէ զհակառակն ըսեմք այսօր, – իւր բարի կամաց հաւաստիքն տուաւ, սակայն զանկարելին խոստացած եղաւ: Ի բաց առնելով մտօք որ ինչ ըստ աշխարհագիտականին հաւասարակցութիւն կը քարոզուի և կը պաշտպանուի, կարող չէ մահմէտական իշխանաւոր մը, առանց դրժելու իւր կրօնից, ընդունել և գործադրել զայս երկուս սկզբունս՝

զխղճի ազատութիւն, և զփոխարինիչ արդարութիւն երկու էական կիրառնութիւնք որ և է կառավարութեան մէջ:

Ազատութիւնն խղճի ոչ այլ ինչ կը նշանակէ ի Թուրքիա, բայց ազատութիւն քրիստոնէի ի մահմէտականութիւն դառնալու: Երբէք մահմէտական իշխանութիւն մը չէ հանդուրժած և չհանդուրժեր որ իսլամ մը ի քրիստոնէութիւն դառնայ և ոչ իսկ քրիստոնէի մը կը ներէ զայն եթէ առ ժամանակ մի մահմէտական եղած լինի: Չէ հնար օրինակ ի մէջ բերել, որ այդպիսի ինչ դարց ներուած ըլլայ երբէք: Խղճի ազատութեան սկզբունքը գործադրելի է միայն քրիստոնէայ զանազան եկեղեցեաց մէջ իրարու վերաբերմամբ:

Նոյնպիսի է և փոխարինիչ արդարութեան համար: Արդարութեան ատենի մէջ կրօնքն չունի ամենևին ազդեցութիւն (բայց եթէ երբ օրէնքն նորա ամբողջութեան մասն է), ցորքան վէճը քրիստոնէից մէջ է. բայց երբ մահմէտական է վնասապարտն առ քրիստոնէայն, առանձնաշնորեալ է նա միշտ առաջի արդարութեան, որ չընդունիր և պիտի չընդունի, բայց զմահմէտականին վկայութիւնը միայն:

Այդ երկու իրաց մէջ միանգամայն կը տիրէ արտաքսողական ոգին, որով տոգորուած է ամեն մահմէտական իշխանութիւն, այնու զի իշխանութիւն է այն իսկապէս կրօնական: Չայդ երկուսն միայն յիշատակեցինք աստ առ ի լաւագոյն ևս դուրս ցայտեցունելու զարդինս դրութեան մը, յորում մահմէտական պաշտօնավարն, որչափ և լուսաւորեալ ոք ըլլայ և բարեսէր ի բնէ, ստիպուած է հպատակիլ՝ ի պատճառս իր կերպարանացն զոր կը կրէ, և որ իրեն զգալի ևս կըլլայ իր յանցանկելոց հետ ամենօրեայ վերաբերութեամբք:

Անիրաւութիւն է զմարդիկ ամբաստանել, զի անկարելիութեան մը առջև կը գտնուիմք: Երոպիոյ հզօր ներգործութիւնն ադոր հետ բախեցաւ և կասեցաւ. և նոյնիսկ Թուրքիոյ պետական մարդոց իմաստութիւնն և հայրենասիրութիւն անդ խորտակեցաւ: Մարթ է ըսել ևս համարձակօրէն թէ նորանոր բարենորոգմունք՝ նոր փախստեան տեղիք և նոր շփոթից առիթք են, և բնաւ թէ խնդրոյն լուծումն տալու բաւականք:

Եթէ մահմէտական իշխանութեան այս արտաքսողական ոգին ակնյայտնի ինչ է և աներկբայելի և ճակատագրական, եթէ իրաց բնութեան իսկ մէջէն է, եթէ ապստամբ է յամենայն դարմանոյ, եթէ նոյնիսկ մահմէտականաց կրօնից ոգին է, և եթէ այդ կրօնքն է ամեն մահմէտական պաշտօնէից աշխարհավարական դաւանութիւնն,

որով իրենց կառավարական բնութիւնն աստուածայետական կը դառնայ, կը հետևի ուրեմն, որ Թուրքիոյ քրիստոնէից խնդիրն, ինչպէս ի վեր անդր կոչեցինք, իբր մեծի արևելեան խնդրոյն մար-մաչեցուցիչ վէրք, չկրնար գտնել զիր լուծումն, բայց եթէ, քրիստոնէից և մահմէտականաց բնակակցութեան պայմանը փոփոխելով:

Քրիստոնէական իշխանութիւն մը կարէ միայն հաստատել զհաւասարակցութիւն. դա միայն կարէ յակաստանի դնել զարդարութիւն. դա միայն կարէ հիմնել զազատութիւնն խղճի. ուստի և դա հարկ է որ փոխանակէ զմահմէտական իշխանութիւնս ամենայն ուր խոնեալ են քրիստոնէայք:

Այդ վիճակի մէջ կը գտնուին գրեթէ ամենայն գաւառք եւրոպական Թուրքիոյ և յԱսիա՝ Հայաստան և Կիլիկիա:

Այս լուծումն է զոր ըստ իւրեանց կարգի կուգան այժմ Հայք թախանձել ի Թուրքիոյ:

Ոչ միայն կը հաւատան թէ համանման այլոց քրիստոնէայ ժողովորոց Թուրքիոյ իրաւունս ունին եւրոպական պետութեանց խնամարկութիւնն ընդունելու, այլ և կը հաւատան, որ իրենց վիճակի բարւոքումն է այսուհետև մին յանհրաժեշտ պայմանաց արևելեան խնդրոյն լուծման:

Զիւրեանց անկախութիւնն կորուսանելով Հայք ի հինգ դարուց հետէ, իրենց մէկ մասն ցրուած է ընդ երեսս երկրի՝ խոյս տալով յերեսաց բարբարոս հրոսակաց որ ի Հայաստան արշաւեցին. սակայն մեծագոյն մասն յարեալ մնաց յիւր հայրենի աշխարհին մէջ, և անդ գիտցաւ իւր սրբավայրից հետ պահել և զպաշտամունս ազգային յիշատակաց:

Աւելի քան զերկու միլիոն Հայք կը բնականան ի Մեծն և Փոքրն Հայս: Այլ այսօր իսկ շրջապատուած են վայրենի ասպատակողներէ, որ չեն թուրք, բայց մահմէտական են, և արձակ համարձակ դարերէ ի վեր կը գերեն, կը պղծեն, կը կոտորեն: Եթէ Բուլղարք և Յոնք նեղուած են յեւրոպականն Թուրքիա, կրկին նեղուած են Հայք յԱսիա յերեսաց այդ վայրենաց, զուրկ մնացեալ ի դուզնագոյն անգամ որ և է լուրջ կառավարութենէ, և յեւրոպացոց խուզարկութենէ: Կարեմք ըսել, որ այն որ պարբերական ինչ դէպք են ի Ռումելիա, մնայուն վիճակ է ի Հայաստան, և այս ժողովուրդը, որոյ համար կրցաւ Անգլիոյ մեծագոյն քերթողն վկայել թէ աշխարհի ամենայն ազգաց

մէջ սա է թերևս որոյ տարեգիրք ամբիժ մնացած են յեղեռանց, – այդ ժողովուրդը հանապազօր կը տեսնէ ԺԹ. դարուս կորովութեան մէջ իւր յարկաց կործանումը, իւր պատուոյն անարգութիւնը, իւր սրբավայրից կոխումը: Վկայ են այդմ բազմաթիւ և մեծահատոր տեղեկագիրք որովք հայոց պատրիարքարանն ի տասն ամաց հետէ հեղած զեղած է զպաշտօնարանս Բարձրագոյն Դրան, և որք թարգմանուած և հրատարակուած են առաջի եւրոպացոց:

Հայք եղած են թերևս բոլոր արևելեան քրիստոնէից մէջ միակ, որ Դրիմեան պատերազմէն ի վեր, և յանդիման իսկ հանդիսաւոր խոստմանց թողուած են երթալ իրենց յուսովս ապրիլ: Ուզեցին յուսալ, որչափ Եւրոպիոյ և նոյնիսկ թուրքաց մէջ գտնուած են մարդիկ, որք յուսով կապրէին, և յայս միջոց ժամանակի, որչափ իրենց ձեռքն էր, բարեյօժար եղած են ամենևին ոչ մի արգելք կամ խոչընդոտն յարուցանել կառավարութեան առջև: Բարձրաձայն կարեն ըսել զայս թէ Բարձրագոյն Դուռն ամենևին չունի և որ դոյզն ապստամբութեան նշմար արձանագրած ի ստգտանս հայոց: Իբր բարեմոյն որբիք, սատար եղած են նմա ի յաջողութիւն իւր ամեն դարէքման և բարենորգման ջանից: Սակայն այսօր աչօք կը տեսնեն իրենց ակնկալութեանց չարաչար ջախջախումը: Սակայն հաւատս ունին իրենց ապագային վրայ և կ'ակընկալեն յուսով լաւագոյն օրեր տեսնելու իրենց խնդրած վարչական կարգօք, որ միայն կարող պիտի լինի փրկել զիրենք, փրկել նաև զԱրևելս յապագայ և ի ծանր շփոթից: Ռուսիոյ խնամարկութիւնը արդէն տարածուած է իրենց վրայ. այդ խնամարկութեան կը մնայ մասնակից լինել նաև միւս եւրոպացի պետութեանց: Իսկ ինչ կարէ հանդիպիլ եթէ տակաւին թողուին Հայք անցելոյն պէս մահմէտական պաշտօնակալաց նեոք: Ոչ ինչ այլ բայց առաւելապատիկ ծանրանալ իրենց վիճակին: Ընշման ամեն պատճառաց վրայ պիտի յաւելանայ նաև մոլեռանդութիւնը, զոր ծաւալած է արդէն մահմէտական ժողովրդոց ամեն դասու մէջ արդի պատերազմն, որ հետևեցաւ Կոստանդնուպօլիսի դեսպանական ժողովոյն, և որ մղուեցաւ յանուն ազատութեան քրիստոնէից: Անդուստ կրօնամոլ մսլիմանք յեւրոպական Թուրքիոյ կանցնին ահա և պիտի անցնին Ասիա, իւրեանց հետ բերելով իրենց անյագուրդ մնացեալ ատելութիւնն:

Եւ մինչդեռ Հայք պիտի տեսնեն իրենք զիրենք, այսը՝ քան զաշխարհն որոց տիրացաւ Ռուսիա, մատնեալ հալածանաց և

աւերածոց յանդիման նոցա Ռուսիոյ նոր ձեռք անցուցած սահմանաց մէջ պիտի սկսին իրենց երեկեան վիճակակիցքն նոր կեանք վարել, հովանաւորեալ յօրինաց ընդ քրիստոնեայ կառավարութեամբ: Պիտի չհանդուրժեն անշուշտ Թուրքիոյ Հայք իրաց այս վիճակին:

Հեռի են նոքա քաղաքագիտական փառասիրութենէ, որ ինչ կը խնդրենն, այս է. Թուրքական Հայաստանի մէջ քրիստոնեայ ինքնօրէն կազմաւորութիւն մը ունենալ, նոյն երաշխեօք ամրացեալ որով Լիբանանն է, և այդ ձև վարչութեան տակ հայ պաշտօնաւորօք մատակարարուիլ, որք կարող են հաւասարակշիռ պահել զմահմէտականս և զքրիստոնեայս,–մնալով միշտ, ինչպէս էինն միշտ հաւատարիմ հպատակ Սուլթանին: Կը խնդրեն զայս յանուն իրեանց կրած վշտաց, յանուն սենսականագոյն շահուց Թուրքիոյ, կը խնդրեն նաև յանուն խաղաղութեան արևելից և յանուն շահուց զոր ունի Եւրոպա վերջնական լուծմամբ Արևելեան խնդրոյն²⁹:

Կոստանդնուպօլիս 2/14 մարտ 1878

№ 7

ՎԻՃԱԿԱԳԻՐ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Օսմանեան Հայաստանն կը պարունակէ՝

Ա.

Էրզրումի և Վանի վիլայէթներն, ի բաց առեալ այն երկիրները զորս Այ-Սդեֆանոսի Դաշնագիրն որոշած է թողուլ Ռուսիոյ: Այս վիլայէթներուն բազմամարդ կեդրոններն են Կարին, Բաքերդ, Երզնկա, Մանազկերտ, Մուշ, Բաղէշ և Վան:

Այս երկու վիլայէթներու բազմամարդութիւնն է, ըստ Հիճրէթի 1294 տարւոյ Օսմանեան կայսրութեան պաշտօնական տարեցուցիչն (Սալնամէ) 2,066,000

Դուրս հանելով Ռուսիոյ թողուած մասին	
Ժողովուրդը	366,000
	1,700,000

²⁹ «Le Haïasdan» («Հայաստան» երկշաբաթաթերթ), Լոնտոն, 1889, №3-4: Տպուած է աղաւաղումներով, որ մենք, տարաբախտաբար, միջոց չունեցանք ուղղելու:

Համեմատութիւն զանազան ցեղերու

Հայք	1,150,000
Թուրք	400,000
Թափառիկ Քուրդ	80,000
Չազա կամ Տըմպըլիկ, որք իրենց յատուկ լեզու և կրօն ունին	35,000
Եզիտի, որք արևապաշտ են, յատուկ լեզու ունին և մեծաւ մասամբ թափառիկ են	13,000
Գնչու կամ թափառիկ Չինկեանէ	3,000
Յոյն և Հրեայ	5,000
Ասորի	14,000
	1,700,000

Այս երկու վիլայէթներն կը պարունակեն 109 վանք³⁰:

Բ.

Տիարալէքիի վիլայէթին հիւսիսային մասը, այսինքն Խարբերդի սանճագին արևելեան մասը (ու՛մ սահմանագլուխ է Եփրաղ արևմտեան կողմէն), Արղանաի սանճագը և Սղերդի սանճագին հիւսիսային մասը: Բազմամարդ կեդրոններն են Խարբերդ, Ակն, Չմշկածագ, Բալու և Սղերդ:

Բազմամարդութիւն ըստ պաշտօնական	
Տարեցոյցին	664,600
Դուրս հանելով վիլայէթին մնացած մասին	
համար	302,300
	362,300

³⁰ Այս վանքերէ ոմանք Հայաստանի Քրիստոնէութեան դառնալուն առաջին դարերուն մէջ հիմնուած են, երբ այսպիսի հառտատութիւններ մեծ ընդունելութիւն կը գտնէին, որով յաւէտ կամ նուազ կարևոր եկեղեցական միաբանութիւններ պարունակող այդ վանքերն յաւէտ կամ նուազ ընդարձակ հողային կալուածներ ստացած են: Այս վանքերը, թէ՛ անհատներու և թէ՛ կառավարութեան յափշտակութեանցը միշտ ենթակայ եղած ըլլալուն հակառակ, կրցած են ցարդ բաւական մշակելի հող և եկամուտ պահպանել, դպրոց, տպարան, հիւրանոց և ուրիշ ազգային հաստատութիւններ հոգալու համար. իրենք ազգային նախնի ասանդութեանց վառարան մնալով միշտ:

Համեմատութիւն զանազան ցեղերու

Հայք	180,000
Թուրք	130,000
Թափառիկ Քուրդ	40,000
Ջազա	2,300
Եզիտի	2,000
Ասորի և Քաղդէացի	8,000
	<hr/>
	362,300

Այս վիլայէթը կը պարունակէ 48 վանք:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ

ՆԱՀԱՆԳՔ	Հայք	Թուրք	Քուրդ	Յոյն	Ասորի	Հազա	Եգիպտի	Գնչու
Էրզրում եւ Վան	1150000	400000	80000	5000	14000	35000	13000	3000
Տիարպէքիը	180000	130000	40000	-	8000	2300	2000	-
(Հիւսիսային մաս)	1330000	530000	120000	5000	22000	37300	15000	3000

Գումար

Հայք	1,330,000
Թուրք	530,000
Քուրդ	120,000
Հանազան ցեղեր	82,300
	2,062,300

№ 8

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Շատ դժար է Տաճկաստանի Հայոց թիւը ճշդիւ որոշել և անելի դժար է վաւերական պաշտօնագիրներով հաստատել անձնիւր վիւայէթի բնակիչներուն թիւը: Ու է կանոնաւոր ազգահամար տեղի ունեցած չէ: Օսմանեան կառավարութեան հրամանաւ 1845-ին կատարուած ազգահամարն ալ, որ Պ. Ուպիչինիի և իրմէ յետոյ Տաճկաստանի վրայ խօսող հեղինակաց հաշիւներուն հիմ եղած է, խիստ անկատար է, թէև անկէ յառաջ կամ այնուհետև կատարուած բոլոր ազգահամարներուն կանոնաւորագոյնն եղած լինի: Տաճկաստանի մէջ, ընդհանրապէս ժողովուրդը զգալի հակակրանք մը կը տածէ ազգահամարի դէմ, և ոչ-մահմէտական հպատակներն միշտ նկատած են զայն իբր սկզբնաւորութիւն գլխահարկի և պէտէլաթի տուրքերուն ծանրացմանը: Իրենց գրեթէ անփոփոխ կանոնն է կարելի եղածին չափ պակաս թիւեր ներկայացունել ազգահամարի գործակալներուն, կառավարութիւնը չունենալով ծննդոց տօմարներ կամ ստուգելու ուրիշ ու է ազդու միջոց մը:

Պ. Ուպիչինի 1845-ի ազգահամարի յենլով 2,500,000-ի կը հանէ Տաճկաստանի Հայոց թիւն, որոնց 400,000-ը Կոստանդնուպօլիսոյ և Պալքանեան թերակղզիին մէջ և մնացորդը Ասիոյ մէջ:

Սակայն Օսմանեան կայսրութեան բոլոր մասերուն մէջ, զոր օրինակ Ռումանիոյ մէջ, ուր վերջերս անելի կատարեալ ազգահամար մը կրցած է տեղի ունենալ, ստուգուած է որ 1845-ի ազգահամարին թուանշանները իրական կամ արդի բազմամարդութենէն շատ վար են: Այսպէս

Եգիպտոս 1871-ին ունէր ժողովուրդ ¹	5,200,000
Թունուզ 1876-ին. ²	1,500,000
Սերվիա 1876-ին.	1,300,000
Ռումանիա 1873	5,000,000
Գումար	<hr/> 13,000,000

¹ Տես, տը Ռէնէիի վիճակագիրն Եգիպտոսի:

² Տես, Թունուզի և հետևեալ երկիրներուն համար, Պ. Սօն Պլօքի Քքաղաքական Տնտեսութեան Տարեցոյցն:

Մինչ Պ. Ուպիչինի կը դնէ

3,200,000	Եգիպտոսի և Թունուզի համար.
1,000,000	Սերվիոյ համար.
4,000,000	Մօլտո-Վալաքիոյ համար.
<hr/> 8,200,000	Գումար.

Հոս կը նշմարենք 4,800,000 հոգիի յաւելում մը կամ գրեթէ 60% միջին յաւելում մը:

Ուրեմն ինչո՞ւ համար երեսուն տարի յառաջ կատարուած ազգահամարի մը 2,500,000 թիւը այսօր ալ ճիշդ պիտի նկատուի Հայոց համար: Գաւառացի Հայոց մեծագոյն մասը գիւղերը կը բնակի, և Թուրք գիւղացիներն, Հայոց հետ չկարենալով մրցիլ, կ'երթան քաղաքաց մէջ կենդրոնանալու համար, ուր համեմատաբար աւելի դիրին ապրուստի միջոցներ կը գտնեն հանրային պաշտօններ վարելով, հարկահանութեամբ և զինուորական ծառայութեամբ, որոնցմէ զրկուած են միւս ցեղերը: Արդ, գիւղական կեանքը միայն նպաստաւոր է ժողովուրդին աճման, մանաւանդ աղքատ երկրի մը մէջ ուր ճարտարարուեստութիւնը ոչինչ է կամ շատ քիչ զարգացած: Այս տեղափոխութիւնն է որ Կրետէի, Պուլկարիոյ մէջ և այլուր նուազեցուցած է մահմէտական տարրը, մինչ քրիստոնէայք չեն դադարած աճիլ պարբերական շփոթնելու և պատերազմներու հակառակ: Ասկէ զատ, Հայոց մէջ խստիւ պահպանուած սովորոյթ մը կայ, որով աղջիկները և մանչերը կ'ամուսնացնեն իսկոյն, երբ չափահաս լինին. որդիները և թոռները իւրեանց հայրերուն և պապերուն հետ միւնոյն տան մէջ կը բնակին, միատեղ կ'աշխատին, ապրելու կամ զուակ ապրեցնելու համար քիչ նեղութիւն կը կրեր կամ բնաւ չեն կրեն, զի ընտանիքն, որքան նուազ յաջող վիճակ ալ ունենայ իւր ապրուստը կրնայ ճարել: Երբ տան գլխաւորը մեռնի, երիցագոյն անդամը կը յաջորդէ նմա, և աւելի գործօն կամ աւելի հարուստ անդամները յայնժամ կը մտաբերեն հաստատուիլ այլուր և նոր խումբեր կազմել երբ թոռները, ծնօղաց մահուամբ ընտանիքի հայր լինելով, գերադաստանին գործերը վարելու կը կոչուին:

Ուստի մենք համամիտ պիտի լինէինք նոցա, որք հայաբնակ տեղերու վրայ յաւէտ կամ նուազ գոհացուցիչ տեղեկութիւններ

ստացած լինելով, կը հաւաստեն թէ Հայոց թին 3¹/₂ միլիոնը կը հասնի, եթէ քուրդերուն դրացնութիւնը աստ և անդ զարգացման ծանր խոչընդոտ չը լինէր, և եթէ բազմաթիւ ընտանիք, գնող չըլլալուն՝ չը կարենալով երկրագործութեամբ ստանալ տուրքի համար պահանջուած դրամը, չը հարկադրուէին մայրաքաղաք յղել իրենց անդամներուն մէկը կամ երկուքը, որք իրենց զաւակները սնուցանելու հոգը իրենց եղբայրներուն կամ ազգականներուն թողլով, նոյնպէս յանձն կ'առնուն ամբողջ ընտանիքին համար շահիլ այն ստակը, որով տուրքը պիտի վճարուի³¹:

Ուրեմն այդ հաշիւը կ'իջեցունենք 3,000,000-ի, որով 1845-ի ազգահամարին արդիւնքը 1/2 միլիոն կամ 20% յաւելցուցած կը լինիմք, յաւելաւմ մը զոր պէտք է վերագրել մասամբ ծնեալներուն մեռեալներէ բազմաթիւ ըլլալուն, մասամբ ալ պաշտօնական ազգահամարին թերութիւններուն:

Այս 3,000,000 Հայերը սապէս կը բաժնուին. 400,000 ի Կոստանդնուպօլիս և Պալքանեան թերակղզիի միւս մասերուն մէջ, այդ թիւը Պ. Ուպիչինիի ընդունածն է, զոր մենք ալ կը պահպանենք: Երոպական Տաճկաստանի Հայերն գրեթէ բոլորն ալ կը բնակին քաղաքաց մէջ, ուր վաճառականութեամբ և ճարտարարուեստութեամբ կը զբաղին, և մենք պատճառներ ունիմք հաւատալու թէ իրենց թիւը զգալապէս աճած ըլլալու չէ:

600,000 Փոքր Ասիոյ և Կիլիկոյ մէջ. 670,000 Փոքր Հայաստանի մէջ (Սըվազի վիլայէթ և Կեսարիոյ սանճագ), և 1,330,000 Օսմանեան Մեծ Հայաստանի մէջ, որ կը պարունակէ Էրզրումի և Վանի վիլայէթներն, Տիարպէքիի վիլայէթին հիւսիսային մասն, այսինքն Խարբերդի սանճագին արևելեան մասը (ուս սահմանագլուխ է Եփրատ արևմտեան կողմէն), Արզանաի սանճագն և Սղերդի սանճագին հիւսիսային մասն:

Երոպացի ուղևորներն, որք սովորապէս Պալքանեան թերակղզիին և արևմտեան Փոքր Ասիոյ կ'այցելեն, հաւատացած և հաւատացուցած են թէ Հայերն, ոյց կը պատահէին գրեթէ ամենուրեք, հաւասարապէս ցրուած էին Օսմանեան կայսրութեան մակերևոյթին վրայ: Սխալ է այդ: Մեծամասնութիւնը դեռ կը բնա-

³¹ Մի քանի ամ յառաջ Պատրիարքարանի կատարած վիճակագիրը հաստատած է թէ Կոստանդնուպօլսոյ մէջ 30.000 պանդուխտ Հայ կայ:

կի իւր հին հայրենեաց հողին վրայ: Սակայն պէտք չէ դատել քաղաքաբնակներուն թիւն, որպէս Կրետէի ժողովուրդին վրայ շատ թիւր գաղափար կը ստանայ մարդ եթէ իւր հաշիւը հիմնէ գլխաւոր քաղաքաց վրայ, ուր մահմէտականք մեծամասնութիւն ունին, կամ Պուլկարիոյ և Հէրզէկօվիւնի ժողովուրդին վրայ, եթէ մարդ Ադրիանուպօլիս, Ռուսճուք և Մօսթար միայն տեսնէ:

Նոյնպէս ակներև է որ Հայաստանի մէջ, որպէս Տաճկաստանի ուրիշ շատ մասերուն մէջ, քրիստոնէից և մահմէտականաց համեմատութիւնը մեծապէս փոխուած է 1845-էն ի վեր: Մինչ քրիստոնեայ ժողովուրդը ամեն տարի կ'աճի յաւէտ կամ նուազ ընդարձակօրէն, նուազում կը նշմարուի մահմէտականաց մէջ:

Այս նուազման պատճառները զանազան են.

1. Զինուորագրութիւն.

2. Մահմէտականաց խոնումը քաղաքաց մէջ:

3. Իւրեանց գաղթումն ի մայրաքաղաքն և այլուր թուրք պաշտօնատարաց ծառայութեանը մէջ մտնելու կամ ո և է կերպով ապրուստ ճարելու համար:

Եթէ այսօր կանոնաւոր ազգահամար մը կատարուի Օսմանեան Հայաստանը կազմող նահանգաց մէջ, պիտի յայտնուի որ թուային կարևորութիւնն մահմէտականներէն Հայերուն անցած է:

Սա ևս դիտելի է որ Հայաստանի մէջ բնակող մահմէտականաց մէկ մասը սերունդէ է: Սոքա շատ տեղերու մէջ պահպանած են իւրեանց ցեղի բարքերն, լեզուն և սովորոյթները, և հազուագիւտ չէ նոցա մէջ գտնել այնպիսի անհատներ, որք դեռ այսօր իւրեանց հայազգի հօր կամ պապուն անունովը կը կոչուին Մարկոս-Օղլու Մուսթաֆա,³² Տէր-Գրիգոր-Օղլու Մէհէմմէտ:

Նոյնպէս են Հայաստանի մէջ հաստատ բնակութիւն ունեցող քուրդերն: Դիւրին է Մամգի, Մանդըքլի, Սիլվանցի, Ռոշկունցի անուններուն մէջ նշմարել Մամգոնեան, Մանդակունի, Սլկունի, և Ռշտունի հին Հայ գերդաստանաց անուններն: Անոնց շատերը քրիստոնէութեան սովորութեանց շատերուն կը հետևին, և չեն կարող նկատուիլ իբր մահմէտական:

Հոս ընթերցողին մտացը կրնայ խնդիր ներկայանալ թէ ինչո՞ւ

³² Տէր համիմաստ է աբբայ բաղին. յայտ է թէ Հայ քահանաներն ամուսնացեալ են ըստ վաղեմի սովորութեան եկեղեցւոյ:

թուրքերն այսքան զանց առած են մեծ բազմութեամբ գրաւել Հայաստան գաւառներն: Նոյն իսկ կլիմային խստութիւնը այս երկիրը իւր զաւակներուն պահպանած է: Թուրքը, բնապէս ծոյլ և հեշտասէր, Փոքր Ասիոյ, Եւրոպական Տաճկաստանի և Ասորիքի բարեխառն կամ տաք երկիրները նախ ընտրած է յաւիտենական ձիւներով ծածկուած լեռներէ և ծովուն մակերևոյթէն մի քանի հազար ոտք բարձր լեռնադաշտներէ: Արդէն հարկ ալ դատած չէ հաստատուիլ անդ քաղաքականութեան կամ նախատեսութեան համար, քանի որ քուրդերն և ուրիշ այնքան բարբարոս ցեղեր հոն են, բնակիչները շարունակ նեղելու և անկարողութեան դատապարտելու համար: Ասոր համար բաւ էր այք գոցել նոցա չարագործութեանց առջև և ի հարկին քաջալերել զայնս: Այսպէս վարուեցաւ նա, և գուցէ այս միակ պարագայն է, ուր կարելի չը լինի ամբաստանել Թուրքն իբր զանցառու կամ իբր դրութիւն չունեցող³³:

Բերլինի վեհաժողովի նախօրեակին պետութիւնների ներկայացուցիչներին մատուցուեց ոչ պաշտօնական կերպով և մի այլ ծրագիր, որ կազմել էր հայազգի նշանաւոր պետական գործիչ Նուբար փաշան: Այդտեղ էլ համարեա միևնոյն զլխաւոր հիմունքներն էին դրուած, բայց տարբեր խմբագրութեամբ ու մի շարք մեղմացումներով:

№ 9

ՔԱՆԻ ՄԸ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏՅՈՒԵԼԻՔ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ՎՐԱՅ

Եւրոպիոյ պետութիւնք բաղձալով յԱրևելս իրաց կարգ մը հաստատել որ տևողութեան յոյս մը տայ, ինչպէս Պալքանեան նահանգաց, նոյնպէս նաև Փոքր Ասիոյ այն մասին վրայ որ Հայկական ցեղին խանձարուրքն է, իրենց այքը դարձուցին: Նոյն ինքը Բարձրագոյն Դուռը զգաց թէ օգտակար չէ այս ճարտար, աշխատասէր և հանճարեղ ազգը թողուլ այն խեղճ վիճակին մէջ յորում կը գտնուի, հեռու Եւրոպայէն և իրեն ներկայացուցիչներէն:

³³ Ծրագիր Կազմ. Կանոնագրի Օսմ. Հայ. եր. 18-34:

Աւելորդ է խօսիլ աստ այն հայ ժողովրդոց վիճակին վրայ, որք իրենց հայրենիքը թողած չեն, ավելորդ մանաւանդ երբ բաղդատեմք զայն իրենց հայրենակցաց վիճակին հետ որ կովկասեան կողմերը կը բնակին: Բարձրագոյն Դուռը, այնու միայն որ Այ-Ստէֆանօսի նախաշաւիղ դաշանց մէջ պայմանագրուած է Հայաստանի վարչութեան մէջ բարենորոգումներ մտցունել, այնու միայն որ պարտաւորութիւն վրան առած է այդ աշխարհին բնակիչները պաշտպանել քուրդերու դէմ, հաստատութիւն և խոստովանութիւն տուած է թէ յոռի վարչութեան տակ կը հեծեն Հայք և թէ քուրդերու վայրենի ցեղերուն ձեռք թողուած են:

Հայերը աչք չունին աշխարհավարական վիճակի, աշխարհավարական անկախութեան. ուզածնին սոսկ քաղաքային ազատութիւններ են, և այնպիսի կարգադրանք, որ երաշխաւորէ իրենց անձին ապահովութիւնը, իրենց գոյքը, իրենց կանանց և իրենց դստերաց պատիւը, իրենց կենաց իրաւունքը վերջապէս: Այդ քաղաքային ազատութիւնք որ հրատարակուեցան 1840 թուականէն Կիլիանէի Խաթթի-Շէրիֆով, և վերահաստատուեցան յաջորդ Խաթթերով, եթէ իրօք գործադրուած ըլլային, այդ հայոց աշխատաւոր ցեղը տարիներէ հետէ փոխած կլլային իրենց երկրին երեսը: (Ռուսահայոց Երեւանայ նահանգը կրկնած է իւր բնակիչքը 30 ամաց մէջ):

Հայոց ազգը անիրաւ չգտնուիր և կը ճանչէ Վեհ. Սուլթանին և իւր մեծանուն նախորդաց առատամիտ դիտաւորութիւնները: Թէ որ այս դիտաւորութիւնք դատարկ և ապարդիւն մնացին, եթէ սահմանեալ բարենորոգումնք մեռեալ տառ մնացին, պատճառն է այն որ այդ բարենորոգմանց գործադրութիւնը ասանդուեցաւ կարգ մը պաշտօնէից որ անոնց կարևորութիւնը չէին ըմբռներ, անոնց հարկաւորութիւնը չէին տեսներ, և կամ թէ հակառակ իսկ էին անոնց՝ իրենց կրօնական համոզմամբք կամ անձնական շահախնդրութեամբ:

Ինչպիսի ալ ըլլայ բարենորոգմանց բնութիւնը, որոնք պետութիւնք պէտք կը համարին այդ մտացի ցեղին համար, որ բնական թարգմանն է գաղափարաց ընդմէջ Արևելից և Արևմտից, առաջին աչքէ չվրիպեցնելու խորհրդածութիւնը կ'իյնայ պաշտօնէից ընտրութեան վրայ, որք զանոնք պիտի գործադրեն. առանց ատոր ավելորդ է խօսիլ բարենորոգմանց վրայ: Արդ որովհետև

պաշտօնեայք կընտրուին մասնաւոր և առանձնաշնորհեալ դասէ մը, նոր կարգադրանաց կատարեալ յաջողութեան էական պայմանը կը կայանայ յայսմ որ ընդհանուր կառավարչի անուանումն ըլլայ ուրիշ դաս պաշտօնեաներէ, այսինքն քրիստոնէից մէջէն. և զի մեր խօսքը Հայաստանի վրայ է, ընդհանուր կառավարիչն ըլլալու է հայ:

Ինչ այլ ըլլայ այդ բարձր պաշտօնէին ազգը կամ բարոյականը, սնտի է կարծել որ դժուարին գործոյ մը լրջօրէն անձնատուր ըլլայ, թէ որ ամէն օր ահա կասկածի մէջ է թէ յանկարծ կրնայ պաշտօնընկէց ըլլալ: Վեհ. Սուլթանն իւր գահակալութեան ճառին մէջ նշանակած է թէ կայսրութեան չարեաց սկզբնապատճառներէն մին է՝ պաշտօնէից յանկարծական ընտրութիւնը և ընկէցութիւնը: Վեհ. Կայսրն, ի շահ իւր հպատակաց, կրնայ շնորհել իւր Հայկական նահանգաց կառավարիչ մը, որ ապահովեալ ըլլայ իր պաշտօնը վեց կամ եօթը տարի վարելու:

Ընդհանուր կառավարչի ընտրութիւնը ամեն բարենորոգման, ամեն բարեքման առաջին պայմանն ըլլալով, պետութիւնը, կրնան, զօրութեամբ Այ-Ստեֆանօսի նախաշաւիղ դաշանց (յօդ. ԺԶ) և հետևաբար վթար տալու վեհ. Կայսեր գերագոյն իշխանութեան, գործակցիլ այս ընտրութեան իրեն հաւանակցութեամբը, ինչպէս կը գործադրուի այս ի Լիբանան, և այսու այդ անուանումը ամրապնդել ամենայն փափագելի երաշխաւորութեամբ:

Ընդհանուր կառավարիչը այսու պայմանօք անուանուելով և պատուէր ընդունելով Վեհ. Սուլթանէն որ իւր հրովարտակեալ բարենորոգմանց և կարգաց գործադրութեանը երթայ հսկելու, պէտք է որ ընդունած ըլլայ նաև ամեն հարկաւոր իշխանութիւն որ այդ գործը իւր յատուկ պատասխանատուութեան տակ կատարէ:

Բայց որո՞նք պիտի ըլլան այդ բարենորոգմունք և կարգքն: Հայոց ազգը կը համարի թէ դիւրաւ կրնայ մէկը ցուցնել զանոնք, բաւական է որ չարեաց աղբիւրները մի առ մի նշանակուին:

Առաջինը, բացայայտ է որ քուրդերու ասպատակութիւնք և աւարառութիւնք և աւարառութիւնքն են: Պէտք է զսպել այդ ցեղերը: Մինչև ցայսօր չեղաւ այդ. բայց չկար բան մը դիւրագոյն քան զայդ գնդաց հրամանատարներու համար. ուստի կամ միջոցք իրենց կը պակասէր և կամ կամք: Ժողովրդոց ապահովութիւնը յամրի դնելու համար ամեն վտանգէ, ստիպողական չէ՞, իմաստուն նախատեսութիւն չէ՞, իրենց իսկ յանձնել իրենք զիրենք պաշտ-

պանելու հոգը: Եթե քրիստոնեայ, եթե մահմեդական, իրենց առաջին պետքը ապահովութիւնը չէ:

Ընդհանուր կառավարիչն ուրեմն ունենալու է իշխանութիւն ժանտարմայից գունդ մը կազմելու որ հսկէ և հասարակաց հանդարտութեան վրդովիչներուն դէմ պաշտպանէ երկիրը: Այս գունդը առանց զանազանութեան կազմուելու է մսլիմաններէ և քրիստոնեաներէ, այնպիսի դրութեան մը վրայ որ առաջուընէ դիւրաւ որոշուի թե ինչպէս պիտի կուտուի: Այս գունդին գլխաւորներուն անուանումը ընդհանուր կառավարչին յանձնուելու է, վասն զի ինքն է պատասխանատու վեհ. Սուլթանին երկրին թէ հանդարտութեանը և թէ բարեկարգութեանը համար: Մսլիման և քրիստոնեայ տարերաց ի մի գալն և միաբան հասարակաց շահուն պաշտպանութեան և ապահովութեան համար աշխատիլն, այդ երկու տարրերը իրարու մերձեցունելու կերպ մըն է այդ մերձեցումն այնչափ աւելի դիւրին կըլլայ Հայաստանի մէջ, որչափ որ գիւղացի ժողովուրդը ըլլայ երկրակցութեան, ըլլայ թշուառակցութեան պատճառաւ, միևնոյն պէտքերն ունի, ուստի և նոյն իղձերը:

Բաց ասկէ, կայսերական գնդից հրամանատարք, այն ամեն միջոցներու համար, որ հասարակաց ապահովութեան կը վերաբերին, պարտին հնազանդիլ ընդհ. կառավարչին հրահանգաց և օգնել ժանտարմայից ի հարկին:

Նիւթական ապահովութիւնը այս կերպիւ հաստատուելէն վերջը, կարգը կուգայ գործառնութեանց ապահովութեան պաշտօնակալաց և յանձանձուողաց մէջ եղած ապահովութեանը. այսինքն է, արդարութեան կազմակերպութեանը: Արդարև առանց դատական կազմակերպութեան, ոչ գործառնութեանց ապահովութիւն կըլլայ, և ոչ էլ պաշտօնակալաց ունակութեանց, և սովորական դարձած կերպերուն դէմ ապահովութիւն, հետեապէս չմնար. ապահովութիւն նաև դրուած կարգերուն և բարենորոգմանց տևողութեանը և լրջութեան: Ներկայ արդարութիւնը վարչական մէծխններով կը կատարուի, որոց անդամները տասանորդ հաւաքողներն են և այնպիսիք, որք ուղղակի կամ անուղղակի կերպիւ վարչական գործոց կը խառնուին, առանց դատավարական օրինաց և կարգաց և ոչ առաջին տարերքը գիտնալու. ուստի օրինագիրքը իրենց ձեռքին մէջ գործիքը կը դառնայ քմահաճոյից օրինաւորութեան ձև մը տալով գործադրելու ժողովրդեան մը վրայ, որ իրենցմէ աւելի

անտեղեակ է անոր:

Փափուկ կէտ մըն է առաջուրնէ սահման մը որոշելը, թէ ինչ-պիսի բնութիւն պէտք է ունենայ դատական կազմակերպութիւնը, որ յարմար կերպի յօրինուած ըլլայ ժողովրդեան քաղաքային և առևտրական յարաբերութիւնները կանոնաւորելու: Այս կազմակերպութիւնը չէ հնար կարի շատ երաշխաւորութիւններով շրջապատել, վասն զի ինքը պիտի լինի բոլոր վարչութեան կանոնաւորիչը: Բայց ինչ որ առաջուրնէ մարթ է հաստատել, այս է որ կազմուելի դատարանք ամենևին վարչական գործոց խառնուելու չեն, ինչպէս որ կընեն այժմու մէծլիսները: Ընդհանուր կառավարիչը պէտք է որ խնդիրը ուսումնասիրէ և ուսումնասիրել տայ ձեռնհաս մարդոց յանձնախմբի մը. ուսումնասիրութեանց արդիւնքը ներքոյ դնել այն իշխանութեան, որուն յանձնէ անոր գործադրութեան վճիռը տալ: Այսու եղանակաւ կ'ապահովուի որ արդարութեան կազմակերպութիւնը ըստ կարելոյն համապատասխանէ երկրին մտաւոր և ընկերական վիճակին: Արդարութիւնը իբր վարչութեան սանձ և վերաքննութիւն ծառայելով, ուսումնասիրող յանձնախումբը պիտի կանոնագրէ թէ ցո՛րվայր ըլլալու է դատական իշխանութեան ձեռնհասութիւնը, և թէ մասնաւորապէս ո՞ր չափով պիտի կախումն ունենան վարչութեան պաշտօնեայք դատարաններէն՝ իրենց պաշտօններուն մէջ գործած զեղծման համար:

Ընդհ. կառավարիչն պարտի իշխանութիւն ունենալ արդարութեան նման կարևոր գործոյն կազմակերպութեան համար օտար տարրեր օգնական կանչելու. ինքը դատելու է թէ որքան չափով կատարելու է զայդ: Հայք կը խորհին որ այս տարրը, որ մտաց և գիտութեան անկախութեանը պիտի ներկայացունէ, որ և է համեմատութեամբ մտնելու ըլլայ գերագոյն ատենան կազմող խմբին մէջ, երկրին ընկերական վիճակը պիտի չհակառակի, որով դատարանաց ձեռնհասութիւնը պիտի տարածուի զեղծումներ գործող պաշտօնակալաց վրայ, այլ ընդհակառակն այդ ընկերական վիճակը պիտի զարգանայ այդ վերաքննութեամբ: Բաց աստի կը խորհին ևս որ բարենորոգմանց լուրջ իրականացումը՝ այդպիսի ընդարձակեալ արդարութեան մէջ պիտի գտնէ իւր ճշմարիտ հաստատութիւնը և իւր ամուր նեցուկը:

Յետ միանգամ այս կերպի ժողովրդեան ապահովութիւնը ժանտարմայից և արդարութեան կազմակերպութեամբն ամրապնդելու,

ուշադրութիւնը կը դառնայ չարիքի մը վրայ, զոր ամեն անոնք, որ տեղեակ են Արևելքի, արդէն նշանակած են. այն է հողային տրոց չափը, տասանորդը, և տասանորդի հաւաքելուն եղանակը: Տասանորդի բարձունը, և զայն գետնոյ տարածութեան և տեսակի վրայ առնուած հարկի մը փոխաբերելը անհրաժեշտ է: Տասանորդը հողային հարկի փոխաբերելը պատճառ եղած է որ Պոմպէյի նահանգին երկրագործական փարթամութիւնը անելի քան զկրկինն անելցած է 25 տարուան մէջ: Արդարև Հայաստան կալուածատօմար չունի. բայց կարելի է այդ թերին լեցունել ինչպէս որ ըրած են Հնդկաստանի և ուրիշ աշխարհաց մէջ որք այս փոխաբերութիւնը գործադրած են:

Այս երեք բարենորոգմունք եթէ լրջօրէն գործադրուին և շարունակուին, կը բաւեն կերպարանափոխ ընել և ծաղկեցունել երկիրը. բայց ապահովելու համար իրենց գործադրութիւնը և տևողութիւնը, պէտք է որ ընդի. Կառավարիչը կարող ըլլայ բաւական դրամ առ այն տրամադրել:

Ինչպէս ըսած եղանք արդէն, Հայք աչք չունին քաղաքական անկախութեան մը, և ոչ որ և է կերպի օսմանեան կայսրութենէն զատուելու միտումն. իրենց նպատակը բոլորովին հակառակն է: Չունին պահանջումն որ ըստ կամի և իրենց պիտոյից միայն յատկացունեն իրենց երկրին հասոյթը: Իրենց խնդրածն ուրիշ բան չէ, բայց իրաւունք ունենալ որ իրենք իրենց վրայ հարկ դնեն (յետ կայսերական զանձուն ընդհանուր հարկերը հատուցանելու), և այնու մասնաւոր հասոյթներ հայթայթեն նահանգին յատուկ սպասաւորութեանց համար, ինչպիսի են Ժանտարմայութեանն, արդարութիւն, դպրոցք, ամեն կրօնից սուրբ հաստատութիւնք, հասարակաց շինութիւնք, հասարակաց շինութիւնք, և այլն: Մէկ կողմանէ հաւատացած են Հայք որ իրենց մասնաւոր և տեղական պիտոյից համար իրենք իրենց հարկելը՝ պիտի օգնէ որոշեալ բարենորոգմանց և բարեքմանց իրականացմանը, ապահովելով վարչութեան զանազան սպասաւորութիւնները որոնցմով պիտի կատարուին այդ բարենորոգմունք և պիտի պահպանուին:

Այս կերպի այս սպասաւորութիւնք որևէ իշխանութեան հաճոյից չմատնուիր, որ կարելի է թէ տեղական պիտոյից և բարենորոգմանց իրականացման նոյն փոյթը և նոյն շահը չունենայ, ինչ որ տեղացին ունի:

Միս կողմանէ, որովհետև կայսերական կառավարութեան շահը նոյն է ինչ որ են վեհ. Սուլթանին հպատակաց միահամուռ շահերը, կայսերական կառավարութիւնը պէտք է իմաստուն վարչութեան մը սկզբանց համաձայն գտնէ առնելով երկրէն միայն այն հասոյթները որ հարկաւոր են կայսրութեան ընդհանուր սպասաւորութեանց, և թողլով տեղական վարչութեան բաւականին չափ հասոյթ՝ մասնաւոր և տեղական պէտքերը լեցունելու համար:

Իսկ թէ նահանգը ինչ ճամբայ պիտի գործածէ հաւաքելու իր յատուկ մատակարարութեան սահմանեալ հասոյթները, կարելի է ըստ յետագայ եղանակին կատարել:

Ընդհ. կառավարիչն, և ըստ իր հրամանաց, այլ և այլ գաւառաց կառավարիչք, իրաւունք ունենան իւրաքանչիւր գաւառաց գլխաւոր տեղերը ժողով գումարել, կազմեալ ի նշանաւորաց: Բայց թէ այս ժողովք ինչ եղանակաւ պիտի կազմուին, պէտք չէ հիմակուրնէ սահմանել. ի սկզբան, ընդհ. կառավարիչը և գաւառաց կառավարիչք ընտրելու են անդամ՝ նշանաւորներէն և վստահութեան արժանի եղող անձինքներէն: Ընդհանուր ժողովը որ նահանգին գլխաւոր տեղը պիտի հաւաքուի, գաւառային ժողովոց անուանած նուիրակներէն պիտի կազմուի: Այս ժողովքները, մանաւանդ թէ այս ընդհանուր ժողովը մէկ տնտեսութիւն միայն ունենայ, այն է, հարկաւոր հարկը բաշխել ըստ իւրաքանչիւր սպասաւորութեանց: Այս ժողովք կամ խորհուրդք միջամուխ ըլլալու չեն ոչ արդարութեան վարչութեան, և ոչ բուն վարչութեան մէջ: Երբ երկրին ընկերական վիճակը զարգանայ և փորձառու ըլլայ, այն ատեն վճռական կերպիւ սահմանուի, թէ այս խորհրդոց ինչ եղանակաւ պիտի ընտրուին անդամքն և թէ ինչքան ընդարձակուելու են իրեն տնտեսութիւնք: Բայց կը թուի որ ի սկզբան, և այդ որպէս զի խառնակութիւն չծագի ժողովրդեան մը մէջ որ բոլորովին անփորձ մնացած է ցարդ իր յատուկ շահերը կարգադրելու իրեն տնտեսութեան վերոյնշանակեալ սահմանը խոհեմական է և խելքով:

Հայաստանի նահանգին կազմակերպութիւնը այս ընդհանուր գծերով ծրագրեալ այնպիսի է որ նահանգին բնակիչներուն բարեկեցութիւնը կ'ապահովէ, եթէ մսլիման ըլլայ, եթէ քրիստոնեայ, ամենքն ալ վեհ. Սուլթանին հպատակք, ամենքն ալ հաւասարապէս ցանկացողք որ լաւ յանձանձուին. այս կազմակերպութեան նպատակն է ամենուն բարեկեցութիւն ապահովել. ուստի մսլիման և

քրիստոնեայ ժողովրդոց վերբերական համեմատութեան նայիլը, այս խնդրոյս մէջ երկրորդական կարևորութիւն ունի. քաղաքական դրքին վրայ փոփոխութիւն մը չբերեր: Վարչութեան մէջ միայն նոր պաշտօնեաներ ըլլան, որոնք այս կամ այն կարգօք, և մանաւանդ արդարութեան կազմակերպութեամբ ստիպուած ըլլան ի գործ դնել այն բարենորոգումները զորս վեհ. Սուլթանը պիտի հաճի վճռել, և ոչ թէ թողուն որ մեռեալ տառ մնան. ինչպէս եղած մինչև ցայսօր խոստացուած բարենորոգումնք³⁴:

Ներսէս Պատրիարքի «Ծրագիրը» նշանաւոր վաւերագիր է, որովհետև նրա մէջ հայ ազգը առաջին անգամ հանդէս էր բերում Եւրոպայի առջև իր քաղաքական իդէալների որոշ և կուռ ձևակերպումը: Առաջին անգամ պաշտօնապէս յայտարարուեցին սկզբունքներ, որոնք այն ժամանակ և նրանից յետոյ էլ մինչև այժմ կազմում են հայութեան նուազագոյն ձգտումները:

Այսպիսի պատրաստութիւններով էր Թիւրքիայի հայութիւնը ներկայանում Բերլինի Վեհաժողովին: Բայց մինչև Վեհաժողովի գումարումը տեղի ունեցաւ մի շատ կարևոր քաղաքագիտական ձեռնարկութիւն, որ անմիջական կապ ունէր և հայոց հարցի հետ: Անգլիան, ամեն կերպ աշխատելով չէզոքացնել Ռուսաստանի դերը և խլել նրանից նրա յաղթութեան պտուղները վայելելու հնարաւորութիւնը, առանձին պաշտպանողական դաշնագիր կնքեց Թիւրքիայի հետ:

№ 10

ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՒ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ³⁵

Նորին կայսերական Մեծութիւն Սուլթանը և Նորին Մեծութիւն Մեծ Բրիտանիայի և Իրլանդիայի Միացեալ Թագաւորութեան Թագուհին և Հնդկաստանի Կայսրուհին, փոխադարձաբար ցանկութիւն ունենալով ընդլայնելու և հաստատելու բարեկամութեան

³⁴ «Le Haïasdan» («Հայաստան»), Լոնդոն, 1889 № 15-16:

³⁵ A. Schopff—Les Réformes et la Protection des Chrétiens en Turquie, 1673-1904, Paris 1904, p. 308-309:

այն կապերը, որոնք բարեբախտաբար գոյություն ունին երկու կայսրությունների մեջ, որոշեցին կազմել պաշտպանողական դաշնակցության մի դաշնագիր, որ նպատակ ունի ապահովելու ապագայում Նորին Մեծություն Սուլթանի հողերը Ասիայում:

Նորին Մեծությունները առ այս ընտրեցին և նշանակեցին իրանց լիազորներ հետևեալներին.

Նորին Կայսերական Մեծություն Սուլթանը–Նորին Գերազանցություն Սավֆետ-փաշային, Նորին Կայսերական Մեծութեան արտաքին գործերի մինիստրին

Եւ Նորին Մեծություն Մեծ Բրիտանիոյ և Իրլանդիայի Միացեալ Թագաւորութեան Թագուհին և Հնդկաստանի Կայսրուհին – Մեծաշուք Աուստէն Հէնրի Լէյրդին, Նորին Մեծութեան արտակարգ և լիազոր դեսպանին Բ. Դրան մօտ:

Որոնք, փոխանակելուց յետոյ իրանց լիազորութիւնները պատշաճօրէն և ըստ օրինի, ընդունած են հետևեալ յօդուածները.

Յօդուած 1. Եթէ Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մէկն ու մէկը, այսուհետև երբ և իցէ փորձ անէ տիրելու Ասիայում Ն. Կ. Մ. Սուլթանի ունեցած այն երկիրներից որ և է մի մասին, որոնք խաղաղութեան վերջնական դաշնագրով պիտի որոշուեն, այն ժամանակ Անգլիան պարտաւորում է միանալ Ն. Կ. Մ. Սուլթանի հետ, գէնքի ոյժով այդ երկիրները պաշտպանելու համար:

Ի փոխարինութիւն՝ Ն. Կ. Մ. Սուլթանը խոստանում է Անգլիային մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք յետոյ պիտի մանրամասնաբար որոշուեն երկու պետութիւնների մէջ և որոնք նպատակ ունեն Բ. Դրան քրիստոնէայ և այլ հպատակների բարօք վարչութիւնը և պաշտպանութիւնը խնդրի առարկայ եղած երկիրներում և որպէս զի Անգլիան իր պարտականութիւնը կատարելու համար հարկաւոր եղած միջոցներն ապահովէ, Ն. Կ. Մ. Սուլթանը հաւանութիւն է տալիս նոյնպէս, որ Կիպրոս կղզին գրաւուի և կառավարուի Անգլիայի կողմից:

Յօդուած 2. Ներկայ դաշնագիրը պիտի հաստատուի և հաստատուած օրինակների փոխանակութիւնը պիտի տեղի ունենայ մի ամսուայ ընթացքում և եթէ հնար է՝ նաև աւելի շուտ:

Ի հաստատութիւն որի երկու կողմերի լիազօրները ստորագրեցին այս դաշնագիրը և իրանց կնիքները դրին:

Կ. Պօլիս, 4 յունիսի³⁶ 1878

Ստորագրուած. Սաֆվէթ.

-Ա. Հ. Լէյըրդ

Բերլինի Վեհաժողովը, որի նիստերը բացուեցին նոյն տարուայ յունիսի 1(13)-ին, չնդունեց հայկական պատգամաւորութիւնը և նկատի չառաւ նրա ներկայացրած ծրագիրը: Գլխաւորապէս անգլիական լիազօրների թելադրանքներով Վեհաժողովը բաւական համարեց նոր խմբագրական մի ձև ընդունելը Սան-Ստեֆանօի 16 յօդուածի համար, ինչպէս կարելի է տեսնել Վեհաժողովի պաշտօնական գրութիւններից:

№ 11

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ³⁷

Արձ. № 12

Նիստ յուլիսի 4 (Ն. Տ.) 1878

Լօրդ Սօլսբիւրի³⁸ այն ժամանակ առաջարկում է զբաղուել Սան-Ստեֆանօի դաշնադրութեան 16-րդ յօդուածով, որ վերաբերում է Հայաստանին: Նորին գերազանցութիւնը պատրաստ էր ընդունելու այդ յօդուածի վերջին երեք տողերը, որոնք վերաբերում են հայերին տրուելիք բարենորոգումներին, եթէ Վեհաժողովն ընդունէր ջնջել այդ յօդուածի առաջին երեք տողերը, որոնց նայած, կարծես, ռուսական զօրքի հեռանալը կախուած է այս բարենորոգումները Բ. Դրան ձեռքով մտցնելուց: Եթէ ոչ՝ լօրդ Սօլսբիւրին մի ուրիշ նիստում պիտի առաջարկէ յատկապէս հայերի համար պատրաստուած մի յօդուած:

³⁶ Ն. Տ:

³⁷ «Annuaire Diplomatique de l'Empire de Russie pour l'année 1878, St. Pet., 1878 p. 475-476, 497-498, 506-507:

³⁸ Անգլիայի լիազօր:

Կոմս Շուվալով³⁹ առանց պնդելու որ այս հարցը ենթարկուի վիճաբանության, որի համար ինքը բոլորովին պատրաստ չէ այսօր, վախ է յայտնում սակայն որ ռուսական զորքերի հեռանալը, եթէ տեղի ունենայ նախ քան խոստացած բարենորոգումների ներմուծումը, կարող է լուրջ անկարգութիւնների ազդանշան դառնալ և խնդրում է բոլոր դիտողութիւնները յետաձգել մինչև այն վայրկենաւ, ուր Վեհաժողովը լրիւ կերպով կը զբաղուի Հայաստանի հարցով:

Արձ. № 14

Նիստ 5 յուլիսի (Ն. Տ.) 1878

Վեհաժողովն անցնում է 16-րդ յօդուածին, որ վերաբերում է հայերին և որի մասին հարց եղաւ անցեալ նիստերից մէկում:

Այս առարկայի մասին յօրդ Սօլիսբիորի մի առաջարկ բերեց, որ բաժանուեց բոլոր լիազօրներին: Նորին գերագանցութիւնը պահանջում է 16-րդ յօդուածի առաջին տողերի ջնջումը մինչև «pays» (երկիր) բառը և ցանկանում է աւելացնել հետևեալ նախադասութիւնը.

«Նա⁴⁰ բացի դրանից համաձայնութիւն կը կայացնէ վեց ուրիշ ստորագրող պետութիւնների հետ այս պարտաւորութեան նշանակութեան և նրա գործադրութեան համար անհրաժեշտ միջոցների մասին»:

Նորին գերագանցութիւնը յարում է թէ հայոց շահերը պէտք է որ պաշտպանուեն և իր առաջարկութեան նպատակն է յոյսեր տալ նրանց թէ անմիջական բարոքումների կատարման և թէ միանգամայն այս բարոքումների ընդարձակման մասին ապագայում:

Կարաթէղոորի փաշան⁴¹ ընդունում է որ վերջին պատերազմի ժամանակ ըմբոստ ցեղերը լուրջ անկարգութիւններ առաջ բերին, բայց Բ. Դուռը, երբ տեղեկութիւններ առաւ, իսկոյն միջոցների դիմեց այդ անկարգութիւններին վերջ տալու համար: Լօրդ Սօլսբիորիի առաջարկութիւնը թւում է թէ նկատի ունի ապագայում ձեռք

³⁹ Ռուսական լիազօր:

⁴⁰ Այսինքն Բ. Դուռը:

⁴¹ Թիւրքական լիազօր:

առնուելիք նոր միջոցներ: Կարաթեոդորի փաշան կը ցանկար որ ի նկատի առունէին այն կարգադրութիւնները, որ Բ. Դուռն արդէն սկսել է և որ յօդուածին աւելացուէին հետևեալ խօսքերը. «Բ. Դուռը պիտի հաղորդէ վեց պետութիւններին արդիւնքն այն միջոցների, որոնք արդէն ձեռք են առնուած այս ուղղութեամբ»: Այս յաւելումը թէ գոհացում պիտի տար օսմանեան կառավարութեան և թէ պիտի լրացնէր անգլիական լիազօրների ներկայացրած բանաձևի իմաստը:

Կոմս Շուվալովը գերադասում է լօրդ Սօլսբիորիի խմբագրութիւնը: Եթէ Բ. Դուռը միջոցներ է ընդունել և նրանց գործադրութեան մէջ չէ դրել, անօգուտ է յիշատակել դրանց:

Նախագահը⁴² նկատել է տալիս թէ գուցէ դժուար լինի զսպողական միջոցներ գործ դնել անկախ ցեղերի դէմ և նորին պայծառափայլութիւնը կասկած է յայտնում Սօլսբիորիի առաջարկած յօդուածի գործնական ոյժի մասին:

Կարաթեոդորի փաշան պնդում է իր առաջարկած յաւելման վրայ: Լօրդ Սօլսբիորին խնդրում է յետաձգել վիճաբանութիւնը, որպէս զի ինքը ժամանակ ունենայ մի քանի փոփոխութիւններ մտցնել նախնական բնագրի մէջ:

Հարցը յետաձգում է մի մերձաւոր նիստի:

Արձ. № 15

Նիստ 8 յուլիսի (Ն. Տ.) 1878

Ձեռնամուխ լինելով օրակարգի հետևեալ կէտին, նախագահը նկատում է որ լօրդ Սօլսբիորին յանձն էր առել ներկայացնել Վեհաժողովին օսմանեան լիազօրների հետ կայացնելիք համաձայնութեան արդիւնքը հայերին վերաբերեալ 16-րդ յօդուածի խմբագրութեան մասին:

Լօրդ Սօլսբիորին կարդում է խմբագրութիւնը, որ կայացած է Մեծ Բրիտանիայի և Թիւրքիայի լիազօրների համաձայնութեամբ:

⁴² Իշխան Բիստմարկ:

ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ 61 ՅՕԴՈՒԱԾԸ⁴³

Բարձրագոյն Դուռը կը խոստանայ առանց այլ ևս յապաղելու գործադրել այն բարուքումներն ու բարենորոգումները, զոր տեղական պետքերը կը պահանջեն Հայոց բնակած գաւառներուն մէջ և անոնց ապահովութիւն երաշխատրել Չէրքէզաց և Քրդաց դէմ: Այս նպատակաւ ձեռք առնուած միջոցները պարբերաբար պիտի ծանուցանէ տէրութեանց, որք անոնց գործադրութեանը պիտի հսկեն:

Բերլինի Վեհաժողովը հիասթափութիւնների մի ամբողջ գումարում էր ամենից առաջ և ամենից շատ Ռուսաստանի համար, որ զգաց իրան խաբուած, յաղթողի իրաւունքներից զրկուած: Ռուսներից յետոյ հիասթափուած էին և բալթերը, և ուրիշ բալկանեան ազգերը: Շատ ուժեղ էր հիասթափութիւնը և հայութեան մէջ: Առաջին թուական Կ. Պօլսի հայ շրջանակների, մամուլի և հասարակական կարծիքի մէջ տիրեց յուսահատութիւն: Ամենքն զգում էին թէ հայերը ոչինչ չեն ստացել:

Սակայն այս լքումը հետզհետէ սկսեց տեղի տալ մի յուսալից տրամադրութեան, որ գնալով բարձրացաւ, ընդգրկեց ամբողջ հայութիւնը: Եթէ հայերը Բերլինում չէին ստացել այն, ինչ ակնկալում էին և իրանց սրբազան իրաւունքն էին համարում, այդ դեռ ամենևին չէր նշանակում թէ նրանք պիտի դէն գցեն, իբրև կատարեալ անպետքութիւն, և այն, ինչ տուել էր Եւրոպան 61-րդ յօդուածով: Պէտք էր, ընդհակառակն, ջանք և աշխատանք գործադրել այդ յօդուածը գործադրելու, Թիւրքաց Հայաստանը բարեկարգելու համար: Այս նպատակն էլ դառնում է հայերի քաղաքական ձգտումների կէտ նպատակին:

Եւ ազգային այս նոր տրամադրութեան հիմնաքար էր դնում Ներսէս Պատրիարքը՝ նոյն ամառը Ազգային Ժողովի մէջ արտասանած իր հռչակար ճառով, որի մէջ լուսաբանում էր հայոց հարցի սկզբնաւորութիւնը և հայ ժողովրդի քաղաքական իդէալների համար ճանապարհ և ծրագիր էր ցոյց տրուում:

⁴³ Թարգմանութիւն Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի:

№ 13

**ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ
Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՅԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՀԱՅՈՑ Ի 21 ՅՈՒԼԻՍԻ 1878⁴⁴**

Տեանք Երեսփոխանք.

Ամիս մ'առաջ սոյն այս պատկառելի ժողովին մէջ պատասխանելով հարցման մը, զոր ազգասէր ոմանք Երեսփոխանք կ'ուղղէին ինձ ազգային խնդրոյն նկատմամբ., երոպական տէրութեանց քով մեր ըրած ջանքերը և գտած համակրական ընդունելութիւնը զկնի յառաջ բերելու, կըսէի ձեզի. «Ես չեմ միայն աշխատող, այլ իմ է բոլոր պատասխանատուութիւն»:

Դեռ ժամը չը հնչեց՝ ամբողջ այս պատասխանատուութեան. զի կրկին է նա. մին այսօր Հայոց այս մեծ ժողովին առջև, և միւսը ազգին առջև, յանցեալն, ի ներկայն և յապագայն, և պատմութեան առջև:

Այո՛, ես այս պատասխանատուութիւնը շատ անելի ծանր զգացի քան զոր կրնաք երեակայել, և չը զգացի զայն՝ միայն ձեր առջև՝ որ այսօրուան ազգը կը ներկայացնէք, այլ և զգացի՛ զայն՝ մեր Նախնեաց հոգիներուն ու յիշատակին առջև՝ որ կանգնեցին և որ պահեցին զՀայ ազգն ու զՀայաստան, և զգացի զայն՝ այն անհամար Հայ սերունդներուն առջև՝ որք պիտի յաջորդեն մեր սերունդին: Եթէ երկրորդն այս պատասխանատուութեանց շատ անելի ծանր է ու ահեղ քան զառաջինը, ներեցէք ըսել հիմակուց, ես այդ պատասխանատուութենէն բնան չեմ վախնար. զի ամբողջապէս ունիմ պատասխանել, և խղճմտանքս անդորր է և զուարթ: Իսկ անելի փափուկ է առաջին պատասխանատուութիւնս, այն որ կոչեալ եմ այսօր կատարել ձեր առջև. և եթէ իմ բացատրութիւններս գոհ չընեն զձեզ, ուրիշ բան չը մնար ինձ ընել, այլ պատմութեան դատաստանին ապաւինիլ, որուն ենթարկեալ ենք ամենքս ալ, և՛ ես, և՛ դուք, և՛ որք այս շրջապատէս դուրս կը խօսին և կը գրեն:

⁴⁴ Պաշտօնական հրատարակութիւն Պատրիարքարանի, հանդերձ ֆրանսական թարգմանութեամբ, Կ. Պօլիս, 1878:

Եւ զայս ըսելով ո՛չ թէ բնաւ նուազ կուզեմ զգալ ձեր դատելու իրաւունքն ու իշխանութիւնը, այլ զի յանուն ազգային պատկառելի շահուց, պէտք է նախամեծար համարիմ կրել դատապարտութիւն անիրաւ՝ նաև ազգիս կողմէն, քան թէ հրապարակել զամենայն: Եւ եթէ ամեն տեսակ հալածանք, դատապարտութիւն, պատիժ և փորձութիւն յանձն չէի առած առաջին օրէն, զգուշացուցանելով զայլս այն ամենէն և զիս միայն կէտ նպատակի ընծայելով, եթէ յանձն չէի առած զոհուիլ, ինչո՞ւ ուրեմն ձեռնարկեցի յայս գործ:

Տեանք երեսփոխանք.

Հայկական խնդիրը, իր արդի ձևին մէջ ինքիրմէ չծնաւ, այլ ընդհանուր Արևելեան խնդիրէն ծագեցաւ: Ահաւասիկ ինչպէս. Հայոց խնդիր մը կար տասն և անելի տարիներէ ի վեր, մինչդեռ ո՛չ Հէրսէք-Պօսնայի խնդիր կար, ո՛չ Պուլկարաց խնդիր քաղաքական ձևով: Հայաստանի Հայոց կրած հարստահարութեան խնդիրն էր այն. Ազգին ու Տէրութեան մէջ մնացած էր. և ազգը անընդհատ տասը տարի, իր յանձնաժողովներովը, իր Քաղաքական ժողովներովը, իր Երեսփոխանական ժողովներովը, իր Պատրիարքներովը, այս հարստահարութեանց բարձումը կը հայցէր Բարձրագոյն Դրնէն: Ահա՛ այս էր միայն Հայոց խնդիրը: Եկաւ Հէրսէք-Պօսնայի խնդիրը՝ և ապա Պուլկարիոյ խնդիրը:

Այս երկու խնդիրներուն մէջ խառնուած էր հարստահարութեան խնդրոյն հետ ազգային ինքնօրինութեան խնդիրն ալ: Այս գաւառները ապստամբութեան դրօշը պարզեցին իրենց օրինաւոր Տիրոջը դէմ: Արիւնահեղութիւնը Եւրոպայի միջամտութիւնը հրափրեց, և այս մեծ կայսրութեան դրացի ուրիշ մեծ կայսրութիւն մը յանուն քրիստոնէութեան ամենէն անելի ձայն բարձրացուց: Տէրութիւնք ի ժողով գումարեցան ի Պօլիս: Ինչ ըրաւ Հայոց ազգը. օրինաւորութենէն դուրս չելաւ. Հայերը զոհ էին որ Օսմանեան Տէրութեան ներքև էին. այլ իրենց վիճակէն դառնապէս դժգոհ էին. և որովհետև ընդհանուր քրիստոնէից վիճակը բարուքելու խօսքեր կըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենէն սպասեցին իրենց վիճակին բարուքումը:

Ձեր Պատրիարքը, գիտէք արդէն, Տեանք երեսփոխանք, պարապ չկեցաւ. աշխատեցաւ Բ. Դրան քով, աշխատեցաւ Դեսպանաց

քով: Այլ դեսպանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարուքումը նկատողութեան առնելու, նկատողութեան առաւ միայն Հէրսէք-Պօսնայի և Պուլկարաց խնդիրները: Ասի անիրաւութիւն մըն էր մնացեալ քրիստոնեայ ժողովրդոց, և ներեցէք ըսել, թերևս իմ սահմանէս քիչ մը դուրս ելնելով, օսմանեան կայսրութեան ալ քայքայումը կը պատրաստէր՝ ապստամբութիւնը քաջալերելով:

Օսմանեան կայսրութիւնը Դեսպանաժողովին այս որոշումը չընդունեց. և մեք Հայքս պատճառ չունէինք որ դժգոհէինք, տեսնելով Բ. Դուռը, որ կը մերժէր բացառիկ ու մասնաւոր շնորհումներ ու բարեկարգութիւնք, որոց արդիւնքը պիտի ըլլար մանաւանդ աւելի դառնացում մեր վիճակին. զի տուրքերն աւելի մեր վրայ պիտի ծանրանային, ինչպէս նաև այն տարերքն՝ որոնցմով կը բաղկանայ յոռին այս երկրին կառավարութեան մէջ: Այլ մեծագոյն չարիք մը ու աղէտք փրթաւ ընդհանուր երկրին վրայ. պատերազմը: Օսմանեան կայսրութիւնը այս մեծ պատերազմէն առաջ իր զօրութիւնը գործածած էր Հէրսէք-Պօսնայի և Պուլկարիոյ ապստամբութեանց դէմ և կանոնաւոր պատերազմ մղելով երկու իշխանութեանց հետ Գարատաղի ու Սերպիոյ՝ որոց օգնութեան կը սլանար ինչ որ պաշտօնական կերպարանք չունենալով Սլավ էր, ի լռութիւն դատապարտած էր անոնց զէնքերը: Հուսկ ապա Պուլկարիոյ արգաւանդ դաշտերը, և ամիդ, մեր այնքան ազգայնոց արեամբն ու քրտինքովն ողողեալ մեր Հայաստանի օրհնեալ դաշտերը, անիծակուռ արհեստին քանդմանցն ու արհաւրաց տեսարան եղան: Օսմանեան ազգը իր ցեղին յատուկ բնազդովն ոգևորած՝ պահ մը ետ մղեց ահագին թշնամին և յապուշ կրթեց զաշխարհ իր արիական դիմադրութեամբ ու վերջապէս տեղի տուաւ աւելի մեծ զօրութեան առջև, և Ռուսիոյ յաղթական բանակները մէկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն եկան, և միւս կողմէն մինչև բոլոր Թուրքիոյ մայրաքաղաքն ի Պօլիս: Ժամը հնչեց խաղաղութեան: Երկու տէրութեանց բանակցութիւնն սկսաւ Քրզանլըքի մէջ և ընդհանուր պայմաններն կոեցան յԱդրիանուպօլիս: Անմիջապէս պիտի սկսէր դաշնադրութեան բանակցութիւնը:

Ոչ ոք կարող է բուռն զօրութեան դէմ, մանաւանդ երբ բարոյական զօրութիւն միայն ունի. և ո՛վ ալ ըլլայ չկրնար փոխել եղելութեանց ընթացքը: Մեծ խելք և մեծ հեռատեսութիւն պէտք չէր տեսնելու համար թէ երկրին վիճակը կը փոխուէր բոլորովին, և անոր հետ

նաև անձնիր քրիստոնեայ ժողովուրդի գոյութեան պայմաններն ալ կը փոխուէր: Մէկ խօսքով վտանգն ակներև էր ինձի համար և ամենուն համար, որ Հայոց ազգը պիտի կրնար անհետանալ իբր ինքնուրոյն ժողովուրդ, և եթէ իր գոյութիւնը չամրապնդէր, պիտի ոչնչանար: –Հարստահարութեան խնդրոյն կաեւնար մեծ քան զայն խնդիր, ազգին գոյութեան ու չգոյութեան խնդիրը:

Այլ ընդհանուր պայմանաց մէջ Հայոց ազգին անունն անգամ չը կար և Դաշնադրութեան վիճաբանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ: Գրեթէ յուսահատելու էր. և ես չգիտեմ թէ ինչպէս չյուսահատեցանք: Անկարելի է նկարագրել ազգին մորմոքը՝ զոր թողէք ըսեմ, զգացի ի սիրտ և ի բովանդակ անձն իմ. միանգամայն զգացի ահեղն այն պատասխանատութիւն՝ որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վրայ. զի ազգն իր երեսփոխանական ժողովովը ազգին խնդիրն ինձի էր յանձնած մասնաւորապէս: Յաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր: Կրնայի ի ժողով կոչել զձեզ, և այն ատեն բան մը չընելով ալ՝ ձեր առջև պատասխանատութենէ ազատիլ. կրնայի գոնէ Քաղաքական ժողովով գործել: Պէտք էր որ այնպիսի պարագայի մէջ՝ նայէի միայն անձնական պատասխանատութեանս ու ձեր առջև անպարտ ելնելով՝ խղճիս առջև պարտաւոր մնայի:

Տեսնոք երեսփոխանք. անշուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէն այն օրերուն յիշատակը: Օսմանեան ազգը՝ որ առատապէս հեղած էր իր արիւնն ի դաշտ պատերազմաց, այնքան զոհողութիւններէ ետքը իր պարտութիւնը տեսնելով, և այսքան չարեաց սկզբնապատճառ քրիստոնէութեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի գրգռութիւնը մը զգար: Աւելի քան երբէք՝ պէտք էր խոհեմութեամբ ու շրջահայեցութեամբ գործել. այլ նաև ուժով և ազդու կերպով գործել: Ձեր Պատրիարքը մտածեց, խորհրդակցեցաւ: Իր շուրջն ունէր բոլոր Եպիսկոպոսական դասը՝ պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին, և յանուն ազգին զոհուելու եթէ պէտք ըլլար: Միացաւ իր Սրբազան եղբարց հետ՝ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երդուեալ էին, նորէն երդուան նուիրել զանձինս Ազգին:

Օսմանեան լիազօր դեսպանք դեռ չէին ուղևորած ՎԱԿԱՅԻՆՈՒԿՅՈՒԽՍ, ես ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք:

Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուզեցինք. այն է Հայոց յիշատակութիւնը Դաշնադրութեան մէջ. և յայտնի է այսօր՝ թէ այս յիշատակութիւնն եղաւ մասնաւոր յօդուածով մը: Արդեօք ճիշդ մեր ուզածին պէս եղաւ յիշատակութիւնը. Ո՛չ. այլ քաղաքականութեան մէջ՝ «Երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընես ինչ որ կրնաս»:

Աւասիկ Այ-Ստեֆանոսի Դաշնադրութեան 16րդ յօդուածը.

«Յօդ. 16. Նկատելով որ ռուսական զօրաց Հայաստանի մէջ գրաւած բայց Թուրքիոյ վերադարձունելիք տեղերէն մեկ-նիւրը՝ կրնայ կոհններու և երկու Տէրութեանց բարեկամական յարաբերութիւններուն վսաս բերող կնճիռներու ծնունդ տալ, Դուռը պարտաւորութիւն յանձն կառնու, Հայոց բնակած գաւառներուն մէջ տեղական պիտոյից պահանջած բարւոքումներն ու բարենորոգումներն առանց այլ ևս յապաղելու գործադրել, և Քիւրտերուն ու Չէրքէզներուն դէմ անոնց ապահովութիւնն երաշխաւորել»:

Այս յօդուածին ուժովը Քիւրտերուն ու Չէրքէզներուն հարստահարութեանց դէմ ապահովել էին Հայք. իրենց տասը տարիէ ի վեր արձակած աղաղակը վերջապէս արձագանգ կը գտնէր ու մեր յանուն Ազգին ներկայացուցած խնդրոյն մէկ մասը կը լուծուէր ըստ սկզբան՝ և համազգային իրաւանց կարգին մէջ կը մտնէր: Այլ մեր Ազգային խնդիրը Արևելեան ընդհանուր խնդրոյն հետ նոր կերպարանք ու նշանակութիւն առած էր:

Այս երկիրը մինչև այսօր կառավարուեցաւ Տաճիկ պաշտօնատարաց ձեռքով. և այսօր հասարակ եղած ճշմարտութիւն մըն է պաշտօնատարաց յոռութիւնը. այնպէս զի նոյն իսկ Բ. Դուռը և երկրին Վեհապետը քանիցս հռչակեցին զայն: Արդ՝ ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Հայաստանի համար՝ թէ Հայ ժողովրդեան պատուհասը Քիւրտերն են միայն ու Չէրքէզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են: Այս պաշտօնատարաց մէջ, Հայաստանի մէկ ծայրէն միւս ծայրը, գրեթէ և ո՛չ մէկ Հայ պաշտօնատար մը կայ:

Պատերազմէն առաջ մեր Վեհափառ Ինքնակալը, այս մեծատարած կայսրութեան միահեծան Տէր, սահմանադրութեամբ և հաւասարութեան սկզբունքով փորձեց լուծել Արևելեան խնդիրը,

կրօնքի խտրութիւնը վերցունելով քաղաքական ու վարչական խնդիրներու մէջ, ու Տէրութեան պաշտօնները հաւասարապէս բաշխելով իր ամեն կարգի հպատակաց, և անոնց մէջ մէկ հատիկ խտրութիւն մը ընդունելով՝ այն որ իւրաքանչիւրին կարողութենէն ու անձնական արժանիքէն կը ծագի: Հայոց ազգը ո՛չ դժնդակ ո՛չ ըմբոստ գտնուեցաւ այս հայրենասիրական վերջին ջանից. նա մանաւանդ քանի՛ քանի իր գաւակունքը ինքզինքնին նուիրեցին գործին յաջողութեանը. ինչո՞ւ. վասն զի տեսան որ փառաւոր դեր մը պահուած էր Հայուն՝ խնդրոյն այդ եղանակ լուծմանը մէջ. վասն զի Հայն իր ինքնուրոյն եկեղեցիովս ու ինքնուրոյն ազգութեամբը, որ չէ խառնուած ո՛չ օտար եկեղեցւոյ մը հետ և ո՛չ օտար ազգի մը հետ, ամենէն աւելի կրնար անխառն եռանդով աշխատիլ երկրին վերածնութեանը համար, և անոր՝ չեմ ըսեր գլխաւոր գործաւորներէն մէկն ըլլալ, այլ կը համարձակիմ ըսել՝ գլխաւոր գործաւորն ըլլալ, համակերպելով նաև՝ Աստուծմէ իրեն մենաշնորհեալ բնական տուրքովը պարագայից բերմանցն ու այլ և այլ ազգաց այլ և այլ բնաւորութեանցն ու բարոյից:

Գեղեցիկ էր այն գործը յոր ձեռնարկեց իր գահակալութեան օրէն մեր այժմու Վեհափառ Ինքնակալը, և ո՛չ ոք կրնայ մեղադրել զՀայս՝ որ յուսացին: Այլ փորձն ի դերն ելաւ. և պատերազմն ու թշնամւոյն յաղթութիւնը եկաւ նոր ուղղութիւն մը տալ Արևելեան խնդրոյն և նոր եղանակ մը ներկայացունել լուծման:

Արևելեան խնդիրն այլ ևս ուրիշ կերպով չէր կրնար լուծուիլ, այլ կամ, Աստուած մի՛ արասցէ, բաժանմամբ, կամ զանազան կարգի ժողովորոց համար յատուկ ու մասնաւոր դրութեամբ վարչութեան. և այս ըսել է՝ «Որոշել այն գաւառները որոնք մէյմէկ ազգային յիշատակաց կեդրոններ են, և որք ի հնումն ազգի մը հայրենիքը կազմելով՝ դեռ այսօր բնակութեան տեղի են մնացած նոյն ազգին անհատներուն գոնէ մեծ մասին, ուր վերջապէս բազմութեամբ են քրիստոնեայք և անոնց վարչութիւնը յանձնել այն ազգէն քրիստոնեայ պաշտօնատարաց՝ անփոփոխ և անվթար պահելով վեհ. կայսեր վեհապետական իշխանութիւնը. այսպէս՝ Հէրսէք, այսպէս՝ Պօսնա, այսպէս՝ Պուկարիա, այսպէս՝ Յունական գաւառք, այսպէս՝ Հայաստան. և մնացեալ բոլոր գաւառաց մէջ անթերի պահել Տաճիկ պաշտօնատարներով վարչութիւնը, թէ և գտնուին հոն քրիստոնեայք, բայց ուր չեն այն քրիստոնէից ազգութեան օրանք, և

ուր սակաւաթիւք են սոքա»։ Գաւառաց այս կերպ որոշումը՝ ըստ մեզ բնաւ քաղաքական կերպարանք կամ հետևանք պիտի չունենար։

Մեր Ազգային խնդրոյն այս մասն է ահա որ չէր լուծուած Այ-Ստէֆանօսի Դաշնադրութեան 16-րդ յօդուածին մէջ, այլ և ոչ բոլորովին բարձի թողի էր եղած. զի ինչ որ ընդհանուր կերպով վարչական բարեկարգութիւն ու բարուքում տրամադրած էր յօդուածն այն, հոն պիտի երթար յանգէր վերջապէս. զի հոն էր բարուք վարչութեան խնդրոյն միակ կարելի լուծումը, և այլ ամենայն լուծում անհաստատ ու անիրաւ պիտի ըլլար։ Եւ մենք ազգովին պարտաւոր ենք այն պետական ասագ անձանց, որ դաշնադրութեան այդ յօդուածը ստորագրեցին. և հոս բարեպատեհ առիթ կը գտնեմ այդ երախտագիտութիւնը յանուն ազգին յայտնելու իրենց, և որոց մին այսօր՝ իր շրջահայեաց, խոհեմ ու ամոքիչ հանճարովը կը վարէ դժուար ու փափուկ պարագայից մէջ այս երկրին ներքին ու արտաքին քաղաքականութիւնը։

Այ-Ստէֆանօսի Դաշնադրութեան 16-րդ յօդուածը երբ ձեռք անցուցինք, նոր ոգի առինք և արեւի եռանդեամբ սկսանք աշխատիլ։ Մեր գործը չէր լրմնցած, այլ սկսած էր։ Յայտնի էր որ Այ-Ստէֆանօսի դաշնադրութիւնը ինչպէս որ էր՝ այնպէս պիտի չմնար. իր զանազան տրամադրութիւնքը երոպական բովէն անցնելով փոփոխութիւններ պիտի կրէին։ Մասնաւորապէս 16-րդ յօդուածն ալ անպատճառ փոփոխութեան ենթակայ պիտի ըլլար։ Ինչ որ երոպական քաղաքականութեան շահուց հետ սերտ առընչութիւն ունէր Դանուբի հովտին ապագայ քաղաքական վիճակը, նոյն կերպով և թերևս արեւի շօշափելի կերպով Եփրատայ հովտին ապագայ քաղաքական վիճակը առընչութիւն ունէր անգղիական շահուց հետ։

Որչափ ալ անշահաւէր ըլլար և հայասէր միայն՝ այն զգացումը որ 16-րդ յօդուածին խմբագրութեանն առաջնորդած էր, Անգղիան պիտի տեսներ այդ յօդուածը Եփրատայ հովտին մէջ նոր քաղաքական վիճակ մը կը պատրաստէ՝ որ կրնայ մասնաւոր կերպով զայն ստորագրող տէրութեանց միոյն քաղաքական շահուց տեսակէտին պատասխանել։ Անգղիա պիտի չընդունէր զայս։ Կամ յօդուածը վերցունելու պիտի աշխատէր, կամ փոխելու։ Դիտմամբ կ'արտասանեմ վերցունել բառը, զի եղան քաղաքագիտաց շրթունք՝ որ հնչեցին այս բառը այլ անկարելի էր վերցունել. զի

անմարդասիրութիւնն ու խժժութիւնը անկարելի է Անգղիոյ ազատամիտ ազգին համար: Կը մնար միայն բարեփոխել յօդուածը այն կերպով՝ որ յօդուածը մնայ իբրև Հայոց համար խմբագրեալ յօդուած. Հայաստանը բարեկարգի Հայաստանի համար, և Հայկական խնդիրը չէզոքանայ, այսինքն՝ լոկ Հայկական խնդիր ըլլայ:

Բայց մենք ալ մեր կողմէն պէտք էր որ աշխատէինք. պէտք էր մեր մոռացուած անունը յիշեցնէինք՝ երբեմն մեզի հետ ապրող և այսօր կորսուած հին ու փառաւոր ազգերուն թոռանցը Եւրոպայի մէջ. պէտք էր գիտնար Եւրոպա որ Հայ ազգը կըզգայ ինքզինքը և գիտէ իր իրաւունքը պաշտպանել: Խորէն Սրբազան ուղևորեցաւ ի Բէթէրսպուրկ, և Խրիմեան Սրբազան յԱրևմուտս Եւրոպիոյ՝ իրեն թարգման ունենալով ազգային երիտասարդութեան փայլերէն մին՝ որ իր նորահաս ու միանգամայն հասուն հանճարովը մեր Հայոցս ապագայ գեղեցիկ յոյսերը պատկերացուց Եւրոպիոյ առջև, ինչպէս Խրիմեան Սրբազան ալ Հայաստանի փառաց սուգը ու դժբաղդութեան մէջ համբերատար ազնուութիւնը կը ներկայացնէր իր դէմքին վրայ, ինչպէս Խորէն Սրբազան ալ հին յիշատակներով թրթռուն և նոր յոյսերով բաբախուն սիրտը Ազգին: Ասոնք պատգամաւորք էին պաշտօնապէս Ազգին կողմէն. իսկ ամեն Հայու պարտքն էր գործակցիլ իրենց, և իմ իրաւունքս էր այսպիսի պարագայի մէջ Հայութեան բոլոր զաւակացը դիմել, քանի՛ և ընդ որ պէտք ըլլար: Որոն սիրտը Հայու անունով կը թրթռար և որ կարող կը զգար զինքը օգտակար ըլլալու Ազգին, գործակցեցաւ հոս ինձի և հոն ազգային պատգամաւորաց: Եւ զի ջանքն ընդհանուր եղաւ, ընդհանուր եղաւ նաև համակրութիւնը որ ամեն կողմէն սկսաւ ծնիլ ու բազմանալ մեր ազգին համար. օրագիրք թարգման եղան այս համակրական զգացմանց, պաշտպան կացին մեր դատին գրեթէ առանց բացառութեան ամենուրեք, ժողովրդական ակումբներ կազմեցան և քաղաքական բեմերն իսկ որոտացին մեր Ազգային խնդրոյն վիճաբանութեամբ: Կրնայինք ըսել թէ Եւրոպիոյ զգացումն ի մեր կողմն էր. զգացում, ասնող, առաջուց գիտէի թէ այս դարուս մէջ շահը միայն կը խօսի և մանաւանդ շահը միայն պիտի խօսի այն ծերացեալ ու գործոց մէջ կարծրացեալ քաղաքագիտաց ակումբին մէջ՝ որ պիտի գումարէր ի Պէրլին: Այլ մենք շահն ալ ի մեր կողմ ձգած էինք: Քիչ մ'առաջ ըսի արդէն թէ ինչպէս:

Տէրութեանց Աւագածողովը գումարուած և արդէն մէկ քանի նիստ ըրած էր ի Պէրլին. ամեն կողմէ ամեն տէրութենէ յուսադրութիւնք ու պաշտօնական խոստումներ ընդունած էի. յայտարարութիւններ՝ թէ ինչ որ միւս քրիստոնէայ ժողովրդոց պիտի տրուի, պիտի տրուի նաև Հայոց. ձայն չունէին Հայերը և չէին կրնար ունենալ Աւագածողովին մէջ, այլ-մինչև այս աստիճան էին մեզի տրուած յոյսերը-մեծ և ազնուախոհ ազգի մը, Գաղղիոյ Արտաքին գործոց պաշտօնեայն և առաջին լիազօր դեսպանը յանձն առած էր որ ինք ներկայացուցիչ ու փաստաբան կանգնի մեր դատին՝ Աւագածողովին մէջ, նա՛ որ և կատարեալ հաւանութեամբ ընդունած էր մեր խնդրոյն ձևը, հոգին և գործնական եղանակը՝ ինչպէս որ առաջարկած էինք մեր պաշտօնական գրութիւններով:

Վերջապէս՝ աւագագոյնն այն աւագաց և ճարտարագոյնն ի քաղաքագիտաց Նախագահն իսկ Աւագածողովին, որ և մասնաւոր ուշադրութեամբ քննած էր մեր խնդիրն ու մեր գրերն ամենայն՝ և մասնաւոր հոգատարութիւն յայտնած առաջին օրէն մեր դատին համար, պաշտօնական կերպով ներկայացուց և օրակարգն անցուց մեծ ժողովին՝ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքին նամակը առ նոյն ինքն Նախագահն, Հայ պատգամաւորաց խնդրագիրը, Հայաստանի վարչութեան համար ծրագրեալ կանոնագիրը և Հայաստանի վրայ վիճակագրական տեսութիւն մը:

Այսպէս ահա՛ ներելի էր մեզ յուսալ թէ խնդիրն ի հիմանց պիտի քննուէր ու հիմնական պիտի ընդունէր լուծում: Այլ ճիշդ այս միջոցին երևան ելաւ գաղտնի դաշնադրութիւնը ընդ մէջ Թուրքիոյ և Անգղիոյ՝ Ասիոյ նկատմամբ:

Տեսաք երեսփոխանք, ինձի չպատկանիր քաղաքական տեսութեանց մէջ մտնելով ըսել թէ՛ որչափ յանցաւոր կրնան ըլլալ Հայերը որ չնախատեսեցին զայդ նոր քաղաքականութիւնը՝ զոր և ո՛չ մէկ տէրութիւն Եւրոպայի մէջ նախատեսած էր, և որուն մէջ յայտնի չէ՛ տակաւին, երևակայութիւնն արդեօք կամ թէ՛ հեռատես քաղաքագիտութիւնը աւելի՛ մեծ դեր խաղացած է: Այլ այդ դաշնադրութիւնը՝ որ եթէ գործադրելի՛ անուրանալի բարիք մըն է Թուրքիոյ համար և Հայոցս համար ալ, արգելք չեղաւ որ Աւագածողովն զբաղի Այ-Ստէֆանօսի Դաշնադրութեան 16-րդ յօդուածովը, բարեփոխէ զայն, չեզոքացնէ ու մէկ տէրութեան երաշխաւորութեան ու հսկողութեանը փոխանակ բոլոր մեծ

տէրութեանց երաշխաւորութիւնն ու հսկողութիւնը դնէ, մինչդեռ միւս կողմէն ալ թուրք-անգղիական դաշնադրութեամբ՝ Անգղիոյ մասնաւոր պաշտպանութիւնն ապահովեալ էր Հայոց համար. այլ արգելք եղաւ որ Հայ ազգին խնդիրն ամբողջապէս նկատողութեան առնուի:

Որ և է անկողմնակալ մտածութեան համար ակներև է որ եթէ թուրք-անգղիական դաշնադրութիւնը Ասիոյ քրիստոնէայ ժողովրդոց համար բարեկարգութեան ծրագիրը Անգղիոյ ու Թուրքիոյ կառավարութեանց համաձայնութեամբ որոշուիլ տրամադրած չլլար, տէրութիւնք իրենք զայդ ծրագիրը պիտի որոշէին:

Աւասիկ Պէրլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուածը.

«Բարձրագոյն Դուռը կը խոստանայ, առանց այլ ևս յապաղելու գործադրել այն բարուքումներն ու բարենորոգումները, զորս տեղական պէտքերը կը պահանջեն Հայոց բնակած գաւառներուն մէջ, և անոնց ապահովութիւնն երաշխաւորել Չէրքէզաց ու Քրդաց դէմ: Այս նպատակաւ ձեռք առած միջոցները պարբերաբար պիտի ծանուցանէ տէրութեանց, որք անոնց գործադրութեանը պիտի հսկեն»:

Տեւորք երեսփոխանք. եթէ այս յօդուածը ցաւալի բան մ'ունի, այն է որ մեր խնդրոյն լուծումը ըստ մասին կը յետաձգէ. չկործաներ ազգին յոյսերը, այլ և չպսակեր նոյն հետայն: Եւ որ ազգ կրցած է յանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնիլ. դժբաղդութիւնն է միայն և մահ. որ յանկարծակի կրնան գալ անձի մը և ազգի մը վրայ. կեանքն ու բարեկեցութիւնը յամբ կը ձևանան: Եւ ասոր համար է որ կանխարեւն անոնք որ կըսեն թէ՛ «Ինչո՞ սկսանք, եթէ պիտի չյաջողէինք. և թէ՛ յայտնի էր որ պիտի չյաջողէինք.» զի օր մը յաջողելու համար՝ այս օրէն սկսելու էր. և զի եթէ ապահով կերպով գիտնայի ալ առաջուց թէ պիտի չյաջողիմ բնաւ, դարձեալ պիտի սկսէի, և այն թող գրէր ինձի ազգս ի դատապարտութիւն:

Բայց ոչ ինքնին ձեռնարկեցի ես յայս գործ. այլ յառաջ քան զիս և բուն քան զիմս էր ազգին ընդհանուր փափագը. և ես պատգամ միայն ընդունած էի զայն փափագն յառաջ վարելու: Արդ՝ երկու կարգ առարկութիւնք կան որոց ազդած ցաւը կ'աւելնայ յիս իմ ցաւերուս վրայ. այս առարկութեանց մին է այն՝ թէ վասն զի քիչ խնդրեցինք, քիչ ընդունեցանք, թէ անկատար կերպով թարգման

կացինք Ազգին իղծերուն և թէ նոյն իսկ այն կերպով վարուեցանք դիտմամբ և խորհրդով՝ որ անկատար կերպով պսակուին այդ իղծեր: Այս առարկութիւնը ազգայնոց ոմանց կողմէն է, և նոր ապացոյց մը կը հանդիսանայ այն չարեաց՝ որ Ազգին գերութեան վիճակը գործած է, յամառ անվստահութիւնը բնական յատկութիւն մ'ընելով ազգայնոց: Ա՛հ, եթէ այդ խիզախ վճիռն արձակողը գիտնար թէ անոնք որ աշխատեցան վեց ամիսներէ ի վեր, աշխատեցան այնպէս՝ որպէս ոչ երբէք աշխատած էին իրենց կեանքին մէջ. ընծայելով ազգին համար զամենայն որ ունէին, որն իր հարստութիւն, որն իր տաղանդ, որն իր ազդեցութիւն, և ամենքն իրենց աշխատութիւն. եթէ գիտնար թէ ինչպէս արհամարհեցին դժվարութիւնք ու վտանգ. եթէ գիտնար թէ լաւ ևս համարեցան զոհել իրենց շահն ու անձը, քանի՞ նշանախեց մը զոհել ազգային ծրագիրէն. եթէ գիտնար թէ ինչ սուրբ հայրենասիրութեամբ վառուած էին առանց որ և է փառքի կամ համբաւոյ ակնկալութեան ո՛չ այժմ, ո՛չ առ յապագայն, եթէ գիտնար ինչ որ ես գիտեմ, խղճմտանքին մէջ պիտի դողար այդ դատապարտութիւնն արտասանելով:

Միս առարկութիւնը օտարէն կուգայ մանաւանդ, զի չկայ Հայ մը՝ որ զայդ առարկութիւնը կարենայ ընել. այն է թէ՛ ինչ որ ձեր Պատրիարքը ազգին խնդիրը՝ կոչեց, այն իր հնարած խնդիրն էր, և ազգը չունէր մասնակցութիւն: Այդ օտարը չէ՛ լսած Հայոց ազգին անվերջանալի աղաղակը այնքան տարիներէ ի վեր. և չէ լսած սոյն այս Երեսփոխանական ժողովին յանուն Ազգին ինձի յանձնած պաշտօնը՝ զոր և կրկնեց ասկէ քիչ ժամանակ առաջ:

Եւ արդ՝ ահա յայտնեցի ձեզի թէ ինչ ձևով և ինչ բառերով ներկայացուցի Հայոց խնդիրն Երոսպայի, և զոր կ'ամփոփեմ հոս սապէս. **Հայոց վարչութիւն Հայաստանի** մէջ առանց քաղաքական փառասիրութեան զոր երբէք չենք ունեցած և չենք կրնար ունենալ, մեր Վեհափառ Սուլթանին հովանաւորութեանը և վեհապետական իշխանութեանը ներքև: Դ՛ուք, ազգային երեսփոխաններ, ըսէք, դուք որ բոլոր ազգին քուեղմն ընտրուած՝ կը զգաք ի ձեր սիրտ բաբախել սիրտն ազգին, ըսէք, ազգին խնդիրը չէ՛ այն որ ներկայացուցի:

Ըսէք, պիտի ներէի՞ք ինձ որ լուռ մնայի. ըսէք, պիտի ներէի՞ք որ այնպիսի պարագայի մէջ ուր Թուրքիոյ քրիստոնէայ ժողովրդոց բաղդը պիտի վճռուէր, ձեր Պատրիարքը անհոգ կենար. ըսէք, պիտի ներէի՞ք եթէ նոյն իսկ անյոյս և անապաւէն չղիմէի ազգաց

ժողովին՝ գէթ անոր համար որ Երոպա գիտնայ՝ թէ Հայոց ազգ մըն ալ կայ Արևելքի մէջ: Ըսէք, պիտի ներէիք դուք և պիտի ներէին ինձ մեր Նախնեաց հոգիք, Հայկէն մինչև վերջինն մեր Լևոն. Լուսաւորիչէն մինչև ի վերջինն Ներսէս՝ ի շարս մեր ազգաշէն և ազգասէր կաթողիկոսաց, ըսէք, պիտի ներէին և պիտի ներէիք եթէ խոչ և խուֆ առ ոտն հարկանելով մինչև Երոպա չհասցունէի ազգին աղաղակը. Ըսէք, ըսէք ձեր հանդիսաւոր քուէովը, ըսէք ձեր միաձայն քուէովը, զի միաձայն միայն կրնայ ըլլալ քուէն այս պարագայիս մէջ. Ըսէք, և ձեր քուէն թորդ պատասխանէ այդ անհետեթեթ և ազգուրաց առարկութեան⁴⁵:

Եւ սակայն՝ ո՞ր է կորուստը, ո՞ր է այնքան աշխատութեանց և ջանից ապարդիւն մնալը, ո՞ր է անյաջողութիւնը, ո՞ր է դժբաղդութիւնը, ո՞ր յուսահատութիւն: Վասն զի՝ առաջին անգամ Հայոց ազգին անունն անցաւ հանդիսաւոր դաշնադրութեանց մէջ՝ այդ է կորուստը. վասն զի՝ այդ դաշնադրութեամբք հարստահարութենէ ազատեցան Հայերը՝ այդ է դժբաղդութիւնը, վասն զի՝ Հայոց ապագային սերմունքը դրուեցան, այդ է մեր ջանից ապարդիւն ելնելը. և վասն զի՝ Երոպայի ժողովուրդներն ու տէրութիւնները ճանաչեցան ու սիրեցին Հայ ազգը, այդ է անյաջողութիւնը. և վասն զի՝ այս վայրկենիս որ կը խօսիմ ձեզի այս ազգային բեմին վրայէն, թերևս մեծ ևս բեմերու վրայէն հարցումներ կ'ուղղին Երոպայի կառավարութեանց՝ Հայոց նկատմամբ, այս է մեր լքումն ու յուսահատութիւն:

Տեանք երեսփոխանք. ըսի արդէն թէ մեր խնդիրն անմիջապէս և կատարելապէս չէ՛ իրականացած, և ասոր համար պարտք համարեցայ բողոքել հոս տէրութեանց դեսպանաց քով, և ի Պէրլին լիազորաց քով: Բողոքը տկարին իրաւունքն է, և շատ անգամ յումպէտս կը գործածուի նա. այլ ո՛չ այս պարագային մէջ, զի արդիւնքն իսկ տեսնուեցաւ վերջին վայրկենին, յողուածին խմբագրութեանը մէջ: Այո՛, մեր խնդիրն ամբողջապէս չէ կատարուած, այլ մե՛ծ է արդէն ինչ որ ստացանք դաշնադրութեան այն յօդուածով. և մեծ է՝ ո՛չ ոք կրնայ ուրանալ զայս և ես քան զայլ ոք ակելի նուազ՝ Անգղիոյ մասնաւոր պաշտպանութիւնը:

Մեր չենք յուսացած մեր զօրութեանը վրայ այդ պաշտպա-

⁴⁵ Ազգային ժողովն յետ ատենաբանութեանս միաձայնութեամբ մերժեց սոյն օտարոտի առարկութիւնը:

նութեան տալու համար այն ուղղութիւնը՝ զոր կրնանք փափաքիլ մեր ազգային խնդրոյն կատարմանը նկատմամբ. այլ իրողութիւնք զօրաւորագոյն են քան զամենայն՝ և վճռաբար կը հրամայեն նոքա տէրութեանց քաղաքականութեան:

Անգղիոյ մեծ ազգին քաղաքականութիւնը՝ որուն յայտնի են շահերը, նպատակն ու համակրութիւն, կրնայ ի սկզբան այնպիսի ձև ու ոգի մը զգենուլ՝ որ իր յաւիտենական կղզին մշանջենաւորապէս պատող ովկիանոսին պէս ինքն իրեն դէմ մարտնչելով՝ թէ և ջրզնի, չպարտասի, այլ՝ զի պէտք է յաջողի, հարկ պիտի զգայ վերջապէս նոր ոգի ու նոր ձև առնուլ:

Իսկ մենք, Տեարք երեսփոխանք. մենք յարատեւնք մեր սկսած գործին մէջ: Այսպիսի գործեր ո՛չ մէկ օրուան մէջ, ո՛չ մէկ մարդու ձեռքով կրնան կատարուիլ: Պատրաստուինք մեր ապագային: Նախ՝ չկենանք հոս, Հայաստան երթանք. Հայաստան դրկենք ինչ որ ունինք ազգին մէջ իր բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ. Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ. Հայաստան երթան մեր արուեստագէտներ, վաճառականներ. Հայաստան երթան այնքան դժբաղդ պանդուխտներ. ո՛չ ևս պիտի ըլլայ հոն սով, սրածութիւն. ո՛չ ևս հարստահարութիւն. ոչ ևս կենաց և ընչից և պատուոյ առևանգութիւն. ո՛չ ևս աշխատութեան խափանում: Ուղիներ պիտի բացուին. ջրանցքներ պիտի շինուին. գործարաններ պիտի կառուցուին. Անգղիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրուընէ. ընկերութիւններ՝ ամեն քաղաք և գիւղ դպրոցներ հաստատելու համար. ընկերութիւններ՝ առևտրական յարաբերութիւններ հաստատելու համար. ընկերութիւններ՝ գործարաններ հաստատելու համար. Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգղիայէն, Թուրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչև Պարսկաստանէն միանան ձեռք ձեռքի տան բոլոր Հայերը, և այն ատեն՝ թերևս ես ալ ցաւագար ու անբուժելի հիւանդութեամբ վարակելալ, ի գերեզման իջած ըլլամ արդէն. այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պսակուած մեր այսօրուան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն և պիտի ընդգրկէ մեր սիրելի Նախնեաց հոգիները...:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1880-1895

1880 թուականին թիւք կառավարութիւնը, Հայաստանի դրութիւնն ուսումնասիրելու և կարևոր բարենորոգումների ծրագիր կազմելու համար՝ ուղարկեց այնտեղ **կօմիսէրներ**, որոնց յատկացրել էր ընդարձակ լիազօրութիւններ: Այդ ժամանակ հայ ժողովուրդը մի անգամ էլ առիթ ունեցաւ գրատր կերպով արտայայտելու իր գաղափարները իր հայրենիքի լաւագոյն կառավարութեան մասին: Կարինում հայերը ներկայացրին կօմիսէրներին հետևեալ Ծրագիրը, որ կազմուած էր Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանում, հետևաբար Ներսէս Պատրիարքի և նրա մօտիկ աշխատակիցների (առաւելապէս Մատթէոս արք. Իզմիրլեանի) գործն էր ներկայացնում:

№ 14

ԾՐԱԳԻՐ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԿԱՐԻՆ ՆԱՀԱՆԳԻ⁴⁶, ՈՒՂԴԵԱԼ ԱՌ ԲԱՐՁՐ ՊԱՇՏՕՆԵՈՒԹԻՒՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԿԱՐԻՆ ԵՒ ՎԱՆ ՆԱՀԱՆԳԱՑ

Յառաջարան

Հայ ազգը՝ որ օսմանեան պետութեան ամենէն աւելի հաւատարիմ հպատակն է դարերէ ի վեր, և իւր շարունակ ցոյց տուած անձնուէր ծառայութեանց համար կայսերական կառավարութեան գոհունակութեանը իրաւամբ արժանի եղած է միշտ, այս անգամ պատիւ ունի իւր շնորհակալութիւնն յայտնել ի մասին Ձեր գալստեանն ի Հայաստան աշխարհ, որ նպատակ ունի ի գործ դնել այն ամէն բարենորոգումները, զորս տեղական պիտոյքը կը պահանջեն:

Այս նահանգի Հայ ազգը յոյս մեծ ունի որ Դուք ըստ փափաքանաց մեր վեհ. Սուլթանին անկեղծօրէն պիտի ջանայք տեղական պիտոյքը ճշդիւ քննել և իմանալ, և ըստ այնմ երկիրը բարգաւաճման մէջ դնել, ապահովելով ժողովրդեան կեանքը, ինչքն ու պատիւը: Առ այս ի նկատի պիտի առնուք անշուշտ այն ամէն անբաւական և ապարդիւն միջոցները, որք ամէն բողոքանաց հակառակ՝ մինչև ցարդ բաւական եղած չեն երկրին աղէտները դարմանելու, և Հայ ազգը ազատ պահելու անտանելի հարստահարութիւններէ, զորս վեհ. Սուլթանն իսկ քաջ գիտելով քանիցս խոստովանած և խոստացած է անյապաղ բարենորոգումներ ի գործ դնել:

Այսպէս մէկ կողմէն երկրին շահը նկատելով և միւս կողմէն մեր պարտքն ու իրաւունքը ճանաչելով կը համարձակիմք Ձեր առջև նշանակել վարչական, դատական, ոստիկանական և այլն զեղծումները, որք շարունակ տեղի ունեցած են, զորս ծածկելը կը նշանակէ ներել որ երկիրը իսպառ թողուի իւր աղէտից մէջ:

⁴⁶ Այս ծրագիրը, որ մեր Կարնեցի ազգայինքը պաշտօնապէս ներկայացրել են Օսմանեան Հայաստանի **կոմիսէրներին**, եթէ, բոլորովին կամ մասամբ, միայն թրթի վերայ էլ մնալու լինի, այնու ամենայնիւ դորա ներկայացումն իսկ նշանաւոր երևութ է՝ իբրև բուն ժողովրդական ձգտումների արտայայտութիւն. վասնորոյ ձեռք բերելով դորա հարազատ պատճէնը՝ արժան համարեցինք իրապարակ հանել այն: – Ծանօթ. «Փորձ» ամսագրի խմբագրութեան:

Ա. Մեր նահանգի մէջ վարչական բարձր պաշտօնէութիւնը շատ անգամ Կ. Պօլսէն՝ առանց որոշ պայմանաժամու պաշտօնավարութեան՝ կը յանձնուի այնպիսի անձանց, որք կամ բոլորովին ապիկար և անհմուտ տեղական պիտոյից և քաղաքական օրինաց, և կամ անելի օգտակար եղած են իրենց անձին քան երկրին. գրեթէ միշտ մարդու համար պաշտօն փնտռուած է և ոչ պաշտօնի համար մարդ: Ամէն ատեն թուրք պաշտօնեայք միայն պաշտօնի մէջ գործածուած են, կրօնի և ազգութեան տեսակէտով՝ փոխանակ **արժանիք** փնտռուելու ըստ իրաւանց հաւասարութեան, մինչդեռ և ոչ մի հայազգի արժանատր անձի յանձնուած է ցարդ նոյնպիսի մի պաշտօն: Եւ որ զորմանալին է, Քիւրդերը և նոցա նմա վայրենի ցեղերն իսկ, որք երկրին պատուհասն եղած են միշտ, ամենակարևոր պաշտօններու կոչուած են, և այս կերպով ակ անելի ծանրացած են հպատակ ժողովրդեան վրայ:

Բ. Օսմանեան օրինագիրքը (տիւթիւր) թէև ի պաշտօնէ գործադրելի հրատարակուած է, թող որ արդէն շատ մը պակասներ ունի իր մէջ, սակայն և միանգամայն Կ. Պօլսէն մերթ ընդ մերթ եկած որ և է հրամանագիր բաւական եղած է փոխել կամ ջնջել օրինագրքին այս կամ այն յօդուածները, մինչդեռ որ զարմանալին է, ուրիշ մէկ հրամանագիր ուրիշ անգամ նախորդացն հակառակը կը հրամայէ, և այսպէս կը շարունակուի, որով մեր երկրին մէջ ո՛չ թէ օրէնքը կը տիրէ, այլ քմահաճ կամքը (խտարէի քէյֆիյէ): Չկան նաև պաշտօնատարաց պարտուց սահմանները ճշդի գծող օրէնքներ, որք անշուշտ անհրաժեշտ են պաշտօնէութեան մը ուղղութեանը:

Գ. Վարչային արդի կազմակերպութեան դատարանաց ճիւղն ևս ունի իւր սխալ դրութիւնը, զորօրինակ նահանգիս կեդրոնին վերաքննութեան ատենին, իսկ սանճագներու և գազաներու նախնական ատեաններուն նախագահութիւնները բացարձակ կերպիւ տրուած են Շէրիի պաշտօնեայ եղող նայիպներու, որք քաղաքական օրինաց անհմուտ՝ և Շէրիի դրութեան վարժուած անձեր լինելով՝ դատերը կը վճռեն անելի Շէրիի օրինաց համաձայն, կամ ըստ հաճոյս երբեմն Շէրիի օրէնքը խառն կը գործադրեն: Արդ քանի որ այդ ատեաններուն նախագահք Շէրիի պաշտօնեայք են, անհնար է որ քաղաքական օրէնքը անարգել գործադրուի դատարանաց մէջ: Նաև Մէճէլլէի օրինագիրքը Շէրիին թուրքերէն թարգմանութիւնը միայն լինելով իբր քաղաքական օրէնք կը գործադրուի, որով

քաղաքական դատարանները չեն տարբերիր գրեթե՝ Շերիի դատարանները: Դատարանաց նախագահներու գոհացուցիչ թոշակ տրուած միջոցին՝ անդամոց համար ամենանուազ թոշակ սահմանուած է, հետևաբար արժանատր և կարող անձեր դուրս մնալով անդամակցութեան բաց ասպարէզ կը մնայ միշտ անարժան և ապիկար անձերու:

Դ. Տէրութեան օրէնքները, հրամանագիրները, բոլոր ժողովոց և դատարանաց քննութիւնք և վճիռք կը հրատարակուին միայն թուրք լեզուաւ, որով այդ լեզուին անհմուտ Հայը բնաւ տեղեկութիւն չունենար կառավարական հրամանաց և օրինաց և այլն, և պաշտօնեայք ըստ կամի կը մեկնեն և կը գործադրեն:

Ե. Ոստիկանութիւնը, որ ժողովրդեան կենաց, ընչից և պատուոյն պահպանութեան յատուկ պաշտօնն ունի, ոչ իւր արդի թուով, ոչ կազմակերպութեամբը և պաշտօնավարութեամբը կարողացած է ծառայել երկրին և տէրութեան, յաճախ ինքն է եղած հարստահարիչ, կամ հարստահարչին պաշտպան և քաջալերիչ:

Զ. Տրոց բաշխման և հաւաքման ներկայ եղանակները ունին մեծամեծ զեղծումներ, աշար և այլ տուրքեր թէ միւլթեզիմներու և թէ ուղղակի կառավարութեան կողմէն հաւաքուած ժամանակ ի գործ դրուած եղանակ ու միջոցները միշտ վնասակար եղած են թէ ժողովրդեան և թէ գանձուն: Ժողովրդեան կարողութեան չափը գրեթէ ի նկատի առնուած չէ տրոց բաշխման մէջ: Առ այս կը վկայեն տարիներէ ի վեր իրարու վրայ դիզուած պէզայէները (ապառիկ), և ժողովրդեան այժմու զարհուրելի աղքատութեան վիճակը:

Տրոց հաւաքման ատեն քաղաքաց և գիւղօրէից մէջ զապթիյէներն ալ շահադիտական մեծ դեր կը խաղան, մինչ զի կարելի է ըսել թէ աղքատ ժողովուրդը առ նուազն իւր տրոց մի կիսով չափն ալ դոցա կը վճարէ, տալով դոցա ուտեստ և դրամ գրեթէ միշտ բռնի և ճրի: Թո՛ղ անտերունչ ժողովրդեան գանակոծուիլը, հայիոյուիլը, յանիրաւի բանտարկուիլը և այլն: Եւ այս ամէն կեղեքում առաւելապէս քրիստոնէից վրայ ի գործ կը դրուին:

Է. Երկրին ընդհանուր եկամուտէն հազիւ մի չնչին գումար կը ծախսուի հասարակաց կրթութեան և հասարակային շինութեանց համար, զորօրինակ 1293 տարւոյ սալնամէէն կը տեսնուի որ Կարին և Վան նահանգաց հասարակաց կրթութեան համար 169, 396 դուրուշ ծախս նշանակուած է, և այս միմիայն թուրք ազգի

դպրոցաց յատուկ, իսկ հասարակաց շինութեանց համար 210, 100 ղուրուշ: Արդ ուրեմն ինչպէս կարելի է այսպիսի չնչին գումարներով բարգաւաճման և յառաջադիմութեան մէջ դնել այսպիսի ընդարձակ նահանգներ: Միայն Կարնոյ նահանգիս եկամտից տարեկան գումարը՝ բաց ի մաքսի, ծխախոտի, աղի, և այլ այսպիսի **րուսումաթի** եկամուտներէ միւս տարեկան եկամտից գումարները կը հասնին 25-30 միլիօն ղուրուշի. իսկ ծախսը հազիւ կը համապատասխանէ սորա $\frac{1}{4}$ ին: Մեկնութեան իսկ հարկ չկայ թէ երբ այսպիսի նուագ եկամուտ բերող երկրի մը հասոյթին $\frac{1}{4}$ ը միայն կը ծախսուի երկրին մէջ, և մնացորդը դուրս կը հանուի, հետևաբար անկարելի է որ թէ՛ երկիրը դրուի բարգաւաճման վիճակի մէջ, և թէ՛ կարելի լինի այժմ՝ ու խիստ նուագ՝ մանաւանդ, որ յոյժ զարմանալին է, 15-20 ամիսներէ ի վեր անվճարելի թոշակներով պաշտօն ընդունել տալ արժանաւոր անձանց, որով ասպարէզը կը մնայ ապիկար տգէտ և անխիղճ անձերու, որք կը յօժարին՝ անշուշտ շահադիտական նկատումներով 70-100 ղուրուշ ամսական թոշակաւ ոստիկան, բոլորովին ձրի կամ 200-400 ղուրուշ ամսականաւ ժողովական, և մինչև իսկ դատաւոր, 250 ղուրուշով միտիր, և 900 ղուրուշով գայմագամ լինելու և այլն և այլն:

Ը. Հողային խնդրոց մէջ ևս կան շատ ու շատ զեղծումներ, զորօրինակ գիւղացին տարիներով երկիր մը կը հերկէ և կը ցանէ, բայց իւր այդ հերկած ու ցանած երկիրը՝ «խօշնիչէն» է ըսելով գիւղի աղայն կամ այլ ազդեցիկ ոմն յանկարծ կը գրաւէ, և կը յաջողի թափու ընել չնչին գումարով մը կամ այլ դատապարտելի միջոցներով: Այս զեղծմանց մեծ ոյժ տուած են արագիի օրինաց պակաս կամ թերի լինելը, և հողային դատերուն Շէրիաթի դատարաններ ղրկուելու նոր հրամանագիրը, հակառակ արդէն յատուկ հրովարտակաւ հաստատեալ այն դրութեան, որ կը հրամայէր այսպիսի դատերը տեսնել միմիայն քաղաքական դատարանց մէջ ըստ արագիի օրինաց:

Թ. Համառօտակի խօսիմք նաև հարստահարութեանց մասին.

1. Մահմետական կրօնի պաշտօնեայններէն տգէտ և մոլեռանդները՝ փոխանակ սէր և հաւասարութիւն քարոզելու՝ հալածում կը քարոզեն քրիստոնէից դէմ՝ փոքր քաղաքաց և գիւղօրէից մէջ յայտնի, իսկ գլխաւոր քաղաքաց մէջ գաղտնի, միամիտ ժողովուրդը հաւատալով թէ այդ տգէտ կարդացողին խօսքը աստուածային պատգամ է, մոլեռանդ ատելութեամբ կը սկսի բռնաբարել քրիս-

տունէին պատիւը, ինչքն ու կեանքը, և որ զարհուրելին է, եկեղեցիներ ու վանքեր կողոպտել և պղծել, քահանաները խոշտանգել և անլուր խժոժութեամբ տանջել և մինչև իսկ մահու դատապարտել, քրիստոնեայ մեռելոց դիակները գերեզմանէն հանել և խայտառակել, կոյսեր և կիներ առևանգել և բռնի իսլամացնել, քրիստոնէական կրօնը ծաղրել և եկեղեցոյ նուիրական անօթները ու սուրբ Խաչը կոխտտել և այլն. սոցա վրայ մի գաղափար տալու համար միայն գլխատրոններէն մէկ մասը յատուկ տեղեկագրով ի հարկին պիտի յանձնեմք ձեր ուշադրութեան:

2. Հարստահարիչք գրեթէ միշտ պաշտպանութիւն, քաջալերութիւն և մինչև իսկ պաշտօնապէս պատիւ գտած են կառավարութեան պաշտօնեաներէն, ժողովականներէ և քաղաքաբնակ նշանաւոր անձերէ: Յաճախ տեսնուած է, որ նահանգիս միջի հարստահարիչք ձերբակալուած և պատժոյ ենթարկուած միջոցին յանակնկալս ազատուած և վերադարձած են տեղերնին վրէժխնդրութեան ոգով աւելի ևս հարստահարելու ժողովուրդը, մանաւանդ բողոքողները, զորս և կատաղաբար մահու իսկ մատնելը կը ժպրհին աներկիւղ և համարձակ: Ո՞ր անտերունչ հարստահարեալ կը համարձակի այնուհետև բողոքել այնպիսեաց դէմ: Եւ այսպէս բնական է որ հարստահարիչ աղայն կամ պէյը բացարձակ տէր կը լինի խեղճ ժողովրդեան կենաց, ընչից և պատուոյն, և կարծես թէ կառավարութիւնն իսկ չուզեր ջախջախել այդ բռնաւորները՝ մի ազդու հարուածով...:

3. Քրդաց և այլ թափառիկ ցեղերու աշիրէթի դրութիւնը մինչդեռ չկայ որ և է քաղաքակրթեալ երկրի մէջ, մեր նահանգի մէջ շատ տեղեր տիրող դրութիւն ճանաչուած է պաշտօնապէս: Աշիրէթի էլ աղասին իբր վեհապետական իրաւամբ ունի զինեալ հերոսներ, որք նորա հաւատարիմ գերիներն են կամ կոյր գործիները, թէ հրամայէ զարնել, կը զարնեն, կողոպտել՝ կը կողոպտեն, սպաննել՝ կը սպաննեն, և այլն: Սոքա գրեթէ ո՛չ բնաւ երկրագործութեամբ և արհեստի կը զբաղին, և ո՛չ իսկ շատ տեղեր հաստատ բնակութիւն ունին, այլ զէն ի ձեռին կը շրջին ամենուրեք, մանաւանդ լեռներու և ձորերու մէջ, ազատ համարձակ կը յափշտակեն երկրագործ հայ ժողովրդեան պարէնը, կը գողանան նոցա դուարը, կ'այրեն նոցա ցորենի որաները և խոտի դէգերը, և կը բռնաբարեն նոցա պատիւն ու կեանքը: Սոցա առջև ոչ խեղճ և ո՛չ պետական իշխանութիւն

նշանակություն ունին, այլ միայն էլ-աղասին, որոյ կամքն ու հաճոյք՝ կը համարձակիմք ըսել՝ թէ ամենայն ինչ է:

Քուրդ աշայիրներու սոյնօրինակ բարբարոսական դրութեան վնասակարութեան մասին Բ. Դուռն Հայոց ազգէն եղած անդադար բողոքանաց և աղերսանաց վրայ համոզուած՝ 1869-ին հրամայեց Կարնոյ վայի՝ Տրապիզոնցի Իսմայիլ փաշային, բռնել և աքսորել այդ աշայիրներու էլ-աղասի կամ թողուն կոչուած ցեղապետները: Արդարև միայն Մշոյ գաւառէն 100-ի չափ թողուններ ձերբակալուելով աքսորուեցան Օսմանեան-Երուսական երկիրներ և այլուր: Բ. Դուռն հրովարտակ իսկ հանեց որ դոցա գերդաստանք ևս երկրէն հանուին և աքսորուին, բայց սոյն հրամանագրէն անմիջապէս յետոյ Իսմայիլ փաշայի պաշտօնանկութիւնը վրայ հասնելով՝ ի զարմանս աշխարհի՝ նոյն աքսորեալ և անդառնալի վճռուած թողունները վերադարձան, անշուշտ վրէժխնդրութեան զարհուրելի ոգով վառուած...: Նոյնպէս և 1875-ին Մշոյ քիւրտ աղաները ի ձեռն Ահմէտ Մուխթար փաշայի բանտարկեցան Կարնոյ մէջ. բայց նորա պաշտօնանկութենէն անմիջապէս յետոյ սոքա ևս արձակուեցան...:

Քիւրդերը և այլ այսպիսի անզուսպ ցեղերը ամփոփ և զինեալ պահելու յոռի դրութեան իբրև ջատագովական փաստ՝ կ'առարկուի յաճախ թէ սոքա ի հարկին կայսերական բանակաց թիւը ստուարացնելու կարող են, և գէթ այնչափ բազմամեայ վնասուց իբր փոխարինութիւն՝ ծառայութիւն մը մատուցած լինել: Սակայն 54-56 և մանաւանդ 77-78-ի պատերազմաց ժամանակ դոքա ամբողջ գիւղեր կողոպտելէ և աւերելէ, մեռելներ և վիրաւորներ կողոպտելէ, զօրաւոր կողմին գործիք լինելէ և օսմանեան բանակաց կարգաւորութիւնը խանգարելէ զատ ուրիշ գործ չտեսան: Այս ճշմարտութեան վկայած են կայսերական բանակաց հրամանատարք և սպայք: Իսկ մեք առ այժմ կը բաւականանամք յիշելով միայն այն սարսափելի իրողութիւնը, որ վերջին պատերազմի ժամանակ տեղի ունեցաւ ի ձեռն Շէյխ Ճէլալէդտիինի: Սա օսմանեան բանակի թիւը ստուարացնելու պատրուակաւ հաւաքած իւր աւազակաբարոյ հրոսախմբովը Վանայ շատ մը գիւղերը ասպատակելէ և աւերելէ յետոյ, փոխանակ թշնամոյն հետ պատերազմելու, Պայագիտի օսմանեան բանակէն բաժնուելով կը յարձակի Պայագիտի վրայ, ուր և ամեն տեղ հետն ունենալով տեղացի աւազակ քրդեր, և նոյն իսկ բնիկ երևելեաց ընկերակցութեամբ Հայոց տունները կը կողոպտէ ու կը քանդէ,

հարսերն ու աղջիկները կ'առևանգէ, հարիւրաւոր Հայեր սրա-
խողխող կը ջարդէ, և որ զարմանալին է, այս ամէն ոճիր ի գործ
դնելէ յետոյ Պայազխի օսմանեան բանակին առջևէն անպատիժ
կը մեկնի...:

4. Ո՛չ նուազ ուշադրութեան արժանի է Կարսի ու Չըլտըրի
Թիւրք, Թէրէքէմէ, Քիւրտ և Չէրքէս ցեղերու գաղթականութիւնն,
որ հարստահարութեան նոր դուռ մը ևս կը բանայ նահանգիս
մէջ: Սոքա ևս այս միջոցին Դերջանայ, Ալաշկերտի, Խնուսի, Բա-
սենի և ուրիշ հայաբնակ գաւառաց մէջ կը հաստատուին, որոց
ինչ աստիճանի բարբարիկ բնաւորութեան տէր լինելը մեք ի վա-
ղուց գիտեմք: Սոքա երկարատեան սահմանագլխի մօտ բնակած
ամէն ոճիր ի գործ դնելով սահմանէ սահման կ'ապաստանէին,
մէկ կողմէն յափշտակածնին միւս կողմը փոխադրելով, որոց այս
արարքը Օսմանեան, Ռուսական և Պարսկական պետութեանց
մէջ մինչև իսկ բանակցութեանց նիւթ եղած էին: Ուրեմն սոցա այս
կողմերը տեղաւորուելու մասին կառավարութեան թոյլտուութիւնը
պիտի նշանակէ յարմար միջոց և մինչև իսկ քաջալերութիւն տալ
իրենց նախկին ընթացից շարունակութեան:

5. Նշանակութեան արժանի են նաև այն հարստահարութիւնք,
որք յաճախ կանոնաւոր զօրաց վաշտերու և միշտ չէրքէսներու և
այլ պաշտպօզութիւններու փոխադրութեանց առթիւ տեղի կունենան
մասնաւորապէս հայ գիւղօրէից մէջ: Սոքա իրենց և ձիանուն
համար ձրի ուտեստ, և այլ պաշար, տարապարհակ ձի, էջ, ջորի,
սայլ, դրամ և այլն կը պահանջեն ժողովուրդէն, և երբ ընդդիմութիւն
տեսնեն, կը հայհոյեն, կը տանջեն և մինչև իսկ կը սպանեն, մինչև որ
պահանջածնին առնուն լիովին: Եւ այս ամենայն կը լինի բազմիցս
նոյն իսկ սպայից և զօրապետաց գիտութեամբ և թոյլտուութեամբ:
Սոյն օրինակ կը վարուին գրեթէ և քաղաքաց մէջ:

6. Տարապարհակ ծառայութեանց երեսէն ժողովրդեան
կրած հարստահարութեանց կրնայ կցուիլ և այլ տարօրինակ իրո-
ղութիւն, – ժողովուրդէն հաւաքուած և կարի պակաս գներ նշանա-
կուած պաշարներու արժէքները. որք կառավարութենէն պիտի
ընդունուէին իբրև կանխավճար թերհաշի արքունի տրոց, այժմ չը
հաշուելէ զատ տուրքերն ևս ամբողջ խստիւ կը պահանջուին:

7. Կան նաև հարստահարութիւնք բանտերու մէջ: Պարտուց
կամ այլ թելթալ յանցանաց պատճառաւ բանտարկեալ քրիստոնէայք

տարապարհակի կը գործածուին, և առ այդ սպառնալեօք դրամներ կը պահանջուին, թող որ յաճախ լսուած են բանտերու մէջ տեղի ունեցած հայիոյութիւնք և գանակոծութիւնք:

Այդ նկատելով որ կայսերական կառավարութիւնն իւր շահը կը ճանաչէ երկրին բարգաւաճման և ժողովրդեան կենաց, ընչից և պատույ ապահովութեան մէջ, և հաւասարութեան սկզբունքը երկրին կենդանութեան և յառաջադիմութեան էական պայման կ'ընդունի, և ղէ կրօնական և տեղական խտրութիւնները, և թէ սոյն տեսակէտով անշուշտ վեհափառ Սուլթանն յղած է զՁեզ ի Հայաստան, որպէս զի հաճիք Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածոյ տրամադրութեան համաձայն ըստ տեղական պիտոյից բարենորոգումներ անյապաղ է գործ դնել, ուստի մեր առ կայսերական կառավարութիւնն ունեցած դարաւոր ամենահաւատարիմ հպատակութեան և քաղաքացիութեան և մանաւանդ երկրին բոլորովին հարստահարեալ ժողովուրդը Հայը լինելուն իրաւամբ՝ իբրև անդամը նոյն Ազգի կը համարձակիմք խոնարի յարգանօք և անկեղծ փափաքանօք սոյն բարենորոգմանց համառօտ ծրագիրը առաջի առնել Ձերումդ Վսեմութեան:

(Ահա և ծրագիրը)

Կարնոյ նահանգը ըստ ներկայ բաժանման՝ բացի կեդրոնական **սանճագէն**՝ ունի նաև երեք ուրիշ սանճագներ, որք են Երզնկա, Պայազիտ, և Բաբերդ: Կեդրոնական սանճագին ներքև են Բասեններ, Խնուս, Կեղի, Դերջան: Երզնկայ սանճագին ներքև են Կամախ, Քուրիչայ, Քուզիչան, Օվաճըզ և Մաղկերտ: Բայազիտի տակն են Տիատին, Քարաքիլիսէ, Ալաշկերտ, Այնթապ: Բաբերդի տակն են, Սպեր, Կիսկիմ, Քէլքիթ և Շէիրան գագաները: Հետևաբար այս նահանգի բացի **վալիէն**՝ կան երեք **միութասարիֆք**, և տասնետօթ **գայմագամք**, հանդերձ մի քանի **միտիրներով**:

Վարչութիւն

Ա. Նահանգիս վալիին անուանումն ու փոփոխութիւնը արդէն մին է ի նուիրական իրաւանց վեհ. Սուլթանին, երբ վալիի մը իշխանութեան յանձնուած ժողովուրդը ապահով կը լինի նորա բարուք վարչութեան վրայ, յայնժամ կառավարութիւն և ժողովուրդ

սիրելի կը լինին միմեանց փոխադարձաբար. յայտնի է որ Նորին Կայսերական Վեհափառութիւնն ալ գթալով Հայաստանի մէջ բնակող իւր հպատակ ժողովրդեան թշուառ վիճակին վրայ՝ զայն բարութելն ու ապահովելն իրեն գլխաւոր նպատակ ըրած է: Այդ նկատելով Հայ ազգի պատրիարքն ըստ **տրամադրութեան** ազգային սահմանադրութեան, որ արդէն վաւերացեալ է վեհ. Սուլթանէն՝ Թուրքիոյ Հայոց ներկայացուցիչն և միջնորդն ի միջի ազգի և տէրութեան, որով և նորին սրբազնութեան կարծիքն ու ձայնը ամբողջ ազգինն է, պէտք է որ վալիի ընտրութեան և փոփոխութեան մասին նախապէս նորա կարծիքն ալ առնուի:

Եւ որովհետև իսլամ վալիները, միութասարիֆք և գայմագամք ցարդ գրեթէ բնաւ հոգ տարած չեն երկրին բարգաւաճման և յառաջադիմութեան, որով և չեն կրցած գոհ ընել զՀայ ազգն, և միանգամայն փորձերով ապացուցուած է որ այսուհետև ալ բացարձակապէս անհնարին պիտի լինի ձեռնարկելի բարենորոգմանց գործադրութեան յաջողութիւնը՝ ըստ բարձր սկզբանց ճշմարիտ հաւասարութեան, որոյ ձայնը բոլոր աշխարհի մէջ արձագանգ գտած է, կառաջարկեմք որ նահանգիս վալին և Երզնկայի ու Բայազիտի միութասարիֆները և Բասեններու, Խնուսի, Կեղուայ, Դերջանու, Կիսկիմի, Կամախի, Մանազկերտի, Կարաքիլիսէի, Ալաշկերտի նման բազմահայ գազաներու գայմագամք Հայ լինին:

Պէտք է նաև որ վալիի պաշտօնավարութիւնը մի որոշ պայմանաժամու տակ ապահովեալ լինի:

Բ. Նահանգի միութասարիֆները ընտրուին և փոխուին ճիշդ վալին ընտրութեան եղանակաւ, իսկ գազաներու գայմագամք նահանգի վարչական ժողովոյ որոշմամբ և վալիին վաւերացմամբ: Անձնիւր միութասարիֆ իւր իշխանութեան ներքև եղած գազաներու գայմագամաց ընտրութեան կամ փոփոխութեան նկատմամբ եթէ ունենայ դիտողութիւն, պէտք է որ սանճագի վարչային ժողովոյն հետ ի միասին տեղեկագրով յայտնէ նահանգի կեդրոնին, որ պէտք եղածը կը գործադրէ յետ օրինաւոր քննութեան:

Գ. Նահանգի կեդրոնական իշխանութեան համարակալ, քարտուղար, հողային արձանագրութեանց տեսուչ, կալուածոցն տեսուչ, և այլն այն պաշտօնէից, որք ուղղակի Բ. Դռնէն կ'ընտրուին, ընտրութեան և փոփոխութեան մասին Բ. Դուռն նախապէս վալիին կարծիքն առնու և ապա գործադրէ: Այս պաշտօնեայք օգնականներ

ունենան, և եթե պաշտօնեայն Հայ է, օգնականը թուրք-իսլամ լինի, և փոխադարձաբար:

Դ. Սանճագներու երկրորդական պաշտօնեայք, որք են հաշուակալ, գրագրութեանց տեսուչ և այլն, նահանգի վարչական ժողովոյ որոշմամբ ընտրուին և փոխուին և վաւերացուին վալիէն: Միայն թէ վարչային ժողովը պարտական լինի այդպիսեաց ընտրութեան և փոփոխութեան մէջ անձնիւր պաշտօնէի համար նահանգի նոյն ճիւղին գլխաւոր պաշտօնէին կարծիքն առնլու: Իսկ գազաներու երկրորդական պաշտօնեայք, ինչպէս են ելնմտից գործակալ և այլն, ընտրուին և փոխուին իրենց սանճագի միութասարիֆին և վարչային ժողովոյն միաձայն հաւանութեամբ. սակայն սոցա ընտրութեան և փոփոխութեան պատճառները յատուկ տեղեկագրով ներկայացուին վալիին, որ իւր վարչային ժողովով հանդերձ քննելէ յետոյ եթէ օրինաւոր դատէ, կը վաւերէ, եթէ ոչ՝ կը մերժէ:

Ե. Նահանգիս մէջ երկրագործութիւնը զարգացնելու, արհեստները քաջալերելու, և հասարակաց կրթութեան հսկելու համար հարկ անհրաժեշտ է հաստատել մի յատուկ պաշտօնէութիւն ընդարձակ իրաւասութեամբ, որոյ առաջին պաշտօնէին ընտրութիւնը լինելու է ճիշդ վալիին ընտրութեան եղանակաւ, իսկ նորա իշխանութեան տակ եղած երկրորդական պաշտօնեայք լինին հաւասար թուով կէտը հայ և կէս թուրք-իսլամ, զորս նահանգին վարչային ժողովը կ'ընտրէ նոյն առաջին պաշտօնէին առաջարկութեամբ և վալին կը վաւերէ:

Զ. Նահանգի վարչային ժողովը կը բաղկանայ կէտը թուրք-իսլամ և կէտը հայ վեց անդամներէ, նայիպ, միւֆթի, առաջնորդք, համարակալ, գրագրապետ, էվգաֆի պաշտօնեայ և այլն, պէտք չէ որ բնական անդամ համարուին այս ժողովոյն: Նայիպը լոկ Շէրիի պաշտօնեայ լինելով բնաւ գործ մը չունի այս ժողովոյն մէջ, իսկ միւսները կրնան ներկայութիւն և կարծիք ունենալ միմիայն իրենց իրաւասութեան վերաբերեալ խնդրոց նկատմամբ:

Է. Մէն մի սանճագ կ'ունենայ իւր վարչային ժողովը ճիշդ նահանգի վարչային ժողովին եղանակաւ ու թուովը կազմուած:

Ը. Ամէն գազա ունենայ նաև իւր վարչային ժողովը չորս անդամովք, որոց երկուսը հայ և երկուսը թուրք-իսլամ լինին:

Թ. Նահանգի կեդրոնին, սանճագներուն և գազաներուն վարչային ժողովոց անդամք երկու տարին անգամ մը կ'իստովին կը

փոխուին վերընտրելիության պայմանաւ:

Ժ. Նահանգս պէտք է որ ունենայ մի ընդհանուր ժողով ուղղակի ժողովրդէն ընտրեալ և որոշ թուով երեսփոխանաց կազմեալ, որոց կէսը հայ և կէսը թուրք-իսլամ լինելու են. զանազան ազգաց կրօնի գլխաւոր պաշտօնեայք, ինչպէս միւֆթի և առաջնորդք բնական անդամ են այս ժողովոյ: Սոյն ընդհ. ժողովոյ կը վերաբերին քննել և ստուգել նահանգին տարեկան պիտօճէն, և տրոց բաշխման եղանակները, ծախուց քանակութիւնը և մատակարարումը, և համարառու լինել վարչային բոլոր ժողովոց և այլն և այլն:

Դատարանք

ԺԱ. Նահանգիս կեդրոնը ունենայ մի դատական վերաքննութեան ատեան, որոյ նախագահը պէտք չէ որ Նայիպը լինի, այլ ուղղակի Բ. Դռնէն ընտրուելու է ճիշդ վալիին ընտրութեան եղանակաւ և ուղղակի պատասխանատու Արդարութեան նախարարութեան: Այս ատեանը ունենայ վեց անդամներ, կէսը թուրք-իսլամ և կէսը հայ:

ԺԲ. Նահանգիս կեդրոնը ունենայ մի նախադատ ատեան, որոյն նախագահն ընտրուի վալիէն, և վեց լինին անդամքն, կէսը թուրք-իսլամ և կէսը հայ. եթէ վերաքննութեան ատենին նախագահը թուրք-իսլամ է, նախադատինը հայ լինի, և փոխադարձաբար:

ԺԳ. Սանճագներն ևս ունենան նախադատ ատեաններ, որք կազմուին ԺԲ. յօդուածի տրամադրութեան համաձայն, և որոց նախագահը պէտք չէ որ նայիպները լինին, այլ վալիէն ընտրուելու են, եթէ սանճագին միթասարիֆը հայ է, նախադատ ատենին նախագահը թուրք-իսլամ լինի և փոխադարձաբար:

ԺԴ. Թէ վերաքննին և թէ նախադատ ատեանք ունենան ընդհանուր փաստաբաններ, որք վալիին առաջարկութեամբ ուղղակի Բ. Դռնէն ընտրուին, և որոց պաշտօնը լինի պաշտպանել օրինաց առջև՝ տօգէտ և զրկեալ ժողովրդեան իրաւունքը:

ԺԵ. Ամէն գազա ունենայ իր նախադատ ատեանը, որոց անդամները չորսական լինին, կէսը հայ և կէսը թուրք-իսլամ. սոցա ևս նախագահները պէտք չէ որ նայիպները լինին, այլ ընտրուին ուղղակի նահանգի վերաքննութեան ատենէն, պայմանաւ որ եթէ գազայի մը գայմագամը թուրք-իսլամ է, նախադատ ատենին

նախագահը հայ լինի, և փոխադարձաբար:

ԺԶ. Նահանգի կեդրոնն ունենայ առևտրական մի դատարան, որոյ նախագահը Բ. Դոնէն ընտրուի վալիին հաւանութեամբը, և անդամք չորս լինին. կէսը թուրք-խլամ և կէսը հայ, զորս նահանգի վարչային ժողովը կ'ընտրէ գաղտնի քուէարկութեամբ այն ընտրելի անձանցմէ միայն, որոց եռապատիկ թուով ցանկը կը պատրաստուի մի ընտրողական մասնաժողովէ, զոր նոյն վարչային ժողովն յառաջագոյն կը կազմէ քաղաքին 15-20 պատուաւոր վաճառականներէն: Իրենց եկամուտն և նորա քանակութեան ամսական թոշակ առնլու ներկայ դրութիւնը պէտք է ջնջել իսպառ, որպէս զի պաշտօնեայք ըստ այժմու սովորութեան հետամուտ չլինին դատեր փնտռելու:

ԺԷ. Սանճագներն ալ ունենան առևտրական ատեններ, կազմուած ճիշդ ըստ եղանակի նահանգի կեդրոնական-առևտրական ատենին: Նահանգի վարչային ժողովը նահանգի առևտրական ժողովին հետ միանալով կ'ընտրէ նոցա նախագահները, և վալին կը վաւերէ:

ԺԸ. Այն գազաները յորս վաճառականք կան, ունենալու են առևտրական ատեններ, որոց անդամք ըստ ԺԶ-դ, և նախագահք ըստ ԺԷ-դ յօդուածոց տրամադրութեան համաձայն կ'ընտրուին:

ԺԹ. Դատական և առևտրական բոլոր մեծ ու փոքր ատեններու անդամք երկու տարին մի անգամ կ'իստվին կը փոխուին վերընտրելիութեան պայմանաւ:

Ի. Կեդրոնի վերաքննին և նախադատ և սանճագներու նախա-դատ ատենից առաջին հարցաքննիչք կ'անուանուին արդարութեան նախարարութենէն, վալիին առաջարկութեամբ՝ թուրք-խլամ և հայ խառն: Իսկ սոցա օգնականք կ'ընտրուին նահանգի վերաքննութեան ատենէն, պայմանաւ որ եթէ առաջինք թուրք-խլամ են, օգնականք հայ լինին, և փոխադարձաբար:

ԻԱ. Արդարութեան նախարարութիւնն քննիչներ ևս կ'անուանէ այս նահանգի համար, որք ընդ իշխանութեամբ վալիին շարունակ կը շրջագայեն նահանգիս մէջ, կը հսկեն դատարանաց վրայ և պէտք եղածը կը տեղեկագրեն առ վալին:

Ոստիկանություն

ԻԲ. Հարկ է անմիջապես կազմել այս նահանգին համար մի օրինաւոր և կարող ոստիկանութիւն, երոպական արդի ժանդարմըրի դրութեամբ, որոյ թիւը լինի ճիշդ ըստ չափու պիտոյից երկրին ապահովութեան, կէսը թուրք-իսլամ և կէսը հայ, երկրին բարեկիրթ մասէն առնուած օրինաւոր և գոհացուցիչ ամսականաւ: Քիւրտ, չէրքէս և այլ վայրենի ցեղերէ մարդիկ բնաւ պէտք չէ որ առնուին սոյն նորակազմ ոստիկանութեան մէջ, նոյնպէս և ներկայ ոստիկանք և նոցա մեծ ու փոքր բոլոր սպայք, զի սոքա ևս ժանդարմըրիի դրութեան բնաւ յարմարութիւն չունեցող և շարունակ զեղծմանց վարժուած և ապիկար մարդիկ են:

ԻԳ. Ոստիկանութեան գնդապետ և մինչև հազարապետք գէթ առ այժմ երոպացի ըլլալու են, վասն զի երկիրը չունի այս դրութիւնը գործադրելու կարող մարդիկ, իսկ միւսները՝ հարիրապետ և այլն, առնուին երկրին ժողովրդէն, կէսը հայ և կէսը թուրք-իսլամ:

Տուրք

ԻԴ. Անձնիւր անհատի տալիք որ և իցէ տուրքը սահմանել ճիշդ ըստ չափու իւր կարողութեան, հիմ ունենալով արդարութիւնն ու հաւասարութիւնը:

ԻԵ. Չսահմանել բնաւ ո՛ր և իցէ նոր տուրք ըստ հաճոյս, և արդէն եղածներն ալ միացնելով՝ նուազեցունել կարելի եղածին չափ տրոց տեսակները:

ԻԶ. Աշարի ներկայ դրութիւնը՝ որ մեծապէս վնասկար դարձած է երկրին հողագործ ժողովրդեան՝ պատճառաւ այն զանազան կեղեքմանց զորս ի գործ կը դնեն միլիթզիմք և հաւաքիչք՝ վերածել հետևեալ եղանակի բաշխման.–վերջին անգամ վարձու տրուած 4-5 տարւոյ գումարները միացնելով՝ տարւոյ վրայ բաժնել, և անկէ ժողովրդեան դիրատար և միջին մի չափ գտնել, և զայն հողային տէճնիւմի վրայ բաժնել և արդէն առնուած արագի տրոց հետ ի միասին հաւաքել:

ԻԷ. Իսպառ վերցնել զապթիյէներու ձեռամբ տուրք հաւաքելու ներկայ դրութիւնը, որ վնասակար է երկրին և զանձուն հաւասարապէս, և հաւատարիմ հարկահաւաքներ սահմանել ընդ երաշխաւորութեամբ և օրինաւոր թոշակաւ:

Այլ և այլք

ԻԸ. Պէտք է որ հայերէն լեզուն միշտ թուրքերէնին հետ լծորդի այս նահանգի ամէն ատեաններու, ամէն օրինագրոց և ժողովրդեան վերաբերեալ ամէն կարգի գրութեանց և խօսից մէջ, և ճիշտ թուրք լեզուին նման պաշտօնական ճանաչուի:

ԻԹ. Նահանգիս բոլոր պաշտօնական շրջանակաց (տէվայիր) մէջ ծառայող գրագրաց կէսը թուրք-իսլամ և կէսը հայ լինին:

Լ. Իւրաքանչիւր ազգ ինքն ընտրելու է ընդհանուր, վարչային և դատական ժողովոց համար իրմէ առնուելիք անդամները՝ իր յարմար դատած եղանակաւ, զի բնական է որ անձնիւր ընտրելոյ արժանիքը ատելի իր համազգեաց ծանօթ է:

ԼԱ. Ո՛ր և իցէ մեծ ու փոքր պաշտօնեայք պաշտօնանկ չլինին՝ առանց օրինաբար յանցանքնին հաստատուելու: Պարտաւորութիւննին լաւ կատարող պաշտօնեայք առանց կրօնի և ազգի խտրութեան վարձատրուին, իսկ պարտազանցք պաշտօնեայք պատժուին անաչառօրէն:

ԼԲ. Յատուկ կանոնագրութեամբ բացորոշապէս գծուին վալիէն սկսեալ մեծ ու փոքր բոլոր պաշտօնատարաց և ժողովոց պաշտօններու պատասխանատուութիւնք և իրաւասութիւնք և ըստ այնմ գործադրուի ճշդի:

ԼԳ. Հարկ անհրաժեշտ է ի նկատի առնուլ այս նահանգի ներկայ սահմանն ու աշխարհագրական դիրքը, և նորա մանրամասն քարտէսը գծել. ներկայ բաժանումը շատ անկանոն է, զորօրինակ, Սպեր, Կիսկիմ, Թորթում, որ երբեմն գատ գատ գազաներ էին, և պէտք էր որ մնային այնպէս, յետոյ մէկ գազա եղած են միացեալ, ինչպէս նաև Կարնոյ դաշտը իւր ընդարձակութեամբ կրնայ երկու օրինաւոր գազաներ կազմել, և այլն, ուստի նահանգի բոլոր ներկայ բաժանմունքը բարեփոխելով՝ գազաներու թիւը պէտք եղածին չափ ատելու է:

ԼԴ. Դատարանները չունին իրենց յատուկ կատարեալ օրէնքներ, զի արդէն եղածներն ալ շատ թերի են. մէճէլլէն ճիշդ Շէրիի օրինաց թրքերէնի թարգմանութիւնը լինելով՝ պէտք չէ որ քաղաքական օրինաց կարգը անցնի, և այնպէս գործադրուի դատարանաց մէջ: Պէտք է ի նորոյ պատրաստել քաղաքական, հողային և այլն, ամէն օրէնքները կատարելապէս, քաղաքակիրթ

աշխարհէն ընդունուած ազատական սկզբանց վրայ հիմնեալ՝
յապահովութիւն արդարութեան:

ԼԵ. Քրիստոնէից դատական, ոճրագործական, առևտրական,
կալուածական, ժառանգական և հողային բոլոր դատերը թէ իրենց
մէջ լինին, և թէ իսլամաց հետ, պէտք չէ որ Շէրիի ատեանները
դրկուին, մինչև իսկ եթէ իրենք ևս ուզելու լինին, այլ տեսնուելու
են այն քաղաքական դատարանաց և ատենաններու առջև, որոց
կը վերաբերին ըստ դատերու բնութեան: Հայն իր ազգային
ժողովոց միջոցաւ ընելու է իր ժառանգութեան բաշխման (գասամ)
գործողութիւնները, առանց միջամտութեան Շէրիի դատարանաց:

ԼԶ. Պէտք է որ նահանգիս բոլոր մեծ ու փոքր պաշտօնեայք
և ժողովոց անդամք թոշակ առնուն ամսէ ամիս և արդար չսփոփ,
ջնջուի ձրի և նուազ թոշակաւ պաշտօնեայ գործածելու ներկայ
վսասակար դրութիւնը:

ԼԷ. Նահանգի ընդհանուր եկամտէն բոլոր պաշտօնէից օրինաւոր
թոշակաց և պաշտօնատանց անհրաժեշտ պիտոյից՝ ինչպէս նաև
երկրին զարգացման և ժողովրդեան յառաջադիմութեան համար
ամենակարևոր եղող ճանապարհաց և այլ հանրային շինութեանց
և հասարակաց կրթութեան համար պէտք եղած գումարը ծախս-
ուելէն յետոյ, աւելորդը միայն յատկանայ կայսր. գանձուն, եթէ
ոչ՝ ներկայ դրութեամբ, այսինքն ընդհանուր եկամտին մէկ չոր-
րորդը միայն երկրին բոլոր պիտոյից համար ծախսուով ո՛ր և իցէ
վարչային բարեկարգութիւն և երկրին զարգացման յաջողութիւնը
բացարձակապէս անհնարին է:

ԼԸ. Որովհետև արդէն հաստատուած է թէ բռնաւոր և ազ-
դեցիկ անձինք յաջողած են շատ տեղեր ո՛ր և իցէ միջոցներով ժո-
ղովրդեան ձեռքէն յափշտակել և իրենց վրայ թափու ընել նոցա
այն հողերը, զորս նոքա տարիներով վարած և մշակած էին, ուստի
խառն յանձնաժողով մը կազմուի կէսը հայ և կէսը թուրք-իսլամ
անդամներով, և այս հողային խնդիրը հոն քննութեան ենթարկելով
արդարութիւնը գործադրուի:

ԼԹ. Իսիստ հսկողութեան ենթարկել մահմետական կրօնի
պաշտօնեայներէն տգէտ և մոլեռանդները, որպէս զի կրօնը մի-
միայն հոգւոյ փրկութեան տեսակէտ բռնելով՝ հաւասարութեան և
եղբայրութեան ոգի ներշնչեն մահմետական ժողովրդեան մէջ:

Խ. Երբէք չընդունուին քսան տարին չի լրացուցած ո՛ր և է ան-

հատի, նոյնպես առևանգեալ կանանց և օրիորդաց ինչ հասակի ալ որ լինին կրօնափոխութեան յայտարարութիւնները և խիստ պատժոյ ենթարկուին առևանգող չարագործք:

ԽԱ. Զինաթափ ընել քուրդ, չէրքէս և այն ամէն անձեր, որք ամէն տեղ անհրաման և աներաշխատոր զէնք կը կրեն ազատ համարձակ, և գրաւել՝ ըստ օրինաց քաղաքակիրթ ազգաց բոլոր արքունի զէնքերը, ապա թէ ոչ զէնք տալ և Հայոց և ներել որ իրենք ալ կրեն ի պաշտպանութիւն կենաց, ընչից և պատուոյ:

ԽԲ. Տրուել քրդերու աշայիրները, և հատուածներու բաժանելով բնակեցնել մէն մի հատուած զատ զատ և յարմարաւոր տեղեր, և իրենց աշխատութեան արդեամբք ապրուստ ունենալու պարտաւորել:

ԽԳ. Կառավարութիւնը բնաւ չսպասէ և չպահանջէ որ զրկեալը բողոք բառնայ զրկողին դէմ: Ընդհանրապէս ոչ ոք պիտի համարձակի ազատօրէն ներկայել իւր բողոքն. զի նա քանիցս որ բողոքած է ցարդ, կամ բնաւ կարևորութիւն տրուած չէր իւր բողոքոյն, և կամ զրկողն անպատիժ մնացած է շնորհիւ պաշտպանութեան քաղաքաբնակ ազդեցիկ մեծամեծաց՝ կամ այլևայլ միջոցներով, և այսպէս ազատ ձգուած միշտ՝ յաջողած է վրէժ լուծել իւր բողոքողէն սաստկապէս. Ուստի հարկ անհրաժեշտ է որ կայսերական կառավարութիւնն իրենց երկրէն հանէ բոլոր աշայիրներու ցեղապետները (թոռուն, էլաղասի) և գիւղերու մէջ բնակող չարագործ պէյերն ու աղաները հանդերձ ընտանեօք և ազգականօք, և արքորէ Արաբիոյ խորերը անդառնալի կերպի:

ԽԴ. Այսպիսի չարագործաց քաղաքաբնակ պաշտօնական և անպաշտօն պաշտպանները հանելով իրենց տեղերէն բնակեցունել նահանգէս դուրս ուրիշ հեռաւոր երկիրներ, այլ ևս չվերադառնալու պայմանաւ:

ԽԵ. Կարս և Չըլտըր սանճագներէն այս կողմերը գաղթող քուրդ, չէրքէս, թէրէքէմէ, և թուրք գաղթականները չբնակեցունել Հայաբնակ գազաներու և գիւղերու մէջ կամ նոցա բոլորտիքը, այլ փոխադրել ոչ-Հայաբնակ հեռաւոր երկիրներ:

ԽԶ. Վերջ տալ կայսերական կանոնաւոր զօրաց և մանաւանդ պաշտպանութիւններու և չէրքէսներու զանազան կեղեքմանց, որք միշտ ի գործ կը դրուին գիւղօրէից և քաղաքաց մէջ: Երբէք չի բնակեցունել զօրքերը քաղաքաց և գիւղօրէից ժողովրդեան տուներու մէջ, այլ

զօրանոցաց և պահականոցաց մէջ միայն, և եթէ կան այնպիսի տեղեր, ուր պէտք է զօրք պահել և զօրանոցք չկան, ի նորոյ շինել: Արգելուլ խստիւ որ բնաւ մէկ զինուոր կանոնաւոր կամ անկանոն ուղղակի ժողովրդէն չպահանջէ, և ոչ առնու ճ և է բան, այլ զօրաց ամէն պիտոյքը հոգացուին տեղական կառավարութեան միջոցաւ:

Վերջաբան

Մեր կայսերական կառավարութիւնն անշուշտ հաստատապէս որոշած և ձեռնարկած է բարոքել մեր ազգին ներկայ աղէտալի վիճակը, որուն ազգային իրաւունքները այսքան տարիներէ ի վեր ոտնակոխ լինելէն չարաչար և անընդհատ տառապած է, և այս եթէ յայսմիտէ ևս շարունակուի, արդէն նիւթապէս և բարոյապէս հոգեվարքութեան հասած ազգի մը ընդհանրութեան մահը վճռել ըսել է, այն ազգի՝ որ ի սրտէ կը փափաքի անդորր և ապահով մնալ ընդ հովանեաւ Օսմանեան պետութեան, որոյ շուրջը պատած են քաղաքակրթութեան անհուն ասպարիզին մէջ մեծաքայլ յառաջադիմող ազգեր:

Տէրութեան մը գոյութիւնն ու անբուրմը կախում ունի նորա ժողովրդեան վիճակէն: Երբ տէրութեան մը կամ ազգի մը վերակենդանութիւնը հնարաւոր է, որ և մինչև իսկ ի ձեռին կայ, առ այս ճ և է յուսահատական վարանում բնաւ չկրնար արդարանալ: Մենք բացարձակապէս համոզուած լինելով թէ տէրութեան և ժողովրդեան զօրութիւնն ու մեծութիւնը ուրիշ կերպով չկրնար գոյանալ և հաստատ մնալ, եթէ ոչ այս այժմու ասպարդին յոռի դրութեան բարեփոխութեամբը, ահա սոյն տեսակէտով համարձակեցանք մատուցանել առ Ձեզ սոյն ծրագիրը՝ բաղկացեալ ի մի յառաջաբանէ և ի 46 յօդուածոյ, աղաչելով որ հաճիք ուշադրութեան առնուլ և յանձնել վեհանձնական շնորհաց Նորին Կայսերական Վեհափառութեան:

Կարին 1879 յունիս 27.⁴⁷

Հայերի ազգային իդէալի իրագործումը պիտի տեղի ունենար եւրոպական դիւանագիտութեան կամեցողութեամբ: Եւ ահա վե-

⁴⁷ «Փորձ» ամսագիր 1879 թ., № 9, եր. 181-197:

րին աստիճանի կարևոր մի հարց.– Խնչպես էր ինքն այդ դիանագիտութիւնը հասկանում 61-րորդ յօդուածի «բարութումներն ու բարենորոգումները»:

Երեսուն և վեց տարուայ ընթացքում, Բերլինի Վեհաժողովից յետոյ մինչև այժմ, երոպական դիանագիտութիւնը երեք անգամ է փոքր է շատէ լուրջ քայլեր արել հայոց հարցը գործնականապէս լուծելու համար: Այդ գործողութիւնները արտայայտուած են այն գրագրութիւնների մէջ, որոնք փոխանակուած են Բ. Դռան և պետութիւնների մէջ և որոնք մի կողմից թիրք կառավարութեան վերաբերմունքն են ցուցադրում, միա կողմից պարզաբանում են պետութիւնների հայեացքներն ու մեծագոյն պահանջները:

Առաջին անգամ հայկական հարցի արծարծումը տեղի ունեցաւ 1880-ին, Անգլիայի նախաձեռնութեամբ և բոլոր վեց մեծ պետութիւնների դեսպանների հաւաքական գործակցութեամբ: Ահա այդ գործողութեան վերաբերեալ վաւերաթղթերը.–

№ 15

ԱՊԷՏԻՆ ՓԱՇԱՅԻ 1880 ՅՈՒԼԻՍ 5 ԹՈՒԱԿԱՆԱԻ ԾԱՆՈՒՑԱԳԻՐՆ⁴⁸

Պ. Դեսպան

Պատիւ ունիմ պատասխանելու Ձեր Վսեմութեան Յունիս 11-ի Ծանուցագրի (note) այն մասին՝ որ Պէրլինի Դաշնադրութեան 61-րդ Յօդուածին պայմաններուն կը վերաբերի. պայմաններ՝ որ միևնոյն Յօդուածին վերջին հատուածին մէջ բացայայտ դրուած են:

Պատերազմին հետևանք եղող ամեն տեսակ մտազբաղումներու և դժուարութեանց հակառակ՝ Օսմանեան կայսերական կառավարութիւնն միշտ ի մտի ունեցաւ այս պայմաններու գործադրութիւնը. և Քիրտիստանի ամեն մասերուն և ուրիշ վիլայէթներու մէջ բազմաթիւ ձեռնհաս պաշտօնատարներ դրկեց՝ որոց պաշտօնն էր միայն ամենէն աւելի ազդու միջոցներն փնտռել թէ՛ Հայոց և թէ՛ Նորին Կայսերական Վեհափառութեան՝ Սուլթանին՝ հաւատարիմ միա հպատակներուն անդորրութիւնը ապահովելու, և վերջապէս նշանակելու համար միևնոյն միջոցներու կիրառութեան եղանակը.

⁴⁸ Դիան Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի:

անձամբ իսկ գործադրելով ինչ ինչ միջոցներ՝ իրենց շնորհուած իրաւունքին համեմատ: Այս Յանձնաժողովներէն զատ՝ անձանօթ չէ նաև՝ թէ կարճ ժամանակի մը մէջ Օսմանեան կառավարութիւնը որոշեց Նիզամիէ ատեաններէն բաժնել գործադիր իշխանութիւնը Երոպայի մէջ ի գործ դրուածին համաձայն, թէ՛ կը ջանայ լաւ կազմակերպութիւն մը տալ անոնց և ամեն ուրեք տուրքի և տասանորդի հաւաքման նոր եղանակ մը հաստատելու անհրաժեշտ փորձառութիւնն ընել՝ բնակիչներու հանգիստ ու հանդարտութիւնը ապահովելու համար, թէ՛ վերջապէս սկսած է հաստատել տեղ տեղ քաղաքապահ զօրք և ոստիկանութիւն՝ բնիկ և օտար բազմաթիւ մասնաւոր սպայներու պաշտօն տալով ներկայացնել Օրինաց Ծրագիրներ այս երկու Հրահանգներու (institutions) վրայ, և ի նկատ առնով ամեն ինչ որ նպաստաւոր կրնայ ըլլալ անոնց յաջողութեանը:

Այս քննութիւններէն կը հետևի՝ թէ ժողովուրդներու նկարագրին և պէտքերուն ամենէն աւելի յարմարող բարեկարգութեանց մէջէն այժմ իսկ իբրև ամենէն աւելի ստիպողական և արդիւնագործ ընդունուածներն կը կայանան գիւղախմբերու կազմակերպութեան և բաշխումին՝ ինչպէս նաև եղեռնադատ ատեաններու հաստատմանը վրայ:

Կարևոր կը համարիմ ուրեմն քանի մը մանրամասնութեանց մտնել այս երկու կէտերու վերաբերմամբ, որ սահմանուած են երաշխաւորել՝ ապահով և ստոյգ եղանակաւ՝ հասարակաց կարգն ու անդորրութիւնը:

Իրաքանչիւր գաւառակ պիտի բաժնուի գիւղախմբերու՝ որք իրենց կարգին՝ պիտի պարունակեն մէկմէկու մերձաւոր գիւղերու խումբեր:

Գիւղախմբական ժողովներն պիտի ընտրուին բնակիչներու ձեռամբ, և կառավարութիւնը պիտի անուանէ գործադիր իշխանութեան վերաբերեալ ինչ ինչ իրաւունքներ ընդունած գիւղախմբական վարիչ ժողովականներէն մին: Այս վարիչներն կախում պիտի ունենան գաւառակապետներէն (Sous-Préfets) և թաղապետական պաշտօններն ալ պիտի կատարեն հաւասարապէս: Պէտք է որ զիրենք ընտրող բնակիչներու մեծամասնութեան կրօնին վերաբերին, և այս պարագայի մէջ իրենց իբր օգնական (adjoint) պիտի ունենան փոքրամասնութեան կրօնը դաւանող անձեր: Իրենց պաշտօններու գործադրութեան մէջ ժողովրդին քուէովն ընտրուած՝ չորսէն վեց

անդամներէ բաղկացած խառն ժողովի մը աջակցութիւնն պիտի ընդունին: Վերը յիշատակուած վարիչներն ու գիւղախմբական ժողովներն առաջին անգամ միայն պիտի անուանուին գաւառակապետներու վարիչ ժողովներէն, և այդ ժողովները պիտի ընտրեն զանոնք իւրաքանչիւր տեղերու բնակիչներու մէջէն:

Իւրաքանչիւր վարիչ իւր հրամանին ներքեւ պիտի ունենայ քաղաքապահ զօրք, որուն թիւը տեղւոյն իրական պէտքերուն համեմատութեամբ պիտի կրնայ անելնալ: Այդ զինեալ զօրութեան գործը պիտի ըլլայ ապահովել գիւղախմբին կարգն ու անդորրութիւնը, ձերբակալել չարագործներն ու սրիկայներն, և պաշտպանել բնակիչներն ամեն բռնութեան և կեղեքումներու դէմ: Քաղաքապահ զօրքերու ամեն մէկ դասակը պիտի կրնայ միւս գիւղախումբերու քաղաքապահ զօրքերուն օժանդակութիւնը կամ գործակցութիւնը խնդրել՝ միասին գործելու և աւագակներու ձերբակալման մէջ յաջողելու համար:

Վերը յիշատակուած գործակալներէն զատ՝ իւրաքանչիւր նահանգի մէջ պիտի կազմակերպուի՝ մասնաւոր կանոնագրի մը ուժով՝ նահանգային քաղաքապահութեան մարմին մը, որուն սպայներն ու զինուորներն պիտի ընտրուին կայսրութեան հպատակ եղող բոլոր դասակարգելու մէջէն, և որ պիտի դրուի նահանգապետներուն հրամաններուն ներքեւ, գաւառապետներու և գաւառակապետներու տրամադրութեան տակ դրուելու համար: Իբրև հրամանատար ներ (commandants) պիտի ունենայ փորձառու սպայներ, և օգնական ու ձեռնտու պիտի ըլլայ ամեն անգամ որ գիւղախումբերու մէջ գտնուող քաղաքապահութեան գործակցութիւնը խնդրուի:

Ներկայ ծանուցագրի շրջանակէն դուրս կը մնայ թուարկութիւնն այն ամեն առաւելութեանց, զորս կ'ընծայէ նախագծեալ կազմակերպութիւնը: Բաւական է հաստատել միայն՝ թէ հաւասարապէս ազդու միջոց մը պիտի ըլլայ այն, անելցնելու համար գիւղախմբական դպրոցներու թիւը, յառաջդիմութիւն տալու երկրագործութեան և բարւոքելու համար հաղորդակցութեան ճանապարհներն՝ վարիչներուն և գիւղախմբական ժողովներուն խնամքովը:

Սէլանիկի նահանգապետութեան գաւառակներէն մէկուն մէջ ստացուած միւնոյն փորձառութիւնը կարճ միջոցի մէջ յառաջ բերաւ լաւագոյն արդիւնքներ ի մեծ գոհունակութիւն տեղական

ժողովուրդին: Այդօրինակ միջոցի մը գլխավոր արգասիքը պիտի ըլլայ ուրեմն ամուր խարիսխներու վրայ զետեղել հասարակաց և անհատական ապահովութիւնը:

Այս ապահովութիւնը երաշխաւորելու համար ուրիշ զօրաւոր մէկ միջոցն ալ եղեռնադատ ատեաններու սահմանումն է, ինչպէս ըսինք: Այս ատեաններն կարգ ըստ կարգէ պիտի երթան այն գաւառակներն, ուր իրենց ներկայութիւնն անհրաժեշտ պիտի նկատուի և հոն պիտի դատեն ոճիրները: Դատ վարելու այսպիսի եղանակ մը մեծամեծ առաւելութիւններ կ'ընծայէ, քանի որ նախնական հարցաքննութիւն և դատաստան շատ ւաւելի դիւրո-թեամբ պիտի կատարուին իրենց տեղերուն վրայ՝ քան եթէ դատը ենթարկուէր սանճագներու եղեռնադատ մնայուն ատեաններուն. վասն զի շատ անգամ կը պատահի որ անոնք՝ որոց վկայութիւնն անհրաժեշտ համարուած է, յանձն չեն առնուր այս վերջիններուն առջև երևիլ, և նոյն իսկ իբրև վկայ ներկայանալ, մեծ հեռաւորութեան, հաղորդակցութեան դժուարութեանց, ժամանակի կորուստի և մեծաքանակ ծախքերու պատճառաւ. բաներ՝ որ բռնի կը խափանեն դատաւորութեան ազատ ընթացքը:

Օսմանեան կառավարութիւնը արդէն հասարակաց պաշտօններու մէջ ընդունած է կարող և պարկեշտ անձեր՝ առանց կրօնական խտրութեան: Այսուհետև այս իրողութիւնն ալ ւաւելի լայն կիրառութիւն մը պիտի գտնէ, և Բարձրագոյն Դուռը ձեռք պիտի առնու ինչ որ կրնայ արդեամբք իրականանալ:

Նոյնչափ կարևոր միջոց մ'ալ կայսերական կառավարութեան ուշադրութիւնը գրաւած է. այն է, արթուն հսկել կրթութեան և հասարակաց աշխատութեանց յառաջդիմութեան, որ երկրի մը երջանկութեան գլխավոր պատճառն է: Հետևաբար՝ ի բաց առեալ իւրաքանչիւր նահանգի մաքսերու՝ աղի և ծխախոտի՝ ինչպէս նաև եկամուտներն բարեպաշտական հաստատութեանց (էվգաֆ)՝ որոց յանձանձանքն հասարակութեանց (communaute's) ժողովներուն անկ է. մէկ տասներորդը պիտի առնուի նահանգին վարչական պէտքերուն համար գործածուած ծախսերու մնացորդէն, ծախքեր՝ որ պիտի հայթայթուին միւսնոյն նահանգի միւս ընդհանուր եկամուտներովը. և յառաջիկայ տարւոյն սկիզբէն նահանգին տրամադրութեանը տակ պիտի դրուի այն՝ ի պէտս կրթութեան և հասարակաց աշխատութեանց: Հարկ չկայ ըսելու թէ այդ մասնաւոր

ծախսագումարը (allocation) պիտի բարձրանայ ցորչափ պետութեան եկամուտներն աւելնան:

Կատարեալ կանոնագիր մը նահանգաց մասին, կանոնագիր մը՝ որ իրեն խարիսխ ունի փորձառութիւնն, ու տեղերու վրայ կատարուած քննութիւններն ուսումնասիրուելու վրայ է: Քիչ ատենէն ընդհանուր գործածութիւն մը պիտի ստանայ Ասիական Թուրքիոյ բոլոր նահանգներու մէջ: Նոյնպէս նահանգապետներու իրաւունքներն աւելի պիտի ընդարձակուին և իրենց պաշտօններն պիտի երաշխաւորուին:

Ասոնք են, Պ. Դեսպան, մասնաւոր կանոնաւորմանց այն գլխաւոր կէտերն՝ որ գործադրութեան պիտի դրուին:

Նախագրեալին ծանօթացնելով զՁեզ՝ դառն է ինձ հաւաստել, որ ամեն անգամ երբ հասարակաց իրաւունքի ոճիրներ՝ որոց պատահումը բնական է աշխարհի ամեն երկիրներուն մէջ՝ գործուին նաև Հայոց բնակած տեղերուն մէջ, կրքոտ մտքեր կարծես պաշտօն ունին հնարելու երևակայական եղեռնագործութիւններ՝ միաներու վրայ աւելցնելու համար, ներկայացնելով զանոնք իբրև իրականութիւններ յաչս Երոպացոց և այս տեղերը գտնուող ժողովներուն առջև:

Վերջացնելով՝ պարտք կը համարիմ բացորոշ և ճշգրիտ եղանակաւ հաստատել Ձեր Վսեմութեան, թէ Վանի, Տիարպէքիի, Պիթիսի, Էրզրումի և Սվազի Հայ բնակիչներու պաշտօնական մարդահամարն հետևեալ արդիւնքը տուած է: Այս վերջիններու թիւը կը բարձրանայ հարիւրին 17-ի, միա ոչ-մսլիման հասարակութեանցը՝ հարիւրին 4-ի, իսկ մսլիման բնակիչներունը հարիւրին 79-ի:

Աւելորդ կը համարիմ յայտնել թէ Բարձրագոյն Դուռը Պէդիինի Դաշնադրութիւնն ստորագրող պետութեանց պիտի ծանուցանէ այն ամեն միջոցներն, զորս ձեռք առած է ինքն հետզհետէ բարեկարգութիւններ մտցնելու համար Քիւրտիստանի և Ասիական նահանգներու մէջ՝ ուր կը բնակին նաև Հայք:

Հաճեցէք ևն,

(Ստորագրեալ) Ապետին:

№ 16

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ՎԵՑ ՄԵԾ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ
ԴԵՍՊԱՆԱՑ՝ Բ. ԴՐԱՆ ՄԱՏՈՒՑԱԾ ՀԱՒԱՔԱԿԱՆ
ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ⁴⁹**

Կ. Պոլիս, 7 Սեպտեմբեր 1880

Պարոն Նախարար

Ստորագրեալք ընկալան վերջին Յուլիս ամսոյ 5 թուականաւ ծանուցագիրը, որով Բ. Դուռը պատասխանած է՝ իրենց Յունիս 11-ի պաշտօնագրոյն այն պարբերութեան, որ Օսմանեան Պետութեան՝ Պէդլինի Դաշնագրոյն 61-րդ յօդուածով՝ հայաբնակ նահանգաց մէջ ներմուծել յանձն առած վարչական բարոքմանց և բարենորոգմանց կը վերաբերի:

Նոյն ծանուցագրին մտադիր ուսումնասիրութիւնը ապացուցած է իրենց՝ թէ Օսմանեան Պետութեան կողմանէ նշանակեալ առաջարկութիւնք չեն համապատասխաներ յիշեալ յօդուածոյն ո՛չ ոգւոյն և ո՛չ տառին:

Ստորագրելոցս ներկայացուցած Տէրութիւնները չեն անգիտաւնար թէ Օսմանեան Պետութիւնը երկու Յանձնախումբ յուղարկած է հայաբնակ նահանգները, բայց բանաւոր պատճառներ ունին խորհելու միանգամայն թէ անոնց պաշտօնը և ոչ մի արդեան յանգած չէ. և Բ. Դուռը հակառակ այն պարտաւորութեանց՝ որ կը ծագին իրեն համար 61-րդ յօդուածէն, ետ կեցած է նոյն տնօրինութիւնները իրենց ծանուցանելէ:

Ոչինչ չապացուցաներ թէ ո՛րևիցէ բարտքում ներմուծուած լինի արդարութեան վարչութեան մէջ. ընդհակառակն՝ հիւպատոսական բազմաթիւ տեղեկագրեր կը հաստատեն՝ թէ քաղաքային կամ եղեռնական դատարաններու անկախութեան խնդիրն իւր այժմու վիճակին մէջ անցելոյն բաղդատմամբ՝ եթէ ոչ յռեգոյն, գէթ նոյնչափ նուազ գոհացուցիչ է:

Իսկ զինակիր պահանջորդութեան և ոստիկանութեան խնդրոց գալով, Յուլիս 5-ի ծանուցագիրը կը հաստատէ թէ Բ. Դուռը

⁴⁹ Դիւան Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի:

պատուիրած է քանի մը յատուկ սպայներու, որ տոյն երկու պաշտօնէութեանց վերակազմութեան մասին ծրագրեր ներկայացունեն:

Տէրութիւնք այդ ծրագրոց վրայ տեղէկութիւն առած չեն և Օսմանեան Պետութիւնը չէ կարող հաստատել անգամ թէ անոնք ներկայացուած են իրեն:

Ստորագրեալք չեն կրնար ընդունիլ ուրեմն թէ Ձեր Վսեմութեան պատասխանագիրն՝ իրենց Յունիս 11-ի ծանուցագրոյն արտայայտած գանգատանաց ամենափոքր զոհացում մը տուած լինի: Ասկէ զատ՝ նոքա այնքան առաւել իրաւունք կը կարծեն ունենալ Օսմանեան Պետութեան այս մասին ի փորձ դրած ճգանց անբաւականութիւնը ցցնելու, նոյն իսկ պատասխանագրոյն պարունակութենէն դատելով, Պէդլինի Դաշնագրին իւր վրայ դրած պարտականութեանց և յառաջ բերած կացութեան վրայ նուազ ճիշդ ըմբռնում մ'ունի:

Հայաբնակ նահանգաց մէջ տեղի ունեցած կամ իբրև այնպէս նշանակուած եղեռնաց մասին Բ. Դրան տալ կարծած բացատրութիւններուն բառերն իսկ կ'ապացուցանեն, որ նա կը զլանայ խոստովանիլ յիշեալ նահանգաց մէջ տիրող անհշխանութեան աստիճանն և ծանր կշռութիւնը իրաց վիճակի մը, որոյ յարատևումն, ըստ ամենայն հաւանականութեան, այն ընդարձակ գաւառաց մէջ բնակող քրիստոնեայ ժողովրդոց բնաջինջ լինելուն առիթ պիտի ըլլայ:

Յուլիս 5-ի ծանուցագիրը և ոչ մի լուրջ առաջարկ կը պարունակէ Չէրքէսներու և Քրդերու ծայրայեղութեանց վախճան տալու դիտմամբ: Եւ սակայն երկնչելի է թէ հասարակաց օրէնքներու գործադրութեամբ այդ ապերասանութեանց առաջըը չկարենայ առնուիլ: Միայն արտաքոյ կարգի խստութեան միջոցներով կարելի է վերջ տալ այնպիսի բռնութեանց, որ 61-րդ յօդուածին մէջ նշանակուած նահանգաց մի շատ մասերուն մէջ մշտնջենաւոր վտանգ մը առաջ կը բերեն Հայերու ընչից, պարտոյն և կենաց դէմ:

Պէդլինի Դաշնագրոյն 61-րդ յօդուածով Բ. Դուռը յանձն առած է՝ «Հայաբնակ նահանգաց մէջ՝ տեղական պիտոյից պահանջած բարութումներն և բարեկարգութիւններն, առանց այլ ևս յապաղման, ի գործ դնել»:

Ստորագրեալք ցաւ ի սիրտ կը հաստատեն թէ՛ Յուլիս 5-ի ծանուցագրով նշանակուած ընդհանուր բարենորոգմանց մէջ՝

յիշեալ յօդուածին տրամադրած տեղական պիտոյքը՝ և ոչ մէկ կերպով ի հաշի առնուած են:

Անշուշտ՝ տէրութիւնք գոհունակութեամբ պիտի ընդունին Օսմանեան Կայսրութեան ամէն կողմանց մէջ ընդարձակ բարենորոգմանց ներմուծումը. բայց՝ նոքա, նախ քան զամենայն, Պէռլինի Դաշնագրոյն լիովին գործադրութիւնը կը պահանջեն, և չեն կրնար հաւանիլ, որ Բ. Դուռն մի այնպիսի վերանորոգում առաջարկելով՝ որ նոյն դաշնագրոյն նշանակած նահանգներուն ի նպաստ պայմանադրուած յատուկ բարենորոգումներէն և ոչ մին կը պարունակէ, այս մասին իւր յանձն առած պարտաւորութիւններէն ինքզինքը զերծեալ կը նկատէ:

Ասկէ զատ նոյն նահանգաց մասնաւոր նկարագիրն ըլլալով, լայնածաւալ գաւառաց մէջ քրիստոնեայ տարրին գերիշխանութիւնն, այս իրողութիւնն ի հաշի չառնող ո՛ր և է բարենորոգում չկրնար գոհացուցիչ հետևանք մի ունենալ:

Ստորագրեալք, նոյն նահանգաց ընծայած մի այլ հանգամանքն ևս ի հաշի առնուլն պարտ անհրաժեշտ կը վարկանին: Բ. Դուռը՝ Հայոց և Քրդաց համար միևնոյն կանոնագիրը սահմանելու կամք կը ցուցնէ: Նախ և առաջ պարտ ու պատշաճ է՝ ըստ վարչութեան՝ անջատել զանոնք, որքան գործնականապէս կարելի է. քանզի բնակաւոր ժողովուրդներն ու կէս թափառիկ ցեղերը՝ միևնոյն եղանակաւ կառավարելը բացարձակապէս անկարելի է:

Շտուկապէս, գիւղախմբերու և վարչական խումբերու (groupes administratifs) բաշխումն ընդհանրապէս այնպէս պէտք է գործադրուի, որ կարելի եղածին չափ՝ համասեռ տարրեր՝ ի մի վայր ժողոված լինին: Բաշխման միտումը պէտք է ըլլալ Հայոց, և կամ ըստ հարկին, Հայոց և Թրքաց համախմբուիլը, ի բաց թողլով զՔուրդ:

Շտուկաբար, իւրաքանչիւր գիւղախմբի բնակչաց մեծամասնութիւնն որոշող վիճակագրական ցուցակաց մէջ պէտք չէ մուծանել թափառիկ Քուրդ տարրը, որ լերանց մէջ կ'ապրի, և որ քրիստոնէաբնակ դաշտաց մէջ անկարգութիւն սփռելու համար միայն կ'իջնէ:

Կարելի է ենթադրել՝ թէ Բ. Դուռը Յուլիս 5-ի ծանուցագրով առաջարկուած գիւղախմբական կազմակերպութեան մէջ, համակրօն բնակչաց մեծամասնութենէն գոյացած առաջին աստիճանի

վարչական խումբեր հաստատելու միջոց մը նշմարած լինի: Եւ սակայն ոչինչ չյայտներ այն գրութեան մէջ՝ թէ Բ. Դոուն այդ սկզբան կիրառութիւնը յանձն կ'առնու:

Ստորագրեալը գոհութեամբ սրտի կը տեսնեն, թէ առաջադրեալ կազմակերպութեան մէջ՝ մէն մի գիւղախմբապետ տեղւոյն մեծամասնութիւնը գոյացնող կրօնական հասարակութեան պիտի վերաբերի: Բայց բարձրագոյն կարգի պաշտօնէից նկատմամբ նմանօրինակ տրամադրութեան մը չգոյութիւնը՝ յայտնապէս կ'ապացուցանէ՝ թէ առաջարկեալ վերանորոգմունք չեն ըստ բաւականին ի հաշիւ առնուր 61-րդ յօդուածոյն ակնարկած նահանգաց տեղական պիտոյքը:

Օսմանեան Պետութիւնը կը յայտարարէ, թէ պարկեշտ և կարող անձերը, առանց կրօնի խտրութեան, հասարակաց պաշտօններու մէջ ընդունած է արդէն, և թէ այսուհետև սոյն իրողութիւնը ընդարձակագոյն կիրառութիւն մը պիտի ստանայ: Այս յայտարարութիւնը յոյժ ճապաղ է, և ստորագրեալը կը խորհին՝ թէ այս կէտին վրայ պնդելն այնքան հարկաւորագոյն է, որքան որ Հայք կը հաստատեն, թէ իրենց մեծամասնութեամբ գտնուած նահանգաց մէջ գրեթէ Հայ չկայ, որ հասարակաց պաշտօնի վրայ գտնուի: Նոցա պահանջքն այս մասին այնչափ առաւել օրինաւոր կը թուի, որչափ որ կարելի է թէ Բ. Դրան նոյն նահանգաց վրայ քրիստոնեայ կառավարիչներ կարգելովն հանդերձ, վարչութեան մէջ աւելի արդարութիւն և իրաւասութիւն գտնելու մասին՝ դարձեալ Հայոց համար մեծագոյն վստահութիւն մը չգոյանայ:

Վասն որոյ, Օսմանեան Պետութեան ծանուցագրոյն պարունակած տնօրինութիւններէն շատ աւելի ընդարձակ տնօրինութեանց պէտք կայ. որպէս զի Բ. Դուռը Պէդլինի մէջ յանձն առած պարտաւորութիւնները կատարած լինի:

Առաջարկեալ բարենորոգմանց անբաւականութիւնն, ընդհանուր առմամբ, այնքան մեծ է, որ գրեթէ անօգուտ է Բ. Դրան ծրագրոյն պակասութեանց վրայ վիճաբանիլ: Բայց և այնպէս, յետագայ դիտողութիւնք ինքնին կը ներկայանան մտաց:

Նախ և առաջ՝ Բ. Դուռը յայտարարելով թէ գիւղախմբապետք, փոխանակ նոյն իսկ գիւղախմբական խորհրդէն ընտրուելու, պէտք է լինի տէրութեան պաշտօնեայնէր, զորս կեդրոնական իշխանութիւնը պիտի ընտրէ գիւղախմբական խորհրդոյն ընտրեալ

անդամոց մէջէն, վարչական դասակարգութեան մինչև ցյետին աստիճանը տարուած կեդրոնացման սկզբունքը կը հաստատուէ: Միւս կողմանէ՝ գիւղախմբապետներու և գիւղախմբական խորհրդոյ անդամոց նկատմամբ Բ. Դուռը զանց կ'ընէ ըսել, թէ սոքա ցկեմնս՝ եթէ ոչ առժամեայ կերպով պաշտօն պիտի վարեն: Նոյնպէս չըսեր, թէ իմ պիտի պատկանի, զանոնք անկարողութեան պատճառի համար պաշտօնանկ ընելու իրաւունքը: Այս իրաւունքը արդեօք զանոնք կարգող քաղաքապետական խորհրդոյն, թէ ոչ՝ ուրիշ իշխանութեան մը վերապահեալ պիտի լինի:

Դարձեալ, օսմանեան ծանուցագիրը, ո՛չ զինուորագրութեան եղանակին և ո՛չ ալ ուրիշ տեսակէտներու նկատմամբ, զանազանութիւն չդնէր գիւղախմբական և նահանգական զինակիր պահանորդութեանց միջև. գիւղախմբական զինակիր պահանորդութիւնն յայսմ միայն կը տարբերի միւսէն, որ նա, գիւղախմբապետին հրամանաց ստորակարգեալ է: Նա չի գումարուիր նոյն իսկ գիւղախմբի մէջէն և կրօնապէս մեծամասնութիւն ունեցող բնակիչներէն, և ոչ ինչ չերաշխաւորեր, թէ նա՝ իրօք իւր գոյութեան սեփական հանգամանքը պիտի ունենայ, որ է տեղային պաշտպանողական զօրութիւն մը ըլլալ:

Նահանգական զինակիր պահանորդութեան կազմակերպութիւնն ևս չհամապատասխաներ 61-րդ յօդուածոյն յատկապէս նշանակած նահանգներուն տեղական պիտոյից:

Նաև, այն պայմանը՝ որոյ համաձայն յիշեալ պահանորդութեան թէ սպայներն ու թէ՛ զինուորները պէտք է առնուին պետութեան ամեն դասու հպատակաց մէջէն, բոլորովին անորոշ կերպարան մ'ունի:

Յանկալի է, որ նահանգական զինակիր պահանորդութեան սպայներն և զինուորներն գիւղախմբական զինակիր պահանորդութեան մէջէն առնուին, այսինքն՝ այն դաշտային պահապաններուն մէջէն, զորս գիւղախումբերն իսկ պիտի ընդունին: Այս դաշտային պահպաններն՝ որք պաշտօն ունին գիւղերը պաշտպանել Քրդաց արշաւանաց դէմ, նահանգական զինակիր պահանորդութեան պէտք է հայթայթեն իւրաքանչիւր գիւղախմբի ժողովրդոց թւոյն համեմատութեամբ օժանդակ խումբեր:

Նահանգային վարչութեան քմահաճութեանց տեղ՝ ընտրողա-

կան սկզբան դրությամբ հաստատուն երաշխաւորութիւն մը կրնայ յառաջ բերել հասարակաց ապահովութիւնն ամրացնելու յատկացեալ զօրութեանց բարոյք կազմակերպութեան մասին:

Եղեռնադատատենի մը կազմութեան վերաբերող առաջարկութեանց արժէքը՝ նախ և յառաջ՝ այն ատենին կազմական պայմաններէն կախումն ունի: Եւ սակայն Յուլիս 5-ի ծանուցագիրը այս կէտը ընդ լոութեամբ թողած է: Կարևոր կը թուի, նահանգաց ոմանց մէջ Հայ տարրին գերիշխանութիւնն, (pre'dominance) ի հաշիւ առնուլ, և դատական կազմակերպութեան մէջ նոյն տարրին համեմատական բաժին մը տալ:

Այլ և աստ իսկ մէկ քանի խնդիրներ յառաջ կուգան, որոց լուծման մասին օսմանեան ծանուցագիրը և ո՛չ մի նշոյլ չտար: Թէ դատաւորք անփոփոխելի պիտի լինին արդեօք. եթէ ոչ որոշեալ ժամանակաւ անուանելի: Որով օրինօք պիտի դատեն. Շէրիով թէ այլով իւրք օրէնսդրութեամբ: Եղեռնադատատենք ինչպէս պիտի յարգել տան իրենց վճիռները կէս անկախ և բոլորովին վայրենի Քուրդ ցեղերուն:

Այս վերջին հարցումը լիովին կ'ապացուցանէ թէ որչափ հարկաւոր է դուրս ձգել Քրդերը Հայաստանի ժողովրդոց պատկանեալ բարենորոգման շրջանակէն, և ուրոյն վարչութիւն մը տալ անոնց, իրենց պատերազմասէր և նախնական բարուց համաձայն:

Տեղեկայ և վարատական երկու տարեց առնչութեան վերաբերեալ տոյն այս խնդրոյն առթիւ ստորագրեալք համոզում կը յայտնեն թէ պէտք է ջնջել Քրդերուն՝ Հայոց վրայ հարկադրած բոլոր այն բռնազբօս ծառայութիւններն ու տարապարհակ աշխատութիւնն, որ ոչ թէ մի իրաւանց սկզբունքէ, այլ մի հնարմատ գեղծմանէ միայն կը ծագին: Կը խորհին նմանապէս թէ՛ ի նպաստ՝ Հայրերոյն պայմանադրեալ բոլոր բարենորոգմանց արգասիքը, պէտք է նաև Քրդաստանի կեդրոնն ու հարաւակողմը (Ճուլամէրկի Գագա) բնակող բազմաթիւ Նեստորականաց ալարդարասիրաբար ստացունել:

Տաւալի է, որ դպրոցաց խնամատարութեան և հասարակաց շինութեանց նման՝ տեղային պիտոյքը լրացնելու յատկացեալ գումարի մը վերապահման ակնարկող պարբերութիւնը բացորոշ բառերով շարադրուած չէ:

Կարելի է ընդունիլ սակայն թէ այս պարբերութիւնը կը պարունակէ յինքեան արժէք մ'ունեցող ելմտական սկզբունքի մը գա-

ղափարը. և այն սկզբունքն, ըստ մտաց տէրութեանց, յետագայ բառերով պէտք կ'ըլլայ պարզուիլ. այսինքն թէ, տուրքերը երկու կարգի բաժանուելով, առաջինը, որ մաքսային և աղային տրոց հասոյթէն բաղկացեալ է, պետական պիտոյից պիտի յատկացուի. իսկ երկրորդը՝ որ վիլայէթին ընդհանուր եկամուտներէն գոյանալի է, նախ և առաջ, նահանգին վարչական պաշտամանց, և ապա մնացորդին մէկ մասը տեղական պիտոյից սեպհականուելով, միս մասն ալ Կ.Պօլիս պիտի յուղարկուի: Եթէ այս մեկնութիւնը ճշգրիտ է, այն ատեն Յուլիս 5-ի ծանուցագրոյն առաջարկութիւնը քիչ շատ համաձայնած կ'ըլլայ Երոպական Տաճկաստանի նահանգաց վարչական կազմակերպութեան ծրագրոյն, որ Բ. Դրան կողմ է Արևելեան Ռումելիի Երոպական Յանձնախմբին քննութեան մատուցած է, 19-րդ յօդուածին:

Արդարև սա՛ հաստատուն բարենորոգում մի կը կայացունէ ըստ այնմ զի՛ կը նուիրագործէ այն սկզբունքը, որ կը պահանջէ, թէ նախապես պէտք է նահանգային ծախքը մատակարարել, տրոց մի մասին առմամբը. բայց էական պայման է, թէ այս սկզբունքը վարչական բարենորոգմանց Մասնախմբին արդէն իսկ ընդունած երաշխաւորութեանց համանման երաշխաւորութիւններով ապահովեալ լինի: Բաց ի սմանէ, ստորագրեալք պարտին նկատել տալ, թէ չէ կարելի՛ վաղուց գրաւի դրուած եկամուտներն, այս ինչ կամ այն ինչ գործածութեան յատկացունել:

Ապակեդրոնացման սկզբունքը, որ այնքան հարկաւոր է կեդրոնական իշխանութեան կրօնէն տարբեր կրօնի հետևող ժողովրդեան մը բնակած նահանգաց համար, քիչ գոհացուցիչ եղանակաւ բացատրուած է Ձեր Վսեմութեան ծանուցագրոյն մէջ:

Անհնար է արդիւնաւոր բարենորոգումներ ակնկալել, քանի որ ընդհանուր կառավարչաց կացութիւնը կատարելապէս բարեփոխուած չէ: Արդարև ծանուցագիրը նշմարել կուտայ, թէ անոնց իշխանութիւնը պիտի ընդարձակի և պաշտօննին երաշխաւորուի. բայց այսօրինակ ընդհանուր վստահացուցմունք խնդիրը լուծելու տեսակէն չեն:

Մինչև որ ընդհանուր կառավարչին իշխանութեան ընդլայնումն և անոր պարտուց կատարման համար բացարձակապէս կարևոր երևցած պատասխանատուութեան ընդարձակումը բացորոշաբար պայմանադրեալ չլինին, և մինչև որ բացորոշ երաշխաւորութիւնք

ընծայուած ըլլան այն բարձրաստիճան պաշտօնէին իւր պաշտաման տնողութեան նկատմամբ անկարելի պիտի չըլլայ առաջարկեալ բարենորոգմանց արդիւնաւորութեան մասին կարծիք մը յայտնել:

Ապաքէն՝ քաջայայտ է, թէ ընդհանուր կառավարիչք պարտին մասամբ իւրք տեղեկութիւն ունենալ իրենց պաշտօնին տնողութեան վրայ, և միանգամայն զերծ ըլլալ այն յարատև միջամտութենէն, որ արդի կառավարական եղանակին ներքև իրենց վարչական գործոց յետին մանրամասնութեանց մէջ անգամ տեղի կ'ունենայ, և որ՝ ցարդ իրենց գործունէութիւնը կաշկանդած էր: Անօգուտ է յաւելուլ, որ թէպէտ վալիներուն մեծագոյն անկախութիւնն ամենուրեք փափաքելի է, սակայն հայաբնակ նահանգաց մէջ բացարձակապէս կարևոր է:

Միով բանիւ, տէրութիւնք, Օսմանեան Պետութեան առաջարկութեանց անբաւականութեանը համոզուած լինելով կը խորհին թէ արժան է լրջաբար ի հաշիւ առնուլ յիշեալ նահանգաց մէջ ստուգուած տեղական պիտոյքը, աւելի ընդարձակութիւն տալ հաւասարութեան և ապակեդրոնացման երկու մեծամեծ սկզբանց. արդիւնաւորագոյն տնօրինութեանց ձեռնարկել ոստիկանութիւնը կազմելու, և Չէրքէզաց և Քրդաց երեսէն տառապեալ ժողովուրդները պաշտպանելու համար, և վերջապէս ընդհանուր կառավարչաց իշխանավարութեան տնողութիւնն ու սահմանը որոշել:

Ահաւասիկ՝ այսու և միմիայն այսու պայմանաւ կարելի է լիովին հատուցումն ընծայել Պէդիլիի Դաշնագրին 61-րդ յօդուածոյն գոյութիւն տուած իրաւանց և ակնկալութեանց:

Դուռը կը ճգնի արդարև այն յօդուածին սահմանը սեղմել, ընդհանուր ժողովրդեան բաղդատմամբ՝ հայ ժողովրդեան և առ հասարակ քրիստոնէից թուոյն վրայ յենլով:

Ծանուցագրին մէջ նշանակուած համեմատութիւնը այնչափ տարբեր է ուրիշ տեղեկութիւններէ, որ Տէրութիւնք չէն կրնար զայն իբրև ճշգրիտ ընդունիլ:

Հայ ժողովրդեան ներփակեալ ցուցակը, որ Պատրիարքարանի խնամօք յօրինուած է, սոյն այլ և այլ գնահատութեանց միջև կեցած ահագին տարբերութիւնը կը ցուցնէ: Սա ևս կայ, որ Յուլիս 5-ի ծանուցագիրը՝ միայն մահմէդականաց և քրիստոնէից առ իրեարս ունեցած համեմատութիւնը կը նշանակէ:

Տէրութիւնք կը բաղձան ի ձեռին ունենալ այն տեղեկութիւնները,

որոց վրայ հիմնեալ է այդ հաշիւը, և հարկ անհրաժեշտ կը համարին միանգամայն, 61-րդ յօդուածոյն նշանակած նահանգաց մէջ բնակող մահմէտականաց և քրիստոնէից մերձաւորագոյն թիւը՝ որչափ կարելի է փութով՝ առնել տալ անկողմնակալ մասնախմբի մը ձեռք, որոյ կազմութիւնը այսուհետև պիտի որոշուի:

Պէտք է ապահով լինիլ, որ Բ. Դուռը անժխտելի անկողմնապահութեան պայմաններով գործադրուած սոյն մարդահամարին արդիւնքը պիտի ընդունի, և յիշեալ նահանգաց կազմակերպութեան մէջ ի հաշիւ պիտի առնու զայն:

Յոյժ հաւանական է նաև, որ եթէ այս հիման վրայ գործի սկսուի, համօրէն տեղական պահանջմանց գոհացուցման պէտքը՝ այլ և այլ վիլայէթներու արդի աշխարհագրական սահմանաց սրբագրութեան հարկն յառաջ պիտի բերէ:

Այլ սակայն, այն յամուրդներէն՝ որ տեղի պիտի ունենան առաջադրեալ մարդահամարին գործողութեանց պատճառաւ, Բ. Դուռը չկրնար իրաւունք ստանալ ստիպողական կերպարան մը ընծայող միջոցներուն գործադրութիւնը յապաղելու համար:

Ամենակարևոր է՝ առանց ժամանակի կորստեան՝ իրականացունել այն բարենորոգումներն՝ որ յատկացեալ են Հայոց կեանքն ու ինչքը ապահովելու, ձեռնարկել անմիջապէս Քրդաց ասպատակութիւնները դադրեցնելու միջոցներուն, գործադրել անյապաղ ելմտական նոր կազմութիւնը, աւելի գոհացուցիչ կացութեան մը վերածել՝ առժամանակեայ կերպիւ, զինակիր պահանորդութիւնը, և մանաւանդ պարզել ընդհանուր կառավարչաց աւելի կայուն իշխանութիւն մը և ընդարձակագոյն պատասխանատուութիւն:

Իբրև եզրակացութիւն՝ ստորագրեալք կը հրաւիրեն միւս անգամ ևս Բ. Դրան ուշադրութիւնը սա՛ էական իրողութեան վրայ, որ հայաբնակ նահանգաց մէջ մուծանելի բարենորոգումնք, պարտին լինիլ համապատշաճ տեղական և գործադրուիլ ընդ հսկողութեամբ Տէրութեանց, ըստ բանից յանձնառութեանցն, զորս դաշնադրած է նա մի միջազգային մտրիակաւ:

Ստորագրեալք ևն:

(Ստորագրեալ)

ՀացՖէլդր	Նովիկով
Գօշէն	Կորտի
Տիսսօ	Գալիստ

**Բ. ԴՐԱՆ 1880 ՀՈԿՏԵՄԲԵՐ 3 ԹՈՒԱԿԱՆԱԻ
ԾԱՆՈՒՑԱԳԻՐՆ⁵⁰**

Պէդլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուածին ոյժովն Օսմանեան Կառավարութիւնը յանձն առած ըլլալով անյապաղ գործադրել այն բարեկարգութիւններն, զորս կը պահանջեն Հայոց բնակած վայրերու տեղական պէտքերը, երաշխաւորել անոնց ապահովութիւնը Չէրքէսներու և Քիւրտերու դէմ, և այդ մասին ձեռք առած միջոցներն պարբերաբար ծանուցանել այն պետութեանց, որ պիտի հսկեն անոնց գործադրութեանը, խաղաղութեան կնքումէն յետոյ քննիչներ դրկուած էր այն տեղերու վրա: Եթէ կատարեալ չեղան այդ քննիչներու յանձնուած քննութեանց նկատմամբ տրուած տեղեկութիւններն առ Դաշնագիր Պետութիւնս, պատճառն այն էր՝ որ տեղ տեղ Ոստիկանական Վարչութեան մէջ հապճեպով ներմուծուած քանի մը բարութումներէ զատ՝ կայսերական կառավարութիւնը չէ կրցած կատարել բոլոր անհրաժեշտ բարեկարգութիւնները:

Այժմ՝ կառավարութիւնը Պէքիր փաշայի և կայսրութեան ուրիշ պաշտօնատարներու խնամքին տակ հրամայած քննութիւնն ի գլուխ հանած և որոշած է հետևեալ միջոցներն ի գործ դնել.

1. – Բնակիչներու կարգն ու անդորրութիւնը ապահովելու նպատակաւ՝ Էրզրումի, Վանի, Պիթլիսի և Տիարպէքիի նահանգներուն ստեաններն աւելի լաւ պիտի կազմակերպուին և բարեկարգուին. և կայսերական միւշիք մը մասնաւորապէս պաշտօն պիտի ունենայ այդ բարեկարգութեան հսկելու:

2. – Պետութիւններէն խնդրուած ապահովութեանց ձեռքբերուած օրէն գրեթէ երեք ամիս վերջ՝ կայսերական կառավարութիւնը պիտի վերակազմէ վերը յիշատակուած նահանգներուն ոստիկանութիւնն ու քաղաքապահութիւնը, տևականապէս ապահովելու համար հոն հասարակաց կարգն ու անդորրութիւնը:

3. – Պատերազմական գործոց կայսերական նախարարէն պիտի անուանուին քաղաքապահութեան գնդապետներն (ալայ պէյի): Միւս սպայներու ընտրութեան հոգ պիտի տանին վաշտերու (զօրագունդերու) ժողովները, և անոնց անուանումը պիտի հաստատուի պատերազմական պաշտօնարանէն՝ ընդհանուր կառավարիչներու առաջարկութեան վրայ: Այս վերջիններն իշխա-

⁵⁰ Դիւան Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի:

նութիւն պիտի ունենան ոստիկանութեան գործակալներն իրենց նահանգներուն մէջ բաշխելու՝ տեղական պէտքերուն համեմատ. և իրենց միաձայն հաւանութեանը վրայ՝ պատերազմական նախարարը պաշտօնընկէց պիտի ընէ գնդապետներէն և սպայներէն զանոնք, որ իրենց պաշտօնը կատարելու անկարող պիտի ճանչցուին:

4. – Գիւղախումբերու կազմակերպութեան եղանակը, որ բանաձևուած է վերջին Յուլիս 5-ի թուականը կրող ծանուցագրով Բ. Դրան, չորս ամսուան միջոցին մէջ ի յանգ պիտի ելնէ՝ պետութեան շահերուն համաձայն պայմաններով:

5. – Ի բաց առեալ մաքսն և անուղղակի տուրքերն, ինչպէս նաև թղթատարի և հեռագրի հասոյթներն՝ վերը նշանակուած նահանգներուն միւս բոլոր եկամուտներն ամեն բանէ առաջ նահանգային ելմտացուցական պէտքերու պահանջումներուն պիտի գործածուին՝ միւս կարևոր ծախքերովն հանդերձ: Սոյն այս եկամուտներու աւելցածէն հաիրորին տասը տեղական պէտքերու համար պիտի առնուի. այսինքն կրթութեան և հասարակաց աշխատութեանց համար, և մնացեալն՝ ինչպէս նաև հարիրին տասը ծախսագումարէն (allocation) աւելցածը Կ. Պօլիս պիտի դրկուին:

6. – Նահանգինդատաստանական պաշտօնատարներու ընտրութիւնն ու անուանումը գտնուող մասնաւոր կանոնագրին համաձայն տեղի պիտի ունենայ. և գալով վարչութեան պաշտօնատարներուն՝ ասոնք կայսերական հրովարտակի մը ոյժովն կ'անուանուին, որ կը տրուի նահանգապետին առաջարկութեան վրայ՝ հետն ունենալով միաձայն հաւանութիւնը պաշտօնատարներուն, որոնցմէ կախումն ունին իրենք: Նահանգապետներն այս կանոններուն հետևելով՝ իշխանութիւն ունին հրաժարեցնելու և անուանելու իրենց նահանգներուն վարչութեան պաշտօնատարներն, ի բաց առեալ զաւառապետներն (միւթսարըֆներն), ելմուտքի տնօրէններն (տէֆթերտար) և ընդհանուր քարտուղարներն (մէքթուպճի): Այս պաշտօնատարներու ընտրութեան մէջ պէտք է որ ուշ դրուի միայն արժանիքի և ուղղամտութեան: Հասարակաց պաշտօններու պիտի ընդունուին կայսրութեան բոլոր հպատակներն՝ Պէոլիսի Դաշնադրութեան 62-րդ յօդուածին համաձայն և գործադրութեան մէջ եղող օսմանեան օրէնքներու տրամադրութեանց իսկ, բաւական է որ վերը յիշուած պահանջելի յատկութիւններն ունենան:

7. – Նիզամիէ ատեաններն օսմանեան օրինագիրքը (մէճէլլէ) և կայսրութեան մէջ ընդունուած միւս օրէնքները պիտի գործադրեն:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1895-1912

1880 թուականի դիանագիտական գրագրություններից յետոյ Հայոց Հարցը դադարում է եւրոպական պետութիւնների գործնական ձեռնարկութիւնների առարկայ դառնալուց և այս դրութիւնը շարունակում է ամբողջ 15 տարի:

Այս ժանանակամիջոցում Հայոց Հարցը Թիւրքիայի սահմանների մէջ ստանում է քաղաքական ահաւոր պայքարի ձև: Թիւրք կառավարութիւնը, ըստ իր վաղեմի սովորութեան, չէ բաւականանում իր միջազգային պարտաւորութիւնն ուրանալով, այլ և դիմում է բռնութեան միջոցներին՝ հայերի մէջ սկսուած շարժումը արմատախիլ անելու համար: Հայութիւնը, հանդէպ կառավարչական այս ահաբեկիչ քաղաքականութեան, առաջ է քաշում դիմադրող պայքարի կազմակերպութիւն, որ հետզհետէ ընդարձակում է, դառնում ամբողջ հայութեան գործ:

Հայկական շարժումն ընդունում է յեղափոխական կերպարանք, որ աւելի որոշ և ուժեղ արտայայտութիւն ստանալ սկսում է 1880-ական թուականների վերջից, երբ միմեանց ետևից կազմակերպում և մարտական ասպարէզ են իջնում «Հնչակեան» և «Դաշնակցութիւն» կուսակցութիւնները:

Կռիւն այնուհետև անողոք է երկու կողմի: Սուլթան Աբդուլ-Համիտը անձամբ իր ձեռքն է առնում կառավարչական ճնշումների գործը: Եւ դեռ 1889 թուականին իր տրամադրութիւնը ձևակերպում էր ամենախիստ կերպով: Ահա այս մասին ինչ էր գրում Աշրֆեան Խորէն պատրիարքը Մակար կաթողիկոսին.

«Յայլում ևս նուագի ընդ խօսել իւրում ընդ իս ի պալատան ի ձեռն անձնական քարտուղարի իւրոյ յաւել (Սուլթան Աբդուլ-Համիտը) ասել թէ անհնարին է ինձ զիջանել տալ զինքնօրէնութիւն զոր հայք երագեն, և ոչ միայն ինձ՝ այլ և ամենեցուն որ զկնի իմ գալոց են Սուլթանք նզով դնեն ի վերայ չտալ հայոց այնպիսի ինչ, այլ մանաւանդ ցնջումն բովանդակ իսլամութեան յերեսաց երկրի ուխտ դնեն պատերազմել ընդդէմ անկախութեան հայոց»⁵¹:

⁵¹ Գործ Դիանատան Վեհափառ Տ. Տ. Մակար կաթողիկոսի ամենայն Հայոց

Այս միսին սպաննալիք չէր: 1890-ի ամառը էր զրուում և Կ. Պոլսում տեղի ունեցան յեղափոխական ցոյցեր, որոնք արին անհեղուփին են պատճառում: Թիւրք կառավարութիւնը ամենախիստ միջոցների է դիմում: Բայց այդ վարչական և դատաստանական ահաբեկումը բաւական չէ և նա անելի արմատական միջոցներ է հնարում Փոքր Ասիայի քրիստոնեայ ազգաբնակչութիւնը «պակասեցնելու» (թիւրքական պաշտօնեաների գործ ածած խօսքը) համար: Հայերի դէմ թիւրք կառավարութիւնը ուղքի հանեց ամբողջ քրտութիւնը, որին տրուեց կողոպտելու, սպանելու, առևանգելու ազատութիւն: Այդ էլ բաւական չէր և նոյն 1890-ին քրտերից սկսեցին կազմակերպել անկանոն ձիաւոր զօրքեր, զինելով նրանց կատարելագործուած զէնքերով: Ահա այդ առիթով ինչ էր գրում էր զրումի անգլիական հիւպատոսը Կ. Պոլսի անգլիական դեսպանին.

Էրզրում, 28 փետրվարի 1891 թ.

Սըր. Պատիւ ունիմ ներփակել ընդ սմին թարգմանութիւնը մի յօդուածի, որ տպուեց այստեղի պաշտօնական լրագրում և վերաբերում է քրտերից անկանոն հեծելագօր գնդեր կազմակերպելուն և այդ գնդերի գլխաւորներից մի քանիսի Կ. Պոլիս ուղևորուելուն:

Այս գլխաւորները անցեալ շաբաթ դուրս եկան էրզրումից Երզնկայ, որտեղից կուղևորուեն մայրաքաղաք:

Ինչպէս որ առաջ էլ հաղորդել եմ ձեր գերագանցութեան, քրտերի զինման վճիռը այստեղ դիտում է մեծ երկիւղով: Այս զգացմունքն ուժեղանում է հէնց քրտերի վարմունքի պատճառով. նրանցից շատերը բացարձակ յայտնում են, որպէս թէ իրանք նշանակուած են հայերին զսպելու համար և որպէս թէ իրանք երաշխաւորութիւն են ստացել թէ իրանց դատաստանական պատասխանատութեան չը պիտի ենթարկեն քրիստոնեաներին որ և է կերպով հարստահարելու համար:

Էրզրումում ապրող հայերը շատ անհանգիստ են և նրանցից շատ շատերը, որոնք կարողութիւն ունին, յայտարարում են թէ մտադիր են թողնել քաղաքը, հէնց որ ճանապարհ կը բացուի:

Չարլզ Ս. Համպսօն⁵²

1890-էջմիածնի հայրապետական արխիւ:

⁵² Անգլիական «Կապոյտ Գիրք» – Turkey, 1892, № 1, p. 23:

Եւ այս վախերը անհիմն չէին: Թիւրք կառավարութեան և հայ ժողովրդի մէջ հաստատուած այս արինոտ պայքարը, ինչպէս յայտնի է, 1894 թուի ամառը գալիս յանգում է Սասունի ապստամբութեան և մեծ կոտորածին, որ ցնցում է առաջացնում Եւրոպայի մէջ:

Այս մեծ դէպքը դրդիչ է հանդիսանում որ պետութիւնները երկրորդ անգամ ձեռք առնեն հայոց հարցը: Եւրոպական դիւանագիտութիւնն այս անգամ չէր բաւականանում ընդհանուր ցուցմունքներով: Վեց մեծ պետութիւններից միայն երեքն էին հայոց հարցի պաշտպան հանդիսանում: Անգլիան, որին այս անգամ էլ պատկանում էր նախաձեռնութիւնը, Ֆրանսիան և Ռուսաստանը: Այս պետութիւնների դեսպանները Կ. Պօլսում միասին մշակեցին բարենորոգումների ծրագիր՝ հայերի համար Թիւրքիայում փոքր ի շատէ տանելի դրութիւն ստեղծելու համար: Այս խոշոր ձեռնարկութեան հիմքերն ու հանգամանքները այսպէս էր նկարագրում Կ. Պօլսի ֆրանսիական դեսպան Կամբօնը:

№ 18

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆ Պ. Բ. ԿԱՄԲՕՆ ԱՌ Պ. ՀԱՆՕԴՕ. ՆԱԽԱՐԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ⁵³

Բերա, 18 մայիս 1895

Ռուսաստանի, Անգլիայի իմ պաշտօնակիցներս և ես, պատրաստել տուինք մեր երեքին դեսպանութիւններուն իւրաքանչիւրին կողմէ նշանակուած պատուիրակներուն միջոցաւ, Փոքր Ասիայի հայկական նահանգներուն վարչական բարենորոգումներու համար ծրագիր մը: Այս ծրագիրը մեզ յանձնուեցաւ և վերջնական բնագիրը հաստատուեցաւ մեր ենթարկած քննութեան հետևանքով:

Շնորհաւորելի է, իսկապէս, մեր անգլիական պաշտօնակիցին իմաստուն և զգօն ողջամտութիւնը, և մաղթենք որ Լօնդօնի դահլիճը, երբ ծանօթանայ մեր ամէնքին կողմէ ընդհանուր ծրագիրին, թագուհիին ներկայացուցիչին տեսակէտներուն մէջ կը թափանցէ, և կը լիազօրէ զայն մեզ հետ Սուլթանին ներկայացնելու:

Պատիւ ունիմ Ձեր Վսեմութեան ղրկելու այդ ծրագիրը, յանձ-

⁵³ Shopoff, p. 472-475.

ներով իր ուշադրութեան և խնդրելով որ բարեհաճէր լաւ քննել ու հաստատել թէ յարմար էն արդեօք այդ բանաձևերը:

Այս վաւերաթուղթը կը բովանդակէ յիշատակագիր մը և կանոնադրութեան բուն ծրագիր մը: Այնպէս որ Դուք կը տեսնէք որ յիշատակագրին մէջ մէկ քանի սկզբունքներ առաջադրուած են որոնց մուտքը մեզ համար անհրաժեշտ թուեցաւ, նախ մի կարգ առժամեայ միջոցներով դարմանելու համար այն բոլոր անարդարութիւնները և հարստահարութիւնները որոնց զոհերն են Հայերը, մասնաւորապէս մի քանի ժամանակներէ ի վեր. և յետոյ, անոնց նահանգներուն մէջ կանոնաւոր վարչութեան մը ապահովութիւնը փորձելու համար:

Բուն կանոնադրութեան ծրագիրը կը պարունակէ վարչական, դատական, տնտեսական կազմակերպութեան մանրամասնութիւնը, որին բարուք կիրարկումը, եթէ ընդունուի, կարող պիտի լինի հայ ազգաբնակչութեան ներկայ վիճակին լայն բարելաւում մը տալու:

Այն զանազան նախագրութիւնները, որոնք այստեղ արձանագրուած են, յառաջ կուգան մեծամասնութեամբ, օսմանեան օրէնսդրութեան մէջ մտցուած սկզբունքներէն, որոնցմէ մեծ մասը մեռեալ տառ կը մնայ և կամ անոնց կիրարկումը խեղաթիրուած է. ծրագիրը կը զգուշանայ, կարելի եղածին չափ, նորութիւններէ, որոնք թիրքերուն կողմէ շատ մեծ դիտողութիւններու տեղի կուտային: Ծրագիրին մեծ մասը կը կազմեն վիլայէթներու մէջ կեդրոնական իշխանութեան ամրապնդումը, հասարակական կեանքի զարգացումը, արդարութեան և տնտեսական դրութեան կանոնաւորումը, քրիստոնեաներու մուտքը քաղաքային այն բարձր պաշտօններու մէջ որոնցմէ սիսդեմադիք կերպով հեռացուած են, ինչպէս նաև քաղաքապահ զօրքի և ոստիկանութեան մէջ, քրիստոնեաների պաշտպանութիւնը քիւտերու դէմ:

Այս յիշատակագիրը, իրեն կից կանոնադրութեան ծրագիրով, կը ներկայանայ մեր աչերուն, միջոցներու և բարենորոգումներու իբրև նուազագոյնը, որ մեզ անհրաժեշտ կը թուի վերջին դէպքերու պատճառով վրդովուած նահանգներուն մէջ կիրարկել, այնտեղ կարգ կանոնը և վստահութիւնը վերականգնելու և վերջին ժամանակներու խառնաշփոթութիւններուն կրկնութեան դէմ, ազգաբնակչութիւնը երաշխաւորելու նպատակով:

Մենք մտադիր ենք, զանոնք Սուլթանին յանձնելով, իրեն այս

լեզուն գործածել և ամեն կերպ պիտի ջանանք որ նա ամբողջապես ընդունի:

Անմիջապես որ նա զանոնք ստանայ, մեր պաշտօնակիցներուն պիտի հաղորդենք զանոնք, անոնցմէ խնդրելով որ զանոնք իրենց կառավարութիւններուն ներկայացնեն և մեզ միանան, զանոնք Սուլթանին ընդունել տալու համար: Պառոն տը Գալիս Պ. Նելիտօֆին և ինձ կը յայտնէ որ մեր ծրագիրը իրեն հաղորդենք. «Ես, այս օրերս, կոմս Քալնոքիին տեղեկութիւն տուի արդէն, ըսաւ ինձ, Ձեզ հետ, իմ ունեցած խօսակցութեան մասին, նա նոր կը պատասխանէ թե Աստրօ-Ունգարական կառավարութիւնը, ցանկանալով խուսափել, որ հայկական հարցը չափազանց չընդլայնի, և արևելեան ուրիշ հարցերին նշան կամ արծարծման պատրուակ չի դառնայ, կատարելապէս համամիտ է այն քայլերուն որ Դուք պիտի ընէիք, պատրաստելու համար գործին կանոնադրութիւնը և անհրաժեշտ բարենորոգումներու կիրարկումը»:

Իտալիոյ դեսպանն ալ, իր կողմէն մեր ծրագիրներուն բնագիրը կը խնդրէ:

Այդ մասին խորհրդակցելով, որոշեցինք որ այս ծրագիրները մեր կառավարութենէն հաստատուելէ և Սուլթանին մատուցուելէ առաջ, անկարող ենք զանոնք հաղորդել մեր պաշտօնակիցներուն:

Իսկապէս, շատ ցաւալի կը լինի, երբ Սուլթանը անոնց պարունակութեան ծանօթանայ, լինի անգաղտնապահութեամբ թէ մամուլի հրատարակումներով, մեր կողմէ մասնաւոր կերպով բնագիրը ստանալէ առաջ իսկ. յարմար է խուսափել այն բարդացումներէն, որոնք ապահովապէս արդիւնքը կը վտանգեն:

Սըր Փ. Քըրրի մեզ յայտնեց որ թերևս անգլիական դահլիճը մանրակրկիտ կերպով կը քննէ մեր ծրագիրները. իրմէ խնդրեցինք որ շեշտէ իր կառավարութեան այն մեծ շահը որ կարող ենք ունենալ եթէ չի յապաղի:

Պրն. Նելիտօֆ, որ ինչպէս Անգլիոյ դեսպանը, և ես, այսօր իսկ կը դրկէ զանոնք իր կառավարութեան, մեզ կը կանխահաղորդէ որ իշխան Լօպօնօֆի հաճութիւնը չպիտի ուշանայ: Սակայն և այնպէս իմ երկու պաշտօնակիցներս իրենց կառավարութիւններէն հեռագրով պատասխանի կը սպասեն:

Շատ երախտապարտ պիտի ըլլամ Ձեր վստմութեան, երբ հաճիք խնդրել Պառոն տը Գուոսէլէն և Կոմս տը Սօնդէպէլլօէն

թա-խանձելու համար Լօռդ Քիմպրոլէյին և իշխան Լօպանօֆին, որ այս վերջինները իրենց կարծիքները կարելի եղածին չափ շուտ յայտնեն, և ես անձկանօք կը խնդրեմ որ Ձեր կողմէ ալ հեռագրական պատասխան տրուի: Կարևոր է այլևս բնաւ չի յետաձգել. Սուլթանը յայտնեց արդարև Սըր Փ. Քըրրիին, իր վերջին ունկնդրութեան մէջ որ տեղի ունեցաւ 6 մարտին, թէ պիտի գումարէ բարենորոգումներու յանձնաժողով մը Թուրքիան փաշայի նախագահութեան տակ:

Ստանալով իրանց կառավարութիւնների հաւանութիւնը, երեք դեսպանները նոյն մայիսին ներկայացրին Բ. Դրան իրանց մշակած յիշատակագիրն ու բարենորոգումների ծրագիրը:

№ 19

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ Կ. ՊՕԼՍՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՅՕՐՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ⁵⁴

Մարտ-Ապրիլ 1895 թ.

Սրան կցած ծրագիրը պարունակում է իր մէջ գլխաւոր հիմունքները այն բարեփոխութիւնների, որոնք պէտք է մտցնուեն ներքև յիշուած վիլայէթների վարչական, ֆինանսական և դատաստանական կազմակերպութեան մէջ: Օգտակար համարուեց մի առանձին մեմօրանդումով ցոյց տալ վարչական բարեփոխութեան այն որոշ միջոցները, որոնք կազմում են գլխաւոր հիմունքը երկրի սահմանադրութեան և որոնց ընդունելը Բ. Դրան կողմից՝ ունի մեծ կարևորութիւն:

Առանձին կէտերը սրանք են.

- 1) Վիլայէթների թուի պակասեցնելը:
- 2) Վալիների ընտրութեան երաշխատրութիւնը:
- 3) Բանտարկուածների կամ քաղաքական յանցանքով դատապարտուած հայերի ամնիստիան (ներումն):
- 4) Հայ էմիգրանտների և աքսորականների վերադարձը:
- 5) Առկախ մնացած սովորական քրէական դատաստանական

⁵⁴ Բնագիրը Schopoff, p. p. 475-481, թարգմանութիւն «Մշակ» լրագրի խմագրութեան, 1895, № 63, յատելուած:

գործերի վերջնական կարգաւորումն:

6) Բանտերի վերահսկողութիւնը և բանտարկեալների դրութեան քննութիւնը:

7) Նահանգներում մտցնուելի ռէֆորմների գործադրութեան վրայ հսկելու համար՝ մի բարձր յանձնաժողովի նշանակումը:

8) Կ. Պօլսում մի մնայուն հսկող կօմիտետի հաստատումը:

9) Սասունի, Տալլորիկի և այլ տեղերի դէպքերի ժամանակ հայերի ունեցած զոհերի և կրած վնասների հատուցումն:

10) Կրօնական հաւատափոխութեան հետ կապուած գործերի կանոնաւորումն:

11) Հայերի վայելած իրաւունքների և առանձնաշնորհումների պահպանութիւնը և ճիշդ գործադրութիւնը:

12) Ասիական Թիւրքիայի միւս նահանգների հայերի վիճակի բարելաւումն:

I

Վիլայէթների թուի պակասեցնելը

Քանի որ ռէֆորմները պէտք է մտցնուեն Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիվասի, Մամուրէթ-Իլ-Ազիզի և Դիարբէքիի վեց նահանգներում, պէտք է աշխատել այդ վիլայէթների թիւը պակասեցնել: Այդպէս անելով կարելի է առաջ բերել վարչական ընդհանուր ծախքերի որոշ խնայողութիւն, և քչացնելով վալիների թիւը, թերևս դիւրացնել նրանց ընտրութիւնը. միևնոյն ժամանակ բարձրացնել նրանց հեղինակութիւնը՝ լաւացնելով նրանց նիւթական վիճակը: Այդ բոլորը պէտք է կատարել այնպիսի եղանակով, որ ազգաբնակչութեան բաժանումն վերածուի այնպիսի էտնօգրաֆիական խմբերի, որոնք ամեն մի նահանգի վարչական ստորաբաժանումների մէջ ըստ կարելոյն համացել լինեն.

Ճանօթուիւն. – 1875 թուից 10 տարի առաջ, Էրզրումի էյալէթը (շրջան) բաղկացած էր հետևեալ գաւառներից. – Չըլդըր, Կարս, Էրզրում (այժմեան վիլայէթը), նոյնպէս Վան, որ պարունակում էր իր մէջ Հէքքէարի, Բիթլիս և Մուշ: Այդ էյալէթը, 1877-78 թ. պատերազմից յետոյ հետզհետէ բաժանուեց հինգ վիլայէթի և երկրի այն մասը, որ մնաց Թիւրքիայի ձեռքում, բաժանուեց հետևեալ վիլայէթների. Էրզրումի, Վանի, Հէքքէարիի և Մուշի:

Այնուհետև Հեքքեարիի գաւառը նորից միացուեց Վանի վիլայէթին, իսկ Մուշի գաւառը՝ նոր կազմուած Բիթլիսի վիլայէթին: Դրանից յետոյ էր, որ Մամուրէթ-Իւլ-Ազիզ սանջակը դարձաւ վիլայէթ, որի հետ միացուեցին մի քանի հարևան հողեր: Այն ինչ, Տէրսիմի վիլայէթը կրկին դարձաւ սանջակ:

II

Վալիներ նշանակելու երաշխաւորութիւնը

Մեծ պետութիւնները, կարևոր նշանակութիւն տալով վալիների ընտրութեանը, որոնցից էապես կախուած է Բերլինի դաշնագրով նախատեսուած ռէֆորմների իրագործումն, որոշել են առաջադրութիւններ անել Բարձրագոյն Դրանը իւրաքանչիւր դէպքում, երբ վալիի պաշտօնի համար կընտրուի մի անյարմար անձն: Որպէս զի այս կէտի վերաբերութեամբ օսմանեան կայսերական կառավարութիւնը ազատ լինի անհաճոյ թիրիմացութիւններից, մեծ պետութիւնների ներկայացուցիչները անհրաժեշտ են համարում, որ վաղօրօք, կիսապաշտօնական ձևով, իրանց յայտնուի այն անձի անունը, որի վրայ ընկնելու է ընտրութիւնը:

III

Ամնիստիա

Նորին կայսերական մեծութիւն Սուլթանը ընդարձակ ամնիստիա (ներումն) պէտք է շնորհի այն բոլոր հայերին, որոնք մեղադրուում են կամ դատապարտուած են քաղաքական յանցանքների համար, և որոնց վերաբերութեամբ ապացուցուած չէ, թե նրանք անմիջապէս մասնակից են ընդհանուր քրէական յանցանքներին:

IV

Էմիգրանտների վերադարձը

Բոլոր հայերը, ինչ կրօնի էլ պատկանէին, որոնք առանց դատաստանի աքսորուած են օսմանեան պետության սահմաններից կամ իրանց բնակած գաւառներից դուրս, կամ որոնք ստիպուած

են եղել պանդխտել՝ աղքատության կամ ուրիշ հանգամանքների շնորհիւ, առանց մասնակցած լինելու որ և է քրեական գործում, թոյլտութիւն պէտք է ստանան ազատ կերպով վերադառնալ Թիւրքիա կամ այն գաւառները, ուր նրանք առաջ ապրում էին, առանց որ և է ճնշումների տեղական իշխանութիւնների կողմից: Նրանք նորից պէտք է ստանան այն սեփականութիւնները, որ նրանք ունէին երկիրը թողնելուց առաջ:

V

Կանոնաւոր դատավարութեան հաստատումն

Այն քրեական յանցանքների և ոճիրների գործերը, որոնք ներկայումս դատաստանական քննութեան տակ են, պէտք է լուծումս ստանան, առանց յետաձգութեան: Կ. Պօլսից պէտք է ուղարկուեն վիլայէթները դատաստանական յատուկ յանձնաժողովներ, որոնք իւրաքանչիւր սանջակի գլխաւոր քաղաքում պէտք է շտապեն քննել չը վճռուած գործերը: Նրանց վճիռները չը պէտք է ենթարկուեն բողոքի (appeal): Այդ յանձնաժողովները պէտք է բաղկացած լինեն մէկ նախագահից և երկու անդամից, մէկը մահմէտական, միւրը քրիստոնեայ: Դրանց պէտք է ընկերանայ մի դատաստանական քննիչ և մէկ պրօկուրօր: Վերջին պաշտօնեաներից մէկը պէտք է քրիստոնեայ լինի:

VI

Բանտերի վիճակը

Կ. Պօլսից է ուղարկուեն բարձրաստիճան պաշտօնեաներ՝ քննելու բանտերը իւրաքանչիւր վիլայէթում և ուսումնասիրելու նրանց նիւթական պայմանները. բանտարկեալների վիճակը և այն՝ թէ ինչպես են նրանց պահում: Նրանք պէտք է քննեն նոյնպէս և բանտապետների ու պահապանների վարմունքները, և կարող են առաջադրել, որ անմիջապէս արձակուեն և դատաստանի ենթարկուեն այնպիսիները, որոնք չեն կատարել այն կանոնները, որ սահմանուած են բանտային օրէնքներով:

Այդ բարձրաստիճան պաշտօնեաներից իւրաքանչիւրը պիտի

ունենայ մի օգնական, որ պետք է լինի քրիստոնեայ, եթէ պաշտօնեան մահմետական է, և հակառակը: Նրանք պարտաւոր են, ոչ աւելի քան չորս ամսուայ ընթացքում, պատրաստել մի զեկուցագիր, որը պետք է պարունակի նրանց նկատողութիւնները իրանց միսսիայի արդիւնքների մասին, և ցոյց տալ այն բարեփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են բանտերի վիճակը և դրանց պաշտօնեաների գործունէութիւնը լաւացնելու համար:

VII

Րէֆօրմների գործադրութեան վրայ հսկող բարձր յանձնաժողովը

Նոր վալիները, նշանակուելուն պէս, պետք է գնան վիլայէթի գլխաւոր քաղաքը՝ կազմակերպելու նահանգական վարչութիւնը, համաձայն նոր ծրագրի հիմունքների:

Նրանք պետք է տեղաւորեն կառավարութիւնից նշանակուած մութեսարիֆներին և գայմագամներին, և իւրաքանչիւր կազայում բաժանեն նահիաների հողերը: Նրանք պետք է կազմեն ընտրողական ցուցակներ, և պետք է կատարել տան նահիաների խորհուրդ-ների և միւղիրների ընտրութիւն:

Նրանք պետք է հետևեն, որ հարկ հաւաքողները ընտրուեն առանց յետաձգման, որ նահանգի բիւդժէտի որոշումը և տուրքերի բաշխումը վարչական մասերում կատարուի, որքան կարելի է շուտ:

Այս Րէֆօրմների շուտ և ճիշդ կատարումը պետք է դրուի մի Բարձր Կօմիսիօնէրի վրայ, որը յատկապէս պետք է ուղարկուի նորին մեծութիւն Սուլթանից, և որի ընտրութեանը հաւանութիւն պետք է տան պետութիւնները: Իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում, նա պետք է ունենայ լիակատար իշխանութիւն վալիների վրայ, որոնք պարտաւոր են զեկուցանել նրան այն բոլոր միջոցների մասին, որոնց ձեռնարկելու են՝ նոր կանոնները գործադրելու համար:

Կայսերական Բարձր Կօմիսիօնէրը պետք է ընդունի խնդրագիրներ և ծանուցումներ բնակիչների կողմից, և պետք է վարուի նրանց հետ, նոր օրէնքների սահմաններում: Նա իր միսսիան պետք է կնքի մի ընդհանուր քննութիւն կատարելով բոլոր վիլայէթներում,

և պետք է ունենայ իշխանություն չը թողլատրել այն միջոցները, որոնք համաձայն օրենքի և նոր կանօնների, չեն կարող գործադրուել:

ԿայսերականԲարձր Կօմիսիօնէրին, նրա պաշտօնավարութեան միջոցին, պետք է ուղեկցի մի օգնական, որը պետք է լինի քրիստոնեայ, եթէ Կօմիսիօնէրը մահմետական է, և հակառակը:

VIII

Վերահսկող մնայուն կօմիտետ

Բարձրագոյն Դրան մէջ պետք է հաստատուի մի վերահսկող մնայուն կօմիտետ, որը պետք է հսկէ ռէֆօրմների ճիշդ գործադրութեան վրայ: Այս կօմիտետի նախագահը պետք է լինի կայսրութեան քաղաքացիական կամ զինուորական բարձր պաշտօնեաներից մէկը: Կօմիտետը պետք է կազմուած լինի վեց անդամներից, որոնք պետք է ընտրուեն պետութեան քաղաքացիական բարձր պաշտօնեաների միջից, հմուտ վարչական, իրաւաբանական և ֆինանսական գործերում, երեքը մահմետական, իսկ միւս երեքը քրիստոնեայ:

Այդ կօմիտետը պետք է նիստ ունենայ Բ. Դրան մէջ, առնուազն ամիսը մի անգամ:

Կօմիտետի պաշտօնը պիտի լինի հսկել օրէնքների և կանօնների ճիշդ գործադրութեան վրայ, տեղեկացնել Բ. Դրան այն անկանօնութիւնների մասին, որոնք կը նկատուեն ադմինիստրացիայի մէջ և մատնանիշ անել այն պաշտօնեաների վրայ, որոնք լիովին չեն կատարում իրանց պարտաւորութիւնները. ընդունել խնդրագիրներ, քննել ազգաբնակութեան կողմից եղած ծանուցումները և գանձատները. նոյնպէս և այն յայտարարութիւնները, որոնք կը հասնեն կօմիտետին համայնքների ներկայացուցիչների կողմից:

Այդ կօմիտետին պետք է ուղղեն դեսպանները, իրանց թարգմանների միջոցով, այն բոլոր հաղորդագրութիւնները և տեղեկութիւնները, որ նրանք անհրաժեշտ կը համարեն:

Կօմիտետը կարող է պահանջել վալիներից զեկուցագրեր՝ այն հարցերի մասին, որ ինքն կարևոր կը համարի քննել: Տարին երկու անգամ ընդհանուր նահանգապետները պետք է ուղարկեն կօմիտետին մանրամասն յայտագիր՝ բանտերի վիճակի և բան-

տարկեալների դրութեան մասին:

Կօմիտեւորը, երբ յարմար կը համարի, կարող է ուղարկել իր անդամներից մէկին կամ մի քանիսին՝ վիլայէթներում պտտելու՝ քննութիւն կատարելու համար:

Կօմիտեւորը պէտք է ներկայացնի Բարձրագոյն Դրանը գեկու-
ցագրեր այդ բոլոր հարցերի մասին, և իրաւունք պէտք է ունենայ
անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել վալիների և մինիս-
տրական իրաւասու (competent) դէպարտամեննտերի հետ:

IX

Սասունի, Տալլորիկի եւ այլ տեղերի դէպքերի զոհ գնացած Հայերի վարձատրութիւնը

Սասունի, Տալլորիկի և այլ տեղերի դէպքերի միջոցին, թէ
իրանց անձով և թէ իրանց գոյքով վնասուած հայերը պէտք է
ստանան իրանց պատշաճաւոր հատուցումն և վարձատրութիւնը:

Կայսերական բարձր վերահսկող Կօմիսիօներին պէտք է
յանձնուի ուսումնասիրել այդ գործը և ձեռք առնել նպատակայարմար
միջոցներ:

X

Կրօնական հաւատափոխութիւն

Բ. Դուռը պէտք է հետևի, որ կրօնական հաւատափոխութիւնները
հաստատուած լինեն այն ապահուող սկզբունքների վրայ, որ տալիս
է 1856 թուի Հատտի-Հիւմայիւնը (յօդ. 10, 11, 12) և որոնք, յաճախ,
իրականութեան մէջ մնում են առանց գործադրութեան:

Այն անձինք, որոնք կը կամենան կրօնափոխ լինել, պէտք է լինեն
չափահաս, բացի դրանից իրաւունք կունենան կրօնափոխ լինել
միայն մի շաբաթ անցած այն օրից, երբ տուել են յայարարութիւն
իրանց դիտաւորութեան մասին, և այդ շաբաթուայ ընթացքում
նրանք պէտք է գտնուեն իրանց դաւանութեան պետի հսկողութեան
տակ:

XI

Հայերի առանձնաշնորհումների պահպանումը

Բ. Դուռը պէտք է ճիշդ հրահանգներ տայ իշխանություններին արգելելու համար, որ չը խախտուեն հայոց հոգևորականութեան և հայ համայնքների այն առանձնաշնորհումները և իրաւունքները, որոնք յատկացրած են նրանց 1863 թուի սահմանադրութեամբ (Հայերի Օրգանական Սահմանադրութիւն) և սուլթանների շնորհած բերաթներով:

XII

Հայերի վիճակը Փոքր-Ասիայի միւս նահանգներում

Փոքր-Ասիայի այն վիլայէթներում, որտեղ հայ ազգաբնակութիւնը որոշ սանջակներում կազմում է ընդհանուր ազգաբնակութեան մի նշանաւոր մասը, այնտեղ, վալիի մօտ, պէտք է լինի մի յատուկ քրիստոնեայ պաշտօնեայ, որին պէտք է յանձնուի հայերի պաշտպանութիւնը: Այդ պաշտօնեան պէտք է ընդունի հայ ազգաբնակութեան բողոքագրերը և խնդրագրերը, և հասցնի նրանց ի գիտութիւն վալիի, որը քրիստոնեայ պաշտօնեայի համաձայնութեամբ, ընթացք կը տայ նրանց, համեմատ դրանց բովանդակութեան:

Այդ պաշտօնեաները, բացի դրանից, պէտք է կանօնաւորապէս զեկուցագրեր ներկայացնեն Կ. Պօլսի վերահսկող մնայուն կօմիտետին: Այն վիլայէթներում, ուր կան որոշ տեղեր (ինչպէս Հաջինը՝ Ադանայի վիլայէթում և Զեյթունը՝ Հալէպի վիլայէթում), որտեղ հայերը կազմում են ազգաբնակութեան մեծամասնութիւն, այժմեան վարչական կազմակերպութիւնը պէտք է բարեփոխուի և նահիաների կազմութեան վերաբերեալ ռէֆօրմների ծրագրի պահանջները պէտք է գործադրուեն այն տեղերում, որոնցից նախապէս կը կազմուեն վարչական միութիւններ:

ԾՐԱԳԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՐԷՖՕՐՄՆԵՐԻ

Որոնք պետք է մտցնուեն Փոքր-Ասիայի արեւելեան նահանգներում, այժմեան Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիվաի, Մամուրեթ-Ուլ-Ազիզի և Դիարբեքիրի վիլայեթներում⁵⁵:

ԳԼՈՒԽ I

Վալիներ

Յօդ. 1. Վալիները պետք է ընտրուին պետութեան բարձրաստիճան պաշտօնեաներից, առանց խտրութեան կրօնի, վկայուած իբրև ամենից խելացի, ընդունակ և ազնիւ: Հետևապէս, այն անձինք, որոնց նշանակումը ընդհանուր դժգոհութեան առիթ կը տայ, և կամ հասարակական ու քաղաքական պատճառներով անյարմար կը համարուի, չը պետք է նշանակուեն վալիի պաշտօնի մէջ⁵⁶:

Բ. Դուռը, համոզուած լինելով, որ ռէֆօրմների և միջոցների իրական գործադրութիւնը էականապէս կախուած է այն անձերի բարձր յատկութիւններից, որոնք պետք է վիլայեթների ադմինիստրացիայի գլուխ անցնեն, – ամեն ջանք գործ պետք է դնի, որ այն պաշտօնեաները, որոնց կառավարութիւնը մտադիր է նշանակել, ունենան պահանջուած յատկութիւնները⁵⁷:

Յօդ. 2. – Այդ եղանակով նշանակուած վալիները չը պետք է յետ կանչուեն կամ փոխուեն, բացի այն դէպքերից, երբ նրանք, օրինական քննութիւնից յետոյ, յանցաւոր կը ճանաչուեն հակաօրինակ գործերի մէջ⁵⁸:

Նրանք պետք է նշանակուեն հինգ տարով և նրանց լիազօրու-

⁵⁵ Shopoff, p. 481-493, թարգմանութիւն «Մշակի» խմբագրութեան:

Թարգմանութիւնը բառացիօրէն ճիշտ չէ: Մենք անլացրինք բնագրի մէջ բերուած ծանօթութիւնները և ուղղեցինք գլխակարգութիւնը:

⁵⁶ Օրէնսդրութիւն Օսմանեան, Արիստարխի, Սահմանադրութիւն, Հ. V, յօդ. 39 եր. 12, յօդ. 5, եր. 50 և 51:

⁵⁷ Արիստարխի, Հ. V եր 50 և 51, հրահանգներ վիլայեթների մասին, գլ. I և II:

⁵⁸ Արիստարխի, Հ. V եր 12. Ծանուցագիր Աբեդդին փաշայի 1880 թ. Յուլիսի 5:

թիւնները կարող են նորոգուել⁵⁹:

Յօդ. 3. – Վալիները պէտք է ունենան օգնականներ (մօսվին), որոնք պէտք է լինեն քրիստոնեաներ, եթէ վալին ինքն մուսուլման է, և մուսուլմաններ, եթէ վալին քրիստոնեայ է: Մուսվիները, վալիների նման, պէտք է նշանակուեն նորին կայսերական մեծութին սուլթանից⁶⁰:

Նրանք պէտք է յատկապէս ուղարկուեն վալիի կողմից վիլայէթի բնակիչներից խնդրագիրներ ընդունելու, ոստիկանութեան և բանտերի վրայ հսկելու և հարկերի վրայ կօնտրօլ անելու համար: Նրանք ժամանակաւորապէս պէտք է կառավարեն վիլայէթը՝ վալիի բացակայութեան ժամանակ⁶¹:

Վալիին օժանդակում է նահանգական ընդհանուր խորհուրդը, որի ընտրութեան պայմանները կորոշուեն ստորև: Խորհրդի պարտաւորութիւնը պէտք է լինի խորհրդակցել հասարակաց շահերի վերաբերեալ խնդիրների մասին, ինչպէս են՝ հաղորդակցութեան ճանապարհներ շինելը, երկրագործական կրէդիտի ֆօնդ կազմակերպելը, երկրագործութեան, առևտրի և արդիւնաբերութեան զարգացումը և հանրային կրթութեան տարածումը:

ԳԼՈՒԽ II

Միութեսարիֆներ

Յօդ. 4. – Միութեսարիֆները, որոնք պիտի սանջակների գլուխ անցնեն, պէտք է նշանակուեն նորին կայսերական մեծութին սուլթանից:

Ամեն մի վիլայէթում միութեսարիֆ պաշտօնեաների մի որոշ թիւը պէտք է քրիստոնեայ լինի: Քրիստոնեայ միութեսարիֆները պէտք է նշանակուեն այն սանջակներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում: Այն վիլայէթներում, որտեղ միայն մի միութեսարիֆ կը լինի, նա պէտք է անպայման քրիստոնեայ լինի, եթէ վալին մահմետական է: Միութեսարիֆը օգնական կունենայ

⁵⁹ Ծրագիր օրէնսդր. Երոսպական Թիւրքիայի վիլայէթների համար, գլ. II յօդ. 27:

⁶⁰ Անգ, II, յօդ. 27:

⁶¹ Արիստարխի, հատ. III եր. 43, գլ. II յօդ. 17:

մի մուսվին, որը պետք է լինի քրիստոնեայ, եթե միութեսարիֆը մահմետական է, և հակառակ: Մուսվինը պետք է գործէ միութեսարիֆի փոխարէն, վերջինիս բացակայութեան ժամանակ⁶²:

ԳԼՈՒԽ III

Գայմագամներ

Յօդ. 5. – Գայմագամները պետք է նշանակուեն նորին կայսերա-կան մեծութին սուլթանից, վալիի առաջարկութեամբ: Նրանք ընտրուում են վալիի ձեռքով այնպիսի անձինքների միջից, որոնք վայելում են ազգաբնակչութեան վստահութիւնը և համապատասխանում են այն պայմաններին, որոնք պահանջուում են գոյութին ունեցող օրէնքներով:

Իւրաքանչիւր սանջակում գայմագամների պաշտօնների որոշ թիւը պետք է յատկացրուած լինի քրիստոնեաներին:

Քրիստոնեայ գայմագամներ պետք է նշանակուեն այն կազաներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում:

Յօդ. 6. – Իւրաքանչիւր դէպքում քրիստոնեայ միութեսարիֆների և գայմագամների թիւը, յամենայն դէպս, պակաս չը պետք է լինի վիլայէթի գայմագամների և միութեսարիֆների ընդհանուր թուի մէկ երրորդից⁶³:

Գայմագամը, միութեսարիֆի նման՝ պետք է օգնական ունենայ մի մուսվին, որը պետք է լինի քրիստոնեայ, եթէ գայմագամը մահմետական է, և հակառակ:

Միութեսարիֆներին և գայմագամներին կից պետք է լինի մի խորհուրդ, նման ընդհանուր նահանգական խորհուրդին:

Կազայի խորհուրդը ընտրուում է նահիանների խորհուրդների կողմից, իսկ սանջակի խորհուրդը ընտրուում է կազանների խորհուրդների կողմից: Նահանգական ընդհանուր խորհուրդը ընտրուում է սանջակների խորհուրդներից:

Ոչ մի պաշտօնատար անձ չը պետք է լինի այդ խորհուրդների անդամ: Խորհուրդներին պետք է նախագահեն վալիները,

⁶² Օրագիր Օրէնսդ. Երոպ. Թիւրքիայի համար յօդ. 108, եր. 14:

⁶³ Անդ, գլ. VII յօդ. 132 եր. 17:

միութեսարիքները և գայմագամները ըստ պատկանելոյն: Խորհուրդները պէտք է բաղկացած լինեն չորս անդամ-ներից, չը հաշուելով նախագահին. անդամներից երկուսը պէտք է մահմետական լինեն, երկուսը քրիստոնէայ:

ԳԼՈՒԽ IV

Համայնական շրջանները (նահիաները)

Յօդ. 7. – Իւրաքանչիւր կազա բաժանում է նահիաների (համայնական շրջաններ) որոշ թով⁶⁴:

Նահիան մի հողային ստորաբաժանումն է, որ պաւունակուծ է իր մէջ շատ գիւղեր՝ իրանց անշարժ կալուածներով, հողերով, արօտատեղերով և հողաբաժիններով: Նահիայի ամենանշանաւոր տեղը համարուծ է գլխավոր կենտրօն⁶⁵:

Իւրաքանչիւր նահիայի սահմանների որոշումը, ըստ կարելոյն, պէտք է կատարուի այնպէս, որ մի դաւանութեան պատկանող գիւղերը մտնեն մի նահիայի մէջ: Ընդհանրապէս խօսելով, պէտք է ուշադրութեան առնուեն տօպօգրաֆիական և էտնօգրաֆիական պայմանները, նաև ժողովրդի յարմարութիւնները⁶⁶:

Նահիան պէտք է պարունակի իր մէջ ամենաքիչը 2000 բնակիչ, ամենաշատը 10,000 բնակիչ⁶⁷: Գիւղերի իւրաքանչիւր մի խումբ, որ կազմուծ է նահիայի մի մասը և որի բնակիչները 1000-ից պակաս չեն, կարող է պահանջել որ իրանից առանձին մի նահիա կազմուի այն պայմանով, եթէ յանձն առնի նոր վարչութեան ծախքերը⁶⁸:

Յօդ. 8. – Իւրաքանչիւր նահիա պէտք է կառավարուի մէկ միւղիրի ձեռքով, որի օգնականն է խորհուրդը, որ ընտրուծ է ազգաբնակութեան կողմից և բաղկացած է ամենաքիչը չորս և

64 Արիստարխի, Հ. II եր. 283, վիլայէթների օրէնք, § IV:

65 Արիստարխի, Հ. III եր. 22. վիլայէթների վարչութեան կազմակերպութիւն (1237) գլ. III, յօդ. 50:

66 Արիստարխի, Հ. V, եր. 60, 64, 7-դ կանոնադր. ծրագիր օրէնս. Երոպ. Թիւրք. համար եր. 20 § X, յօդ. 154, 168, եր. 13, յօդ. 103:

67 Արիստարխի, Հ. V, եր. 60, 67, 7-դ կանոն. յօդ. 2:

68 Արիստարխի, Հ. III եր. 22:

ամենաշատը՝ ութ անդամներից⁶⁹:

Այդ խորհուրդը ընտրում է իր անդամների միջից միուրի և նրա օգնական:

Միուրիը պետք է պատկանի այն դաւանութեան, որին պատկանում է բնակիչների մեծամասնութիւնը, իսկ օգնականները՝ միւս դաւանութեան: Խորհուրդը պետք է նոյնպէս ունենայ մի քարտուղար:

Յօդ. 9. – Եթէ նահիաների բնակիչները բոլորը պատկանում են մէկ դաւանութեան, խորհրդի անդամները պետք է ընտրուեն այդ դաւանութեան պատկանող բնակիչներից: Եթէ համայնական շրջանի ազգաբնակութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պետք է ունենայ իր ներկայացուցիչը, համեմատ իր թուական կարևորութեան, բայց այն պայմանով, որ 25 տնից պակաս չը լինի⁷⁰:

Յօդ. 10. – Միուրիները պետք է ստանան նահիայի բիւժէից մի որոշ ռոճիկ: Նոյնպէս պետք է մի որոշ ռոճիկ տրուի խորհրդի քարտուղարին⁷¹:

Որոշ շինութիւն պետք է յատկացուի նահիայի խորհրդի և համայնական շրջանի վարչութեան ատեանի համար⁷²:

Յօդ. 11. – Նահիայի խորհրդի անդամները պետք է լինեն օսմանեան հպատակ, պետք է շահ ունենան նահիայում, պետք է 30 տարեկան լինեն, և ընտրուեն այն անձանց միջից, որոնք վճարում են պետութեանը տարեկան 100 պիաստր հարկ: Նրանք դատաստանի տակ ընկած չը պետք լինեն⁷³:

Յօդ. 12. – Հէնց որ խորհուրդը իր միջից ընտրի միուրիին, նրա անունը պետք է հաղորդուի մալիին, որը պաշտօնապէս կը հաստատի նրան, երբ կը համոզուի, որ օրինական պահանջները կատարուած են⁷⁴:

Յօդ. 13. – Իմամները, քահանաները, ուսուցիչները և կառավա-

⁶⁹ Արիստարխի, Հ. V, եր. 64, 7-դ կանոն. գլ. III յօդ. 7:

⁷⁰ Արիստարխի, Հ. V, եր. 62, յօդ. 13:

⁷¹ Արիստարխի, Հ. V, եր. 61, յօդ. 9:

⁷² Շրագ. Օրէն. Երուս. Թիւրք. վիլայէթների համար եր. 22 յօդ. 108, եր. 20, յօդ. 155:

⁷³ Անդ, եր. 24, յօդ. 185:

⁷⁴ Արիստարխի, Հ. V, եր. 62, յօդ. 11:

րութեան մէջ պաշտօն ունեցող ուրիշ անձինք չեն կարող միւղիրի պաշտօն վարել⁷⁵:

Յօդ. 14. – Խորհրդի անդամների կէտը պէտք է նորոգուի ամեն տարի. միւղիրները պէտք է մնան պաշտօնում երկու տարի: Միւղիրը և անդամները չեն կարող վերընտրուել յաջորդաբար մի անգամից անելի⁷⁶:

Յօդ. 15. – Միւղիրի և Խորհրդի անդամների լիազօրութիւնները, ինչպէս և նրանց ընտրութեան և փոխարինման եղանակը պէտք կանոնաւորուի, համաձայն Համայնքների Վարչական Կանօնադրութեան, յօդ. 14, 16, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և համաձայն *Projet de loi sur les vilayet de la Turquie d'Europe* (§ 12)⁷⁷:

Յօդ. 16. – Նահիայի պատկանող գիւղերից իւրաքանչիւրը պէտք է ունենայ մի մուխթար այն դէպքում, եթէ գիւղը մի քանի թաղեր ունի: Եթէ բնակիչները բաժանուած են զանազան դաւանութիւնների, իւրաքանչիւր թաղի և բնակիչների իւրաքանչիւր դաւանութեան համար մէկ մուխթար պէտք է լինի⁷⁸:

Յօդ. 17. – Ոչ մի գիւղ չէ կարող պատկանել երկու համայնական շրջանի՝ ինչ և լինի նրա բնակիչների վիճակը և թիւը:

ԳԼՈՒԽ V

Ոստիկանութիւն

Յօդ. 18. – Ոստիկանութեան պաշտօնեաները նշանակուած են համայնական շրջանի Խորհրդի ձեռքով, նահիայի ազգաբնակչութեան միջից, առանց կրօնի խտրութեան, և թուով այնքան պէտք է լինեն, որ կարողանան բաւարարութիւն տալ թե տեղական պէտքերին և թէ վիլայէթի ժանդարմէրիայի ծառայութեան⁷⁹:

Յօդ. 19. – Նահիայի ոստիկանական պաշտօնեաները պէտք է

⁷⁵ Արիստարխի, Հ. V, եր. 62, յօդ. 12:

⁷⁶ Արիստարխի, Հ. V, եր. 62, յօդ. 16:

⁷⁷ Արիստարխի, Հ. V, յօդ. 63 և 64:

⁷⁸ Արիստարխի, Հ. III, եր. 24 յօդ. 60, Հ. V, եր. 61 յօդ. 8:

⁷⁹ Արիստարխի, Հ. V, գլ. II յօդ. 6. Աբէդդին փաշայի ծանուցագիրը (5 յուլիսի 1880), ծրագիր Օրէնս. Եւրոպ. Թիւրք. վիլայէթների համար եր. 34 § XVII յօդ. 304, 305:

դրուեն միւղիրի հրամանների տակ և պէտք է ունենան չառուների կամ օնբաշինների պաշտօններին համապատասխանող գլխաւորներ⁸⁰:

Նրանք պէտք է զինաւորուած լինեն և ունենան մի համազգեստ, որի ձևը կորոշուի յետոյ: Նրանք ռոճիկ կը ստանան նահիէի բիւլ-ժէտից, և բացի իրանց պօլիցիական ծառայութիւնից, կարող են զբաղուել իրանց սովորական պարապմունքներով ևս: Նրանք կարող են լինել հեծեալ կամ ոչ, նայելով իրանց ծառայութեան պահանջներին⁸¹:

Ոչ-մահմետականները, որոնք ենթակայ են «բէղէլ-ասկէրիէի» հարկին, և որոնք կարող են ոստիկանական ծառայութեան կոչուել, ազատ կը լինեն այդ հարկի վճարումից, քանի նրանք կը գտնուեն ոստիկանական ծառայութեան մէջ⁸²:

Յօդ. 20. – Նահիայի ոստիկանութեան պաշտօնեաների առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի պահպանել կարգը և խաղաղութիւնը իրանց երկրի մէջ և նահիայի ճանապարհների վրայ: Բացի դրանից նրանք պէտք է լինեն միւղիրի հրամանի տակ և պօստին ուղեկցելու համար մարդիկ տան, այլ և օգնեն միւղիրին՝ ի կատար ածելու դատաստանական վճիռները և օրէնքի պահանջները:

ԳԼՈՒԽ VI

Ժանդարմերիա

Յօդ. 21. – Ամեն մի նահանգում, յատուկ օրէնքի հիման վրայ, կը կազմակերպուի նահանգական ժանդարմերիա, որի բարձր և ստորին պաշտօնեաները կընտրուեն կայսրութեան հպատակների բոլոր դասակարգերի միջից⁸³:

Ժանդարմերիան պէտք է կազմակերպուի վիլայէթում, բոլոր բնակիչների միջից, առանց խտրութեան ցեղի կամ կրօնի: Ժանդարմերիայի երկու երրորդականը կը կազմուի նահիայի ոստիկանութեան պաշտօնեաների միջից, կէսը մահմետական, կէսը

⁸⁰ Ծանուցագիր Աբէդդին փաշայի 1880 թ. յուլիսի 5:

⁸¹ Ծանուցագիր Բ. Դրան (1880 թ. հոկտեմ. 3), Blue Book 178-179:

⁸² Ծրագր. Օրէնս. Երոպ. Թիւրք. վիլայ. համար, յօդ. 168 եր. 22:

⁸³ Անդ, § XVII, յօդ. 308, եր. 34:

ոչ-մահմեդական: Մնացած մի երրորդը բաղկացած պետք է լինի չաուշներից և բաշ-չաուշներից և պետք է ընտրուի կանոնաւոր զօրքի ամենաընդունակ մարդկանց միջից:

Դիսցիպլինայի և զինավարժութեան կողմից, ժանդարմերիան պետք է գտնուի զինուորական մինիստրի իշխանութեան տակ: Նրա ծախքը պետք է հոգացուի վիլայէթի հաշուով: Ժանդարմերիայի գնդի օֆիցերների ռոճիկը պակաս չը պետք է լինի, քան կանոնաւոր զօրքի համապատասխան աստիճանի օֆիցերների ռոճիկը⁸⁴:

ԳԼՈՒԽ VII

Բանտերը

Յօդ. 22. – Այն անձինք, որոնք բանտարկուած են, բայց դեռ չեն մեղադրուած, չը պետք է խառնուեն այն անձանց հետ, որոնք արդէն կրում են իրանց պատիժը՝ դատավճռից յետոյ⁸⁵: Բանտերը պետք է կատարեն առողջապահական անհրաժեշտ պահանջները, և բանտարկելաների հետ չը պետք է վարուեն կոպտութեամբ: Վալին պիտի նշանակի բանտերի դիրեկտորներին և պահապաններին, որոնց մէջ պետք է լինի ոստիկանական պաշտօնեաների և ժանդարմների մի որոշ թիւ⁸⁶:

ԳԼՈՒԽ VIII

Սկզբնական քննութեան կօմիտէ

Յօդ. 23. – Վալիները պետք է հաստատեն վիլայէթների և սանջակների գլխաւոր քաղաքներում սկզբնական քննիչ մասնաժողովներ, բաղկացած նախագահից և երկու անդամներից, մահմեդական և ոչ մահմեդական⁸⁷: Այդ մասնաժողովի պաշտօնը պետք է լինի քննել ժանդարմների ձեռքով կատարուած ձերբակալութիւնների պատճառները և հրամայել անմիջապէս հարցաքննութեան ենթար-

⁸⁴ Ծանուցագիր Աբէդդին փաշայի:

⁸⁵ Ծրագ. Օրէնսդր. Եւրոպ. Թիւրք. վիլայէթ. համար, եր. 24 § XVII, յօդ. 309:

⁸⁶ Արիստարխի Հ. V, եր. 63 յօդ. 11:

⁸⁷ Արիստարխի, Հ. V, եր. 52 յօդ. 11 և 12:

կելու բռնուածներին, և բանտարկել տալ նրանց, եթէ այն յանցանքները, որոնց մէջ նրանք ամբաստանուում են, կրում են այնպիսի բնաւորութիւն, որ նրանց ենթակայ է անուամ օրէնքի սահմանած պատիժներին: Մասնաժողովները պէտք է նոյնպէս ազատ թողնեն անմիջապէս և դնեն ոստիկանութեան հսկողութեան տակ այն բանտարկեալներին, որոնց վարմունքը այլ ևս կարիք չէ թողնում, որ օրէնքը գործադրուի: Պէտք է աշխատել նոյնպէս, որ ոչ մի անձն, առանց պատճառի և ապօրէն կերպով բանտ չը գցուի: Այդ նպատակով նրանք պէտք է այցելեն բանտերը և բանտարկեալների պայմանները քննեն: Մասնաժողովները պէտք է կազմեն զեկուցագրեր և ուղարկեն վալիներին, յիշատակելով նրանց մէջ ոստիկանութեան ձեռքով բանտարկուած այն անհատներին, որոնց հարկաւոր է ազատել, այլ և նրանց, որոնք մնում են բանտի մէջ:

ԳԼՈՒԽ IX

Վերահսկողութիւն քիւրդերի վրայ

Յօդ. 24. – Թափառական քիւրդերին կառավարելու համար իւրաքանչիւր վիլայէթում վալին պէտք է ունենայ իր ձեռքի տակ մէկ Աշիրէթ-Մէմսուրի (մէկ պաշտօնեայ, որի գործը պէտք է լինի հսկել քիւրդ ցեղերի վրայ). այդ պաշտօնեան պէտք է իրաւունք ունենայ ձերբակալել աւազակներին և ուրիշ չարագործներին ու պահանջել, որ նրանց ենթարկեն սովորական դատարաններին: Նա պէտք է ունենայ իր ձեռքի տակ մի բաւարար պահակախումբ և կարող է, հարկաւոր դէպքում, պահանջել տեղական ոստիկանութեան աջակցութիւնը: Նրա իշխանութեան տակ դրուած պաշտօնեաների մի որոշ թիւ պէտք է ուղեկցի ամեն մի ցեղին՝ նրանց տարեկան քոչի ժամանակ:

Նրանք պէտք է գործադրեն ոստիկանական իրաւասութիւն, բանտարկեն բոլոր չարագործներին և յանձնեն նրանց սովորական դատարաններին: Թափառական ցեղերի արօտատեղերի և բանակատեղերի սահմանները պէտք է ճշդութեամբ որոշուած լինեն: Այդ քոչերը չը պէտք է պատճառ դառնան զրկանք հասցնելու այն գաւառների բնակիչներին, որտեղով անցնում են թափառական ցեղերը և կամ ժամանակաւորապէս գրաւում: Եթէ նրանք որ և է չարագործութիւն անեն գիւղացիների սեփականութեան դէմ կան որ

և է զրկանք հասցնեն գիւղացիներին, այդ օրից սկսած կարգելուի նրանց որ և է տեղափոխութիւն կամ քոչ⁸⁸:

Այն կանօնները որոնք գոյութիւն ունեն գէն կրելու վերաբերմամբ, խստիւ պէտք է գործադրուեն բոլոր քիւրդ ցեղերի մէջ, լինեն նրանք հաստատաբնակ, թէ թափառական⁸⁹: Ջանքեր պէտք է անուեն պատուաստել նստակեաց կեանքի սկզբունքները թափառական ազգաբնակութեան, ընտելացնել նրան երկրագործութեան, և այդ նպատակով որոշ հողեր պէտք է յատկացնել նրանց այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատուելը չէ կարող որ և է վսաս հասցնել նստակեաց ազգաբնակութեան բարեկեցութեան և խաղաղութեան⁹⁰: Ընտրողական և քաղաքացիական իրաւունքները չը պէտք է պատկանեն այն անձանց, որոնք ոչ-նստակեաց ազգաբնակութեան մասն են կազմում, կամ որոնք հաստատուած չեն մշտական և մնայուն կերպով մի որ և է նահիայի հողի վրայ⁹¹:

ԳԼՈՒԽ X

Համիդիէի հեծելազօրքը

Յօդ. 25. – Այն դէպքերում, երբ հարկաւոր համարուի գործ դնել Համիդիէի հեծելազօրքի գնդերը, այժմ գոյութիւն ունեցող օրէնքներով սահմանուած զինավարժութեան պէրիօդներից դուրս, այդ գնդերը կարող են գործածուել և բանակել միայն կանօնաւոր զօրքի գնդերի հետ միասին, որի մի երրորդ մասից աւելի չը պէտք է լինեն:

Սովորական ժամանակներում, երբ Համիդիէի հեծելազունդը ծառայութեան մէջ չէ, չը պէտք է կրի ոչ նշանազգեստ և ոչ էլ զէնք: Այդ պարագայում նրանք կարող են ենթարկուել սովորական դատարաններին, ինչպէս արդէն այդ արձանագրուած է Համիդիէի Կանօնադրութեան մէջ, համաձայն Ռէդիֆների այժմեան կանօնադրութեան (Օսմանեան Զինուորական Դատաստանագիրք, յօդ. 4):

⁸⁸ Չերքզնեթի օրինակը Ադանայի վիլայեթի Ազիզի կազայում (1880):

⁸⁹ Ծր. Օրէնս. Եր. Թիւր. վիլայեթ. համար եր. 18, յօդ. 137:

⁹⁰ Համ. երեք յանձնաժողովների ձեռք բերած հետևանքները 1880:

⁹¹ Արիստարիսի, յօդ. 82 եր. 284, գլ. I յօդ. 63. Ծրագ. Օրէնս. Եր. Թիւր. վիլ. համ. եր. 23 § XII, յօդ. 179:

ԳԼՈՒԽ XI

Կալուծագրերի վերաբերեալ հարցը

Յօդ. 26. – Մի յատուկ յանձնաժողով, որը բաղկացած պետք է լինի մի նախագահից և չորս անդամներից, – երկուսը մահմեդական և երկուսը քրիստոնեայ, – պետք է պաշտօն ունենայ քննելու սեփականություններին վերաբերեալ ապացուցագրերը, և մերկացնել այն անարդարությունները և անկանօնությունները, որ կը նկատի:

Մի յատուկ յանձնաժողով ապագայում պետք է որոշի այն ամենալավ եղանակը, որով կարելի լինի երաշխատրել սեփականության իրաւունքները:

ԳԼՈՒԽ XII

Տասանորդական տուրքերի ժողովելը

Յօդ. 27. – Բոլոր հարկերը, հաշուելով դրանց մէջ և տասանորդական տուրքերը, պետք է հաւաքուեն ուղղակի՝ նահիայի խորհուրդների կողմից ընտրուած և միւդիրի իշխանութեան տակ գտնուող հարկահանների ձեռքով⁹²:

Նահիայի բոլոր բնակիչները փոխադարձաբար պատասխանատու են իրանց վրայ դրուած հարկերի լիակատար վճարման մասին:

Յօդ. 28. – Տասանորդական տուրքերի կապալով տալը և ժողովրդին բռնի բանեցնելը վերացում է⁹³: Իւրաքանչիւր վարչական կենտրոն, սկսած նահիայից, պետք է իր հաւաքած հարկերից վերցնի այն գումարը, որը հարկաւոր է իր վարչութեան ծախքերի համար, համաձայն որոշուած և կառավարութեան կողմից հաւանութիւն գտած բիւժէտի⁹⁴: Նոյնպէս և վիլայէթի ֆինան-

⁹² Արիստարխի, հ. V եր. 30, 51, 63. Ծրագ. օրէնս. Եւ. Թիւրք. վիլայ. համար եր. 21 § X. յօդ. 160, 163, 164:

⁹³ Արիստարխի, հ. V եր. 31:

⁹⁴ Արիստարխի, հ. III եր. 33 յօդ. 104. Ծրագ. Օրէնս. Եւ. Թիւրք. վիլ. համար եր. 10 յօդ. 83 և յօդ. 107, 108, բ. Դրա ծանուցագիրը (5 հոկտ. 1880) յօդ. 5:

սական վարչությունը պետք է վերցնի նահանգի հարկերի ամբողջ քանակությունից՝ վիլայեթի վարչութեան համար հարկաւոր գումարը, հաշուելով դրա մէջ հասարակական աշխատանքների և հանրային կրթութեան ծախքերը⁹⁵:

Ազգաբնակչութիւնը որ և է դէպքում պարտաւորուած չը պետք է լինի ճրիաբար հայթայթել թէ զօրքին և թէ պաշտօնեաներին բնակարան և նրանց ապրուստի համար հարկաւոր պաշարը:

Այն դէպքերում, երբ հարկերը չը վճարելու համար էկզէկուցիա է նշանակուում, պետք է աշխատել, որ ժողովուրդը չը զրկուի առաջին կարևորութեան առարկաներից և այն գործիքներից որ նա բանեցնում է:

ԳԼՈՒԽ XIII

Արդարադատութիւն

Յօդ. 29. – Նահիայի իւրաքանչիւր բաժնում պետք է լինի ծերերի մի խորհուրդ, որին պետք է նախագահէ մուխթարը, և որի պաշտօնը պետք է լինի ընտանեբար լուծել բնակիչների մէջ ծա-գած վեճերը⁹⁶:

Յօդ. 30. – Իւրաքանչիւր կազայում, նահիաների թուի համեմատ, պետք է լինեն բաւականաչափ հաշտարար դատաւորներ, որոնց նշանակուում է արդարադատութեան մինիստրը, վալիի առաջարկութեամբ: Այդ դատաւորներից մէկը անպատճառ պետք է ապրի կազայի գլխաւոր քաղաքում: Հաշտարար դատաւորների մի երրորդ մասը իւրաքանչիւր կազայում պետք է քրիստոնեաներ լինեն: Քրիստոնեայ հաշտարար դատաւորները պետք է բնակութիւն ունենան այն կենտրոններում, որտեղ, քրիստոնեայ ազգաբնակչութիւնը մեծամասնութիւն է կազմում:

Յօդ. 31. – Հաշտարար դատաւորը իրաւասութիւն պետք է ունենայ դատելու՝

ա) Քրէական գործերը, առանց բողոքի (appeal) իրաւունքի. օրէնքի դէմ գործուած զեղծումները, որոնք պատժուում են ոստիկա-

⁹⁵ Անդ. Ծանուցագիր Աբէդդին փաշայի:

⁹⁶ Արիստարխի հատ. III եր. 34 յօդ. 107:

նական սովորական միջոցներով, և բողոքելու իրաւունքով այնպիսի փոքր յանցանքներ, որոնց պատիժը ամենաշատը 500 պիաստրից և երեք ամիս բանտարկութիւնից ակելի չէ:

բ) Քաղաքացիական գործերը, առանց բողոքի իւրաւունքի, բոլոր անձնական գործերը, քաղաքացիական և առևտրական դատերը, որոնց գումարը հազար պիաստրից չէ անցնում, և բողոքի իրաւունքով այնպիսի գանգատներ, որոնք հասնում են հինգ հազար պիաստրի:

Յօդ. 32. – Հաշտարար դատաւորը կարող է կազմել և հաշտարարատեան. նա կարող է, երկու կողմերի հաւանութեամբ, նշանակել միջնորդ դատաւորներ՝ լուծելու համար այնպիսի վեճեր, որոնց գումարը հինգ հազար պիաստրից չէ անցնում: Միջնորդ դատաւորների կայացրած վճռի դէմ դատուողները իրաւունք չունեն բողոքելու:

Յօդ. 33. – Կազաների դատարանների տեղը բռնող հաշտարար դատաւորների վճիռների դէմ բողոք կարելի է տալ սանջակի դատարանին:

Յօդ. 34. – Բանտարկութեան վերաբերմամբ հաշտարար դատաւորների արձակած այն վճիռները, որոնք բոլոր ինստանցիաներից անց են կացել, պէտք է ի գործ դրուեն կազայի բանտում: Միւղիրները պարտաւոր են աջակցել հաշտարար դատաւորներին ի կատարածելու ինչպէս քաղաքացիական, այնպէս էլ քրէական վճիռները:

Յօդ. 35. – Կազայի ատեանները ջնջուած լինելով, սանջակի դատարանները ձեռնհաս են դատելու այն քաղաքացիական վեճերը, որոնք հինգ հազար պիաստրից չեն անցնում. նոյնպէս և հաշտարար դատաւորների քաղաքացիական վճիռների դէմ տուած բողոքները⁹⁷: Սանճակի դատարանները պէտք է ունենան միայն քաղաքացիական ատեան, քանի որ քրէական ատեանի տեղը բռնում է շրջող նահանգական ատեանը:

Սանջակի ատեանները պէտք է բաղկացած լինեն մէկ դիպլոմաւոր նախագահող դատաւորից, որին նշանակում է արդարադատութեան մինիստրը և երկու անդամներից, որոնց ընտրում է վալին, սանջակների խորհուրդների ձեռքով կազմած ցուցակների

⁹⁷ Արիստարխի, Հ. II, եր. 292 և 293 յօդ. 11. Ծրագիր Օրէնսդրութեան Եւրոպական Թիւրքիայի վիլայէթների համար եր. 28 յօդ. 238:

միջից:

Յօդ. 36. – Սանջակի քրեական ատեանների բաժինները փոխարինում են շրջիկ նահանգական ատեաններով: Նահանգական ատեանները բաղկացած են մէկ նախագահող դատաւորից, որը ընտրուում է վիլայէթի բարձրագոյն խորհրդի անդամների միջից. նրան պաշտօնակից են լինում երկու անդամներ, որոնք նշանակուում են բողոքարկու ատեանի կողմից (Court of Appeal) սանջակի հաշտարար դատաւորների միջից, մէկը մահմետական, իսկ միւսը քրիստոնեայ: Հաշտարար դատաւորները պէտք է ստանան որոշ ռոճիկ, շրջիկ նահանգական ատեանների ամբողջ տևողութեան ժամանակ⁹⁸:

Յօդ. 37. – Նահանգական ատեանը հերթով պէտք է շրջի բոլոր կազաները, հաշուելով և սանջակի գլխաւոր քաղաքը, ուր նրա ներկայութիւնը հարկաւոր կը լինի: Նա ձեռնհաս է քննելու հաշտարար դատաւորների վճիռների դէմ տուած բողոքները, այլ և այն գործերը, որոնց պատիժը հինգ հազար պիաստրից կամ երեք ամիս բանտարկութիւնից չէ անցնում, և այդ վճռի դէմ բողոքել իրաւունք չը կայ: Քրեական գործերի վերաբերութեամբ նահանգական դատարանների արձակած վճիռները չեն կարող գործադրուել, առանց վճռաջինջ ատեանից անցնելու:

Յօդ. 38. – Հասնելով կազան, նահանգական ատեանի նախագահը պէտք է պահանջէ, քննիչ դատաւորի միջոցով, այն բոլոր գործերի ցուցակը, որ ուղղակի նրա ձեռքով են անցել, և մի ուրիշ ցուցակ այն գործերի, որոնք դեռ քննութեան ներքոյ են: Եթէ նա նկատի այդ վերջինի մէջ որ և է անկանոնութիւն կամ անտեղի յետաձգութիւն, նա անմիջապէս մի զեկուցագիր պէտք է ուղարկի արդարադատութեան մինիստրին:

Նահանգական ատեանը՝ հասնելով կազան կամ այնտեղից հեռանալիս՝ պէտք է այցելէ բանտերը, քննի բանտարկեալների վիճակը և ստուգի բանտարկուածների ցուցակը:

Յօդ. 39. – Վիլայէթի բարձրագոյն ատեանը պէտք է բաղկացած լինի մի նախագահից, և այնքան անդամներից, որ հնարաւորութիւն ունենան քննելու իրանց առաջարկուած քաղաքացիական գործերը և մատակարարեն շրջիկ նահանգական ատեաններին նախա-

⁹⁸ Արիստարխի, Հ. II եր. 287 յօդ. 75:

գահներ:

Քաղաքացիական դատերում կը գործի մի բողոքարկու ատեան, իսկ քրէական գործերում մի նահանգական ատեան: Նրա նիստը կանօնաւոր կը համարուի ամեն անգամ, երբ ներկայ կը լինեն մի նախագահ և երկու անդամ, Բացի դրանից նա պէտք է ունենայ մի հասարակաց դատախազ և բաւական թուով պաշտօնակատարներ:

Յօդ. 40. – Հաշտարար դատաւորների ինչպէս և ամեն տեսակ դատարանների դատաւարութիւնը պէտք է կատարուի թիւրքերէն լեզուով. թիւրքական բնագրին պէտք է կցուի հայերէն թարգմանութիւնը՝ նայելով տեղին և դատուող կողմերին⁹⁹:

Թիւրքաց կառավարութիւնը իսկոյն սկսեց իր հակաճառութիւնները հայկական ըէֆօրմների դէմ: Առաջին պատասխանը Սուլթան Աբդիլ-Համիդի անունից յայտնուեց երեք դեսպաններին յունիսի 3-ին.

⁹⁹ Արիստարխի, Հ. V եր. 56 յօդ. 26:

**Բ. ԴՐԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ, ՌՈՒՍԻԱՅԻ,
ԱՆԳԼԻԱՅԻ ԴԵՍՊՈՒՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՄԱՏՈՒՑՑՈՒԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳՐԻՆ**¹⁰⁰

Յանձնուած 3 յունիս 1895-ին

Վիլայէթներու վարչական բարենորոգումներու ծրագիրը որ մա-տուցուած է Սուլթանին, նոցին վստմութիւնք դեսպաններուն կողմէ, ամենաուշադիր ուսումնասիրութեան առարկայ եղաւ.

1) Սուլթանի գլխաւոր ցանկութիւնը և ձգտումները, իր երկրին և իր բոլոր հպատակներուն բարգաւաճութիւնը ամենէն արդարագոյն եղանակով աճեցնել և զարգացնել լինելով, Ն. Կ. Վեհափառութիւնը արդարադատ համարեց չի սահմանափակել վարչական այս բարե-նորգումներու կիրարկումը, իր կայսրութեան միայն մի միասին մէջ, այլ բոլոր վիլայէթներն ալ անոնցմով նպաստաւորել:

2) Վերոյիշեալ ծրագիրին մէջ առաջարկուած կէտերուն մեծ մասը յարմար լինելով վիլայէթներու օրէնքին տրամադրութեան, որ է Տեսդուրի I հատորի մէջ, էջ 680. 7 ճեմագիլլախար 1281, ինչպէս նաև վիլայէթներու ընդհանուր վարչութեան կանոնադրութեան տրամա-դրութիւններուն, նոյն հատոր էջ 625. 29 շէվվալ 1287 թուակիր, – Ն. Կ. Վեհափառութիւնը որպէս զի կարողանայ անվթար պահել կեդրոնացման սկզբունքը, կ'ուզէ ապահովել տրամադրուածներուն կիրարկումը, բացի անոնցմէ, որոնք ընդհանուր պետական խոր-հուրդէն կախեալ են, և կ'որոշէ որ գործադրեն օրէնքի այն տրա-մադրութիւնները որոնք դեռ չեն գործադրուած: Միանգամայն, որովհետև ընդունուած կանոնադրութիւններուն մէջ չիկայ ոչ մի յիշատակութիւն, վալիները հինգ տարի իրենց պաշտօնին վրայ պահելու համար, և ոչ ալ մշտական խորհուրդներու մասին, որ կազմուած պէտք է լինէին անձնիր վալիի, միութեսարիֆի, զայ-մագամի նախագահութեան տակ, այն իշխանութիւնները որոնք կ'ուզեն այս պաշտօնատարներուն վստահիլ, մտած լինելով արդէն վարչական խորհուրդներու կանոնաւոր իշխանութիւններու մէջ, այս խորհուրդները առ այժմ նիւթապէս անհրաժեշտ չեն:

¹⁰⁰ Schopoff, p. p. 493-495.

3) Գալով այն յօդուածներուն, որոնք կը վերաբերին դատարաններու, քաղաքապահ զօրքի, ոստիկանութեան վերակազմութեան, յարմար չեն գործադրութեան մէջ եղող օրէնքներուն և կանոնադրութիւններուն տրամադրութիւններուն. բայց դատական քննիչներ նշանակուած են. քաղաքապահ զօրքը և ոստիկանութիւնը քաղաքներու մէջ պէտք է աւելնայ, մշտական կերպով դատարաններուն և բանտերուն վերահսկելու համար, և կարգ կանոնը նահիէներու և գիւղերու մէջ երաշխատրելու համար: Անոնցմէ բաւարար թիւ մը շրջագայութեան պէտք է հանուին, զանոնք նահիէներու կեդրոնին սահմանելու համար:

4) Որոշուեցաւ վարչական պաշտօնէութիւններու քաղաքային զօրքի, ոստիկանութեան մէջ, մուսուլմաններէն զատ, օսմանեան երկրին մէջ բնակող ոչ մուսուլման ուրիշ հպատակներ կանչել և գործածել, իւրաքանչիւր վիլայէթի միւսիւման և ոչ միւսիւման ազգաբնակչութեան համեմատութեամբ:

Երեք դեսպանները իրանց մշակած ծրագիրն ու յիշատակագիրը հաղորդել էին և Կ. Պօլսի Հայոց Պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին: Հետևեալ գրութեան մէջ Պատրիարքը ցոյց էր տալիս թէ հայերն ինչպէս վերաբերուեցին ծրագրուած բա-րենորոգումներին:

№ 22

ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ՍԸՐ ՖԻԼԻՊ ՔԸՐՐԻԻՆՆ¹⁰¹

Վսեմափայլ Դեսպան

Պատիւ ունեցայ եղեկանալու երոպական մեծ պետութեանց կողմէ Բ. Դրան մատուցեալ բարենորոգմանց ծրագրին և յարակից յիշատակագրին պարունակութեան, զորս Ձեր Վսեմութիւնն շնորհ ըրած էր ինձ հաղորդել, Ֆրանսայի և Ռուսիոյ վսեմ, դեսպանաց հաճութեամբ:

¹⁰¹ Էջմիածնի կաթողիկոսական դիւան:

Այն կատարեալ վստահութիւնն զոր կը տածեն Ձեր ներկայացուցած պետութեան իմաստութեանն, ինչպէս նաև Ձեր Վսեմութեան հեռատեսութեան վրայ, ու միանգամայն յարգանքն, զոր կզգամ երեք մեծ պետութեանց ներկայացուցիչներուն գործակցաբար կատարած այս կարևոր աշխատութեան առջև, դժուար դիրքի մը մէջ կը թողուն զիս անոր վրայ կարծիքս յառաջ բերելու համար:

Սակայն պիտի համարձակէի, վսեմ. դեսպան, յայտնելու ինչ երկիւղ որ կզգամ, խոհելով որ մի գուցէ պատրաստուած ծրագիրը հակառակ Ձեր ազնի բաղձանաց՝ չկարենայ զարման բերել հայ ժողովրդեան տառապանաց և իրագործել Պերլինի Վեհաժողովէն ի վեր այնքան անձկանօք և ստիպողաբար սպասուած բարութումներն ու բարենորոգումները:

Ըստիս երկու կէտեր ի յայտ կուգան ծրագրէն. նպատակն որ է կանոնաւորութեան ու արդարութեան վիճակի մը հաստատութիւնն հայկական նահանգաց մէջ, և առ այն հասնելու գործողութեան միջոցն ու հսկողութիւնը, որ նոյն իսկ ոգին է ծրագրին:

Վերին հսկողի կարգումն, որու երոպացի մ'ըլլալն հարկաւորապէս չէ սահմանուած և որու պաշտօնն առ ժամանակեայ բնութիւն մ'ունի, պարզ ազդարարութիւններ պետութեանց կողմէ՝ Բարձրագոյն Դրան կատարած կուսակալներու ընտրութեան նկատմամբ, հսկողութեան մնայուն յանձնաժողով մը ի Կոստանդնուպօլիս՝ բաղկացեալ օսմանեան պաշտօնատարներէ և անոնց անուանումն թողուած Բարձրագոյն Դրան կամաց, և քիչ մ'աւելի մասնաւորելով դատական և ոստիկանական մարմնոց կազմակերպութիւն մը անմասն իսպառ երոպական տարրի մը գոյութենէ, և վերջապէս ծրագրին ընդհանուր կեդրոնացական հոգին, այս ամենը բաւական պիտի կրնան ըլլալ արդեօք գոհացում տալու առաջադրեալ նպատակին և իրագործելու հսկողութեան պէտքն, պէտք որու ստիպողութիւնն շատ աւելի երևան կելնէ այսօր ծրագրին շուրջը դարձած պարագայներով. մասնաւորաբար աչքի կը զարնէ չգոյութիւնն յօդուածի մը որով արգիլուած ըլլար ոչ քրիստոնեայ գաղթականներու զետեղումն հայաշատ գաւառներու մէջ, նոյնպէս աչքի կը զարնէ չգոյութիւնն բանակին վերաբերեալ յօդուածի մը, որ սահմանուած լինէր արգիլելու Սասունի նման դէպքերու վերադարձն:

Թող Ձեր Վսեմութիւնը ներէ ինձ մտածելու որ ինք շատ աւելի

հեռատեսութիւն ունի և շատ անելի խորին գիտակցութիւն ոչ քաջաւերիչ անցեալի մը և այն եղելութեանց որ 1878-էն ի վեր քանիցս տեղի տուած են տէրութեանց անյաջող միջամտութեամբ, զգացած ըլլալու համար երկբայութիւն մ'այս մասին, ծրագրին աշխատասիրութեան պահուն:

Չենք տարակուսիր, թէ վարչական դրութեան մը հաստատութիւնն, որ բնութիւն ունենար բաղձացեալ պայմանաց մէջ գործելու ինքնովի, առանց պէտք թողելու դեսպանական ուղղակի հաւաքական ու անընդհատ միջամտութեանց, ազգութեան այժմու աստիճանաւ, լաւագոյնս պիտի պատասխանէր իրաց ճշմարիտ պահանջմանց ու հայ ժողովրդեան կարօտութեան և ըղձից, և թերևս նոյն իսկ Ձեր ներկայացուցած պետութեան դիտմանց, կը համարձակիմ ըսել:

Ձեր Վսեմութիւնը չկարծէր արդեօք թէ երոպական մնայուն վերին հսկող մը, զոր օրինակ, և կամ դարձեալ երոպական մնայուն յանձնաժողով մը ու դատական և ոստիկանական մարմնոց երոպական տարրին մասնակցութեամբ կազմուելն բաղդատաբար անելի պիտի ապահովեն իրագործումն հայկական նահանգաց մէջ կենաց, ընչից և պատույ պահպանութիւնն, և այն ալ առանց որ և է դիրազգածութիւն վիրաւորելու, քանի որ բնական է միջազգային տարրի մը ներմուծումն առաջնորդելու համար այն բարենորոգմանց անկեղծ գործադրութեանն, որք միջազգային հանգամանք ունին:

Աներկմիտ եմք որ Ձեր Վսեմութիւնն իր բնակիր բարեացակամ ոգով պիտի ճանչնայ ի դէպ ժամու իրաւունքն ու պարտիքն հոգևոր գլխին այն ժողովրդեան, որու օգտին կը նուիրէք Ձեր ջանքերն, ծրագրին նկատմամբ իր ունեցած բոլոր դիտողութիւններն ուրուագրելու, և գալով յառաջիկային՝ լսելի ընել տալու իր ծայնն այն պակասներուն վրայ, որ ծրագրին գործադրութեամբն ի վեր պիտի ելնեն, և այն ամեն տեսակ դժուարութեանց վրայ, որք գործնականին մէջ պիտի ծագին: Ամեն պարագայի մէջ այս խնդրոյն արագ ու բարուք կարգադրութիւնն հարկ անհրաժեշտ կը դառնայ գաւառներու մէջ տիրող իրաց այն վիճակին առջև, որ հետզհետէ կը ծանրանայ սպառնալից կերպով և այնպիսի ծանր պատասխանատուութեանց երկիւղն յառաջ կը բերէ զորս տեսնել և շարունակել վեր է մեր ոյժէն:

Կը սիրեմք համոզուիլն որ այս վերապահումներն, զորս յար-

գանօք կը մատուցանենք Ձեր ուշադրութեան, բաւականապէս պիտի արդարանան սա նկատողութեամբ, թէ ինչ որ հայերն կը խնդրեն վերջապէս իրենց օրինաւոր ըղծից ամբողջութեան մէջ, անհատապէս և հաւաքապէս ապրելու իրաւունքն է այն և այսպիսի խնդրոյ մը չը պիտի պահանջտութեան երևոյթ մը:

Այս նկատողութիւններն սակայն ոչ իւրք կը պակսեցնեն երախտագիտութիւնն Հայոց ազգին և իր հոգևոր գլխին՝ այն մարդասիրական ջանքերուն համար, զորս Ձեր ներկայացուցած պետութիւնն ի գործ կը դնէ Ձեր Վսեմութեան այնքան արժանաւոր աջակցութեամբը, ապահովելու համար այն անբաղդ ազգին տարրական պայմաններն ընկերային կենաց և արդարութեան:

Հայցելով Աստուածային օրհնութիւնները Ձեր Վսեմութեան վրայ, և յանձն առնելով զայն ի խնամս Տեառն, պատիւ ունիմ մատուցանելու Ձեր Վսեմութեան խորին յարգանացս հաւաստին:

**Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Մատթէոս արքեպիսկոպոս**

14/26 յունիս 1895
ի Կ. Պօլիս

Թիւրք կառավարութեան մերժումը, ինչպէս միշտ, չը կանգնեցրեց երոպական դիւանագիտութեան պահանջումները: Բանակցութիւնների ընթացքում թիւրք կառավարութիւնը ցոյց տուեց և զիջողութիւններ: Նա առաջարկեց հետևեալ մանրամասն պատճառաբանուած պատասխանը ծրագրուած վերանորոգումների դէմ, որի մէջ ցոյց էր տալիս թէ առաջարկուած պահանջներից ինչ բաներ կարող էր նա ընդունել:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Անաստուրի ինչ ինչ նահանգներուն համար երեք կառավարութեանց դեսպաններուն ներկայացուցած բարենորոգմանց ծրագրին ուսումնասիրութենէն յառաջ եկած¹⁰²

ԳԼՈՒԽ Ա.

Յօդուած Ա. – Կուսակալութեան և ուրիշ ամէն հանրային պաշտօններու համար կարող պաշտօնեաներու ընտրութիւնն ու անուանումը, զեղծումներ գործած ըլլալին հաստատուած պաշտօնէից հրաժարեցումը, անոնց տեղ այլոց անուանումը, և այդ պաշտօնէից ի պահանջել հարկին դատի ենթարկուիլը՝ հրատարակեալ կանոնագրերուն մէջ արդէն կանխատեսուած է. կայսերական կառավարութիւնը որոշած է աւելի ևս հոգածութիւն ցուցնել կայսերական իրատէով անուանուած կուսակալներուն ապագային մէջ ալ հաւա-սարապէս այս կանոնական սկզբանց համաձայն ընտրուելուն մա-սին:

1272 թուականին շնորհուած բարենորոգմանց կայսերական հրովարտակին համաձայն, կայսրութեան բոլոր հպատակները, որ հասարակութեան որ ալ պատկանին, ըստ տրամադրութեանց ընդհանուր գործադրութիւն ունեցող կանոնաց՝ իրենց կարողութեանցն ու բաւականութեանը չափով մուտք ունին հանրային պաշտօնէութեանց մէջ:

Արդ, քաղաքային կարգի պաշտօնից մէջ, կուսակալութեան նման, այդ պաշտօններուն կարևորագոյններէն մէկուն կոչուած անձ մը, պէտք է որ փորձառութիւն ստացած ըլլայ վարչական դասակարգութեան (hiérarchie) ամէն աստիճաններուն մէջ: Մանաւանդ՝ երբ նկատողութեան առնուի խնդրոյ նիւթ եղող նահանգներու մէջ ցեղից և բարուց զանազանութիւնը, և սա կէտը որ, ըստ մարդահամարի տումարաց, մեծամասնութիւնը ամէն պարագայի մէջ և ինչ վարչական դրութեան ներքև որ ալ ըլլայ, մահմետական տարրին կը պատկանի միշտ, հաստատ համոզում կը գոյանայ որ վալիներու

¹⁰² Դիւան Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի:

անուանման մասին այժմ գործադրուած ձևին որ և է կերպով փոփոխումը, փոխանակ վարչութիւնը բարեփոխելու, հանրային ապահովութիւնը վտանգելու բնութիւն ունեցող կնճռոտութիւններ կը պատճառէ: Այս պայմանաց մէջ յարմար է տեղային պահանջմանց համեմատ, ընդհ. կուսակալներուն օգնականներ (մուավին) անուանել, զանոնք ընտրելով ոչ-մահմետական այլ և այլ հասարակութեանց ամենէն բազմամարդին պատկանող ոչ-մահմետական պաշտօնեաներէն:

Յօդուած Բ. – Կուսակալներն և ուրիշ պաշտօնեաները պաշտօնէ չեն հրաժարեցուցուիր մինչև որ՝ օրինապէս իրենց պաշտօնընկեցութիւնն յառաջ բերող արարքներով յանցաւոր ըլլալին չհաստատուի: Ասիկա կ'ապացուցուի սա պարագայով որ ութ մինչև տասը տարի իրենց պաշտօնը պահող կուսակալներ և ուրիշ պաշտօնեաներ կան: Ի նկատի առնելով այն կանոնական տրամադրութիւնը, որու համեմատ ոչ ոք կրնայ պաշտօնէ հրաժարեցուցուիլ, առանց օրինական պատճառի, կուսակալներու պաշտօնը հինգ տարուան տևողութեամբ սահմանափակելու որ և է պէտք չտեսնուիր:

Յօդուած Գ. – Կուսակալներու օգնականներուն անուանումը բացատրուած է Ա. յօդուածին վերջին մասին մէջ. իենց իրաւսութիւններն կատարելապէս և որոշակի ճշտուած են «Տէպօր»ի մէջ ամփոփեալ նահանգներու ընդհանուր վարչութեան կանոնագրին Բ. գլխուն տրամադրութեամբքը:

ԳԼՈՒԽ Բ.

Յօդուած Դ. – Ինչպէս նահանգներու, նոյնպէս ալ սանջակներու մեծագոյն մասին մէջ, մեծամասնութիւնը կը պատկանին մահմետականներուն, ըստ բնակիչներուն համեմատական թուոյն:

Այս պայմաններուն մէջ, կառավարչի պաշտօններուն մահմետական կարող և ձեռնհաս պաշտօնէից անուանումը՝ ինքնին գծուած է: Միայն թէ կարող և ուղղամիտ ոչ-մահմետականներ կրնան «մուավին» անուանուիլ բոլոր այն սանճագներուն մէջ՝ ուր կառավարութիւնը կարևոր կը դատէ:

ԳԼՈՒԽ Գ.

Յօդուած Ե. – Գայմագամի պաշտօնները վերապահուած են միլլիի վարժարանէն վկայագիր ստացողներուն: Ներքին գործոց պաշտօնէութեան ընտրութեամբը, այս դպրոցին աշակերտներէն թէ մահմետականներ և թէ ոչ-մահմետականներ կայսերական իրատէով անուանուած են յիշեալ պաշտօններուն: Այս պաշտօնէից ընտրութեանը մասին ալ յարմար է նոյն դրութիւնը հաստատ պահել:

Այն մահմետականները և ոչ-մահմետականները, որոնք առանց դպրոցէն ելած ըլլալու՝ այժմ գայմագամի պաշտօն կը վարեն, իրենց ծառայութիւններն ու հաւատարմութիւնը փորձուած ըլլալու պայմանաւ, կուսակալներուն առաջարկութեանը վրայ, որ պէտք է հաստատուի ներքին գործոց պաշտօնէութեան կողմէ, պիտի կարենան կայսերական իրատէով գայմագամութեան կոչուիլ:

Իրենց պաշտօնէութեան վերաբերող կենսագրական տեղեկութիւնները հիմ բռնելով, ամենամեծ խնամքով հսկողութիւն պիտի կատարուի որպէս զի գայմագամները չարատաւորուած և իրենց վարմունքն, ուղղամտութիւնը և հաւատարմութիւնը յաշտ կառավարութեան փորձուած անձինք ըլլան:

Յօդուած Զ. – Գայմագամներուն կցուած են օժանդակներին չպէս են մալմիտիրի և թահիրաթ քեաթիպի կոչուած պաշտօնեաները. բոլոր գագաներու մէջ մէկ մ'ալ յատկապէս մուսլիմի պաշտօն հաստատել մեծ ծախուց դուռ կը բանայ. արդէն ասոր ո՛ր և է պէտք չիկայ. հետևապէս փոխանակ ամէն կողմ, այսպիսի պաշտօններ հաստատելու, լաւագոյն է այդ պաշտօնները սահմանափակել կարևոր դիրք ունեցող քանի մը գայմագամութիւններու: Այս պարագային մէջ յարմար կըլլայ քրիստոնեայ մուսլիմ մը տալ գայմագամին եթէ ինքը մահմետական է և փոխադարձաբար:

Կազաներու մէջ վարչական ժողովներ կան որոնց իրաւասութիւնները նահանգներու ընդի. վարչութեան կանոնագրին Դ. գլխոյն մէջ բացատրուած են և որոնց մահմետական և ոչ-մահմետական անդամները բնակչաց կողմանէ կընտրուին: Այս ժողովները ի վիճակի են ամէն տեսակ տեղային գործերը քննելու և կարգադրելու իրենց բոլոր մանրամասնութիւններովը. հետևաբար անօգուտ կըլլայ ամէն գագաի մէջ կազմել յատուկ ժողով մը որ պաշտօն ունեայ խորհրդակցիլ հանրային օգտին վերաբերեալ խնդրոց և այլ

զանազան գործոց վրայ: Վարչական ժողովոց անդամներուն ընտրութեան ձևը նշանակուած է նահանգաց կանոնագրին, և նահիյէներու վարչութեան կանոնագրին մէջ:

ԳԼՈՒԽ Դ.

Յօդուած Է. – Նահիյէներու կազմակերպութիւնը կարելի է կատարել 94-106-րդ յօդուածներուն տրամադրութեանցն համաձայն նահանգներու ընդհ. վարչութեան 19 յունվար 1286 թուակիր կանոնագրին՝ որ խմբագրուած է հանգուցեալ Ալի բաշաի Մեծ եպարքոսութեան ատեն, կամ 25 մարտ 1292 թուականաւ հանգուցեալ Մահմուտ Նէտիմ բաշաի Մեծ եպարքոսութեան ժամանակ հրատարակուած նահիյէներու վարչութեան կանոնագրին Ա.-էն մինչև ԻԸ.-րդ յօդուածոցը տրամադրութեանցը համաձայն: Միայն թէ կայսրութեան գիւղաքաղաքներուն և գիւղերուն մէջ այլ և այլ դասակարգի ժողովրդոց յաճախ խառնուած գտնուիլը միննոյն կրօնքը դասանող գիւղերը միացնելով նահիյէ կազմելու մասին յայտնուած գաղափարին գործադրութեանը արգելք կըլլայ:

Յօդուած Ը. – Ամէն նահիյէի կառավարութեանը միւտիրի մը յանձնուիլը նահիյէն վարելու պաշտօնով ժողովի մը կազմութիւնը կարելի է նմանապէս կատարել ըստ վերոգրեալ կանոնագրոց: Միայն թէ այս կանոնագիրները կը պարունակեն հաստուած մը որոյ համաձայն գիւղաքաղաքային ժողովը կրնայ պարունակել մինչև ութն անդամ:

Ըստ որում անդամներուն կէտը կը նորոգուի ամէն տարի, անելի յարմար է որ մահմետական և ոչ-մահմետական անդամոց թիւը չորս ըլլայ միայն:

Յօդուած Թ. – Նահիյէներու ժողովներուն ընտրութիւնը ենթարկուած է վերոյիշեալ կանոնաց: Եթէ նահիյէի մը բնակիչները ամբողջովին միննոյն դասակարգէ են բնական է որ ժողովին անդամներն ընտրուին նոյն դասակարգին պատկանող բնակիչներէն:

Եթէ գիւղաքաղաքային շրջանակի մը ժողովուրդը խառն է, յարմար է որ փոքրամասնութիւնը ներկայացուի իւր կարևորութեանը համեմատ, պայմանաւ որ այս փոքրամասնութիւնը առնուածն 25 տուն պարունակէ:

Յօդուած Ճ. – Նահիյէներու միւտիրները և քարտուղարները ար-

դէն թռչակաւոր են: Երբ գործադրուին նահիյէներու կազմակերպութեան վերաբերող միջոցներն, բնականապէս ամսականներ պիտի յատկացուին, որոշեալ ընդի. գումարին սահմանին մէջ. սակայն ըստ որում այժմ գործադրեալ կանոնագրերուն մէջ նահիյէներու տեղական ծախուցը համար պիտոճէի մը խմբագրութիւնը կանխաստեսուած չէ այս պարտաւորութիւնը կը վերաբերի նահանգին կեդրոնին:

Յօդուած ԺԱ. – Նահիյէի ժողովոյն անդամոց ընտրութեանը մէջ՝ պէտք է յարգուին նահանգներու ընդի. վարչութեան և նահիյէներու վարչութեան կանոնագրոցը մէջ նշանակուած պայմանները: Յայտնի է նաև որ ընտրելի անդամները քաղաքական ոճրի կամ յանցանքի համար դատապարտութիւն կրած ըլլալու չեն:

Յօդուած ԺԲ. – Նահիյէներու միւտիրներուն՝ ժողովի անդամոց նման բնակիչներուն կողմանէ ընտրուիլը, նահիյէներու վարչութեան կանոնագրին մէջ թէև նախատեսուած է, սակայն յիշեալ կանոնագրին մէջ ըսուած չէ թէ անդամները իրենցմէ մէկը ընտրելով միւտիրի պաշտօնին համար, այս ընտրութիւնը պիտի զեկուցանեն ուղղակի ընդի. կուսակալին: Ընդհակառակն, տրամադրուած է որ միւտիրը բնակիչներուն կողմէ ընտրուելու պէս, անոր անունը նահիյէին պատկանած գազաին գայմագամին միջոցաւ ծանուցուի միւթեսարըֆին և այս վերջնոյն միջոցաւ ալ վալիին՝ որ գրատրապէս կը հաստատէ այս անուանումը և կը կատարէ հարկ եղած ձևակերպութիւնները:

Միայն թէ՛ միւտիրներու կառավարութեան կողմէ և կամ ընտրական ձևով անուանուելու խնդիրը վիճաբանութեան առարկայ է նոյն իսկ քանի մը եւրոպական երկիրներու մէջ: Ի նկատի առնելով օսմանեան կայսրութեան մասնաւոր հանգամանքները, այս միւտիրներուն կառավարութեան կողմանէ անուանումը աւելի համաձայն է ընդհանրութեան շահին. ասոր համար է որ կայսերական կառավարութիւնը կը նախընտրէ վերոհիշեալ երկու կանոնագրոց համաձայն կազմուելիք նահիյէներու համար, միւտիրներուն կառավարութեան կողմանէ ընտրութիւնը ու անուանումը, ինչպէս որ կը կատարուի արդէն կազմակերպեալ նահիյէներու միւտիրներուն անուանմանը մէջ:

Յօդուած ԺԳ. – Նահիյէներու վարչութեան կանոնագրին ԺԲ.-րդ յօդուածին համաձայն, բոլոր անոնք որ կառավարութեան պաշտօ-

նի մէջ կը գտնուին, ինչպէս նաև վարժարանի դասատուները և քահանաները, չեն կրնար միտիրի պաշտօն կատարել:

Յօդուած ԺԴ. – Այս կէտը համաձայն է նահիյէներու վարչութեան կանոնագրին ԺԶ.-րդ յօդուածին: Վերջին հատուածը, սակայն, հակասութեան մէջ կը գտնուի նոյն յօդուածին հետ. ըստ որում նոյն կանոնագրին վերջին մասին մէջ միտիրին և անդամներուն վերընրելի ըլլալը բացայայտ կերպով տրամադրուած է:

Ի նկատի առնելով նահիյէներու մէջ անդամի պաշտօն վարող անձանց թւոյն սահմանափակ ըլլալը, ինչպէս նաև սա իրողութիւնը թէ միտիրներու կառավարութեան կողմէ անուանումը կը նախընտրուի, կանոնագրին՝ անդամներու վերաբերեալ հատուածը՝ կացութեան պահանջանցը աւելի յարմար կը տեսնուի:

Յօդուած ԺԵ. – Միտիրին և նահիյէներու ժողովոց անդամներուն իրաւասութիւններն, ինչպէս նաև իրենց ընտրութեան և փոփոխման ձևը սահմանուած են նահիյէներու վարչութեան կանոնագրին 20-րդ յօդուածէն մինչև 27-րդ յօդուածին տրամադրութեանցը մէջ:

Յօդուած ԺԶ. – Այս յօդուածը համաձայն է նահանգներու կազմակերպութեան և ընդհ. վարչութեան կանոնագրոց, ինչպէս նաև նահիյէներու վարչութեան կանոնագրին մասնաւոր յօդուածներուն:

Յօդուած ԺԷ. – Այս յօդուածը համաձայն է նահանգներու և նահիյէներու վարչութեան կանոնագիրներուն:

ԳԼՈՒԽ Ե.

Յօդուած ԺԸ. – Այժմի գործադրութեան եղող կանոնագիրները չեն կանխատեսած ոստիկաններուն (քոլիս) նահիյէներու ժողովրդեան մէջէն ընտրութիւնը, ինչպէս նաև անոնց նահիյէներու ժողովոց իրամաններուն ներքև գտնուիլը: Նահիյէի մը ոստիկանները, եթէ նոյն նահիյէի ժողովրդէն ընտրուին, կրնան հոն ծնողք կամ ազգական ունենալ, կամ բնակիչներէն ոմանց դէմ անձնականատելութիւն սնուցած ըլլայ, ինչ որ զիրենք կրնայ արգիլել իրենց պաշտօնին պարտաւորութիւնները խղճամտութեամբ կատարելէ և անկողմնակալութեամբ գործելէ:

Ոստիկաններու և ժանտարմաներու խումբերը ամէն նահանգի մահմետական և ոչ-մահմետական բնակչաց ընդհանուր թւոյն համեմատութեամբ նահանգներու կեդրոններուն մէջ կազմել,

նահիյէներու յատկացուած ոստիկաններու և ժանտարմաներու թիւը՝ ըստ տեղական պիտոյից՝ աւելցնել, նահիյէներու կեդրոններուն՝ այդ խմբերէն առնելով յարմար թուով ոստիկաններ յատկացնել, հանրային հանգստութեան տեսակէտով առաջադրեալ նպատակը ապահովելու բաւական կը տեսնուի:

Յօդուած ԺԹ. – Նահիյէի կեդրոնին ոստիկանները ոստիկանական գործերու մէջ բնականաբար միւտիրին հրամանին տակ պիտի շարժին: Եթէ ոստիկանները բազմաթիւ են, եթէ իրենց մէջ ոստիկանութեան գօմիսէր մը կայ, յայտնի է որ պարտին համակերպիլ ի գործադրութեան եղող կանոնագրոց: Իրենց զէնքերը ու համազգեստները համաձայն պիտի ըլլան՝ ոստիկանութեան համար արդէն ընդունուած օրինակներուն. իրենց ռոճիկները պիտի վճարուին նահիյէներու սնտուկներուն կողմէն:

Այս պաշտօնեաները, վճարուած ըլլալով, պէտք է որ շարունակաբար զբաղին իրենց պաշտօնը կատարելով, առանց ներուելու իրենց որ անձնական գործերով զբաղին:

Քանի որ կանոնաւոր բանակի գործօն պաշտօնի մէջ գտնուող զինուորները իրենց տուրքերը կը վճարեն, պատճառ չը կայ որ ոչ-մահմետական ոստիկանները զինուորական տուրքի վճարումէ ազատ թողուին:

Ոստիկանները իրենց պաշտօնը կը կատարեն իրենց շրջանակին սահմաններուն մէջ, հետևաբար հեծեալ ոստիկաններու գործածութեանը տեղի չի կայ և այս կերպ գործածութիւն մը ցարդ իր օրինակը չունի:

Վիլայէթներու մէջ որչափ ոստիկանութեան պաշտօնեայ գործածելու պէտքը տեղւոյն վրայ քննելէ ետքը, այդ պաշտօնեաներուն անուանման պիտի ձեռնարկուի ըստ իրական և բացարձակ պիտոյից:

Աւելորդ ծախսօց տեղի չը տալու համար, այս կարգադրութեան պէտք չէ որ ճշմարիտ պէտքին ցուցուցած աստիճանէն աւելի ծաւալում տրուի: Բացայայտ է թէ այս ոստիկաններուն պաշտօնը, վարմունքը և իրաւասութիւնները պէտք է մնան ոստիկանութեան պաշտօնէից նկատմամբ այժմ գործադրուած սահմանին մէջ և թէ այդ ոստիկանները իրաւունք չը պիտի ունենան իրենք իրենց ո՛րևէ նոր հանգամանք մը տալու:

Յօդուած Ի. – Բոլիսի պարտաւորութիւնները, ինչպէս են ճամ-

բաներու հսկողութիւնը հանրային հանգստութեան պահպանութիւնը, և թղթատարութեան պայուսակներու փոխադրութիւնը հետևակ և ձիաւոր ժանտարմաներու կը պատկանին:

Սանճագներու և գազաներու կեդրոնական իշխանութեանցը կը վերաբերի ժանտարմաներ ղրկել երբ պէտք տեսնուի:

ԳԼՈՒԽ Զ.

Յօդուած ԻԱ. – Յարմար է ժանտարմաները, ըստ տեղական պահանջմանց, մահմետական և ոչ-մահմետական բնակիչներէն առնել և ժանտարմաներու մարմնոյն բարձրաստիճան և ստորադաս սպաները ընտրել, կայսերական բանակի սպաներէն:

Ժանտարմաներու ռոճիկը կանոնաւոր զօրաց ռոճիկէն բարձր է և սպաներու ռոճիկը կայսերական բանակի սպաներու ռոճիկին հաւասար: Յայտնի է որ ըստ հաստատեալ կանոնաց ժանտարմաներու ռոճիկները և ծախքերը պէտք է վճարուին նահանգաց արկղերէն:

ԳԼՈՒԽ Է.

Յօդուած ԻԲ. – Ամբաստանեալները (մազնուն) վար կը դրուին արգելանոցներու (maison d'arret - թէվզըֆխանէ) և դատապարտեալները բանտերու մէջ: Կուսակալներու, կառավարիչներու և գայմագամներու պարտքն է բանտերու առողջապահական պայմաններուն վրայ հսկել: Ընդհ. դատախազներն ալ պարտաւոր են այս մասին քննութիւններ կատարել:

Բացաստի՝ բանտերը ունին պաշտօնեաներու և սպասաւորներու կատարեալ կազմակերպութիւն մը, ինչպէս են տնօրէն, գրագիրներ և պահապաններ: Կարելի է յանձնարարութիւններ կատարել որպէս զի այս միջոցներով աւելի ևս հոգ տարուի արգելանոցներու և բանտերու վիճակին, որոց պահպանութեանը կոչուած են ժանտարմաներ և ոստիկաններ:

Տանջանքները և ամբաստանեալներու և դատապարտեալներու մասին կեղեքիչ վարմունքները արգիլուած են օրէնքով, արգելք՝ որոց հակառակ վարուողներուն, ամենէ խիստ պատիժները սահմանուած են:

ԳԼՈՒԽ Ը.

Յօդուած ԻԳ. – Նախնական քննութիւնը կը կատարուի այժմ ի Պօլիս և ի գաւառս ոստիկանութեան ժողովներու կողմէ. յանձնարարուած ձևը յիշատակուած է արդէն նահանգաց ընդհ. վարչութեան վերաբերեալ հրահանգաց մէջ:

ԳԼՈՒԽ Թ.

Յօդուած ԻԴ. – Ամէն նահանգի մէջ թափառիկ քիւրտերը կառավարելու, աւագակները և ոճրագործները ձերբակալելու և յանձնելու պաշտօնով աշիրէթ մէմուրիի մը ներկայութիւնը ո և է գործնական առաւելութիւն մը չընծայեր և գործադրելի առաջարկութեան մը հանգամանքէ զուրկ կը տեսնուի, ըստ որում անկարելի է որ ցեղի մը գլուխները ո և է ազդեցութիւն ունենան ուրիշ ցեղի մը վրայ: Հետևաբար թափառիկ ցեղերու մէջէն աւագակներու և ոճրագործներու ձերբակալումը և անոնց դատարաններու յանձնումը, պէտք է թողուի ժանտարմաներու և ենթակայ ըլլայ կուսակալին կողմէ տրուած հրամաններուն և անոր ընդունած տրամադրութեանցը:

Այս ցեղերուն մեծագոյն մասը թափառիկ չեն: Իրենց ապրուստի գլխաւոր միջոցը պարզապէս անասնաբուծութեան մէջ կայանալով, ամառը իրենց արօտատեղիները կ'երթան և ձմեռը կը վերադառնան իրենց բնակարանները որոնք գիւղաքաղաքներու և գիւղերու մէջ են:

Այս տեղափոխութեանց մէջ այդ ցեղերուն անցնելիք ճամբաները պիտի որոշուին նախապէս, և որպէս զի այդ տեղերուն մնալուն ժողովրդոց ընչից և անձիցը նկատմամբ ո՛ր և է ոտնձգութիւն կամ ծայրայեղութիւն չը կարենան գործել, բաւականաչափ զինեալ զօրութիւն մը, հրամանատարութեամբ զօրաբաժնին հրամանատարին կողմանէ անուանեալ սպայի մը, ինչպէս նաև ժանտարմաներու և սպաներու ջոկատ մը՝ կուսակալին կողմէ անուանուած, տեղեաց վրայ պիտի ղրկուին:

Ինչամով պիտի հսկուի որպէս զի այս ցեղերու նկատմամբ ճշգրտապէս գործադրուին անցագրոց և զէնք կրելու մասին հրատարակուած կանոնագրոց տրամադրութիւնները: Որպէս զի այս

ցեղերը իրենց տրուած հրամաններուն և կատարուած յանձնարարութեանց հակառակ ճիշդ և է արարքի մը մէջ չը գտնուին, իբր ապա-հովութիւն՝ երբեմն սովորութիւն է որ ցեղապետները ամենէ մօտ գտնուող նահանգին կամ սանջակին կեդրոնին՝ իրենց ծնողքէն կամ ազգականներէն ամբողջ ցեղին յարգանացը և վստահութեանը արժանացած մէկը դրկեն որպէս զի հոն մնայ իբր պատանդ մինչև որ վերադառնան իրենց տուները: Այս սովորութիւնը պիտի պահուի ի գործադրութեան:

Եթէ յարատև թափառիկ վիճակի մէջ գտնուող ցեղեր կան, կառավարութիւնը պիտի ջանայ զանոնք քաջալերել տեղ մը հաստատուելու, իրենց յատկացնելով հողեր և արօտավայրեր:

Ահա ասոնք են միջոցները որոնք կարևոր կրնան նկատուիլ:

Վալիները, միութեսարիֆները գայմագամները պիտի հսկեն ամենամեծ ուշադրութեամբ որպէս զի ցեղապետները վտանգներու և անարգանաց ենթակայ չըլլան անյարգ անձանց մեքենայութեանցը հետևանքօք:

ԳԼՈՒԽ Ժ.

Յօդուած ԻԵ. – Համիտիէի հեծելազունները որոշեալ ժամանակներէն դուրս զինու տակ հրափրելու պէտք տեսնուած պարագային՝ անոնց գործածութեան ձևը՝ արդէն որոշուած է: Համիտիէ հեծելազնոյից յատուկ կանոնագրոց մէջ փոփոխութիւններ ներմուծուելու վրայ ըլլալով, մարզանքի ժամանակներէն դուրս զէնք և համազգեստ կրելու մասին հարկ եղած արգելքները, խմբագրուելիք նոր կանոնագրոց տրամադրութեանցը կարգէն են:

Եթէ Համիտիէի հեծելազորներ, մարզանքի ժամանակներէն դուրս, այսինքն երբ զինու ներքև չեն, իրենց դատաստանի ենթարկուելուն հարկ ցուցնող արարքի մէջ գտնուին, ի գործադրութեան եղող սովորութեան համեմատ, կը դատուին սովորական դատարանաց առջև:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յօդուած ԻԶ. – Կայսերական կառավարութիւնը, ի նկատի առնելով անշարժ ստացուածոց ապահովութեան խնդիրը, ջնջած է հին

դրութիւնը՝ որու համեմատ թէ ի Պօլիս և թէ ի գաւառս տարբեր ձևերով կալուածագրեր կը տրուէին այդ ստացուածոց համար, և արդէն՝ իբր սկզբունք հաստատած է հողերու և շէնքերու համար **տէֆթերխանէի** կողմէ միաձև կալուածագրեր տրուելու դրութիւնը:

Այսպէս, թէ **էմիրիէ և վագըֆ** հողերու և թէ միւր շէնքերու համար վերոյիշեալ վարչութեան կողմէ կանոնաւոր կալուածագրեր տրուելուն շնորհիւ՝ ժողովրդեան կալուածական իրաւունքները ապահովուած են:

Ի նկատի առնելով սա պարագան թէ անշարժ կալուածոց վերաբերեալ խնդիրներն ու իրողութիւններն կարենալ քննելու համար՝ այս գործին վերաբերեալ օրինաց մասնաւոր գիտակցութիւնը հարկաւոր է, տեղեաց վրայ հաստատուած՝ մահմետական ու ոչ-մահմետական անդամներէ բաղկացեալ պարզ յանձնաժողովներ չեն կրնար այս քննութիւնը կատարել:

Շտուապէս, յարմար է այս մասին անդամոցը երկուքը մահմետական և երկուքը ոչ-մահմետական ըլլալու պայմանաւ՝ չորս անդամէ բաղկացեալ յանձնաժողովներ կազմել, որոնք՝ նահանգներու կեդրոններուն մէջ՝ **Տէֆթերխանէի** վարչութեան, և սանճագներու կեդրոններուն մէջ ալ՝ կալուածական ստացուածոց պաշտօնէին նախագահութեանը տակ պէտք է գտնուին:

Այս յանձնաժողովներուն իսկական պաշտօնը պիտի ըլլայ վերաքննել կալուածական իրաւունքներ ունենալին պնդող անձանց կալուածագրերը:

Սակայն, ըստ որում՝ ոմանց օրէնքին տրամադրութիւնը չը գիտնալով՝ իրենց հողերուն և կալուածներուն կալուածագրերը առած չըլլալը և այլոց ալ շինծու յայտարարութեամբ կալուածագիր ստացած ըլլալը կարելի է, վերաքննութեան միջոցին պէտք է այս կարևոր կէտն ալ ի նկատի առնել, և՛ հարկ եղած լուծումը տալու առաջադրութեամբ՝ պէտք է քննել ու խուզարկել ստացման պարագաները գնումի, փոխանցման կամ ժառանգութեան իբր հետևանք տիրացուած այն հողերուն ու կալուածներուն, որոնց վրայ իրաւունք ունեցողները որ և է պատճառով մը ժամանակին կալուածագիր ստացած չեն. հարկ է որ ոչ ոք կալուածագիր չկարենալ ներկայացնելուն պատճառով իր հին իրաւունքներէն չը զրկուի. իսկ անոնց մասին՝ որոնք որ և է կերպով մը կալուածագրեր ստացած են, առանց իրենց սեփականութեան իրաւունքները

հիմնովին հաստատուած ըլլալու, պէտք է փնտռել թէ ինչպէս կրցած են կալուածագիր ունենալ, յաջողիլ նաև ամենուն կալուածները որ և է յափշտակութենէ՛ գերծ կացուցանել. վերջապէս պէտք է որևէ հնար չը ձգել անիրաւ պահանջմանց ու զեղծումներու և մանաւանդ ամէն վսասէ գերծ պահելու աշխատիլ վագրՖ հողերն ու կալուածները:

Այս կէտերէն է ահա, որ պէտք է բաղկանայ յիշեալ յանձնա-ժողովներուն գլխաւոր պաշտօնը: Իրենց որոշումները պէտք է քննուին և վաւերացուին վիլայէթներու ու սանճագներու վարչա-կան խորհուրդներուն կողմէ: Յարմար է որ դատարաններու ներ-կայացուին օրինական լուծման մը պէտք ցուցնող գործերը և որպէսզի ասիկա վարչական կեդրոնացման սկզբունքին համաձայն ձևով մը կատարուի, պատուաւոր, ուղիղ և ամբասիր անցեալ ունեցող չորս անձինք, որոնց ընտրութեանը մասնաւոր հոգ պիտի տարուի, ամէն տարի մայրաքաղաքէն վիլայէթները պիտի դրկուին, իրաւանց և արդարութեան հակառակ գործողութիւններ կատարուիլը կամ չկատարուիլը քննելու և այս քննութեան արդիւնքը Բ. Դրան գիտցնելու պաշտօնով: Այս կերպով գօնթթօլ մը պիտի կատարուի:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յօդուած ԻԷ. – Ամէն տեսակ տասանորդական տուրքերը հնչուն դրամով գանձելու անկարելիութիւնը, անկարելիութիւնը՝ որ երևան կուգայ երբ ի նկատի առնուի ժողովրդեան վիճակը, ապացուցուած է տարբեր ժամանակներու մէջ այլ և այլ տեղեր կատարուած փոր-ձով: Հունձքերու ժամանակ տասանորդական տրոց նոյնութեամբ վճարումը յայտնապէս դիւրութիւն մըն է բնակիչներուն համար: Բաց աստի՛ տոյն նիւթին վերաբերող կանոնագրին մէջ՝ տասանորդական տրոց ամէն գիւղի համար զատ զատ աճուրդի դրուիլն և խնդրարկու երևան եկած ատեն՝ այդ տրոց գանձման բնակչաց յանձնուիլը ընդունուած ըլլալով, այս կանոնին պահպանումը հարկաւոր կը տեսնուի: Հաւաքիչները ժամանակաւ երկրին ուրիշ հասոյթներուն հաւաքմանը համար անուանուած էին, բայց որովհետև այս միջոցը տրոց կանոնաւորապէս գանձումը չէր ապահոված, ու՛ հանրային հասոյթից մատակարարութեանը տեսակէտով՝ ժողովրդեան դիւրութիւններ ընծայող կանոնաւոր վիճակ մը չէր կրցած յառաջ բերել, միւս կողմէ՛ ըստ որում՝

կայսերական կառավարութիւնը՝ տրոց գանձման գործին մէջ զինուորական զօրութիւն գործածելէ տարբեր եղանակ մը փնտռելու հարկին մէջ գտնուած էր, հարկահանութեան պաշտօնով յատուկ ջոկատներ կազմուած էին: Իբր սկզբունք՝ որոշուած էր որ այս ջոկատները իրենց գացած տեղերը որ և է ուտելիք, կամ իրենց ձիերուն համար խոտ չը պիտի խնդրեն. ու խիստ պատիժներ սահմանուած էին հակառակ վարմունքի մէջ գտնուողներուն համար, ըստ որում ժողովրդեան պարտած տուրքերուն գանձումը ու տեղական սնտուկներուն յանձնումը, ժողովրդեան կողմէ ընտրուած մովսթարներուն, ու գիւղերու ու թաղերու հաւաքիչներուն կը պատկանին, նոյնպէս ըստ որում հաստատուած է որ հարկահանութեան ջոկատներուն պատկանող անձինք դրամի դպչելու ունէ առիթ չունին, հետևապէս, անօգուտ է այս դրութեան տեղ առաջարկուած դրութիւնը գործադրել, մանաւանդ որ ընտրել տալ ուզուած հաւաքիչները չեն կրնար, ինչպէս քիչ մը առաջ ապացուցուեցաւ, ժողովրդեան կողմէ ընտրուած հաւաքիչներէն ու մովսթարներէն տարբեր անձնաւորութիւններ ըլլալ:

Յօդուած ԻԸ. – Տասանորդական տրոց հաւաքման՝ վարձու տալու դրութեան տեղ՝ ուղղակի կառավարութեան կողմէ մատակարարութիւնը, զոր կայսերական կառավարութիւնը փորձած էր, փոխանակ հանրային ծառայութեանց այս ճիւղին մէջ կանոնաւորութիւն առաջ բերելու, տեղի տուած է, ընդհակառակն, գանձային կորուստներու ու ժողովրդեան կողմէ ամէն տեսակ գանգատանաց: Վարձու տալու դրութեան վերահաստատման պատճառը այս է: Միայն թէ՛ ամէն տեսակ գանգատի առաջքն առնելու համար, տասանորդական տրոց կանոնագրոյն մէջ կարգ մը պայմաններ և սահմանափակիչ տրամադրութիւններ ներմուծուած են: Օրինակի համար, տասանորդական տուրքերը մեծաքանակ վարձու տալու դրութիւնը ջնջուած, ու՛ ինչպէս ասկէ առջի յօդուածին մէջ բացատրուեցաւ՝ անոր տեղ յիշեալ տուրքերը ամէն մէկ գիւղի համար ու յանուն ժողովրդեան աճուրդի դնելու դրութիւնը ընդունուած է. ինչ որ քաջալերութիւն մը և դիւրութիւն մըն է շինական ժողովրդեան: Բաց աստի, ինչպէս որ տասանորդական տրոց վարձ-քերուն վարձակալներէն գանձմանը մասին դժուարութիւն ծագած ժամանակ կառավարութիւնը դատարաններու կը դիմէ, նոյնպէս ալ ի գործադրութեան եղող կանոնաց տրամադրութեամբք,

բնակիչները իրաունք ունին ազատութեամբ դիմելու վարչական ժողովներուն ու դատարաններուն՝ երբ որ վարձակալներուն դէմ գանգատ կամ բողոք ունենան: Ձրի աշխատութիւնը (անկարիա) բացարձակապէս արգիլուած է երկար տարիներէ ի վեր: Հակառակ վարմունքի մէջ գտնուողները իրենց այս վարմունքին պատճառաւ պատասխանատուութեան ենթարկուին: Հետևապէս տեղի չկայ կանոնական նոր տրամադրութիւն մը հաստատելու այս մասին:

Նահիյէներու մէջ հանրային (կառավարական) սնտուկներու հաստատութիւնն ալ փորձուած էր ժամանակին. սակայն այս փորձը՝ գործողութեանց կանոնաւորութեան տեսակէտով լաւ արդիւնք տալէ շատ հեռու, պատճառ եղաւ որ գանձը կորուստներ ունենայ զուր տեղը: Հետևապէս որ և է նիւթական առաւելութիւն չկայ այս փորձը կրկնելու մէջ: Կարևոր է պահպանել այժմ ի գործադրութեան եղող դրութիւնը, որու համեմատ, նահիյէներու որոշեալ ծախքերը՝ որոնք նահանգներու պիտոճէին մէջ արձանագրուած են, ամէն ամիս գազաներու սնտուկներուն կողմէն կը վճարուին: Նահանգներու ու սանճագներու պիտոճէին մէջ արձանագրեալ ծախքերն ալ նոյնպէս հանրային սնտուկներու կողմէ կը վճարուին:

Շինութեան և նորոգութեան ծախքերը, կամուրջներու ու խճուղիներու յատկացուած գումարները, ինչպէս նաև նոյնութեամբ կամ դրամական փոխանակութեամբ կատարուելիք ծառայութեանց վերաբերեալ գործողութիւնները կը պատկանին հանրագուտ շինութեանց պաշտօնէութեան, որ այս մասին հարկ եղած միջոցները գործադրելու համար նահանգներու հետ յարաբերութեան կը մտնէ:

Հանրային կրթութեան ծախսոց համար հարկ եղած գումարներուն գալով, հասարակաց կրթութեան պաշտօնէութիւնն է որ գանոնք կ'արձանագրէ իր պիտոճէին մէջ ու վճարմանցը համար պէտք եղած կարգադրութիւնը կ'ընէ, յարաբերութեան մտնելով տեղական կառավարութեանց հետ:

Ի նկատի առնելով հաստատեալ կանոնները, կարևոր է ապագային մէջ ալ շարունակել այս կանոնին համաձայն:

Ժողովուրդը ո՛չ պաշտօնէից, ո՛չ ալ կայսերական զօրաց որ և է ատեն ծրիապէս բնակարան, կամ իրենց ապրուստին համար հարկաւոր պաշար հայթայթած չէ: Ժողովրդեան դէմ երբէք խստութեան միջոցներ ձեռք առնուած չեն, տուրքերու հաւաքման միջոցին: Ասոր ապացոյցն է կարևոր գումարներու հասնող յետնեալ

հասոյթները (պագայա), զորս ժողովուրդը կը պարտի ամէն տարի զինուորական և այլ տրոց անվճար մնալէն. բաց աստի, ըստ որում տուրքէ առաջ եկող կամ այլ անձնական պարտուց համար հարկապարտին մասնաւոր բնակարանին, իր ապրուստին հարկաւոր եղող հողերուն, իր աշխատութեան պիտոյքներուն, երկրագործական գործիքներուն, վարուցանի անասնոցը ու սերմցու արմտեացը վաճառումը արգելող կանոնական տրամադրութիւններ կան, հարկ չկայ նոր կանոններու օրէնքներ հաստատել այս մասին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յօդուած ԻԹ. – Նահիյէներու մէջ ծերոց ժողովներ (իխթեար մէճլիսի) կան, որոնք պաշտօն ունին թեթև դատերը բարեկամական ձևով կարգադրել և երկու կողմերը հաշտեցնել, ըստ հաստատեալ կանոնաց:

Յօդուած Լ. – Գազաներու մէջ կան դատարանաց կազմական օրինագրին տրամադրութեանցը համաձայն հաստատուած առաջնակարգ դատարաններ: Հաշտարար-դատաւորի պաշտօնը կը կատարուի գիւղերու մէջ ծերոց ժողովներուն և նահիյէներու մէջ նահիյէի ժողովներուն կողմէն: Իրենց իրաւասութիւններն և գործերու կարգադրութեան մասին իրենց ձեռնհասութեան աստիճանը որոշուած է վերոյիշեալ օրէնքով: Գազաներու ու նահիյէներու կեդրոնները հաշտարար-դատաւորներ հաստատելու մասին տեղի ունեցած յանձնարարութիւնը կանխատեսուած չէ որ և է օրինական տրամադրութեամբ: Արդէն նահիյէներու ու գիւղերու մէջ օրինական խնդրոց տեսակէտով ձեռնհաս մարդիկ չեն գտնուիր: Հետևապէս յարմար չէ այնքան ընդարձակ իրաւասութիւն ունեցող հաշտարար-դատաւորներ անուանել:

Յօդուած ԼԱ. – Նախորդ յօդուածին մէջ բացատրուեցաւ թէ տեղի չկայ հաշտարար դատարաններ հաստատելու: Հետևապէս անօգուտ է իրենց իրաւասութեանց վրայ խօսիլ:

Յօդուած ԼԲ. – Քաղաքային գործոց մէջ, դատարանները իրաւասութիւն չունին իրաւարար անուանելու: Վաճառականական օրինագրքին տրամադրութեանը համաձայն, վաճառականական դատարանները ընկերութեան գործերու մէջ քննիչներ (expert) կանուանին: Արդէն, քանի որ ըսուեցաւ թէ տեղի չկայ հաշտարար-

դատարաններ կազմելու, անօգուտ է ասկէ աւելի քննել այս տեսակ իրաւասութեան մը հաստատումը:

Յօդուած L9. – Հաշտարար դատարաններ հաստատելու անկարելիութեանն ու անօգուտութեանը և հաշտարար իրաւարարութեան ներկայ կազմակերպութիւնը պահելու հարկին մասին տրուած բացատրութիւններէն բնականապէս կը հետևի որ պէտք է գազաներու մէջ նախնական դատարանները պահել ըստ առաջնոյն:

Յօդուած L7. – Ի նկատի առնելով հաշտարար-դատարաններու անօգուտ ըլլալը՝ ինչպէս կը հետևի վերոգրեալ բացատրութիւններէն, այդ դատարաններու իրաւասութեանցը իբր մէկ մասը, այս յօդուածին մէջ բացատրուած տրամադրութիւնը գոյութեան որ և է պատճառ չունի:

Յօդուած L6. – Գազաներու մէջ քաղաքային և եղեռնական նախաքննիչ դատարաններու պահպանութեան պէտքը արդէն բացատրուեցաւ: Դատական օրէնքները չեն նախատեսեր եղեռնային գործերը տեղեաց վրայ քննելու պաշտօն ունեցող շրջուն եղեռնադատատեաններու հաստատումը: Այս տեսակ ձեռնարկ մը կարելիութեան հանգամանք չընծայեր և ո և է առաւելութիւն չկրնար սպասուիլ անկէ, քանի որ յարաբերութեանց դժուարութիւնները այս տեսակ դատարանի մը շրջանին մէջ ժամանակի կորուստներ կրնան առաջ բերել: Ձմրան միջոցին ճամբաները կրնան տեղ տեղ գոցուիլ, այնպէս որ եղեռնային դատերը, և մանաւանդ ճիւրմը մէշիուտի (flagrant délit) պարագաները՝ որոնք քիչ ժամանակի մէջ քննութիւն և դատավարութիւն կը պահանջեն, դատային մարմնոյն ժամանակին չը հասնելուն հետևանքով կը յետաձգուին, ինչ որ՝ համոզում գոյացնելու բնութիւն ունեցող ապացոյցները ու նշանակները միացնելու մասին դժուարութիւն առաջ բերելով, եղեռնային և քաղաքային դատավարութիւնները կրնայ վտանգել:

Յօդուած L2. – Ինչպէս որ կը հետևի նախորդ յօդուածոյն մէջ տրուած բացատրութիւններէն՝ շրջուն դատարաններու կազմակերպութիւնը դժուարին է և անօգուտ: Հետևաբար, այդ դատարաններուն կազմակերպութեանը մէջ հետևուելիք ձևակերպութիւնը որոշելու հարկ չկայ:

Յօդուած L5. – Քանի որ շրջուն դատարաններ կազմելու սկզբունքը կացութեան պահանջմանցը յարմար չը տեսնուիր, տեղի չկայ այդ դատարաններու իրաւասութիւնները ճշտելու:

Յօդուած LL. – Շրջուն դատարաններ կազմելու սկզբունքը ընդունելի համարուած չլլալով, այս յօդուածին մէջ բացատրուած տրամադրութիւնները քննելու այլ ևս տեղի չկայ:

Յօդուած LLԹ. – Նահանգներու կեդրոնները նախագահէ մը և երկու անդամէ բաղկացեալ բարձրագոյն ատենի մը կազմակերպութիւնը առաջարկութիւն մը որ դատական օրինաց տրամադրութեանցը չը համաձայնիր: Ամէն նահանգի կեդրոնը կը գտնուի իւրաքանչիւրը նախագահէ մը և չորս անդամէ բաղկացեալ, երկու վերաքննիչ դատարան, մին քաղաքային և միւսը եղեռնային գործոց համար, ինչպէս նաև քաղաքային և եղեռնային նախնական դատարաններ, մէկ նախագահէ և երկու անդամէ բաղկացած: Վերաքննիչ ատենները կը քննեն նախնական դատարաններու կողմէ դատուած քաղաքային ու եղեռնական գործերը: Գալով նահանգներու կեդրոնները ծագող եղեռնային դատերուն, այս կարգի դատերը կը քննուին նախապէս վերաքննիչ ատենին կողմէ:

Գազաներու (սանճագներու?) քաղաքային և եղեռնային նախնական դատարանները, որոնց իւրաքանչիւրը կազմուած է նախագահէ մը ու երկու անդամէ, կը դատեն, ըստ տրամադրութեանց դատարաններու կազմական օրինաց և քաղաքական ու եղեռնային օրինագրոց, սանճագներու կեդրոնը տեղի ունեցած քաղաքային ու եղեռնային գործերը ու վերաքննութեամբ կը քննեն գազաներու դատարաններուն վերաքննելի վճիռները:

Նահանգային դատարաններու կազմակերպութեան բաւականութիւնն ու օգտակարութիւնը ապացուցուած է փորձով: Օրինաց և գործնականութեան տեսակէտով, պէտք չկայ այս կազմակերպութիւնը փոխել, վերը յիշուած ձևով բարձրագոյն ատեն մը կազմելու համար:

Յօդուած IY. – Քաղաքական և եղեռնային գործոց մէջ սովորական դատարանաց կողմէ տրուած վճիռները պէտք է գրուին տաճ-կերէն լեզուով, որ երկրին պաշտօնական լեզուն է:

Երեք կառավարութեանց հաղորդուած

20 յուլիս/1 օգոստոս 1895 թուականին:

Թէ ինչ տպատրութիւն թողեց Բ. Դրան այս գրութիւնը երեք դեսպանների վրայ, երևում է ֆրանսիական դեսպանի հետևեալ գրութիւնից.

**ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆ
Պ. Բ. ԳԱՄՊՕՆ ԱՌ Պ. ՀԱՆՕԴՕ՝ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ¹⁰³**

Թէրաքիա, 5 օգոս. 1895

Ես Ձեր Վսեմութեան տեղեկացուցի արդէն թէ, Անգլիայի, Ֆրանսայի, Ռուսաստանի դեսպաններուն կողմէ Սուլթանին 11 մայիսին ներկայացուած ծրագիրին ի պատասխան ստացուած է Բ. Դրան գրութիւնը:

Մենք համաձայնեցանք բաւականանալ յայտարարելով Բ. Դրան թէ իր պատասխանը, կ'երևայ թէ ոչ մէկ կերպով ի նկատ կ'ուզէ առնել մեր առաջարկութիւնները և բարենորոգումի այն խոստումները զոր նախապէս օսմանեան կառավարութիւնը ըրած էր, և թէ այդ պատասխանը մենք կը հաղորդենք մեր կառավարութիւններուն հրահանգներ խնդրելով:

Անոր քննութիւնը դիւրացնելու համար, ես բաղդատական ամփոփուած աշխատութիւն մը կազմեցի մեր առաջարկութիւններուն և Բ. Դրան պատասխաններուն միջև, զոր Ձեր Վսեմութիւնը ներփակ կը գտնէ:

Դիւրին է հասկնալ որ Բ. Դրան ծրագիրը ընդունելի չէ: Այն բոլոր տրամադրութիւնները որ կը պարունակէ, կը ձգտին հաստատել, որ ինչպէս սկզբունքներուն, նոյնպէս կիրարկման մէջ, օսմանեան կայսրութեան ասիական նահանգներուն վարչական ներկայ կազմակերպութիւնը ոչ մէկ յոյս չի թողուր:

Բարենորոգումներու մեր առաջարկութիւնները միայն մէկ նպատակ ունէին. ապահովել Հայերուն կեանքը, գոյքը և բարեկենցաղը, պաշտօնեաներու և զինուորներու կամայականութեան և բռնակալութեան դէմ, ինչպէս նաև Քիւրտերու աւեր ու ամառառութեան դէմ:

Ձեր Վսեմութիւնը պիտի հաստատէ որ Բ. Դրան յիշատակագիրը ոչ մէկ կերպով չի պատասխաներ այս ըղձակէտներուն:

Նա կը մերժէ այն բոլոր առաջարկութիւնները որոնք կը վե-

¹⁰³ Schopoff, p. 500-502.

րաբերին բարենորոգման իսկական կէտերուն. օր. տուրքերու դրութեան բարենորոգում, դատական և բանտական բարենորոգում, այս բոլորը, հակառակ Դրան բացատրութիւններուն երկարութիւններուն, այսպէս ըսենք, ամէնը մէկ մերժուած է:

Գալով քաղաքապետական կազմակերպութեան, որ մեր ծրագրին հիմնաքարերէն մին կը կազմէր, Բ. Դուռը ոչ միայն գոյութիւն ունեցող, երբէք չի գործադրուած, և յաճախ բռնաբարուած օրէնքներու պարզապէս կրկնումէն անդին չանցնիր, այլ նոյնիսկ մէկ քանի հիմնական օրէնքներ կը մերժէ, ինչպէս միտիրներու ընտրութիւնը, թէպէտև գոյութիւն ունի կանոնադրութիւններու մէջ:

Մի քանի արտօնութիւններու առանց հաւանութիւն տալու նա կը վերադառնայ նախկին օրէնքներու և ետ կ'առնէ ազգաբնակչութիւններէն օրէնքով մը երաշխաւորուած իրաւունքի գործադրութիւնը:

Եթէ մէկ քանի կէտերու վրայ, որ կը վերաբերին Քիւրտերու վերահսկողութեան, սեփականութեան երաշխաւորութեան, կը թուի որ մէկ քանի հաւանութիւններ կուտայ, նա կը բաւականանայ խօսիլ «կատարուելիք բաներու» մասին և Ձեր վստմութիւնը պիտի նկատէ որ նա միայն տարտամ մտադրութիւններ կ'արտայայտէ, և մի հատ բարենորոգում խոստանալէ զգուշօրէն ետ կը կենայ: Պետլինի Դաշնագրութեան 61-րդ յօդուածը քրիստոնեաները Քիւրտերուն դէմ պաշտպանելու մասին կը խօսէր. այսօր Բ. Դուռը (24 յօդուած վերջին մաս) կը թուի առաւելապէս ուշադիր լինել երաշխաւորելու ցեղապետերը, «թափառիկ անձերու մեքենայութիւններուն և զրպարտութիւններու» (հասկցէք Հայերը) դէմ:

Մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը ապահովելու համար, նա կը յայտնէ որ այդ նպատակով նշանակուած յանձնաժողովները պիտի սևեռին մանաւանդ ամէն մի վտանգէ զերծ պահելու «վաքըֆ» կալուածները, այսինքն անոնք որոնք որոշ ժամանակի տուրքերով, մզկիթներու և ուրիշ մուսուլմանական գթութեան տուններու շահին ենթակայ են. և այսպէս շարունակաբար:

Գալով մեր յիշատակագիրին մէջ մատնանշուած այն կէտերուն, որ կը գնահատէին երաշխաւորութիւնը և վերահսկումի միջոցները, Դուռը պարզապէս յարմար դատեց լռութեան մատնել զանոնք:

Դա ևս անելի վճռական մերժում է, և զոր չի քողարկեր ոչ մի ձևական երևոյթ:

Ամփոփելով, Բ. Դրան պատասխանը այսպես կարող է ձևակերպուիլ. մեզ խօսեցաք վարչական տնտեսական և դատական բարենորոգումներու մասին: Այդ բոլորը ըստած է օրէնքներուն մէջ. մենք Ձեզ չենք խոստանար անցեալի մէջ եղածէն աւելի զանոնք գործադրել. պիտի հսկենք նոյնիսկ այն բանին որ անոնք մէկ քանի կէտերու մէջ չի գործադրուին. բայց Դուք կարող էք բաւականանալ անով որ ատոնք արձանագրուած են **օրէնքի հաւաքածոյին** մէջ: Դուք մեզ խօսեցաք բռնութիւններու, հարստահարութիւններու մասին, որոնց զոհերը եղած լինին քրիստոնէաները. բայց Դուք գիտէք որ եպերելի բոլոր գործերը արգիլուած են և օրէնքը կը պատժէ:

Սըր Փ. Քըրրի Դրան պատասխանը իր կառավարութեան ղրկեց, Պ. Նելիսոֆֆ զայն այսօր կը ղրկէ Ս. Բէդերսպորիկ:

Մենք համաձայնեցանք հրաժարիլ Դրան հետ այս մասին ամեն տեսակբանակցութեան մտնելէ, մինչև որ մեր կառավարութիւններուն հրահանգները ստանանք: Մեր զարմացումը չենք յայտներ այսպիսի քիչ պատշաճութեամբ ստացուած պատասխանի մը որուն մենք իրաւունք ունէինք սպասելու:

Բ. Գամպօն

Երեք պետութիւնները չընդունեցին Բ. Դրան առարկութիւնները և բանակցութիւնները դարձեալ շարունակուեցին: Ամբողջ խնդիրն այն էր թէ ինչպէս պիտի երեք պետութիւնները պաշտպանեն իրանց պահանջները: Նրանց համաձայնութիւնը, սակայն, այնքան ամուր չէր, որ կարելի լինէր աւելի եռանդուն ստիպողական միջոցների մասին մտածել: Բացի դրանից, այդ ժամանակ արդէն իրողութիւն էր որ Թիւրքիայի պաշտպան է Գերմանիան:

Եւ տեղի ունեցաւ նոյնիսկ Արևելեան Հարցի արիւնաներկ պատմութեան մէջ իր նմանը չունեցող զարհուրելի փաստը: Սուլթան Համիդը ծրագրել էր հայերի մի կոտորած: Նրա սկիզբը դրուեց Կ. Պօլսում 1895-ի սեպտեմբերի 30-ին (Ն. Տ.): Երկու-երեք օրից յետոյ կոտորածն անցաւ Սև ծովի ասիական ափը, սկսուելով Տրապիզոնի մէջ: Եւ ահա այդ իսկ միջոցին, հարկաւ եւրոպական երեք պետութիւններին զբաղեցնելու և ուշադրութիւնը այս ահռելի դէպքերից հեռացնելու համար, թիւրք կառավարութիւնը յայտարարեց թէ ընդունում է մշակուած բարենորոգումները հայկական նահանգների համար, սակայն ենթարկելով եւրոպական ծրագիրը փոփոխութիւնների:

ԵՊԱՐՔՈՍԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ուղղեալ առ Շաքիր բաշա եւ առ նահանգապետս Էրզրումի, Վանայ,
Պիթիսի, Տիարպէքիի, Խարբուրդի եւ Սիվազի¹⁰⁴

Օրինակ եպարքոսական հրամանին ուղղեալ Էրզրումի, Վանայ, Պիթիսի, Տիարպէքիի, Մամուրէթ-իւ-Ազիզի և Սիվազի վայրներուն և քննիչ Ն. Վ. Շաքիր բաշայի:

Վեհապետին մեծանուն հօր հանգուցեալ Ապտիւլ Մէճիտ Խանի Կայսերական Վեհափառութեան կողմէն 1255 շապան 26-ին հրատարակեալ Կիւիհանէի Հաթթը Հիւմայունին փառապանծ տրամադրութեանց, ինչպէս նաև 1272-ին ճէմազիւլ ախըրի սկիզբները շնորհուած բարենորոգմանց ֆերմանին պարունակութեան համաձայն, և այժմ իրապէս դրուած և ի գործադրութեան եղող օրինաց համեմատ, ինչպէս որ ամեն ոք գիտէ, կայսերական կառավարութեան ամեն պաշտօնեայներու և գործակալներու ընտրութիւնն ու անուանումը կը կատարուի կայսերական իրատէի մը շնորհիւ և այդ մասին եղած մասնաւոր կանոններու համաձայն, և օսմանեան ամեն դասի հպատակներ ինչ ազգայնութեան որ ալ պատկանին, պիտի ընդունուին կառավարութեան ծառայութեան: Հետևաբար որոշուած է որ ասոնք պիտի գործածուին իրենց արժանեաց և կարողութեանց համաձայն, այն կանոններու համեմատ որ պիտի գործադրուին ամեն դասակարգերու մասին առ հասարակ: Նմանապէս որոշուած է որ ամեն օսմանեան հպատակներ որք կրնան տարիքի ու զարգացման մասին պետական վարժարանաց տիրող օրէնքին մէջ սահմանուած պայմանները լրացնել, պիտի ընդունուին, առանց ո՛ր և է խտրութեան, պետական վարժարանները: Բաց աստի, ինչպէս որ ժամանակ առ ժամանակ օսմանեան պետութեան ամեն մասերուն մէջ ներմուծուած են կարգ մը միջոցներ և կարգադրութիւններ, որք բնութիւն ունին առաջ բերելու հարկ եղած բարենորոգումներն, ըստ պիտոյից և ըստ կարելոյն, և որք նպատակ ունին հպատակներու բարեկեցութիւնը բարելաւել ու

¹⁰⁴ Բնագիրը տ. Schopoff, p. p. 515-518 (թարգմանութիւն Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի):

երկրին բարգաաճութիւնն աւելցնել, նոյնպէս ալ Նորին Կայսերական Վեհափառութիւնն իր բարեպատեհ գահակալութենէն ի վեր, իր խորհրուրդներն ուղղած էր դէպի կատարեալ իրականացումն այս բարեացական դիտաւորութեանց: Ուստի կայսերական կառավարութեան դիտաւորութիւնն է աստիճանաբար գործադրել Նորին Վեհափառութեան երկիրներուն մէջ բարենորոգումներ, որք կը համապատասխանեն տեղական պիտոյից և բնակչաց բնավորութեան, և հետևաբար որոշուած է բարենորոգումներ գործադրել, Էրզրումի, Վանայ, Պիթիսի, Տիարպէքիի, Մամուրէթ-իւ-Ազիզի և Սիվազի ասիական նահանգաց մէջ, բարենորոգումներ որք պիտի պարունակեն Տեսուորի մէջ գտնուած օրինաց և կարգադրութեանց գործադրութիւնն, ինչպէս նաև վերոյիշեալ Կիլիանէի Հաթթը-Հիմայունի և բարենորոգմանց ֆերմանի տրամադրութիւնները: Այս որոշումը նախարարաց մասնաւոր խորհրդոյ մը կողմէն Սուլթանին ներկայացուած ըլլալով Նորին Վեհափառութիւնը կայսերական իրատէրով մը վաւերացուցած է զայն. և որոշուած բարենորոգմանց կէտերը պարունակող ցուցակին վաւերացեալ օրինակները կայսերական դիւանատան կողմէն յանձնուած և յիշեալ վեց վիլայէթներու իւրաքանչիւրին ալ հաղորդուած ըլլալով, օրինակ մ'ալ Ձեր Վսեմութեան կը ղրկուի ներփակեալ: Ասկէց զատ, ուրիշ յօդուածներ, որք որոշման մէջ կային և վաւերացուած են կայսերական իրատէրով, հետևեալ կերպով կը կցուին աստ.

«Առաջին. Ամեն կերպով յարգանաց արժանի պաշտօեայ մը պիտի կարգուի կայսերական կառավարութեան կողմէն ընդհանուր քննիչ տիտղոսով, որոյ պաշտօնը պիտի ըլլայ հոգ տանել բարենորոգմանց կիրառութեան և հսկել անոնց գործադրութեան, և որ պիտի երթայ իր պաշտօնատեղին. ի բացակայութեան քննիչին, կամ ո՛ր և է արգելք մը ունենալուն, ուրիշ մահմետական բարձր պաշտօնեայ մը առժամաբար պիտի կարգուի Նորին Վեհափառութեան կողմէն քննիչին փոխանորդելու համար: Քննիչն իր պարտականութիւնները կատարած միջոցին քովը պիտի ունենայ ոչ-մահմետական օգնական մը»:

«Երկրորդ. Նկատելով որ 1311-1895 յուլիս 11/23-ին կայսերական ներողութիւն շնորհուած է այն հայերուն որք ամբաստանուած կամ դատապարտուած են քաղաքական դէպքերու մէջ մասնակցութիւն ունեցած ըլլալնուն համար, այդ ներողութիւնը պիտի գործադրուի

բոլոր այն հայերուն նկատմամբ, որոնց մասին ապացուցուած չպիտի ըլլայ թէ ուղղակի կերպով դեր ունեցած են քաղաքային օրինաց դէմ ո՛ր և է յանցանաց մէջ, և որք այդ թուականէն առաջ բանտարկուած ըլլալով հանդերձ, տակաւին բանտը կը գտնուին»:

«Երրորդ. Այն հայերն որք աքսորուած են այս երկրէն դուրս և կամ օտար երկիրներ գացած ապաստանած են, պիտի թոյլատրուին ազատօրէն վերադառնալ յօսմանեան պետութիւն, պայմանաւ, որ ապացուցանեն թէ օսմանեան հպատակ են և բարի վարուց տէր»:

«Չորրորդ. Զէյթունի և Հաճընի նման գազաներու մէջ վերոյիշեալ օրինաց նման միջոցներ պիտի գործադրուին»:

Հարկ չկայ բացատրելու կամ կրկնելու թէ Նորին Կայսերական Վեհափառութեան Սուլթանին, առատագուօ բարերարին ա-մենաջերմ փափագն է օսմանեան երկիրներու և առհասարակ իւր ամեն հպատակներուն բարգաւաճման յաւելումն և անոնց հանգստութեան ու երջանկութեան ապահովուիլն, և այս յօդուածներն ու հրամանագրերն ալ աւելի պիտի ապահովեն այս նպատակին իրագործումն:

Նորին Վեհափառութեան թիկնապահներէն Նորին Վսեմութիւն Շաքիր բաշա, որ ընդհանուր քննիչի բարձր պաշտօնին կարգուած է, կայսերական հրամանով մը վերոյիշեալ վեց վիլայէթներու համար անուանուած է. և իրեն ընկերանալիք օգնականին, ինչպէս նաև վերը յիշուած ցուցակին համաձայն Քննիչ Մասնախումբին անուանման ալ ձեռնարկուած է, և ես կը փափագիմ որ արտաքոյ կարգի եռանդով, ուշադրութեամբ և խնամքով սկսիք ձեր նահանգին մէջ գործադրել որոշուած բաները, և այսպէս ձեռք բերուած արդեանց մասին տեղեկագրել ժամանակին:

(1895 հոկտեմբեր 8)

(1313 ռէպիլ ակնոյ 30)

**ՅՈՒՑԱԿ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆ ԿԵՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԵՒ ԿՑԵԱԼ ԵՊԱՐՔՈՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԻՆ¹⁰⁵**

20 հոկտեմբեր 1895

ԳԼՈՒԽ Ա.

Վիլայէթներ եւ միութասարըֆութիւններ

Յօդ. 1. – Իւրաքանչիւր վիլայէթի համար (ընդհանուր կուսակալութիւն) վալիին քով պիտի անուանուի մէկ ոչ-մահմէտական մուավին, ըստ տրամադրութեան Բ. գլխոյ 29 շէվվալ 1286-ի կանոնագրոյն ի վերայ ընդհանուր վարչութեան վիլայէթից:

Իրեն պաշտօնը պիտի ըլլայ, ըստ նոյն կանոնագրոյն աշխատակցիլ վիլայէթին ընդհանուր գործոց եւ պատրաստել անոնց յղումը:

Յօդ. 2. – Նոյնպէս ոչ-մահմէտական մուավիններ պիտի անուանուին մահմէտական միւթէսարըֆներու եւ գայմագամներու քով, այն սանճագներուն եւ գազաներուն մէջ, ուր քրիստոնեայ ժողովրդեան կարևորութեամբ արդարանայ այս տնօրինութիւն:

ԳԼՈՒԽ Բ.

Գայմագամներ

Յօդ. 3. – Գայմագամները պիտի ընտրուին առանց կրօնի խտրութեան՝ ներքին գործոց նախարարին կողմէ քաղաքային վարժարանի վկայեալներէն եւ պիտի անուանուին կայսերական իրատէով:

Յօդ. 4. – Վարչութեան մէջ պիտի պահուին անոնք որք այժմ ի պաշտաման ըլլալով՝ կարող ճանչցուած են թէև ոչ վկայեալ:

Այն պարագային մէջ ուր այս վայրկենիս չգտնուի Միլլիէ դպրոցին ոչ-մահմէտական վկայեողներէն բաւական թիւ մը, որպէս զի կարելի ըլլայ հարկաւոր ճանչցուած անուանումներն ընել, այն ատեն այդ պաշտօններուն համար պիտի կարգուին տէրութեան

¹⁰⁵ Schopoff, p. p. 518-525 (թարգմ. Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի):

ծառայութեան մէջ գտնուող անձեր, որք թէև ոչ-շրջանաարտ, ընդունակ ճանչցուին գայմագամական պաշտօնները կատարելու:

ԳԼՈՒԽ Գ.

Քրիստոնէից համեմատութիւնը հանրային պաշտամանց մէջ

Յօդ. 5. – Վարչական պաշտօնները պիտի յանձնուին մահմէտական և ոչ-մահմէտական հպատակաց, իրաքանչիւր վիլայէթի մահմէտական և ոչ-մահմէտական թուոյն համեմատութեամբ:

Ոստիկանութեան և ոստիկան զինուորութեան վարչութեան պաշտօնատարաց թիւը պիտի որոշուի մնայուն Քննիչ Յանձնաժողովոյն կողմանէ:

ԳԼՈՒԽ Դ.

Վարչական խորհուրդներ սանճագներու եւ գազաններու

Յօդ. 6. – Սանճագներու և գազաններու վարչական խորհուրդները, որք կը բաղկանան ընտրեալ և յիրաւանց կարգեալ անդամներէ, կը մնան ըստ առաջնոյն և պիտի պաշտօնավարեն համաձայն 61 յօդուածոյ 1287-ի վիլայէթներու ընդհանուր վարչութեան կանոնագրոյն, և 77 և 78 յօդուածոց 1867-ի վիլայէթներու օրինաց, որոց համեմատ հաստատուած են արդէն:

Իրենց ձեռնհասութեան վերաբերեալ գործերն որոշուած են վիլայէթներու ընդհանուր վարչութեան կանոնագրոյն 90, 91 և 92 յօդուածներով և 1293 մուհարրէմ 15-ի վիլայէթներու ընդհանուր վարչութեան վերաբերեալ հրահանգաց 38, 39 և 40 յօդուածներով:

ԳԼՈՒԽ Ե.

Նահիյէներ

Յօդ. 7. – Նահիյէները պիտի կազմակերպուին 1287-ի վիլայէթներու ընդհանուր վարչութեան կանոնագրոյն 94-էն 109 յօդուածոց

և 1992 մարտ 29-ի գիւղախմբերու վարչութեան կանոնագրոյն 1-էն 19 յօդուածոց պատուիրանաց համաձայն:

Յօդ. 8. – Իւրաքանչիւր նահիյէ պիտի կառավարուի միւտիրով մը և բնակչաց մէջէն ընտրուած 4 անդամներէ բաղկացեալ խորհուրդով մը:

Այս խորհուրդն իր անդամներուն մէջէն պիտի ընտրէ միւտիր մը և օգնական մը: Միւտիրը պիտի վերաբերի բնակչաց մեծամասնութիւնը կազմող դասակարգին, և օգնականը միւս դասակարգին: Խորհուրդը պիտի ունենայ նաև քարտուղար մը:

Յօդ. 9. – Եթէ նահիյէի մը բնակիչները միևնոյն դասակարգէն են, խորհուրդին անդամները պիտի ընտրուին միմիայն նոյն այդ դասակարգին վերաբերող բնակչաց մէջէն. իսկ եթէ գիւղախմբական շրջանակին ժողովուրդը խառն է, փոքրամասնութիւնը իր ներկայացուցիչները պիտի ունենայ իւր յարաբերական կարևորութեան համեմատութեամբ, պայմանաւ որ գէթ 25 տուն պարունակէ:

Յօդ. 10. – Նահիյէներու միւտիրներն և քարտուղարները թշակաւոր պիտի ըլլան:

Յօդ. 11. – Նահիյէներու խորհրդոց ընտրելիք պարտին լնուլ այն պայմանները, որք նախատեսուած են գիւղախմբերու վարչութեան կանոնագրոյն 10 յօդուածով:

Յօդ. 12. – Իմամները, քահանաները, դպրոցաց ուսուցիչներն և ամեն անոնք որք կառավարութեան ծառայութեան մէջ կը գտնուին չպիտի կրնան միւտիր ընտրուիլ:

Յօդ. 13. – Խորհուրդն ամեն տարի կէս առ կէս պիտի նորոգուի: Իր անդամք, ինչպէս նաև միւտիրը վերընտրելի են:

Յօդ. 14. – Նահիյէներու միւտիրներուն և խորհրդոց վերաբերեալ գործերը սահմանուած են գիւղախմբերու վարչութեան կանոնագրոյն 20-էն 27 յօդուածներով:

Նահիյէներու գիւղերը

Յօդ. 15. – Նահիյէին իւրաքանչիւր գիւղը պիտի ունենայ մուխթար մը: Եթէ մէկէ աւելի թաղեր և մէկէ աւելի դասակարգեր կան, իւրաքանչիւր թաղին և դասակարգին մէկ մուխթար մը պիտի ըլլայ:

Յօդ. 16. – Բնաւ գիւղ մը չպիտի կրնայ միանգամայն երկու նահիյէի պատկանիլ:

ԳԼՈՒԽ Զ. Արդարություն

Յօդ. 17. – Մէն մի տեղւոյ մէջ ծերոց ժողով մը պիտի ըլլայ մութաբարին նախագահութեան տակ, և որոյ պաշտօնը պիտի ըլլայ բարեկամաբար կարգադրել բնակչաց մէջ ծագած վէճերը, վէճեր որք նախատեսուած են դատաստանական օրէնքներէն:

Յօդ. 18. – Հաշտարար դատաւորաց պաշտօնները գիւղերու մէջ ի գործ կը դրուին ծերոց ժողովներուն կողմանէ և գիւղախմբերու մէջ գիւղախմբական խորհրդոց կողմանէ: Օրինօք սահմանուած են անոնց վերաբերեալ գործք և աստիճանն անոնց ձեռնհասութեան:

Յօդ. 19. – Դատական տեսուչներ, որոց թիւը 6-էն նուազ չպիտի լինի, և որք կէս առ կէս մահմետական և ոչ-մահմետական պիտի լինին, պաշտօն պիտի ունենան մէն մի վիլայէթի մէջ ի քննութեան եղած ամեն դատերուն վճռումը փութացնել և հսկողութիւն ի գործ դնել բանտերուն վիճակին վրայ, քաղաքային դատարանաց կազմութեան վրայ եղած օրէնքին 2-րդ գլխոյն պատուէրներուն համաձայն:

Այս հսկողութիւնք ի գործ պիտի դրուին միևնոյն ատեն երկու տեսուչներու ձեռքով, որոնց մին մահմետական և միւսն ոչ-մահմետական:

ԳԼՈՒԽ Է. Ոստիկանութիւն

Յօդ. 20. – Ոստիկանութեան գործակալք պիտի առնուին կայսրութեան մահմետական և ոչ-մահմետական հպատակներէն, համեմատութեամբ վիլայէթին մահմետական և ոչ-մահմետական ժողովրդոց թիւերուն:

Յօդ. 21. – Բաւականաչափ թուով ոստիկանութեան գործակալաց հատուածներ պիտի յատկացուին իւրաքանչիւր ստորաբաժանման կամ վարչութեան, նահիլէն ալ ի միասին առնլով:

Նահիլէին ոստիկանութեան գործակալք միւտիրին հրամանաց ներքև դրուած են, և իրենց հրամանատարք են ոստիկանական տեսուչք (commissaire):

Իրենց զէնքերն ու համազգեստը արդէն ընդունուած օրինակներուն յար և նման պիտի ըլլան:

ԳԼՈՒԽ Ը.

Ոստիկան զինուորութիւն

Յօդ. 22. – Ոստիկան զինուորութեան սպայք, ենթասպայք և զինուորք պիտի առնուին կայսրութեան մահմետական և ոչ-մահմետական բնակիչներէն, իւրաքանչիւր վիլայէթի մահմետական և ոչ-մահմետական ժողովրդոց թիւերուն համեմատութեամբ:

Ոստիկան-զինուորութեան թոշակներն ու պիտոյք պիտի վճարուին վիլայէթին սնտուկէն: Ոստիկան-զինուորաց թոշակը կայսերական բանակին զինուորաց թոշակէն բարձր է. իսկ սպայներունը համարժեք է կայսերական բանակին սպայից թոշակին:

Յօդ. 23. – Ոստիկան-զինուորութեան պաշտօնն է բարեկարգութիւնը պահպանել և սուրհանդակին ընկերանալ առ ի պաշտպանութիւն:

ԳԼՈՒԽ Թ.

Անդաստանաց պահապանք (անդապահք gardes-champetres)

Յօդ. 24. – Նահիյէի խորհուրդը անդապահներ պիտի ընտրէ ժողովրդեան զանազան դասերուն մէջէն:

Իրենց թիւը պիտի որոշուի մնայուն քննիչ յանձնաժողովոյն կողմանէ, իւրաքանչիւր նահիյէի պիտոյից համեմատ, միւտիրին տեղեկագրոյն ու վալիին առաջարկութեան վրայ:

Իրենց համազգեստն և զէնն ու զարդը պատերազմական պաշտօնատան կողմէ պիտի որոշուին:

ԳԼՈՒԽ Ժ.

Բանտը և նախաքննիչ մասնախումբ

Յօդ. 25. – Բանտերու և արգելանաց կացութեան մասին եղած կանոնները ճշդիւ պիտի գործադրուին:

Յօդ. 26. – Վիլայէթներու ընդհանուր վարչութեան վերաբերեալ հրահանգաց 11 և 12 յօդուածներով նախատեսուած նախաքննիչ մասնախումբը կոչուած է պաշտօնավարել ամենականոնաւոր եղանակաւ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Հսկողութիւն ի վերայ Քրդաց

Յօդ. 27. – Քուրդերու գաղթավայրք կանխաւ որոշուած պիտի ըլլան, այնպէս որ աշիրէթներու կողմանէ բնակչաց ճիշդ և է վնասու տեղի չտրուի: Սպայ մը, որ իր հրամանաց տակ պիտի ունենայ բաւականաչափ զինեալ զօրութիւն և ոստիկան-զինուորներ, պիտի ընկերանայ մէն մի ցեղի իւր գաղթման մէջ: Ոստիկանութեան տեսուչ մը օգնական պիտի տրուի իրեն:

Քուրդերն իրենց գաղթմանց ատեն պատանդներ պիտի յանձնեն իշխանութեան:

Չուագրոց և զինակրութեան մասին եղած կանոնադրութիւնք պիտի գործադրուին Քրդաց վրայ:

Անհաստատաբնակ և թափառաշրջիկ ցեղերը պիտի յորդորուին հաստատելու կառավարութեան կողմէ իրենց տրուելիք հողերու վրայ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Համիտիէ հեծելագունդ

Յօդ. 28. – Արգիլուած է Համիտիէ հեծելագորաց կրթութեան ժամանակամիջոցներէ դուրս գէնք ու համազգեստ կրել:

Այդ ժամանակամիջոցներէ դուրս, Համիտիէ հեծելագորք սովորական դատարանաց իրաւասութեան ներքև պիտի գտնուին:

Անյապաղ պիտի պատրաստուի զինուորական կանոնագիր մը որ պիտի ճշդէ իրենց ծառայութեան մանրամասն կէտերը:

ԳԼՈՒԽ ԺԳ. Կալուածագիրք

Յօդ. 29. – Կալուածագրոց վերաքննութեանն համար վիլայէթին և սանճագներուն կեդրոնավայրաց մէջ յանձնաժողովներ պիտի հաստատուին:

Այս յանձնաժողովք 4 անդամներէ պիտի բաղկանան, (երկու մահմետականք և երկու ոչ-մահմետականք) և իրենց նախագահ պիտի ունենան դիւանատանց տնօրէնը կամ անշարժ ստացուածոց վերակացուն:

Իրենց որոշմունք պիտի ենթարկուին վարչական խորհրդոյ հաւանութեան:

Բաց աստի, ամեն տարի Կոստանդնուպօլսէն յատկապէս չորս պատուիրակներ պիտի ղրկուին վիլայէթները քննելու համար այն անկանոնութիւններն որք կրնան ծագիլ սեփականութեանց գործերու մէջ:

ԳԼՈՒԽ ԺԴ. Հաւաքումն հարկաց

Յօդ. 30. – Հանրային զօրութեան գործածութենէն խուսափելու համար, մասնաւոր գործակալներ որք չպիտի կրնան ո՛ր և է ձրի պահանջում ընել պարէնի և ձիու խտտի, և որք ժողովուած դրամներու հետ բնաւ գործ չպիտի ունենան, մուխթարներուն և բնակիչներէն ընտրուած գիւղերու և թաղերու հաւաքչաց պիտի յանձնեն թուղթեր, որոց վրայ նշանակուած պիտի ըլլան իւրաքանչիւր բնակչի պարտական եղած հարկերը:

Մուխթարք և վերոյիշեալ հաւաքիչք միայն պաշտօն պիտի ունենան հարկերը ժողովելու և պետութեան արկղերուն յանձնելու:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Տասանորդք

Յօդ. 31. – Տասանորդաց հաւաքումը վարձակալութեան եղանակաւ պիտի կատարուի: Մեծաքանակ վարձակալութիւնը ջնջուած կը մնայ և անոր տեղ ընդունուած է գիւղ գիւղ և յանուն բնակչաց աճուրդի դրուելու կերպը: Դժուարութեանց ծագման պարագային մէջ, այս վերջինք պիտի կրնան դատարանաց դիմել: Եթէ ինչ ինչ գիւղերու տասանորդաց վարձակալութեան համար մէկը չներկայանայ, կամ թէ առաջարկեալ գինը աճուրդի հանուած տասանորդաց իրական արժէքէն վար ըլլայ, այն ատեն այդ տասանորդք ուժիի եղանակաւ կը մատակարարուին համաձայն այս մասին հաստատեալ կանոնագրոյն:

Տարապարհակ աշխատութիւնը ջնջուած ըլլալով, հանրօգուտ շինութեանց համար անձամբ կամ դրամով մասնակցութիւնը կը մնայ ի գործադրութեան:

Իրաքանչիւր վիլայէթի մէջ հանրային կրթութեան ելմտացոյցը կը սահմանուի հանրային կրթութեան նախարարութենէն:

Պետական գանձուն կամ անձնական պարտքի պատճառաւ պարտականքն բնակարանին, անոր ապրուստին հարկաւոր գետնին, անոր աշխատութեան գործիներուն, անոր արօրադիր անասնոց և անոր սերմերուն վաճառումն արգիլեալ կը մնայ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Մնայուն Քննիչ Յանձնաժողով ի Կ. Պօլիս

Յօդ. 32. – Բարձրագոյն Դրան մէջ պիտի հաստատուի մնայուն Քննիչ Յանձնաժողով մը, կէս առ կէս բաղկացեալ մահմետական և ոչ-մահմետական անդամներէ, որոյ պաշտօնը պիտի ըլլայ հսկել բարենորոգմանց ճշգրիտ գործադրութեան:

Դեսպանք այս Յանձնաժողովոյն պիտի յղեն, իրենց թարգմանաց միջոցաւ, այն զեկոյցներն, հաղորդումներն ու տեղեկութիւնները, զորս հարկաւոր պիտի համարեն ներկայ պաշտօնագրով պատուիրեալ բարենորոգմանց և կարգադրութեանց գործադրութեան սահմանաց մէջ:

Երբ Բարձրագոյն Դուռն և դեսպանք Յանձնաժողովոյն պաշտօնն աւարտեալ նկատելու մասին համաձայն գտնուին, պիտի լուծուի:

Տրամադրութիւնք որք պիտի երևան բարենորոգմանց հրատարակութեան հրովարտակի մէջ.

Ա. Բարենորոգմանց գործադրութեան համար հսկողութեան վերին քննիչ.

Ամենայն մասամբ յարգանաց արժանի պաշտօնատար մը պիտի անուանուի կայսերական կառավարութենէն և պիտի ղրկուի նոյն իսկ տեղեաց վրայ վերին քննիչ (միւֆէտոյիչ) տիտղոսով, բարենորոգմանց գործադրութեան վրայ հսկելու և անոր կիրառման գլուխ կանգնելու յատուկ պաշտօնով:

Բացակայութեան կամ խոչընդոտի պարագային մէջ այս վերին քննիչին տեղ առժամեայ կերպով Նորին Կայսերական Վեհափառութենէն պիտի նշանակուի մահմետական բարձրաստիճան պաշտօնատար մը:

Վերին քննիչը իր պաշտօնին մէջ պիտի ունենայ իր հետ ոչ-մահմետական օգնական մը (մուավին):

Բ. Ընդհանուր ներողութիւն

Վեհափառ Սուլթանը 1895 յուլիս 23-ին քաղաքական գործոց համար ամբաստանեալ կամ դատապարտեալ հայոց ընդհանուր ներողութիւն մը շնորհած ըլլալով. այս տնօրինութիւնն ի գործ պիտի դրուի ամեն անոնց համար որք այդ թուականէն յառաջ բանտարկուած ըլլալով, տակաւին արգելանոց մէջ կը գտնուին, և որոց վրայ չէ հաստատուած հասարակային իրաւանց ոճիրներու մասնակցութիւն:

Գ. Վերադարձ պանդխտելոց

Այն հայերն որք արտաքսուած կամ հեռացուցուած են իրենց երկրէն, կամ թէ օտար երկիր պանդխտած, պիտի կրնան ազատօրէն վերադառնալ ի Թուրքիա, իրենց օսմանեան հպատակութիւնն և իրենց բարի վարքն ապացուցուելէ յետոյ:

Դ. Ոչ-մահմետականաց կացութիւնն Անատօլուի այլ վիլայէթներուն մէջ

Վերոգրեալ սկզբանց համաձայն կարգադրութիւնք ի գործ պիտի դրուին Զէյթունի և Հաճընի նման գազաներու մէջ:

Մինչդեռ Կ. Պօլսում հրատարակուած էր թիրք կառավարութեան այս պաշտօնագիրը, Ասիական նահանգներում հետզհետև ծաւալում էր հայ ժողովրդի ջարդը: Իսկ երեք պետութիւնները գոհ էին որ իրանց առաջարկած բարոնորգումները այսպէս թէ այնպէս ընդունուեցին Բ. Դրան կողմից: Այս երևում է հետևեալ պաշտօնագրից.

№ 27

ԲԱՆԱԽՕՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Բրիտանական, Գաղղիական եւ Ռուսական դեսպանատանց կողմէ ուղղեալ առ Բարձրագոյն Դուռն¹⁰⁶

Ստորագրեալք, դեսպանք Ռուսիոյ, Գաղղիոյ և Մեծին Բրիտանիոյ ստացան այն բանաւոր ծանուցագիրը զոր Բարձրագոյն Դուռն ուղղած է իրենց ամսոյս 20-ին և պատիւ ունին անոր ստացումը զեկուցանելու Արտաքին Գործոց Վսեմափայլ Նախարարին:

Ծանոթացան այն բարենորոգմանց վերաբերեալ հրամանագրի բնագրին, որոց գործադրութիւնն որոշած է վեհափառ Սուլթանը, ինչպէս նաև անոնց մանրամասնութիւնը ցուցանող յատակագծին, և գոհունակութեամբ կը տեսնեն թէ կայսերական կառավարութիւնն որոշած է գործադրութեան դնել օսմանեան վեհապետաց նախընթաց խաթթերուն մէջ հանդիսապէս ի յայտ բերուած կանոններն և այն կարգադրութիւններն որք կը բղխին Բարձրագոյն Դրան կողմէ ներկայ տարւոյս 2 յունիս, 17 յունիս, 17 օգոստոս և 5 հոկտեմբեր թուականներով իր հաղորդումներուն մէջ պարզուած սկզբունքներէն:

Նշանակելով այս տրամադրութիւնքն և Բարձրագոյն Դրան

¹⁰⁶ Schopoff p. 515-518 (թարգմանութիւն Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի):

դիտաւորութիւնն զանոնք տարածելու, բացի հրամանագրին մէջ յիշուած վիլայէթներէն: Անատոլի ամեն այն գազաներուն ուր հայք ժողովրդեան կարևոր մէկ մասը կը կազմեն, Գաղղիոյ, Մեծիկն Բրիտանիոյ և Ռուսիոյ դեսպանք տարակոյս չունին որ բարենորոգումներն ի գործ դնելու և ի կիր արկանելու կոչուելիք պաշտօնատարք իրենց խելացութեամբ, եռանդեամբ և անշահախնդրութեամբ, պիտի ապահովեն բոլոր օսմանեան հպատակաց, առանց խտրութեան, կայսրութեան ընդհանուր բարօրութեանն ու բարգաւաճման հոգածու վարչութեան մը բարիքները:

Երաշխատրութիւնքն որովք ամեն կարգի պաշտօնատարաց ընտրութիւնն ու անուանումը շրջապատել կամիլն իր վերոյիշեալ հաղորդումներուն մէջ յայտարարած է կայսերական կառավարութիւնը, կը վկայեն թէ Բարձրագոյն Դուռն որ աստիճան կարևորութիւն կընծայէ որ գաւառաց մէջ իր գործակալք իրենց պաշտօնը կատարեն ի գոհունակութիւն բոլոր հասարակութեանց, և ի մասնաւորի վալիները մէն մի վիլայէթի վարչութեան տան մղում մը համաձայն այն տեսութեանց զորս ի նորոյ հաւաստեց Նորին Կայսերական Վեհափառութիւնը:

Այսու վստահութեամբ է որ Գաղղիոյ, Մեծիկն Բրիտանիոյ և Ռուսիոյ դեսպանք կը կարծեն լաւագոյնս ծառայել Բարձրագոյն Դրան յայտնած դիտաւորութեանց՝ իրենց վերապահելով նշանակել իրեն, իրենց ընտրութեան ատեն, այն անձինքն, որոց նախընթացքն և նկարագիրն համապատասխան չերևին այն պայմանաց զորս նոյն ինքն օսմանեան կառավարութիւնը հարկաւոր ցոյց տուած է:

Այս վստահութեամբ է դարձեալ որ նոքա ուրախ պիտի ըլլան, երբ առիթը ներկայանայ, իրենց աջակցութիւնը նուիրելով Նորին Կայսերական Վեհափառութեան կառավարութեան իրականացնելու համար այն բարենորոգումները զորս ինք հրամայեց:

Ստորագրեալք կը խնդրեն Արտաքին Գործոց Վսեմափայլ նախարարէն որ հաճի ծանուցանել իրենց զստացումն սոյն հաղորդման, և այս առթիւ կը կրկնեն իրեն զհաւաստիս իւրեանց բարձր մեծարանաց

Ստորագրեալ Նելիաով
Բ. Գանպոն
Ֆիլիբ Գըրրի

24 հոկտեմբեր 1895

1895-1896 թ. հայկական սարսեցուցիչ կոտորածները կարծես միանգամայն ապահովել էին Սուլթան Աբդուլ-Համիդի նպատակը: Հայութիւնը Թիւրքիայում թոււմ էր վերջնականապէս խողխողուած: Իսկ հայ դատի պաշտպան երոպական պետութիւններից ոչ մէկը այլևս ձայն չը բարձրացրեց: Հայերը մատնուած էին կատարեալ լռութեան և հայ քաղաքական կազմակերպութիւնների հերոսական անդուլ ջանքերը, որ գործադրում էին Երոպայի ուշադրութիւնը Հայաստանի վրայ դարձնելու համար, ապարդիւն էին մնում: Իսկ Համիդեան ռէժիմը գնալով աւելի և աւելի դաժան էր դառնում հայերին ոչնչացնելու ուղղութեամբ:

Այսպէս անցաւ 13 տարի: 1908-ի ամառը Կ. Պօլսում պայթեց երիտասարդ թիւրքերի կազմակերպած յեղափոխութիւնը, որ վերջ էր դնում անսահման բռնակալութեան և մտցնում էր սահմանադրական կարգեր: Այս նոր դրութիւնը նշանաւոր չափով թեթևութիւն բերում էր և թիւրքահայերին, մանաւանդ մայրաքաղաքում ապրողներին: Սակայն երիտասարդ թիւրքերի կուսակցութիւնը, տիրանալով կառավարութեան, շատ շուտ ցոյց տուեց որ նա էլ չը պիտի կարողանայ արմատապէս փոփոխել դրութիւնը Թիւրքիայում: Որքան հեռանում էին սահմանադրական ազատութեան առաջին օրերի հանդէսները, այնքան աւելի և աւելի պարզւում էր որ Համիդեան ռէժիմը բոլորովին չէ անցել և նրա ասանդութիւններից շատերն ընդգրկել են և երիտասարդ թիւրքերը:

Այս հանգամանքը շատ պարզ արտայայտուեց մանաւանդ Հայաստանի գործերի մէջ: Սահմանադրութիւնը, պարլամենտը, ազատութիւնները համարեա ոչինչ փոփոխութիւն չէին մտցրել այն յարաբերութիւնների մէջ, որոնք տիրում էին այդտեղ: Քրդերի վերաբերմամբ կառավարութիւնը նոր քաղաքականութեան չը դիմեց և հայերին կեղեքելը առաջուայ պէս մնաց նրանց արտօնութիւնը: Հարստահարութիւնների հարցը, որից ծնուել էր Հայոց Հարցը, չէր լուծում, հետևաբար և անլուծելի էր մնում նաև Հայոց Հարցը: Ընդհակառակն, այժմ աւելի ևս սուր կերպարանք էին ընդունում հայ-քրդական յարաբերութիւնները, շնորհիւ այն հանգամանքի որ քրդերը գրաւել էին կոտորածների ժամանակ փախած հայերի հողերը և այժմ չէին ուզում վերադարձնել, իսկ կառավարութիւնը ոչ միայն միջոցներ չէր ձեռք առնում դրա դէմ, այլ խրախուսում էր քրդերին:

Եւհայժողովրդի զրկանքներն ու տառապանքները շարունակուած էին առաջուայ պէս. և դարձեալ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանն էր, որ ինչպէս բռնապետական ընթացի ժամանակ, հաղորդում էր թիրք կառավարութեան գաւառներում կատարուած հարստահարութիւնների դէպքերը և խնդրում էր–զուր, ի հարկէ–միջոցներ ձեռք առնել: Իր այդ դիմումները Պատրիարքարանը հրատարակեց 1912-1913 թուականներին ֆրանսերէն լեզուով¹⁰⁷ և մենք այդ ստուար հատորի մէջ կուտակուած բազմաթիւ փաստերից եզրակացնում ենք, որ սպանութիւնները, յափշտակութիւնները, առևանգութիւնները, ատերուները մի ժամ անգամ դադար չեն առել Թիւրքաց Հայաստանում 1908-ի յեղափոխութեան օրերից ի վեր:

Բացի այս բոլորից Ադանայի ահռելի ջարդը, որ տեղի ունեցաւ 1909-ի ապրիլին, թիրք սահմանադրականութեան մեղրալուսնին իսկ և որին զոհ գնացին 20 հազարից աւելի հայեր, գալիս էր հաստատելու թէ հայերի դրութիւնը միևնոյնն է մնում Թիւրքիայում, թէ Հայոց Հարցը լուծուած չէ և սպասում է բարեյաջող դէպքի՝ նորից միջազգային հրատապ հարց դառնալու համար:

¹⁰⁷ «La Situation des Arméniens en Turquie, exposée par des document, 1908-1912» I-IX liv.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1912-1914

Իսկ այդ բարեյաջող դեպքն էր Բուլգարիայի, Սերբիայի, Չեռնոս-գորիայի և Յունաստանի պատերազմը Թիւրքիայի դէմ, 1912-ին: Նորից դրուած էր Թիւրքիայի գոյութեան հարցը և այս անգամ էլ հայութիւնը թէ Թիւրքիայում և թէ Ռուսաստանում աշխատեց չը կորցնել այս առիթը՝ նորից եւրոպական պետութիւններին ներկայացնելու հայկական արիւնոտ դատը:

Այս անգամ յաջողութեան մի մեծ գրաւական կար: Ռուսական քաղաքականութիւնը 1880-ական թուականների սկզբից իր բռնած ուղղութիւնը թողնելով, այժմ շատ բարեացակամ վերաբերմունք էր ցոյց տալիս դէպի Հայոց Հարցը, իր պետական շահերի տեսակէտից անհրաժեշտ համարելով որ այդ հարցը լուծուի հայերի ցանկացած եղանակով:

Պաշտօնական բանակցութիւններն սկսեց ամենայն հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսը, որ թարգման հանդիսանալով հայ ազգի իղծերին, Կովկասի փոխարքայի միջոցով դիմեց ռուսաց կենտրոնական կառավարութեան մի խնդրագրով, որի մէջ հայերի պաշտանութիւնն էր խնդրում: Այս դիմումի վրայ իսկոյն գործել սկսեց Կ. Պօլսի ռուսաց դեսպանատունը, ինչպէս երևում է հետևեալ վաւերագրից:

**Կ. ՊՕԼՍԻ ՌՈՒՍԱՅ ԴԵՍՊԱՆ ԳԻՐԱԸ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՕՆՈՎԻՆ¹⁰⁸**

Կ. Պոլիս, 1912 թ. նոյեմբերի 26

Ձեր Բարձր Գերագանցութիւնն ինչպէս ինքնապատու Զարկովի, նոյնպէս և իմ յայտարարութիւններից արդէն իրազեկ է այն դրութեան, որի մէջ գտնուում է հայ ժողովուրդը Թիւրքիայում: 1894-1896 յիշատակելի տարիներից, երբ հայերը ենթարկուեցին բարբարոսական կոտորածի Փոքր Ասիայում և Կ. Պոլսի մէջ անգամ, նրանց դրութիւնը բոլորովին չէ փոխուել դէպի լաւ: Հայկական նահանգների մէջ մտցուելիք ռէֆորմների այն հրամանը, որ հրատարակեց Սուլթան Աբդուլ-Համիդը 1895 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ճնշման տակ, մեռած տառ մնաց: Հայոց Հարցը օրը օրին սուր կերպարանք է ընդունում. հողերի մեծամասնութիւնը յափշտակուած է և յափշտակուում է քրդերի ձեռքով և իշխանութիւնները ոչ միայն չեն արգելում այդ, այլ նոյն իսկ հովանաւորում են և աջակցում են այդ յափշտակումներին: Մեր հիպատոսները միաբերան վկայում են որ քրդերի աւազակութիւններն ու կողոպուտները դադար չեն առնում, որ նրանք սպանում են հայերին և զօռով հարկադրում են հայ կանանց իսլամանալ, և այս անկարգութիւնների պատճառները երբեք չեն ենթարկուում պատասխանատութեան: Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի թագրիւրը, որ ներկայացուած է Բ. Դրան և արդարադատութեան մինիստրին, ճիշտ է նկարում այն թշուառութիւնների և հարստահարութիւնների պատկերը, որոնց ենթարկուում են Սուլթանի հայ հպատակները:

Վերոգրեալ հանգամանքները ինքն ըստ ինքեան բաւականաչափ բացատրում են հայ զանգուածների աւելի և աւելի ուժեղացող ձգտումը դէպի Ռուսաստան և կատարեալ հիմք են տալիս հաւատալու այս ուղղութեան անկեղծութեանը: Բայց համակրանքները դէպի Ռուսաստան մտել են և հայ բուրժուազիայի

¹⁰⁸ «Сборникъ Дипломатическихъ документовъ—Реформы въ Арменіи», Петроградъ, 1915, с. 3-5.

և հայ ինտելիգենցիայի մէջ, ուր, ինչպէս ես արդէն առիթ ունեցայ մատնանշելու, յեղափոխական կուսակցութիւնները սկսում են կորցնել հեղինակութիւնը և կազմակերպւում են նոր կուսակցութիւններ պահպանողական ծրագիրներով: Վանի, Բայազիտի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի մեր հիւպատոսները, որոնց ես այս քանի օրը հարց էի տուել, միաբան վկայում են, որ այժմ բոլոր հայերը, առանց կուսակցութիւնների խտրութեան, Ռուսաստանի կողմն են. այսպէս, Վանի փոխ-հիւպատոսը հեռագրում է այս տարուայ նոյեմբերի 21-ից թէ «Բոլոր հայերն այժմ Ռուսաստանի կողմն են, անկեղծ ցանկանում են որ գան մեր զօրքերը կամ ըէֆօրմներ մտցուին Ռուսաստանի հսկողութեան տակ»: Բայազիտի փոխ-հիւպատոսը նոյեմբերի 21-ի հեռագրով հաղորդում է. «Բոլոր հայերը, առանց կուսակցութիւնների խտրութեան, չափազանց թշնամաբար են այժմ վերաբերում Թիւրքիային և շատ են ուզում Ռուսաստանի հովանաւորութիւնը և Հայաստանի գրաւումը նրա զօրքերով»:

Այժմ ամենայն հայոց Կաթողիկոսը, Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայի միջոցով, դիմում է Ռուսաստանին, ինչպէս Արևելքի քրիստոնէայ ժողովուրդների վաղեմի պաշտպանին և Աստուծու անունով աղաչում է իր հովանաւորութեան տակ առնել Թիւրքաց Հայաստանում ապրող բազմատանջ հայ ժողովուրդը»:

Հիմնուելով վերոգրեալ բոլոր հանգամանքների վրայ, ես պիտի խոստովանեմ որ Կաթողիկոսի դիմումը միանգամայն հաւատարիմ կերպով է ցոլացնում իր մէջ Թիւրքաց պետութեան հայ ազգաբնակութեան ներկայ տրամադրութիւնը Ռուսաստանի վերաբերմամբ: Հայ ժողովրդի Հոգևոր Գլխի պաշտօնապէս յարուցած հարցը Ռուսաստանի համար առաջնակարգ պետական կարևորութիւն ունեցող հարց է, որ պահանջում է բազմակողմանի մշակում, որին ես մտադիր եմ ձեռնամուխ լինել ամենամօտ ապագայում, երբ դեսպանատան մէջ կը ստացուեն այն տեղեկութիւնները, որ ես պահանջել եմ Պատրիարքարանից և մեր հիւպատոսներից: Ինչպէս ինձ յայտնի է, այստեղի հայկական շրջաններում արդէն պատրաստում է մի ուղերձ, որ պիտի ներկայացուի Մեծ Պետութիւնների առաջիկայ հաշտութեան կոնֆերենցիայի ժամանակ: Բայց դէպքերը կարող են հարկադրել հեղինակներին ներկայացնել այդ ուղերձը կոնֆերենցիա հաւա-

քելուց առաջ: Այսպիսով, նախաձեռնությունը դուրս կը գար մեր ձեռքից:

Ուստի ինձ անհրաժեշտ է երևում տալ հաւաստիացում թէ Կաթողիկոսին և թէ Կ. Պօլսի Պատրիարքին թէ կայսերական կառավարութիւնը թեքում է հայ ժողովրդի խնդիրքի կողմը և ցոյց կը տայ նրան, հարկաւոր դէպքում, հնարաւոր հովանաւորութիւն: Այսպիսի մի խոստում, թէկուզ խմբագրուած ամենաընդհանուր կերպով, կը տայ թիրքահայերին յոյս թէ մենք կօգնենք եթէ նոր աւարառումներ և կոտորածներ պատահեն և կարող էր նրանց պետութիւններին անմիջապէս դիմելուց յետ պահել: Եթէ մենք այսպիսի մի ընդհանուր խոստում տանք հայերին, մենք կարող էինք նոյն իսկ ծածկաբար տալ նրանց հասկանալ, որ ներկայ թոպէին մենք յարմար չենք համարում ընդհանուր բնաւորութիւն ունեցող շարժումները:

Գալով այժմ այն ձևերին, որոնց մէջ կարող էր ծուլուել մեր հովանաւորութիւնը Թիրքաց Հայերին, ես պիտի յայտարարեմ որ հայկական վիլայէթների գրաւումը, որի վրայ յոյսեր ունեն հայերը, ներկայ թոպէին ինձ վաղաժամ է թւում: Բայց բռնելով ռէֆօրմների ճանապարհը թիրքաց պետութեան մէջ, չը պէտք է մոռանալ 1895 թուի հայկական ռէֆօրմների տխուր ճակատագիրը և ստեղծել ամուր երաշխիքներ հայկական նահանգների համար ենթադրող բարելաւումների համար, դնելով այդ բարելաւումները մեր կամ երոպական ազենտների իրական վերահսկողութեան տակ: Բայց պէտք է նկատի առնել և այն հնարաւորութիւնը, որ ներկայումս Թիրքիայում տիրող անիշխանութեան մէջ ռէֆօրմները սպասուող հանգստացումը չեն բերի և պատրաստ լինել այն բանին, որ մեր զօրքերի մուտքը նահանգների մէջ գուցէ անհրաժեշտ կը դառնայ:

(Ստոր.) Գիրս

Մօտաւորապէս այս մտքով էլ Պետերբուրգի կառավարութիւնը պաշտօնական խոստում արաւ Գէորգ Կաթողիկոսին: Ռուսաց դիւանագիտութիւնն իր ձեռքն առաւ Հայոց Հարցը: Բայց որովհետև նա մենակ չը պիտի լուծէր այդ հարցը, այլ միւս մեծ պետութիւնների և մանաւանդ Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայի, ինչպէս և Անգլիայի համաձայնութեամբ և աջակցութեամբ, ուստի հայկական մի պատգամաւորութիւն, որի գլուխն էր Պօղոս-Նուբար-փաշան,

Գէորգ կաթողիկոսի յանձնարարութեամբ և լիազօրութեամբ, գնաց Երուսա կարևոր դիմումներ անելու: Այդ պատգամաւորութեան միտքը նախօրոք ռուսաց կառավարութեան հաւանութիւնն էր գտել:

Բալկանեան պատերազմը անյաջող ընթացք ունէր Թիւրքիայի համար: Թիւրք կառավարութիւնը, երկիւղ կրելով որ Հայոց Հարցը կարող է ռուս կառավարութեան ձեռքում վտանգաւոր միջամտութեան առիթ տալ, փորձեց ինքը համաձայնութիւն ստեղծել հայերի հետ, առաջարկելով նրանց ռէֆօրմներ իր կողմից: Բայց այս քայլը կատարուեց ճիշտ թիւրքական եղանակով: Րէֆօրմներ մշակելու համար կազմուեց մի յանձնաժողով՝ բաղկացած արտաքին գործերի, ժողովրդական լուսաւորութեան, ֆինանսների և ներքին գործերի մինիստրներից՝ Մեծ Վեզիրի նախագահութեամբ: Այդ յանձնաժողովի մի քանի որոշումները ներքին գործերի մինիստրը մասնաւոր կերպով հաղորդեց Պատրիարքարանի Խառն ժողովի անդամներից երկուսին և խնդրեց նրանց կարծիքը: Հետևեալ օրը (դեկտեմբերի 8-ին) յանձնաժողովի նիստին հրաւիրուեցին մի քանի հայ հասարակական գործիչներ, որոնք հայոց Պատրիարքարանի հետ կապ չունէին: Սակայն այս հայերը հասկացան, թէ ինչ է ուզում անել կառավարութիւնը, հեռացնելով Պատրիարքարանը պաշտօնական բանակցութիւններից, ուստի տալով իրանց խորհուրդները, խնդրեցին միւս անգամ իրանց չը հրաւիրել, այլ դիմել Պատրիարքարանին: Այս մի աչքի ընկնող ցոյց էր որ հայերը այդ կարևոր միջոցին ուզում էին գործել առանց պառակտումների, գիտակցելով ազգային շահերի կարևորութիւնը:

Այսպէս թէ այնպէս, թիւրք կառավարութիւնը ափ յափոյ պատրաստեց բարենորոգումների մի ծրագիր, որի համառօտութիւնը նա ձևակերպեց այսպէս.

№ 29

ՀԱՅԿԱԿԱՆ ՐԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ¹⁰⁹

Ահա ճիշտ համառօտումը զանազան յօդուածների այն օրէնքի, որ պիտի գործադրութեան մէջ մտցուի ժամանակաւորապէս, մինչև պարլամենտական վաւերացումը:

¹⁰⁹ Ibid. c. 15-17.

Յօդ. 1. – Օրէնքները, որոնք որոշում են պաշտօնեաների յարաբերութիւնները, ինչպէս և վարչական, ֆինանսական, իրաւական, զինուորական օրէնքները, Շէրիի օրէնքը, որոնք գործում են ամբողջ պետութեան մէջ, իրանց ոյժի մէջ են մնում և յիշուած չորս նահանգների¹¹⁰ մէջ:

Յօդ. 2. – Անուանուած վիլայէթների մէջ նշանակում են Առանձին Յանձնաժողով և մի Ընդհանուր Տեսուչ:

Յօդ. 3. – Յանձնաժողովը բաղկացած է երեք մահմետականներից, երկու հայերից և մի քաղղէացուց¹¹¹: Յանձնաժողովի անդամներն ընտրում են այնպիսի անձանց միջից, որոնք անհրաժեշտ յատկութիւններն ու ընդունակութիւններն ունին և վստահութիւն են ներշնչում:

Յանձնաժողովի մէջ նախագահում է Ընդհանուր Տեսչի խորհրդականը:

Յօդ. 4. – Խորհրդականը կը լինի օտարերկրացի, որ ծանօթ է վարչական գործերին և երկրի սովորութիւններին և ունի անհրաժեշտ ընդունակութիւններ: Նա մտնում է օսմանեան կառավարութեան ծառայութեան մէջ:

Յօդ. 5. – Ընդհանուր Տեսուչը նշանակում է կայսերական կառավարութիւնից վեց տարի ժամանակով, և նա անփոփոխելի է, բացի այն դէպքերից, երբ մեղաւոր կը ճանաչուի պատասխանատութիւն առաջացնող գործողութիւնների մէջ:

Յօդ. 6. – Յանձնաժողովի անդամները կարող են արձակուիլ բացառապէս ապօրինի գործողութիւններ կատարելու համար, և միմիայն այն վճռի հիման վրայ, որ ընդունուած կը լինի Յանձնաժողովի նախագահի և անդամների մեծամասնութեան կողմից:

Յօդ. 7. – Ընդհանուր Տեսչի բոլոր գործողութիւնները տեղի են ունենում Յանձնաժողովի որոշումների հիման վրայ: Ընդհանուր Տեսուչը լիազօրուած է կատարել Յանձնաժողովի վճիռները և տալ այս մասին անհրաժեշտ հրահանգներ վալիներին:

Յօդ. 8. – Ընդհանուր տեսուչը ունի իրաւունք հեռացնելու վիլայէթի պաշտօնեաներին, բացի հոգևոր տեսչութեան (Շարիաթի) պաշտօնեաներից, որոնց վերաբերմամբ նա պիտի դիմէ Շէյխ-իւ-

¹¹⁰ Վանի, Բիթլիսի, Դիարբէքիի, Խարբերդի: Դուրս էին ձգում Սիվասի և Էրզրումի վիլայէթները:

¹¹¹ Նեստորական ասորի:

Իսլամին, և այն անձանց, որոնք նշանակուած են բարձրագոյն իրադէներով, որոնց վերաբերմամբ նա պիտի դիմէ Ներքին Գործերի Մինիստրութեան, և այն էլ Յանձնաժողովի որոշման հիման վրայ:

Յօդ. 9. – Ընդհանուր Տեսուչները և Յանձնաժողովները պիտի կատարեն վերազննողական ուղևորութիւններ:

Յօդ. 10. – Տեսուչն անձամբ, ինչպէս և Յանձնաժողովի իւրաքանչիւր անդամ կարող են, անհրաժեշտութեան դէպքում և Յանձնաժողովի վճռով, կատարել վերազննողական ուղևորութիւններ:

Յօդ. 11. – Յանձնաժողովի իրաւասութեան ենթարկուած առարկաներն են.

Վճռել, արդարութեան հիմքերի վրայ, հողային վէճերը քրդերի և հայերի մէջ:

Վերացնել այդ երկու տարրերի մէջ պառակտումների առիթներն և նրանց մէջ կատարեալ համաձայնութիւն հաստատել:

Ապահովել կարգը, հաստատել ամենակատարեալ հաւասարութիւն, վերակազմել ժանդարմներիան, շինել ուղիներ և հաղորդակցութեան ճանապարհներ, լաւացնել գիւղատնտեսութիւնը և արհեստները, միջոցներ ձեռք առնել երկրի բնական հարստութիւնները շահագործելու և այլն:

Յօդ. 12. – Վալին, զինուորական հրամանատարը, ոստիկանութիւնը և ժանդարմներիան պիտի կատարեն Ընդհանուր Տեսչի հրամանները:

Յօդ. 13. – Մէարիֆի և մէնաֆիի յաւելեալ տուրքերը, ինչպէս և վիլայէթի եկամուտները կը գործածուեն վիլայէթի ժողովրդական լուսաւորութեան, հասարակական շինութիւնների և գիւղատնտեսութեան կարիքների համար, համաձայն առանձին բիւջէի:

Յօդ. 16. – Այս նահանգներում կարգը միւս վիլայէթների կարգին հաւասարեցնելուց յետոյ, ընդհանուր վարչական օրէնքները կը վերստանան իրանց ոյժը և այս չորս նահանգներում:

Յօդ. 17. – Տեսուչը և Յանձնաժողովի անդամները նշանակուած են 5 տարուայ ժամանակով. այս ժամանակն անցնելուց յետոյ նրանց նշանակուող կարող է վերանորոգուել: Ընդհանուր Տեսչին ռոճիկ նշանակուած է 20,000 դրուշ, իսկ Յանձնաժողովի անդամներին 10,000 գրուշ և խորհրդականին (բաց է թողնուած):

Հայոց Պատրիարքարանը որոշեց յայտարարել թիւրք կառավարութեան թէ այս ծրագիրը իրան պաշտօնապէս չէ հաղորդուած և իրան յայտնի չէ թէ Բ. Դուռը ինչպէս է ուզում ապահովել ռէֆօրմների գործադրութիւնը: Սրանով Պատրիարքարանը իր անվստահութիւնն էր յայտնում թիւրք կառավարութեան: Կարելի էր նոյն իսկ վեճի չենթարկել ռէֆօրմների բովանդակութիւնը: Ամենագլխաւորն այն էր որ երոպական հսկողութիւն լինի. մի բան, որից խուսափել էր թիւրք կառավարութիւնն իր ծրագրի մէջ, ինչդեռ առանց այդ վերահսկողութեան ոչինչ էին ռէֆօրմների նոյն իսկ լաւագոյն ծրագիրները: Այս նոյն վերաբերմունքը ցոյց տուեց, ինչպէս տեսանք, և Իզմիրլեան պատրիարքը 1895-ի ծրագրի նկատմամբ:

Ազգային Ժողովը շտապեց հրապարակով արտայայտել իր կատարեալ համամտութիւնը Խառն Ժողովի հայեացքների հետ: Դեկտեմբերի 21-ին տեղի ունեցաւ Ազգային Ժողովի պատմական նիստը: Լսելով Խառն Ժողովի զեկուցումը ռէֆօրմների մասին, որի մէջ դարձեալ անց էր կացրած այն միտքը թէ ոչ մի խոստում առանց իրական երաշխիքների չէ կարող գոհացնել հայերին, Ազգային Ժողովը, որ մինչև այդ կեղեքում էր կուսակցական պայքարներից, միակամութեան մի հոյակապ ցոյց արաւ. չընդունեց Խառն Ժողովի հրաժարականը և կատարեալ վստահութիւն յայտնեց նրան: Դաշնակցական պատգամաւորները յայտարարեցին որ պատմական այդ մեծ բոպէին իրանք հրաժարուում են կուսակցական հաշիւներից, որպէս զի կատարեալ միութիւն թագաւորէ ազգի մէջ:

Եւ այնուհետև հայ իրականութեան ամենախոշոր իրողութիւնը հէնց այս միակամութիւնն էր, որ կարողութիւն տուեց ամենայն եռանդով պաշտպանել ազգային դատը ամեն տեղ, ուր այդ հարկաւոր էր: Գործունէութեան գլխաւոր կենտրոնը դարձաւ Կ. Պօլսի ռուսական դեսպանատունը և դեսպան Գիրսը ցոյց էր տալիս մեծ եռանդ: Մինիստր Սագոնովն արդէն համաձայնութիւն էր կայացրել Ֆրանսիայի և Անգլիայի հետ և ռուսաց դեսպանութիւնը ձեռնարկեց ռէֆօրմների մի նոր ծրագիր խմբագրելու:

Մինչև այդ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքարանի շրջանակներում մշակուած էր ռէֆօրմների մի ծրագիր, որ ներկայացուեց դեսպան պ. Գիրսին: Հայերի այդտեղ արտայայտած համարեա բոլոր պահանջները նկատի առնուեցին ռուսական ծրագրի մէջ. որի

խմբագրությունը յանձնուած էր դեսպանատան առաջին թարգման Մանդէլշտամին:

Ահա այդ վաւերագիրը.

№ 30

8 Յունիսի 1913

ՆԱԽԱԳԻԾ ԾՐԱԳԻՐ ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ՄԷՋ ՄՏՅՈՒԵԼԻ ՐԷՖՕՐՄՆԵՐԻ¹¹²

որ մշակել է Կ. Պօլսի Ռուսաց Կայսերական Դեսպանատան Առաջին Թարգման Պ. Ա. Մանդէլշտամը, հիմք ունենալով

Կ. Պօլսի Ֆրանսիական, Մեծ Բրիտանական եւ Ռուսական Դեսպանների Յիշատակագիրը Հայաստանի մէջ մտցուելիք ռէֆօրմների վերաբերմամբ (Մարտ-Ապրիլ 1895 թ.):

Ծրագիրը այն վարչական ռէֆօրմների, որոնք պիտի մտցուեն հայկական նահանգներում, մշակուած Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի Դեսպանների ձեռքով (Մարտ-Ապրիլ 1895 թ.):

Հրամանը Հայաստանի ռէֆօրմների մասին 1895 թ. Հոկտեմբերի 20-ից, հրատարակուած Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանից:

Երոպական Թիրքիայի վիլայէթների օրէնքին ախազիձը 1880 թ. Օգոստոսի 11/23-ից, որ կազմել է Երոպական Յանձնաժողովը:

Վիլայէթների օրէնքը 1913-ի եւ Լիբանանին վերաբերուող արձանագրութիւններն ու որոշումները:

I

1. Կազմուում է մի միակ Նահանգ (Province) հետևեալ 6 վիլայէթներից. Էրզերում, Վան, Բիթլիս, Դիարբէքիր, Խարբերդ, Արվազ, բացառութեամբ մի քանի մասերի, որոնք գտնուում են ծայրերում, այն է՝ Հէքքեարիի, Սղերդի հարաւային մասերի, Բիշերիկի և

¹¹² Էջմիածնի Հայրապետական Դիւան և Оранже. Книга, с. 61-69.

Մալաթիաի և Արվազի հիւսիս-արևմտեան մասի:

2. Նահանգը բաղկացած է հետևեալ վարչական ստորաբաժանումներից. 1) Սանջակ (գաւառ), 2) Կազա (գաւառակ), 3) Նահիէ (գիւղախումբ, համայնք):

3. Այս վարչական ստորաբաժանումները կը կատարուին այնպիսի հաշուով, որ ազգաբնակչութիւնը նրանց մէջ դասատրուած լինի, որքան հնարաւոր է, միանման ազգագրական խմբերով:

(Համմ. 1 կէտ Յիշատ. երեք Դես. 1895 թ. յօդ. 7 Դեսպան. Ծրագրի 1895 թ.):

II

Հայոց Նահանգի Ընդհանուր-Նահանգապետը պիտի լինի քրիստոնեայ-օսմանեան հպատակ կամ, որ աւելի նախադասելի է, երոպացի. նա նշանակուի է հինգամեայ ժամանակով Նո-րին Կայսերական Մեծութիւն Սուլթանից, Պետութիւնների համաձայնութեամբ:

(Հմմ. 17 յօդ. Քեր. դաշնադր. յօդ. 1 Կրէտի Կանոն. 1896 թ., Լիբանանի արձանագր. և կանոնադր. յօդ. 2 և 7 Յիշատակագրի երեք դեսպ. 1895 թ., ներմուծութիւն հրամանի Հայաստ. ռէֆօրմ. մասին 1895 թ. Հոկտեմբեր 20-ից, կ. 1):

III

1. Ընդհանուր Նահանգապետը նահանգի գործադիր իշխանութեան գլուխն է: Նա նշանակուի է և արձակուի է նահանգի վարչութեան բոլոր պաշտօնեաներին, առանց որ և է բացառութեան: Նա նշանակուի է նոյնպէս նահանգի բոլոր դատաւորներին:

2. Ոստիկանութիւնը և ժանդարմերիան անմիջապէս հպատակուած են Ընդհանուր Նահանգապետի իշխանութեան:

3. Ընդհանուր Նահանգապետի պահանջով, զինուորական ոյժերը պիտի նրա կարգադրութեան տակ դրուին՝ նահանգի մէջ կարգ պահպանելու համար:

(Հմմ. Յօդ. 1 Լիբանանի կանոնադր. 1864 թ., Երոպական Յանձնաժ. Ծրագրի 1880 թ. յօդ. 27, 32 և 44, վիլայէթների վարչ. օրէնքը 1913 թ. յօդ. 20, 25 և 26):

IV

Նահանգի Ընդհանուր Նահանգապետի մօտ գտնուում է Վարչական Խորհուրդ խորհրդակցական բնատրույթեամբ, բաղկացած

Ա) Նահանգի վարչութեան առանձին մասերի գլխավորներից,

Բ) Չանազան կրօնական համայնքների հոգևոր գլուխներից,

Գ) Երոպական տեխնիքական խորհրդականներից, որոնք գտնուում են կայսերական կառավարութեան ծառայութեան մէջ և վարչութեան մասերի գլխավորների օգնականներն են:

Դ) Վեց խորհրդականներից (3 մահմետական և 3 քրիստոնեայ, ընտրուած Նահանգային Ժողովի ձեռքով իր անդամների միջից:)

(Հմմ. յօդ. 49 ծրագրի Երոպ. Յանձ. 1880 թ., յօդ. 62 վիլայէթ. օրէնքի 1913 թ. յօդ. 6 հրամանի 1895 թ. հոկտեմ. 20-ի):

V

1. Նահանգային Ժողովը բաղկացած է մահմետականներից և քրիստոնեաներից հաւասար թուով:

2. Նահանգական Ժողովի անդամները ընտրուում են գազանի քուէարկութեամբ կազաներում ընտրողական ժողովներով, որոնք կազմուում են այդ նպատակով:

3. Տեղերի թիւը, որոնք տրուում են նահանգի զանազան մահմետական և քրիստոնեայ ազգութիւններին, կորոշուի առանձին իւրաքանչիւր կազայի համար: Այդ թիւը պիտի համեմատական լինի կազայի ազգութիւնների քանակութեան, որքան այդ համապատասխան կը լինի այն կարգին, որ պարունակուած է այս յօդուածի առաջին կէտում:

(Հմմ. յօդ. 2 կանոն. և արձանագրութիւնների, որոնք վերաբերուում են Լիբանանի վերակազմութեան 1861 թ. յունիսի 9, յօդ. 3 § 5 երեք դեսպան. ծրագրի 1895 թ., յօդ. 69 Եւր. Յանձն. ծրագրի 1880 թ., 103 յօդ. 1913 թ. օրէնքի):

VI

1. Նահանգային Ժողովը ընտրուում է հինգ տարի ժամանակով և հաւաքուում է տարին մի անգամ սովորական երկամսեայ նստա-

շրջանի: Այս նստաշրջանը կարող է երկարացնել Ընդհանուր Նահանգապետը:

2. Ժողովը կարող է հրափրուել արտակարգ նստաշրջանի Ընդհանուր Նահանգապետի ձեռքով կամ նրա սեփական նախաձեռնությամբ, կամ ժողովի անդամների երկու երրորդի խնդրանքով:

3. Ընդհանուր Նահանգապետն իրաունք ունի արձակելու Նահանգային Ժողովը: Այս դեպքում ընտրողները պիտի կանչուեն երկու ամսուայ ընթացքում արձակման հրամանը հրատարակելու օրից:

4. Արձակման և հրափրման հրամանները հրատարակում են Նորին Մեծութիւն Սուլթանի անունից:

(Հմմ. 73-75 յօդ. Եւրոպակ. Յանձ. ծրագրի 1880 թ., յօդ. 111-115 օրէնքի վիլայէթ. մասին 1913 թ.):

VII

1. Նահանգային Ժողովը օրէնսդրում է այն հարցերի վերաբերմամբ, որոնք նահանգի շահերն են շօշափում:

2. Նահանգային Ժողովի օրէնսդրական և բիւջետային իրաաստութիւնը ոչ մի դեպքում չէ կարող ատելի նեղ լինել այն իրաաստութիւնից, որ նախատեսուած է 1880 թուին Եւրոպական Յանձնաժողովի մշակած ծրագրի 82-93 յօդուածների մէջ:

3. Ժողովի կողմից ընդունուած օրէնքները կը ներկայացուեն ի հաստատութիւն Նորին Կայսեական Մեծութիւն Սուլթանի: Այս հաստատութիւնը պիտի տեղի ունենայ կամ հաստատման մերժում պիտի տրուի երկու ամսուայ ընթացքում, և այս ժամանակից յետոյ կառավարութեան լուրթիւնը պէտք է բացատրուի տեղի ունեցած հաստատման իմաստով:

(Հմմ. 82-93 յօդ. Եւրոպ. Յանձ. ծրագրի 1880 թ., յօդ. 123, 124, 128-135 վիլայէթ վարչութեան օրէնքի 1913 թ.):

VIII

1. Սանջակների վարչական խորհուրդների մէջ նախագահում են մութեսարիֆները: Այս խորհուրդները կազմում են սանջակի

վարչութեան առանձին մասերի գլխաւորներից, կրօնական համայնքների հոգևոր գլուխներից և վեց անդամներից (որոնցից 3 մահմետական, 3 քրիստոնեայ), ընտրուած կազայի վարչական խորհրդից:

2. Կազայի վարչական խորհրդների մէջ նախագահում են կայմականները: Այս խորհուրդները բաղկացած են կազայի վարչութեան առանձին մասերի գլխաւորներից, կրօնական համայնքների հոգևոր գլուխներից և չորս անդամներից (2 մահմետական և 2 քրիստոնեայ), ընտրուած նահիյէների խորհրդներից:

3. Այս խորհրդների իրաւասութիւնը կորոշուի համաձայն 115-116 և 139-140 յօդ. այն օրէնքի ծրագրի, որ մշակուած է 1880 թ. Երոպական Յանձնաժողովի ձեռքով:

(Հմմ. 114, 115, 116, 138, 139 և 140 յօդ. Երոպ. Յանձ. ծրագրի 1880 թ., յօդ. 6 հրամանի 1895 թ. հոկտեմբերի 20, 1913 թ. օրէնքի 62, 63, 64 և 65 յօդ.):

IX

1. Իւրաքանչիւր նահիէի (համայնքի) սահմանները, ըստ չափու հնարաւորութեան, կորոշուին այնպէս, որ մի ցեղի պատկանած գիւղերը միացած լինին մի նահիէի մէջ:

2. Իւրաքանչիւր նահիէ պիտի կառավարէ մուդիրը, որի մօտ գտնուում է ազգաբնակչութիւնից ընտրուած մի խորհուրդ, բաղկացած ոչ պակաս 4 և ոչ աւել 8 անդամներից: Այս խորհուրդն ընտրում է իր անդամներից մուդիր և նրա օգնական: Մուդիրը պիտի պատկանէ այն ազգային խմբին, որ կազմուած է բնակիչների մեծամասնութիւնից, իսկ նրա օգնականը՝ միւս խմբին:

3. Այն նահիէների մէջ, որոնց ազգաբնակչութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պիտի ներկայացուած լինի խորհրդի մէջ իր թւի համեմատ, այն պայմանով, որ նա բաղկացած լինի առնուազն 25 տներից:

4. Նահիէի խորհրդների իրաւասութիւնը կորոշուի համաձայն տրամադրութեան 163-168 յօդուածների օրէնսդրութեան ծրագրի, որ Երոպական Յանձնաժողովը մշակել է 1880 թ.:

(Հմմ. յօդ. 162-168 Երոպակ, Յանձ. ծրագ. 1880 թ., յօդ. 7, 8, 9 րէֆօրմ. ծրագրի, որ մշակել են երեք դեսպանները 1895 թ., 7, 8, 9 յօդ. հրամանի 1895 թ. հոկտ. 20):

X

1. Իրաքանչիւր նահիէի մէջ կայ հաշտարար դատաւոր, որին նշանակում է Ընդհանուր Նահանգապետը և որ պատկանում է նահիէի բնակիչների մեծամասնութեան կրօնին: Բացի դրանից, կազայի իրաքանչիւր գլխաւոր քաղաքի մէջ կայ մի հաշտարար դատաւոր:

2. Հաշտարար դատաւորի իրաւասութեան ենթարկում են.

Ա) Քրէական կարգով, առանց վճռաբեկ գանգատ ներկայացնելու իրաւունքի, այն խանգարումները, որոնց համար նշակաւում են ոստիկանական տուգանումներ և, վճռաբեկ գանգատ ներկայացնելու իրաւունքով, այն յանցագործութիւնները, որոնց համար նշանակում են դրամական հատուցումներ ոչ պակաս քան 500 դրուշ կամ բանտարկութիւն 3 ամսից ոչ ւել:

Բ) Քաղաքացիական կարգով, առանց վճռաբեկ գանգատի իրաւունքի, բոլոր անձնական պահանջները, քաղաքացիական թէ առևտրական, 1000 դրուշից ոչ բարձր արժողութեամբ, և բողոքարկու գանգատ ներկայացնելու իրաւունքով, միւնոյն պահանջները 5000 դրուշից ոչ բարձր արժողութեամբ:

3. Հաշտարար դատաւորին իրաւունք է տրուած նոյնպէս հաշտութեան բերել կողմերը: Նա կարող է, կողմերի ցանկութեամբ, նշանակել միջնորդ դատաւորներ վճռելու համար այնպիսի գործեր, որոնց արժէքը նոյն իսկ 5000 դրուշից էլ բարձր է: Միջնորդ դատարանի վճռի դէպքում, կողմերը պիտի հրաժարուեն վճռաբեկ գանգատ ներկայացնելու իրաւունքից:

4. Սանջակի դատարանները բաղկացած են միայն մի քաղաքացիական բաժանմունքից, որ կազմում է նախագահից և երկու դիպլոմաւոր դատաւորներից (որոնցից մէկը մահմետական, միւսը՝ քրիստոնէայ), որոնց նշանակում է Ընդհանուր Նահանգապետը: Սանջակի դատարանները առաջին ինստանցիայում քննում են քաղաքացիական կամ առևտրական պահանջներ, 5000 դրուշից աւել արժէքով, իսկ վճռաբեկ ատեանի կարգով՝ հաշտարար դատաւորների վճիռները քաղաքացիական և առևտրական գործերի վերաբերմամբ:

5. Սանջակների դատարանների քրէական բաժինները փոխարինում են շրջուն քրէական դատարաններով (cours d'assises

ambulantes): Այս քրէական դատարանները բաղկացած են նախագահող դատաւորից, ընտրուած վճռաբեկ պալատի կողմից, որին ենթարկուած է սանջակի դատարանը, իր անդամների միջից և երկու անդամից, որոնց նոյն պալատը նշանակում է սանջակի հաշտարար դատաւորների միջից, որոնցից մէկը կը լինի մահմետական, իսկ միւրը՝ քրիստոնէայ:

6. Քրէական դատարանը հերթով նիստեր կունենայ բոլոր կազաներում, ուր նրա ներկայութիւնը անհրաժեշտ կը լինի դատուած:

7. Իւրաքանչիւր կազայում կայ մի դատաստանական քննիչ: Կազան գնալուց յետոյ՝ քրէական դատարանի նախագահը պահանջում է դատաստանական քննիչից ներկայացնել այն գործերը, որոնք պէտք է անյապաղ քննուեն դատարանի կողմից, նոյնպէս և այն գործերը, որոնց վերաբերմամբ դեռ քննութիւն է կատարում: Եթէ նա երևան կը հանէ այս վերջին տեսակի գործերի վերաբերմամբ որ և իցէ անկանոնութիւն կամ ապօրէն քաջքշուկներ, այդ մասին նա պարտաւոր է անյապաղ զեկուցում ներկայացնել վճռաբեկ պալատի նախագահին:

8. Քրէական դատարանը քննում է բողոքարկութեան կարգով գանգատներ հաշտարար դատաւորների վճիռների վրայ, որոնք կայացել են յանցագործութիւնների վերաբերմամբ: Առաջին և վերջին ինստանցիաներում նա քննում է այնպիսի յանցանքների գործերը, որոնց համար որոշուած են դրամական տուգանումն 500 դրուշից բարձր կամ բանտարկութիւն 3 ամսից աւել:

9. Վճռաբեկ դատարանների թիւը վեցից պակաս չէ: Իւրաքանչիւր վճռաբեկ դատարան բաղկացած է մի դիպլոմաւոր նախագահից, որին նշանակում է Ընդհանուր Նահանգապետը և բաժանմունքների մի թուից, որ բաւարար կը լինի քննելու համար այն քաղաքացիական գործերը, որոնց վերաբերմամբ վճռաբեկ բողոքներ են ներկայացում, նոյնպէս և քրէական դատարաններին նախագահներ հասցնելու համար: Վճռաբեկ դատարանի ատեա-նը բաղկացած է երկու անդամից և մի նախագահից: Բացի դրանից, նրա կազմի մէջ կան ընդհանուր դատախազ, բաւական թուով դատախազներ և դատախազների օգնականները:

10. Առևտրական դատարանները կը հիմնուեն այն տեղերում, ուր կարիք կը զգացուի: Այն տեղերում, ուր նրանք պիտի գործեն, քաղաքացիական դատարանները առևտրական գործեր չեն քննի:

11. Շէրիի դատարանների (հոգևոր) իրաաստիւթիւնը ճիշտ կորոշուի և Ընդհանուր Նահանգապետը կը հսկէ, որ նրանք չը խառնուեն շրջանի ուրիշ դատարանների գործերի մէջ: Շէրիի դատաւորներին արգելուած կը լինի, մնալով իրանց պաշտօնի մէջ, ստանձնել միւս դատարանների նախագահների կամ անդամների պաշտօնը:

(Հմմ. յօդ. 29-39 երեք Դեսպ. 1895-ին մշակ. ռէֆօրմների ծրագր., յօդ. 125-263 Եւրոպակ. Յանձնաժողովի ծրագրի 1880 թ.):

XI

1. Հիմնուում են ոստիկանութեան և ժանդարմերիայի նահանգային կորպուսներ: Այս կորպուսները կը հաւաքուեն նահանգի մահմետական և քրիստոնեայ բնակիչներից կէս առ կէս:

2. Այդ կորպուսների կազմակերպումը և բարձր հրամանատարութիւնը կը յանձնուեն թիւրքական ծառայութեան մէջ գտնուող եւրոպացի սպաներին:

3. Նահիէների մէջ մտցուում է գիւղական պահնորդների պաշտօնը: Պահնորդները նշանակուում են նահիէների խորհրդների կողմից և ենթարկուած են մուտիւրներին:

(Հմմ. յօդ. 18-21 ռէֆօրմ. ծրագ. երեք Դեսպանների 1895 թ., յօդ. 24 հրամանի 1895 թ. հոկտ. 20):

XII

1. Խաղաղութեան ժամանակ նահանգում ապրող զինուորացուները այդտեղ էլ իրանց զինուորական ծառայութիւնն են կատարում:

2. Քրդական թեթև հեծելազօրքի գնդերը (նախկին Համիտիէ) արձակուած կը լինեն:

(Հմմ. յօդ. 25 երեք Դեսպ. 1895 թ. մշակ. ծրագրի, յօդ. 28 հրամանի 1895 թ. հոկտ. 20):

XIII

1. Նահանգի վարչական պաշտօնեաներն ու դատաւորները նշանակուում են հաւասար թուով մահմետականներից և քրիստոնեաներից:

2. Սանջակների գլխաւորների (մուֆէսարիֆ), կազաների գլխաւորների (կայմական) պաշտօնները բաշխելու ժամանակ պէտք է նկատի առնել զանազան ազգախմբերի քանակը, նոյնպէս և նրանց տնտեսական շահերի կարևորութիւնը:

(Հմմ. յօդ. 5 Հրամ. 1895 թ. հոկտ. 20):

XIV

Միայն նստակեաց բնակիչները պիտի օգուտեն ակտի և պասսիւ ընտրողական իրաւունքով:

(Հմմ. յօդ. 24 § 8 երեք Դեսպ. 1895 թ. մշ. ծրագրի, յօդ. 27 հրամանի 1895 թ. հոկտ. 20):

XV

1. Օրէնքները, հրամանները, որոշումները, շրջաբերականները և կառավարչական կարգադրութիւնները, որոնք պէտք է հրատարակուեն նահանգի մէջ, գրոււմ են նահանգի գլխաւոր երեք լեզուներով (թիւրքական, հայկական և քրդական):

2. Ինդիւիւները, հանրագրերը և բոլոր վաւերագրերը, որոնք նշանակուած են վարչական և դատաստանական իշխանութիւնների համար, յօրինոււմ են երեք գլխաւոր լեզուներից մէկով, ըստ ընտրութեան շահագրգռուած անձերի:

3. Կողմերի վիճաբանութիւնները դատարաններում, ըստ ցանկութեան, կարող են վարուել նրանց մայրենի լեզուով:

4. Դատաստանական վճիռները յօրինոււմ են թիւրքերէն լեզուով, կցելով նրան թարգմանութիւնը կողմերի մայրենի լեզուով:

(Հմմ. երեք Դես. 1895-ին մշակ. ծրագրի յօդ. 32 Եւրոպ. Յանձ. 1880 թ. ծրագ., ներքին գործ. մինիստրի շրջաբերականը 1913 թ. ապրիլի 6-ից վիլայէթներին արաբ. լեզուի մասին):

XVI

1. Նահանգի իւրաքանչիւր ազգութիւն ունի իրաւունք հիմնելու ամեն տեսակի մասնաւոր դպրոցներ և կառավարելու նրանց:

2. Ազգութիւնն իրաւունք ունի իր անդամներին առանձին

տուրքի ենթարկել՝ դպրոցների պահպանութեան համար:

3. Դասաւանդութիւնը այս մասնաւոր դպրոցների մէջ տեղի կունենայ մայրենի լեզուով:

4. Դպրոցների բարձր հսկողութիւնը պատկանում է Ընդհանուր Նահանգապետին, որ այդ բանն իրագործում է համաձայն այն կանոնների, որոնք դրուած կը լինեն նահանգի կազմական կանոնագրի մէջ:

5. Թիւրքերէն լեզուի աւանդումը պարտադիր է մասնաւոր դպրոցների համար:

(Համ. գլ. XIV ծրագր. 1880 թ. Յանձնաժողովի):

XVII

Մի առանձին Յանձնաժողով, Ընդհանուր Նահանգապետի նախագահութեամբ, կորոշէ այն պայմանները, որոնց համապատասխան հայերը յետ կը ստանան իրանցից խլած հողերը կամ թէ կը ստանան նրանց փոխարէնը, փողով կամ հոգով:

(Հմմ. Դեսպ. 1895-ին մշ. ծրագրի յօդ. 26, յօդ. 29 հրամանի 1895 թ. հոկտ. 20):

XVIII

Անձեռնմխելիութիւնը այն իրաւունքների և արտօնութիւնների, որոնք հայ ժողովրդին ապահովապէս տրուած են 1863 թ. սահմանադրութեամբ և շնորհուած են Սուլթանների բերաթներով, հաստատում է:

(Հմմ. երեք Դեսպ. 1895 թ. մշ. Յիշատակագրի III կէտը):

XIX

Նահանգի հողերի վրայ արգելում է մուհաջիրներ բնակեցնելը:

XX

Կը մշակուեն առանձին, վերոգրեալ սկզբունքների ոգուն համաձայն, որոշումներ բարելաւելու համար դրութիւնն այն հայերի,

որոնք ապրում են նահանգի սահմաններից դուրս, և մանաւանդ Կիլիկիայում:

(Հմմ. յօդ. 12 Յիշատ. Դեսպ. 1895 թ., յօդ. 4 ներածութիւն 1895 թ. հոկտ. 20-ի հրամանի):

XXI

Մի առանձին Յանձնաժողով, բաղկացած օսմանեան կառավարութեան և պետութիւնների պատուիրակներից, կը զբաղուի նահանգի կազմական կանոնագրի, ինչպէս և XX յօդ. մէջ յիշատակուած որոշումների մշակմամբ, ղեկավարուելով այս նախագիծ ծրագրի սկզբունքներով:

XXII

Պետութիւնները կը հետևեն այս բոլոր որոշումների կատարմանը:

(Հմմ. յօդ. VIII Յիշատակագրի 1895 թ., յօդ. 32 հրաման. 1895 թ. հոկտ. 20, յօդ. 14 Կրետական Կանոնագրի 1896 թ.):

Այս ծրագրին իրանց կատարեալ հաւանութիւնը տուին Երբեակ Համաձայնութեան պետութիւնների դեսպանները Կ. Պօլսում: Շուտով նոյն հաւանութիւնը տուին և այդ պետութիւնների կառավարութիւնները: Այժմ սկսուած էր գլխաւոր դժուարութիւնը՝ համաձայնութիւն կայացնել Երբեակ Նիզակակցութեան պետութիւնների հետ, երոպական մի համերաշխութիւն ստեղծելու համար Հայոց Հարցի շուրջը:

Այս համաձայնութեան հիմքերը պիտի մշակուէին Կ. Պօլսում: Ռուսաց դեսպանութիւնը բանակցութիւններ էր վարում Գերմանիայի, Աւստրո-Հունգարիայի և Իտալիայի դեսպանութիւնների հետ: Սկզբից և եթէ պարզուեց գերմանական դիւանագիտութեան սաստիկ չկամութիւնը: Բացարձակ յայտնի էր դառնում որ Գերմանիան դժգոհ է այն պատճառով, որ Հայոց Հարցը արծարծուած է Ռուսաստանի ձեռքով: Ինքը Գերմանիան կուզէր լինել նախաձեռնողը: Նա ուզում էր սիրաշահել հայերին, քանի որ գերմանական շահերը շատ խոշոր են Կիլիկիայում, իսկ հայերը այդտեղ ազգաբնակչութեան

նշանատր մասն են կազմում: Սակայն այդ սիրաշահման միտքը այնքան հզոր չէր, որ մոռացներ թէ Ռուսաստանն է նախաձեռնող հանդիսանում: Պէտք էր դիմադրել հայկական ռէֆորմներին, դիմադրած լինելու համար Ռուսաստանին և պաշտպանած լինելու համար Թիւրքիան: Եւ գերմանական արտաքին գործերի մինիստրը յայտնում էր Բերլինի ռուսաց դեսպանին թէ Բերլինում էլ ստացուել են տեղեկութիւններ Թիւրքիայի հայկական վիլայէթների յուզումնալից դրութեան մասին, բայց այդ տեղեկութիւնները դեռ ճշտման են կարօտ, հայերն էլ գրգռիչ վարմունք ունին, հայերը փոքրամասնութիւն են կազմում ամեն տեղ, ռէֆորմների ծրագիրը հազիւ թէ գործնական նշանակութիւն ունենայ և յամենայն դէպս Գերմանիան չի համաձայնուի այնպիսի քայլերի, որոնք սպառնում են Թիւրքիայի հողային ամբողջութեան¹¹³:

Բայց բանակցութիւնների արդիւնքն այն եղաւ, որ վեց մեծ պետութիւնները համաձայնութիւն կայացրին որ Մանդէշտամի կազմած ծրագիրը ենթարկուի Կ. Պօլսի դեսպանների ներկայացուցիչների քննութեան: Վեց մեծ պետութիւնների դեսպանատներից մի մի լիազօր 1913 յուլիսի 3-ից սկսեցին կանոնաւոր ժողովներ աւստրիական դեսպանատան մէջ: Ռուսաց դեսպանի կողմից ներկայացուցիչ էր ծրագրի հեղինակ պ. Մանդէշտամը, որ և հայկական ռէֆորմների իրաքանչիւր կէտը պաշտպանում էր, զինուածբազմաթիւհարուստնիւթերով: Բայց նրա հզօր հակառակորդ հանդիսացաւ գերմանական դեսպանի լիազօր Շօնբերգը, որ և ամենայն եռանդով զարգացնում էր իր կառավարութեան հայեցակէտերը յանուն Թիւրքիայի անձեռնմխելիութեան, Սուլթանի վեհապետական իրաւունքների և այլն: Մանաւանդ անընդունելի էր համալրում հայկական վեց վիլայէթներից մի հատ նահանգ կազմելը: Գերմանական լիազօրի տեսութիւնները պաշտպանում էին իտալական և աւստրո-հունգարական լիազօրները, իսկ ռուսական ծրագրի կողմնակից էին Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները: Վիճաբանութիւնները տւեցին եօթը նիստերի մէջ (մինչև յուլիսի 23): Ռուսական ծրագրի ամենագլխաւոր, էական մասերը մերժուեցին Երրեակ Նիզակակցութեան կողմից:

Ռուսական դիւանագիտութեան մնում էր նոր հիմքերի վրա

¹¹³ Оранже. Книга с. 45.

համաձայնություն որոնել կոմպրոմիսների և զիջողությունների միջոցով: Եռանդուն բանակցությունների հետևանքն այն եղաւ, որ ռուսական և գերմանական դեսպանները համաձայնություն կայացրին թէ ինչ ձև պէտք է տալ հայկական ռէֆորմներին և երկուսով միասին յայտարարութիւններ արին թիւրքաց մեծ վեզիրին: Երկար ձգձգումներ և դիւանագիտական խաղեր սկսեց թիւրք կառավարութիւնը: Բայց այդ բոլոր դժուարութիւնների մէջ ռուսաց դեսպան պ. Գիրսը կարողացաւ որոշ ձևակերպումով ընդունել տալ թիւրք կառավարութեան Հայաստանի դրութիւնը բարութելու միտքը. 1914-ի յունվարի 5-ին Գիրսը գնաց արձակուրդով Ռուսաստան, իսկ կայացրած համաձայնութեան վերջնական ձևակերպումն ու ստորագրումը մնաց Գուլկէվիչին, որ փոխարինեց նրան իբրև Հաւատարմատար:

1914 յունվարի 26-ին ռուսաց Հաւատարմատարը և մեծ վեզիր Սայիդ-Հալիմ փաշան ստորագրեցին հետևեալ վաւերագիրը, որ յետոյ հաստատուեց Սուլթանի իրադէով:

№ 31

ԲՆԱԳԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ.

որ ստորագրել են 1914 թ. յունվարի 26-ին Կ. Պօլսի Ռուսաց Կայսերական Հաւատարմատարը եւ օսմանեան պետութեան մեծ վիզիրը Հայաստանի ռէֆորմների մասին¹¹⁴

Նորին Գերազանցութիւն պ. Կոստանդին Գուլկէվիչ, Ռուսական Հաւատարմատարը և Նորին Բարձրութիւն պրինց Սաիդ-Հալիմ փաշան, մեծ վիզիր և մինիստր արտաքին գործերի օսմանեան պետութեան, համաձայնուեցին, որ երկու Ընդհանուր Տեսուչներ նշանակելու հետ միասին, որոնք պիտի Արևելեան Անատոլիայի երկու հատուածների գլուխ կարգուեն, Բարձր Դուռը կը դիմէ մեծ պետութիւններին հետևեալ ծանուցագրով.

«Երկու օտարահպատակ Ընդհանուր Տեսուչներ կը նշանակուեն գլուխ Արևելեան Անատոլիայի երկու հատուածների. պ. Ա... գլուխ

¹¹⁴ Էջմիածնի Հայրապետական Դիւան:

այն հատուածի, որի մէջ կը մտնեն Էրզրումի, Տրապիզոնի և Սիվասի վիլայէթները, և պ. Բ... գլուխ այն հատուածի որ կը պարունակէ իր մէջ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբէքիի վիլայէթները:

Ընդհանուր Տեսուչներին կը յանձնուի վերահսկողութիւն իրանց յանձնուած հատուածների վարչութեան, դատարանի, ոստիկանութեան և ժանդարմերիայի վրայ: Այն դէպքերում, երբ հասարակական ապահովութիւնը պահպանելու համար որոշած պահնորդութեան կազմը պակասատր համարուի, Ընդհանուր Տեսչի խնդրանքով նրա իշխանութեան տակ պիտի դրուին զինուորական ոյժեր՝ ձեռք առնելու համար այն միջոցները, որոնք վերաբերում են նրա տեսչութեան սահմաններին: Ընդհանուր Տեսուչները, նայելով հանգամանքներին, հեռացնում են պաշտօնից բոլոր պաշտօնակատար անձանց, որոնց անհամապատասխան լինելու կամ վատ վարք ունենալու վերաբերմամբ նրանք համոզուած են, յանձնելով արդարադատութեան ձեռքը այնպիսիներին, որոնք մեղաւոր են օրէնքներով պատժուող յանցանքների մէջ: Նրանք հեռացրած ստորին աստիճանների պաշտօնեաների փոխարէն նշանակում են նոր պաշտօնեաներ այն թեկնածուների թուից, որոնք բաւարար են պաշտօնավարութեան՝ ընդունակութեան օրինասահման պայմանների տեսակէտից: Նրանց իրաւունք է տրուում ներկայացնել բարձրաստիճան պաշտօնեաներին ի հաստատութիւն Նորին Մեծութեան Սուլթանի կառավարութեան: Այս կամ այն պաշտօնեայի հեռացման համար ձեռք առած իրանց միջոցների մասին նրանք անյապաղ հաղորդում են պատշաճաւոր մինիստրներին հեռագիրներով, որոնց մէջ համառօտակի յիշատակում են պատճառաբանութիւնները, և այդ հեռագիրներից յետոյ ութ օրուայ ընթացքում պէտք է ուղարկուի գործը այդ անձանց մասին և մանրամասն պատճառաբանութիւնները նրանց հեռացման մասին:

Կարևոր դէպքերում, երբ պահանջուում է ձեռք առնել անյապաղ միջոցներ, Ընդհանուր Տեսուչները իրաւունք կունենան իսկոյն հեռացնելու դատաստանական մասին պատկանող անփոփոխելի պաշտօնավարներին, այն պայմանով որ առանց յետաձգման հաղորդեն այդ միջոցը գործադրելու պատճառները արդարադատութեան դէպարտամենտին:

Այն դէպքերում, երբ երևան են հանուած վալիների կա-

տարած այնպիսի արարքներ, որոց վերաբերմամբ հարկաւոր կը լինէին առանձնապէս լուրջ միջոցներ, Ընդհանուր Տեսուչները հեռագրում են այդ մասին ներքին գործերի մինիստրութեան, որին հրամանագրում է անյապաղ գործը ենթարկել մինիստրների խորհրդի քննութեան և այս վերջինը պարտաւոր է վճիռ կայացնել Ընդհանուր Տեսչի հեռագիրն ստանալուց չորս օրուայ ընթացքում:

Հողային հարցի վերաբերմամբ տեղի ունեցած ընդհարումները կը կարգաւորուեն Ընդհանուր Տեսուչների անմիջական հսկողութեան տակ:

Աւելի մանրամասն հրահանգներ Ընդհանուր Տեսուչների պարտաւորութիւնների և պաշտօնավարութեան սահմանների մասին կը մշակուեն նրանց նշանակումից յետոյ և նրանց մասնակցութեամբ:

Այն դէպքում, երբ 10 ամեայ ժամանակի ընթացքում Ընդհանուր Տեսուչների պաշտօնը թափուր կը մնայ, բարձր Դուռը այդ Տեսուչների ընտրութեան գործում յոյս ունի մեծ պետութիւնների բարեացակամ աջակցութեան վրայ:

Օրէնքները, հրամանները և պաշտօնական հաղորդագրութիւնները իւրաքանչիւր շրջանում գրում են տեղական լեզուներով: Դատաստանական և վարչական հիմնարկութիւնների մէջ գործ ունեցող իւրաքանչիւր կողմ իրաւունք կունենայ գործածելու իր մայրենի լեզուն, երբ այդ հնարաւոր կը գտնէ Ընդհանուր Տեսուչը: Դատաստանական վճիռները կը գրուին, թիւրքական լեզուով և կունենան, ըստ չափու հնարաւորութեան, թարգմանութիւններ մայրենի լեզուով:

Իւրաքանչիւր ազգային տարրի (ունսուր) մասնակցութիւնը ժողովրդական լուսաւորութեան բիւջէի մէջ համեմատական է այն մասնակցութեան, որ նա ունի ժողովրդական լուսաւորութեան համար ստացուող հարկերի մէջ: Կայսերական կառավարութիւնը չի արգելի որ առանձին առանձին համայնքների մէջ, վերջիններիս այն անդամները, որոնք պատկանում են միևնոյն հաւատին, պահեն իրանց սեփական դպրոցները:

Իւրաքանչիւր օսմանեան հպատակ կը կատարէ գինուորական պարտաւորութիւնը այն շրջանում, ուր նա ապրում է: Սակայն կայսերական կառավարութիւնը, մինչև նոր կարգադրութիւն, կուղարկի Իեմէնի, Ասսիրի և Նեջէթի հեռաւոր կողմերը տեղական զօրքերի քանակութիւններ, որոնք հաւաքում են օսմանեան պետու-

թեան բոլոր կողմերից համեմատ այդ կողմերում բնակուող ազգութիւնների. բացի դրանից, ծովային զինուորները կը հաւաքուեն ամբողջ պետութիւնից:

Համիդիէ գնդերը կը վերածուին պահեստի հեծելազօրքի: Նրանց զէնքերը կը պահուեն զինուորական մթերանոցներում և նրանց ձեռքը կը տրուեն միայն զինակոչի և զօրախաղերի ժամանակ: Նրանք կենթարկուեն այն կորպուսների հրամանատարների իշխանութեան, որոնց շրջանում ապրում են նրանք: Իսողաղ ժամանակներում գնդերի, էսկադրօնների և գումարտակների հրամանատարները կընտրուեն կայսերական օսմանեան գործող բանակի սպաների թուից: Այս գնդերի հասարակ զինուորները պիտի ծառայեն մի տարի: Ծառայութեան մէջ մտնելու համար նրանք պիտի ներկայանան իրանց ձիաներով և ձիաների ամբողջ կարգ ու սարքով: Ամեն մի անձ առանց ազգի և կրօնի խտրութեան, որ բնակութիւն ունի տուեալ շրջանում և բաւարարում է ցոյց տուած պայմաններին, կուենայ յիշեալ գնդերի մէջ ընդունուելու իրաւունք: Հինակոչի կամ զօրախաղերի ժամանակ այդ զօրքերը պիտի ենթարկուեն նոյն կարգապահական կանոններին, ինչպէս կանոնաւոր զօրքերը:

Վիլայէթների ընդհանուր խորհուրդների գործունէութեան սահմանները որոշուում են համաձայն 1329-1913 թ. մարտի 13-ի օրէնքի ցուցմունքներին: Վերջնական ժողովրդագրութեան միջոցով պիտի կատարուի Ընդհանուր Տեսուչների հսկողութեամբ ամենամերձաւոր ապագայում և եթէ կարելի է՝ ոչ ուշ քան մի տարուց յետոյ կը սահմանուի զանազան դաւանութիւնների և լեզուների ճիշտ յարաբերութիւնները դէպի իրար:

Մինչև այդ, Վանի և Բիթլիսի վիլայէթների ընդհանուր խորհրդի (մէջլիս ումումի) և կոմիտէների (էնջումէն) համար ընտրուածները կը լինին մահմետական և ոչ-մահմետական կէս առ կէս: Էրզրումի վիլայէթում, եթէ վերջնական մարդահամարը կատար չաճուի մի տարուայ ընթացքում, Գլխաւոր Խորհրդի անդամները դարձեալ կընտրուեն հաասարութեան սկզբունքով, ինչպէս վերոյիշեալ երկու վիլայէթներում:

Սըվազի, Իսարբերդի և Դիարբէքիի վիլայէթներում Գլխաւոր Խորհրդի անդամները կընտրուեն հէնց այժմ համեմատականի սկզբունքով: Այս նկատառումով, մինչև մարդահամարի վերջանալը,

մահմետական ընտրողների թիւը առաջուայ պէս կորոշուի այն ցուցակներով, որոնք վերջին ընտրութիւնների հիմքն են կազմել, իսկ ոչ-մահմետականների թիւը կորոշուի այն ցուցակների հիման վրայ, որոնք կը ներկայացունեն համայնքների կողմից: Եթէ նիւթական դժուարութիւնները կը դարձնեն այս նախնական ընտրական կարգը անգործադրելի իրականութեան մէջ, Ընդհանուր Տեսուչներին իրաւունք կը տրուի առաջարկել և մի այլ սկզբունք երեք վիլայէթների-Սըվազի, Իսարբերդի և Դիարբէքիի Ընդհանուր Խորհուրդների մէջ եղած տեղերը բաշխելու համար, մի սկզբունք որ աւելի համապատասխան կը լինէր այդ վիլայէթների կարիքներին և ժամանակակից պայմաններին: Այն վիլայէթներում, ուր Ընդհանուր Խորհուրդները կընտրուեն համեմատականի սկզբունքով, փոքրամասնութիւնը ներկայացուած կը լինի կոմիտէներում (էնջուման): Վարչական Խորհուրդների համար ընտրուած անդամները կը լինեն, ինչպէս անցեալում կէս առ կէս մահմետականներ և ոչ-մահմետականներ:

Մահմետականների և ոչ-մահմետականների հաւասարութեան սկզբունքը գործադրուած կը լինի նմանապէս և ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպման մէջ երկու շրջաններում էլ այն չափով, որքան տեղեր կը բացուեն, եթէ միայն այս բանի դէմ արգելք չը գտնեն Ընդհանուր Տեսուչները: Միևնոյն սկզբունքը երկու շրջաններում էլ կը գործադրուի, ըստ չափու հնարաւորութեան, և միւս հասարակական բոլոր պաշտօնների բաշխման նկատմամբ:

Ի հետևումն որոյ վերոյիշեալները ստորագրեցին ներկայ թուղթը և կնքեցին իրանց կնիքներով:

Ստորագրուած Գուլկեմիչ, Սաիդ-Հալիմ

Կ. Պօլիս, 26 յունվարի 1914 8 փետրվարի

Ներկայացնելով այս ստորագրուած վաւերագիրը արտաքին գործերի մինիստր Սազնոմլիկն, Հաւատարմատար պ. Գուլկեմիչը մի ընդարձակ յայտարարութեան մէջ նկարագրում էր հարցի ամբողջ պատմութիւնը, թէ ռուսաց դիւանագիտութիւնը որքան խոչընդոտների ու դժուարութիւնների դէմ պիտի մրցէր, մինչև որ հասներ այս վերջնական ձևին: Նայելով այդ դժուարութիւններին, պէտք էր ընդունել որ յունվարի 26-ի վաւերագիրը ռուսական դիւանագիտութեան մի խոշոր յաղթանակի արդիւնքն էր:

Ուրիշ հարց էր թէ որքան այդ համաձայնութիւնը համապա-

տասխանում էր հայ ժողովրդի ակնկալութիւններին: Այս առիթով պ. Գուլկեվիչը գրում էր.

«Դիմելով յունվարի 26-ի ակտի գնահատութեան, պէտք է, ի հարկէ, խոստովանել որ նա չէ տալիս հայերին ինքնավարական այն ընդարձակ իրաւունքները, որ ուզում էր նրանց համար ապահովել Ռուսական Ծրագիրը»: Բայց և այդպէս, նոր խմբագրութեան մէջ էլ կարելի է եղել անցկացնել բաւական կարևոր որոշումներ: Թուելով այդ բոլոր առաւելութիւնները, պ. Գուլկեվիչը յարում էր.

«Այսպիսով, 1914 թ. Յունվարի 26-ի ակտը անկասկած մատնանշում է նոր, աւելի բախտաւոր մի շրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմութեան մէջ: Իր ներքին քաղաքական նշանակութեամբ, որ ունի այդ ազգի համար, նրան կարելի է համեմատել 1870 թուականի Ֆերմանի հետ, որ ստեղծեց Բուլգարական մի Էկզարխութիւն և դրանով ազատեց Բուլգարներին յունական խնամակալութիւնից: Հայերը չեն կարող չը գիտակցել, որ այժմ արուած է առաջին քայլը՝ նրանց թիրջական լուծից ազատելու համար»¹¹⁵:

Ռուսաց դիւանագիտութիւնն սկսեց հետևել որ թիրջ կառավարութիւնը կատարէ իր յանձն առած պարտաւորութիւնները: Երկար որոնումներից հետոյ կարելի եղաւ գտնել և նշանակել երկու երոպացի Ընդհանուր **Տեսուչներ-Վեսպէնենկ և Հօֆ**: Նրանք գնացին Կ. Պօլիս և այդտեղ նրանց հետ միասին մշակուեց և հաստատուեց (մայիսի 10-ին) այն հրահանգը, որի մասին որոշում կայ վերոյիշեալ համաձայնութեան մէջ:

№ 32

ՀՐԱՀԱՆԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ¹¹⁶

Յօդ. 1. – Ընդհ. Տեսուչներն իրանց կենտրոնատեղին հաստատելու են իրանց պատկանող հատուածի այն քաղաքի մէջ, որ իրանց պաշտօնավարութեան կարիքներին աւելի համապատասխան կը դատեն:

Նրանք իրանք որոշելու են այն քննութիւնների ու պտոյտների

¹¹⁵ Оранжев. Кн. с. 173.

¹¹⁶ Էջմիածնի Հայրապետական Դիւան, թարգ. «Արարատ» ամսագրի, 1914, № 6:

ժամանակն ու եղանակը, որ պիտի կատարեն իրանց շրջաններում, միևնույն է անձնապես թե պատուիրակների միջոցով, այն վերապահութամբ միայն, որ պարտաւոր են իւրաքանչիւր ամիս թէ ներքին գործերի թէ արդարադատութեան մինիստրութիւններին տեղեկագիր ուղարկել իրանց շրջանների կացութեան մասին քաղաքացիական և դատական վարչութեան տեսակէտներից:

Յօդ. 2. – Ընդհ. Տեսուչները կոնտրոլի են ենթարկելու իրանց շրջանի քաղաքացիական, դատական, ոստիկանական և ժանդարմական վարչութիւնները:

Հանրային ապահովութեան ուժերի անբաւարար լինելու դէպքում Ընդհ. Տեսչի պահանջմամբ իր տրամադրութեան տակ պիտի դրուին զինուորական ուժեր՝ իր ձեռնհասութեան սահմաններում ձեռք առնուած միջոցների գործադրութեան համար:

Ընդհ. Տեսուչների պահանջման դէպքում հեռագրական պաշտօնեաներն պիտի ուղարկուեն նրանց մասնաւոր բնակարանը՝ պաշտօնական թղթակցութիւններ յղելու համար: Ընդհ. Տեսուչների գործածութեան համար մշակուելու է մի յատուկ հեռագրական բառարան՝ ծածկագիր թղթակցելու Մեծ Վեզիրութեան և Ներքին Գործերի ու Արդարադատութեան մինիստրութիւնների հետ: Ժանդարմներ կամ զինուորներ հաւասարապէս դրուելու են նրանց տրամադրութեան տակ՝ իրենց մասնաւոր բնակարաններում:

Յօդ. 3. – Ընդհ. Տեսուչներն իրանց պատկանող շրջաններում հսկելու են վիլայէթների և համայնքների օրէնքների որոշումների գործադրման վրայ, ինչպէս և կայսրութեան այն բոլոր օրէնքների ու կանոնների, ուր վերաբերում են քաղաքացիական վարչութեան, արդարադատութեան, ոստիկանութեան և ժանդարմերիային:

Յօդ. 4. – Ընդհ. Տեսուչները, նահանգապետների կարծիքն ստանալուց յետոյ, Բ. Դրան ներկայացնելու են պատճառաբանութիւններով ընթացակցուած օրինագծեր, պահանջելու կայսրութեան այն օրէնքների ձևափոխութիւնը, որոնք չեն համապատասխանում իրանց շրջանի իրական կարիքներին: Նրանք մշակելու են հաւասարապէս և հրահանգների նախագծեր՝ դիւրացնելու յիշեալ օրէնքների գործադրութիւնն իրանց շրջաններում:

Հրահանգների այս նախագծերն ենթարկուելու են համապատասխան դեպարտամենտի հաւանութեանը:

Յօդ. 5. – Ընդհ. Տեսուչները նշանակելու են այն վայրերը, որ

անհրաժեշտ կարիք ունին քաղաքացիական վարչութեան կազմակերպութեան հաստատման, համաձայն վարչութեան օրէնքի 3-րդ յօդուածի, և այս առթիւ նահանգապետների ու զօրաբանակների հրամանատարների կարծիքն ստանալուց յետոյ, պատրաստելու են համապատասխան օրինագծեր: Նրանք են որոշելու այն գիւղերի և համայնքների այս կամ այն վիլայէթից կախումը, որոնք յաւակնում են երկու վիլայէթների հետ էլ կապուած լինել: Նրանք հաղորդելու են ներքին գործերի մինիստրութեան իրենց կարծիքը այն որոշումների մասին, որ համաձայն վերոյիշեալ յօդուածի, պիտի տրուին վիլայէթների ընդհանուր ժողովներից՝ սանջակների ու կազաների կենտրոնատեղիների փոփոխման, այս սանջակների ու կազաների սահմանների ձևաւորման ու ուղղման, ինչպէս և իրանց վարչական բաշխման մէջ տեղի ունենալիք փոփոխութիւնների առիթով:

Յօդ. 6. - Վիլայէթների օրէնքի 4-րդ յօդուածի համաձայն Ընդհ. Տեսուչները մշակելու են ու ներկայացնելու ներքին գործերի մինիստրութեան յատուկ կանոնների նախագծեր, իրանց պատկանող շրջանում գտնուած նոմադ ցեղերի տեղաւորման ու վարչութեան մասին, հաշուի առնելով նրանց բարքերն ու սովորոյթները, հասարակական կարիքները ու տեղական պահանջները: Վալիների հետ միակարծիք, նրանք անհրաժեշտ միջոցներ են ձեռք առնելու կանխելու նոմադների կողմից որ և է աւարառութիւն շէն գաւառամասերում, մինչև որ այս ցեղերը տեղաւորուեն և ընտելանան երկրագործական և ինդուստրիական աշխատանքներին:

Յօդ. 7. -Այլ պարտականութիւնների հետ միասին Ընդհ. Տեսուչների պարտքն է և ամրապնդել իրենց շրջանի ազգագրական զանազան տարրերի համերաշխութիւնը, ցրել նրանց անջատող թիրիմացութիւնները, եթէ կան, ապահովել բոլորի իրաւունքների հաւասարութիւնը և յարգել տալ ընդհանրապէս ամէն մէկի ազատութիւնն ու իրաւունքները: Ըստ այսմ, Ընդհ. Տեսուչներն առանձնապէս անմիջական հսկողութիւն են ունենալու՝ կարգադրելու հողային սեփականութեան շուրջը ծագած վէճերը, որոնք որոշ վայրերում ազգաբնակչութեան զանազան տարրերը բաժանում են:

Յօդ. 8. - Ընդհ. Տեսուչների ձեռնահասութիւնն ու պարտականութիւնն է կազմում, ինչպիսի եղանակով էլ այդ լինի, հսկելու՝ որ իրանց վերահսկողութեան տակ և ըստ կարելոյն կարճ ժամանակամիջոցում մի վերջնական մարդահամար կատարուի, որ պիտի

հաստատել իրանց պատկանող շրջանների գանազան կրօնների, ազգութիւնների, լեզուների ստոյգ համեմատական թիւը:

Ընդհ. Տեսուչներն իրանց պատկանող շրջաններում հսկելու են կայսերական կառավարութիւնից հաստատուած հետևեալ որոշումների իրագործման վրայ.

Վանի և Բիթլիսի վիլայէթների Ընդհ. Ժողովների (Մէջլիսի Ումումի) և Կօմիտէների (Էնջիւմէն) ընտրովի անդամները պիտի լինեն կիսով մահմետական և կիսով ոչ մահմետական: Էրզրումի վիլայէթում, եթէ վերջնական մարդահամարը մի տարուայ ընթացքում տեղի չէ ունեցել, ընդհ. Ժողովների անդամները պիտի ընտրուեն նոյնպէս «կիսով»ի հիման վրայ, ինչպէս վերոյիշեալ երկու վիլայէթներում: Սըվազի, Խարբերդի և Դիարբէքիի վիլայէթներում ընդհ. Ժողովի անդամներն հէնց այժմեանից պիտի ընտրուեն համեմատականութեան սկզբունքի հիման վրայ: Այս նպատակով, մինչև վերջնական մարդահամարը, մահմետական ընտրողների թիւն որոշուած կը մնայ համաձայն վերջին ընտրութիւններին իբրև հիմք ծառայած ցուցակների, իսկ ոչ-մահմետական ընտրողների թիւը կորոշուի համաձայն իրանց համայնքներից ներկայացուելիք ցուցակների:

Եթէ սակայն նիւթական դժուարութիւններն անգործադրելի դարձնեն ընտրական այս ժամանակաւոր սիստեմը, Ընդհ. Տեսուչներն իրաւունք են ունենալու երեք վիլայէթներին՝ Սըվազի, Խարբերդի և Դիարբէքիի ընդհ. Ժողովների աթոռների բաշխման համար մի այլ առաջարկութիւն անել, որ աւելի համապատասխան լինի յիշեալ վիլայէթների իրական կարիքներին ու պայմաններին:

Այն բոլոր վիլայէթներում, ուր ընդհ. Ժողովներն ընտրուելու են համեմատականութեան սկզբունքի հիման վրայ, փորքմասնութիւնը ներկայացուցիչ է ունենալու կօմիտէի մէջ (Էնջիւմէն):

Վարչական Ժողովների ընտրովի անդամները, ինչպէս անցեալում, պիտի լինեն կիսով մահմետական և կիսով ոչ-մահմետական:

Եթէ Ընդհ. Տեսուչներն անյարմար չեն գտնի, մահմետականների և ոչ-մահմետականների հաւասարութեան սկզբունքը գործադրելու են երկու շրջաններում էլ ուստիկանութեան և ժանդարմերիայի հաւաքման համար այն չափով, ինչ չափով ազատ տեղեր կը բացուին:

Հաւասարութեան նոյն սկզբունքը գործադրուելու է հնարաւորութեան չափ նաև երկու հատուածների միջի բոլոր հասարակական

պաշտօնների բաշխման համար:

Յօդ. 9. – Ընդհ. Տեսուչները կոնտրոլի են ենթարկելու ուղղակի կամ անուղղակի կերպով բոլոր պաշտօնեաների պաշտօնակատարութեան եղանակը, ստուգելով նրանց ընդունակութեան ու ժրաջանութեան աստիճանը:

Նրանք կազմել են տալու բոլոր պաշտօնեաների «ցուցակ ծառայութեանը»:

Յօդ. 10. – Ընդհ. Տեսուչները հանգամանքներին նայած պաշտօնանկ են անում այն բոլոր պաշտօնեաներին, որոնց անբաւարար լինելն ու վատ ընթացքը կը հաստատեն, արդարադատութեան յանձնելով նրանց որոնք օրէնքով յանցաւոր կը լինեն պատժելի արարքի համար. նրանք փոխարինում են հրաժարեցրած ստորադաս պաշտօնեաներին նորերով, որոնք պէտք է լրացնեն օրէնքներով և կանոններով նախատեսնուած ընդունելութեան և ունակութեան պայմանները: Նրանք իրաւունք են ունենալու Նորին Վեհափառութիւն Սուլթանի կառավարութեան անուանմանը ներկայացնել բարձրաստիճան պաշտօնեաներին: Կատարուած պաշտօնանկութիւնների մասին անմիջապէս հաղորդելու են համապատասխան մինիստրութիւններին պատճառաբանուած կարճ հեռագիրներով, որոնց պիտի հետևեն ութ օրուայ ընթացքում այս պաշտօնեաների գործերն ու մանրամասն պատճառաբանութիւններով մի տեղեկագիր:

Բարձրաստիճան պաշտօններն են՝

Վալին,

Միութեսարիֆը,

Կայմակամները,

Դէֆթերդարը,

Մեքթուբչին,

Հանրային կրթութեան վերատեսուչը,

Երկրագործութեան վերատեսուչը,

Հանրային աշխատանքների գլխաւոր ինժեները,

Կալուածային վարչութեան վերատեսուչը,

Ոստիկանութեան վերատեսուչը,

Մարդահամարի վերատեսուչը,

Առողջապահութեան վերատեսուչը,

Քաղաքական գործերի վերատեսուչը, կամ վիլայէթի թարգմանը,

Սանջակի մուհասերեջին,

Սանջակի թղթակցութեան վերատեսուչը,

Ուսուցման երկրորդական հիմնարկութիւնների և նորմալ դպրոցների (վարժապետանոցների) վերատեսուչները և ինչպէս և ուսուցիչները,

Բոլոր տեսուչները անմիջապէս վալիներից կախում ունեցող պաշտօնեաներին վերաբերող որոշումները հաղորդելու են իրենց վալիներին:

Յօդ. 11. – Եթէ հաստատուի, որ վալիներն այնպիսի գործեր են կատարել, անհրաժեշտ է անյետաձգելի խիստ միջոցներ ձեռնարկել, Ընդհ. Տեսուչները խնդիր ներկայացնելու են ներքին գործերի մինիստրութեան, որն անմիջապէս մտցնելու է այդ մինիստրների ժողով, և այս վերջինս պիտի որոշում տայ ամենաուշը 4 օրուայ ընթացքում, հաշուելով Ընդհ. Տեսչի հեռագիրը ստացուելու ժամանակից:

Ընդհ. Տեսչից կամ նրա պահանջով հրաժարեցուած պաշտօնեաները չեն կարող նոր պաշտօնի ունակ յայտարարուել, նոյն իսկ պաշտօնից ազատների խմբում, մինչև որ կենտրոնական իշխանութիւնը 10-րդ յօդուածով նախատեսուած հրաժարեցման մասին մանրամասն պատճառաբանուած տեղեկագիրը չստանայ ու չհաստատէ նրա բովանդակութիւնը:

Յօդ. 12. – Քաղաքացիական, դատական, ժանդարմերիայի, հանրային աշխատանքների և երկրագործութեան քննիչները կախում ունեն ուղղակի իրանց պատկանած դեպարտամենտներից, բայց վիլայէթների պաշտօնեաների հետ մի աստիճանի վրայ դրում են Ընդհ. Տեսուչների վերահսկողութեան տակ և Ընդհ. Տեսուչների անհրաժեշտ դատած դէպքերում պարտաւոր են այս վերջինների ուղարկած ծանուցումները (communication) գործադրել: Այս Տեսուչները ներկայացնում են Ընդհ. Տեսչին իրանց հրահանգների համաձայն կատարելիք քննութիւնների տեղեկագրի պատճէն, իսկ բնագիրը ուղարկում են այն դեպարտամենտին, որից կախում ունին:

Պաշտօնեաների պարտականութիւնների կատարման եղանակի առթիւ եղած քննութիւնների տեղեկագիրները, լինին դրանք կատարուած մինիստրութիւնների թէ Ընդհ. Տեսչի հրամանով, միաժամանակ հաւասարապէս ներկայացուելու են՝ պատճէնը-

Ընդհ. Տեսչին բնագիրը, – համապատասխան մինիստրութիւններին:

Յօդ. 13. – Ֆինանսական քննիչներն անմիջապէս կախում ունեն ֆինանսական մինիստրութիւնից: Նրանք այդ մինիստրութեան ուղարկելու են յատուկ կանոնադրութեան համաձայն կատարուելիք քննութեան տեղեկագիրները և պատճէն ընձեռնելու են Ընդհ. Տեսչին: Այն դէպքում երբ վերջինս անհրաժեշտ կը դատի քննութիւն բանալ մի յատուկ խնդրի առթիւ և այդ կը հաղորդէ Ընդհանուր Տեսչութեան կենտրոնատեղիում գտնուող գլխաւոր քննիչին, սա պարտաւոր է կամեցուած քննութիւնը կատարել, լինի այդ անձնապէս թէ մի այլ քննիչի ջանքերով, և Ընդհանուր Տեսչին տեղեկագիր ներկայացնել. ֆինանսների մինիստրութիւնը հաւասարապէս հաղորդակից պիտի լինի նմանօրինակ քննութիւնների:

Յօդ. 14. – Եթէ որ և է դատական պաշտօնեայ, որ պատկանում է անփոփոխ դատաւորների կարգին, յանցաւոր կը գտնուի դատի կամ պաշտօնանկութեան ենթակայ իր արարքով, Ընդհ. Տեսուչը դիմում է Արդարադատութեան մինիստրութեան նրան դատի տալու համար: Մինիստրութիւնը գործին ընթացք պիտի տայ մէկ շաբաթից ոչ ուշ: Եթէ յիշեալ պաշտօնեան դատաւոր չէ, Ընդհ. Տեսուչը պա-հանջելու է նորա պաշտօնանկութիւնը և ուրիշով փոխարինումը, լինի այդ Արդարադատութեան մինիստրութիւնից թէ Վերաքննիչ Պալատի Ընդհանուր Դատախազից, պաշտօնի կարևորութեան աստիճանի համեմատ:

Այնտաձգելի կարգադրութիւններ պահանջող կարևոր դէպքերում Ընդհ. Տեսուչները վայելելու են անմիջական ժամանակաւորապէս պաշտօնից արձակելու (suspension) իրաւունք, նոյնիսկ դատական անփոփոխ պաշտօնեաների նկատմամբ, այն պայմանով, որ դէպքերն անմիջապէս Արդարադատութեան դեպարտամենտին հաղորդեն:

Յօդ. 15. – Ընդհ. Տեսուչների ամենակարևոր պարտականութիւններից մէկն է և հսկել՝ որ դատական վիճաբանութիւնները գերծմնան որ և է արտաքին ճնշումից, վճիռները տեղի ունենան ամենամեծ անկողմնակալութեամբ ու ազատութեամբ և դատաւորներն ոչ մի կերպ չազդուեն:

Յօդ. 16. – Դատական պաշտօնեաները պարտադիր են համակերպել Ընդհ. Տեսուչների այն ծանուցումներին, որոնք վերաբերում են վարչական բաժնի և դատական գործերի դիւանական աշխա-

տանքների մէջ ներմուծուելիք ռեֆորմներին, սրանց կանոնաւոր ընթացքն ապահովելու համար:

Ըստ այսմ, Ընդհ. Տեսուչները հսկելու են իրանց պատկանող շրջաններում կայսերական կառավարութեան կողմից հաստատուած հետևեալ որոշումների իրագործման վրայ:

Իրաքանչիւր շրջանում օրէնքները, հրամանագրերը և յայտարարութիւնները հրատարակելու են տեղական լեզուներով: Իրաքանչիւր կողմ իրաւունք է ունենալու դատաւորների և վարչութեան առջև գործածել իր լեզուն, երբ Ընդհ. Տեսուչն այդ հնարաւոր կը դատէ: Դատավճիռները գրի են առնուելու տաճկերէն, և եթէ հնարաւոր է, թարգմանուելու են կողմերի լեզուներով:

Յօդ. 17. – Ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպութիւնն ու վերակազմութիւնը տեղի է ունենալու իրաքանչիւր շրջանի մէջ Ընդհ. Տեսչի ղեկավարութեամբ ու գիտութեամբ:

Ոստիկանութեան և ժանդարմերիայի կազմակերպման համար անհրաժեշտ դատուած ձևափոխութիւնները, վալիի գիտութեամբ մատնանշուելու են Ընդհ. Տեսչից և ներմուծուելու կենտրոնական իշխանութիւնից:

Յօդ. 18. – Հանրային կրթութեան բոլոր հաստատութիւնների բարձր վերահսկողութիւնները պատկանում են Ընդհ. Տեսուչներին:

Ընդհ. Տեսուչները իրանց պատկանող շրջաններում հսկելու են կայսերական կառավարութեան հաստատած հետևեալ որոշումների գործադրման վրայ:

Իրաքանչիւր վիլայէթի հանրային կրթութեան բիւջէից ամեն մի ազգագրական տարրի պատկանող մասը որոշուելու է համեմատականօրէն, ամէն մէկի հանրային կրթութեան համար ժողովուած հարկերի մէջ ցոյց տուած մասնակցութեան համեմատ: Կայսերական կառավարութիւնն ոչ մի արգելք չի յարուցանիլ, եթէ համայնքներում կրօնակիցները տուրքեր ժողովէն իրանց դպրոցների պահպանման համար:

Յօդ. 19. – Ընդհանուր Տեսուչները ստուգելու են բոլոր մանրամասնութիւններով պետութեան բիւջէի մէջ վիլայէթի հանրային գործառնութիւններին յատկացուած վարկերը և վալիներին ծանուցանելուց յետոյ, մատնանշելու են ինչ որ իրական կարիքներից աւելի կամ պակաս է, այսպիսով անօգուտ ծախսերը կանխելու և կարիք եղած դէպքում վարձի յաւելումն առաջ բերելու համար:

Յօդ. 20. – Ընդհանուր Տեսուչներն ուսումնասիրելու են այն միջոցները, որ թոյլ են տալիս առաջարկելու կենտրոնական իշխանության տասանորդների գանձման այնպիսի մի սիստեմ ընդունել որ ապահովելով գանձատան ու հարկատուների շահերը, իր պարզ ու գործնական բնոյթով, ոչ ժամանակի կորուստ, ոչ էլ երկրագործներին դժուարութիւն պատճառի:

Յօդ. 21. – Ընդհանուր Տեսուչները հարկերի ու թեմմեթուլի գանձման եղանակը ուսումնասիրելուց և, այն վայրերի համար, որ անհրաժեշտ կը նկատեն, վալիների կարծիքը ստանալուց յետոյ, կարող են առաջարկութիւններ ներկայացնել՝ կալուածային վարչութեան վերանորոգման և արդէն սկսուած ընդհանուր ռէֆօրմների բարելաման համար:

Յօդ. 22. – Ընդհանուր Տեսուչները իրանց յատկացուած մասնագէտ տեխնիքներին ուսումնասիրել են տալու այն բոլոր միջոցները, որոնց օգտակար կը լինի դիմել, իրանց շրջանի հանքերն ու անտառները պետութեան համար ամենաարդիւնաւէտ եղանակով պահպանելու ու շահագործելու, հողը պարարտացնելու, արտադրութեան ծախսերը նուազեցնելու, հանրային կրթութիւնը տարածելու, ինդուստրիան և առևտուրը քաջալերելու, հաղորդակցութիւնները դիւրացնելու համար. մի խօսքով քննել են տալու ամեն ինչ, որ կարող է նպաստել վիլայէթների մտաւոր և տնտեսական բարձրացման:

Ըստ այսմ նրանք հսկելու են, որ վալիներն իրագործեն այն ռէֆօրմները, որ ոչ բիւջէի մէջ վարձի ներմուծումն, ոչ էլ օրէնքի կամ կայսերական հրամանագրի հրատարակումն են պահանջում: Ինչ վերաբերում է այն կարգադրութիւններին, որոնք նախադրում են կամ ընդհանուր բիւջէի մէջ յատուկ վարկերի ներմուծման կամ թէ առանձին օրէնքի ու կայսերական վաւերացման գոյութիւնը, այդ առթիւ դիմելու են ձեռնհաս դեպարտամենտներին:

Յօդ. 23. – Ընդհանուր Տեսուչներից իւրաքանչիւրին իրենց գործառնութիւնների կատարման համար յատկացուելու են՝

1. Մի ընդհանուր քարտուղար-դիւանապետ և բաւարար թուով խմբագրողներ, թարգմանողներ, գրագիրներ և ծառաներ:

2. Մի քննիչ քաղաքացիական, ոստիկանական և ժանդարմական գործերի համար:

3. Մի քննիչ դատական գործերի համար:

4. Մի քննիչ հանրային կրթության համար:

5. Մի մասնագետ քննիչ, օտար կամ օսման ցի, երկրագործության համար:

6. Մի մասնագետ քննիչ, օտար կամ օսման ցի, հանրային աշխատանքների համար:

7. Մի թիկնապահ, որ պետք է ընտրուի ժանդարմերիայի օտար սպաներից:

8. Մի օտար անձնական քարտուղար:

9. Մի քրդերէնի թարգման:

10. Մի հայերէնի թարգման:

Այս պաշտօնեաներն անուանուելու են Ընդհանուր Տեսուչների ցուցումով կամ հաւանութեամբ, իսկ նրանց իրաւունքները սահմանուելու են Ընդհանուր Տեսուչների աջակցութեամբ մշակուած մի յատուկ կանոնադրութիւնով:

Ընդհանուր Տեսուչներն ուղևորուեցին Հայաստան, բայց դեռ նրանք չէին հաստատուել իրանց տեղերում, դեռ իրանց պաշտօնի կիրառութեան մէջ էլ չէին մտել, երբ ծագեց եւրոպական սհեղ պատերազմը: Թիւրքիան, հանդիսանալով Գերմանիայի դաշնակից, սկսեց մի շարք համարձակ քայլեր անել, ուղղուած մանաւանդ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դէմ: Այդ քայլերից մէկն էլ այն էր, որ Հայաստանի Ընդհանուր Տեսուչները հեռացուեցին պաշտօնից:

Նորից պատռուած ու ոտի տակ էր տրորուած Հայաստանի բարեկարգման թոյլ փորձերի ծրագիրը: Գուլկեվիչը գրում էր թե ռուսական դիւանագիտութեան ձեռք բերած արդիւնքը սկիզբ է մի նոր, աւելի երջանիկ շրջանի հայ ժողովրդի պատմութեան մէջ: Աւանդ: Երջանկութիւն չը տեսաւ նահատակ թիրքահայ ժողովուրդը: Եւ այժմ նրա արիւնոտ պատմութեան ամենասարսափելի մի երկունքն է տեղի ունենում, երբ նորից և նորից նրա գոյութիւնն անգամ սաստիկ վտանգուած է...

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՈՒՐԻՇ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Որպես զի ճիշտ գնահատենք Հայաստանի համար զանազան ժամանակ կատարուած դիւանագիտական գործի բուն արժէքը, մենք պէտք է իմանանք թէ ինչ կերպով են ուրիշ ազգութիւնները ազատուել թիրքական լուծից: Պատմութիւնը մեզ պարզ ցոյց կը տայ որ երկար ժամանակի ընթացքում մշակուեց ազատագրութեան մի իրական միջոց, որ ամեն անգամ, երբ գործադրութեան էր հրաւիրուում, տալիս էր միանգամայն գոհացուցիչ հետևանքներ:

Ազատագրութեան այդ ապահով, փորձուած միջոցը ռուսաց պետական կանցլեր իշխան Գորչակովը գեղեցիկ կերպով ձևակերպում էր «anatomie ou autonomie» (կամ անդամահատութիւն կամ ատոնոմիա) բառերով: Այս ձևակերպումն էլ կազմում էր ռուսաց քաղաքականութեան նշանաբանը Թիրքիայի վերաբերմամբ մինչև 1880-ական թուականների սկիզբը:

Անդամահատութիւնը, ինչպէս ազատագրական միջոց, գործադրուեց միայն մի անգամ, 1829-1830 թուականներին, երբ Թիրքիայի մարմնից բոլորովին կտրուեց ու անջատուեց Յունաստանը, ստանալով քաղաքական անկախութիւն: Աւելի շատ են այն դէպքերը, երբ ազգերը ազատութիւն ստանում էին ատոնոմիայի միջոցով, և Թիրքիայի նորագոյն պատմութիւնն արձանագրել է իր էջերում մի շարք ատոնոմիաներ, իբրև հետաքրքրական յուշարձաններ ազգերի վերածնութեան: Այս յուշարձանները վերին աստիճանի կարևոր նիւթեր են մանաւանդ հայերի համար:

Ուստի և ստիպողական պահանջ է առաջանում՝ դնել այստեղ այդ հարուստ և հրահանգիչ նիւթը:

Նախ քան առանձին առանձին իւրաքանչիւր ատոնոմիայի դիմելը՝ հարկաւոր է այստեղ արձանագրել մի երկու ընդհանուր դիտողութիւններ: Առաջինն այն է, որ բոլոր թիրքական ատոնոմիաները երկու տեսակի են 1) Այս կամ այն երկրից կազմուում է վասալական իշխանութիւն, որի գլուխը (իշխանը) ունի դինաստիա հիմնելու իրաւունքը, այսինքն իր իշխանութիւնը իր ժառանգներին թողնելու իրաւունքը: Երկիրը միանգամայն ինքնավար է, ունի իր սեփական բանակը, մինիստրութիւններ, ժողովրդական ներկայացուցչութիւն, իսկ Թիրքիային տալիս է որոշուած հարկ, որ նշան է թիրք պետութեան վեհապետական իրաւունքների: 2) Տեղական աւելի

սահմանափակ ինքնավարութիւն, որ իրագործուում է ընդհանուր մի նահանգապետի կարգումով: Այս գլխաւոր կառավարիչը ընտրուում և հաստատուում է Սուլթանի կողմից որոշ ժամանակով: Նրա կառավարութեան տակ գտնուում են նահանգի գործերի ընդհանուր կարգադրիչներ, որոնք համապատասխանում են մինիստրներին. կայ և տեղային ընդհանուր ժողով, որ պարլամենտի պաշտօն է կատարում: Կայ տեղային ոստիկանութիւն, իսկ զինուորական ոյժը ներկայացուում է պահնորդ զինուորութեան (միլիցիա) ձևով:

1. ԱԻՏՈՆՈՍ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՆԵՐ

1. **Եգիպտոս** (միակ օրինակ մահմետական ատոնոմիայի) 6817000 բնակիչ: Թիւրքերը, սուլթան Սէլիմ I ղեկավարութեամբ, վերջացրին Եգիպտոսի նուաճումը 1517-ին և դարձրին այդ երկիրը մի սովորական մի փաշայութիւն (փաշալըգ): Բայց փաշաների անուանական իշխանութեան տակ պահպանուեց երկրի նախկին կառավարութեան ձևը և թիւրքերից առաջ Եգիպտոսում տիրած մամլիքները շարունակեցին իրանց իշխանութիւնը¹¹⁷: 1801 թուին Եգիպտոսի փաշայ նշանակուեց Մէհմէդ-Ալի անունով մի թիւրք, որ օժտուած էր կազմակերպչական խոշոր տաղանդով: Նա կազմակերպեց բանակ եւրոպական ձևով, պատերազմի բռնուեց թիւրքերի հետ, որոնց և յաղթեց մի քանի անգամ: Նա հաստատել էր կատարեալ անկախութիւն, բայց եւրոպական պետութիւնները (առաւելապէս շահագրգռուած Անգլիան և Ֆրանսիան) միջամտեցին և Անգլիան 1841-ին ստիպեց Մէհմէդ-Ալիին ընդունել Սուլթանի գերիշխանութիւնը: Եգիպտոսը դարձաւ մի տե-սակ փոխարքայութիւն, որ միայն հարկ էր տալիս Թիւրքիային: Մէհմէդ-Ալիի տոհմի ժառանգական սեփականութիւն դարձաւ իշխանութիւնը: 1870-ական թուականների վերջերին Եգիպտոսն այնքան զարգացրել էր իր ազգային գիտակցութիւնը, որ հասաւ կառավարութեան սահմանադրական կարգին: 1882-ին բացուեց եգիպտական պարլամենտը, որ սկսեց քննել մինիստրների խորհրդի ծրագրած սահմանադրութիւնը: Այս բոլորն արդիւնք էր ազգային գաղափարով ոգևորուած մի յեղափոխական շարժման¹¹⁸: Սակայն

¹¹⁷ Houtsma - «Encyclopédie de L'Islam», Leyde 1913 t. II, p. 11.

¹¹⁸ A. Bioovès - «Français et Anglais en Egypte 1881-1882», Paris 1901, p/ 45.

այդ շարժումն էլ պատճառ դարձաւ Անգլիայի միջամտութեան, որի հետևանքը եղաւ այն, որ երկիրը ենթարկուեց անգլիական գրաման և, ուրեմն, մտաւ Անգլիայի հովանաւորութեան տակ, միաժամանակ շարունակելով մնալ Թիւրքիայի մի մասը կազմող երկիր¹¹⁹: 1914-ի վերջերում Անգլիան ջնջեց օսմանեան գերիշխանութիւնը Նեղոսի հովտում և ստեղծեց մի կիսաանկախ պետութիւն, որ գտնուում է իր հովանաւորութեան տակ:

2. **Մոլդաւիա** (1,600,000 բնակիչ) և **Վալաքիա** (3,200,000 բնակիչ): Այս երկու իշխանութիւնները թիւրքերի ձեռքով նուաճուեցին XV դարի վերջերում և XVI-ի սկզբում: Բայց սուլթանները թողեցին նախկին աստական-ճորտատիրական կարգը: Ժողովուրդը կառավարում էր իշխաններով (հոսպոդար), որոնց սուլթանները նշանակում էին Կ. Պօլսի յոյների (ֆանարետոսների) միջից: 1773 թուի ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ ռուսները գրաւեցին երկու իշխանութիւններն էլ, բայց վերադարձրին նրանց նորից Թիւրքիային 1774 թ. յուլիսի 10-ին Քուչուկ-Կայնարջա գիւղում կնքուած դաշնադրութեամբ, որի 10-րդ յօդուածով մի շարք արտօնութիւններ ձեռք բերին իշխանութիւնների համար: Ի միջի այլոց, ընդունուում էր որ Կ. Պօլսի ռուսաց դեսպանը վարէ Մոլդաւիայի և Վալաքիայի գործերը: Բացի նրանից՝ իշխանութիւնների կողմից երկու հաւատարմատարներ էին նշանակուում Կ. Պօլսում, իբրև նրանց ներկայացուցիչներ¹²⁰: Այսպիսով մի կողմից երկու իշխանութիւնները աւելի ընդարձակուում էին իրանց ներքին ինքնավարութիւնը, իսկ միւս կողմից՝ նրանց վրայ տարածուում էր Ռուսաստանի հովանաւորութիւնը: Այս սկզբունքները հաստատուում էր և Եաշի դաշնադրութիւնը 1791 թուին: XIX դարի սկզբում Ռուսաստանը մեծամեծ ջանքեր է անում երկու իշխանութիւնները իր կալուածքներին միացնելու համար և այդ պատճառով երկարատև պատերազմ է մղում Թիւրքիայի դէմ (1807-1811): Սակայն այս ծրագիրը նրան ամբողջապէս չէ յաջողուում և Բուրքէշի դաշնադրութեամբ (1812) նա կարողանում է միացնել միայն Բեսարաբիան:

1826 թուականին Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ ծագած

¹¹⁹ Bouillet - «Dictionnaire Universel d'Histoire et de Geographie», Paris 1908, p. 589.

¹²⁰ Т. Юзефовичъ-«Договоры Россіи съ Востокомъ» СПб. 1869 с. 32-34.

մի շարք թիրիմացութիւնները պարզելու համար տեղի ունեցան երկու պետութիւնների ներկայայուցիչների խորհրդակցութիւններ Ալքերման փոքրիկ քաղաքում, որոնք և յանգեցին մի յատուկ դաշնադրութեան: Այդ դաշնադրութեան կցուած էր մի ամբողջ առանձին յաւելուած, որ կանոնադրում էր երկու իշխանութիւնների համար հոսպոդարներ ընտրելու կարգը: Մինչև այդ՝ հոսպոդարները, ինչպէս տեսանք, նշանակում էին Սուլթանի իշխանութեամբ: Այժմ սահմանում էր ընտրողական կարգ: Երկու իշխանութիւնների մէջ ապրող ազնուականները (բօտարները) ընտրում էին իրանց միջից հոսպոդար եօթը տարի ժամանակով, որ և հաստատում էր Սուլթանի կողմից, բայց պաշտօնանկ անել հոսպոդարին, նոյն իսկ և այն դէպքում, երբ այդ խնդրում էր նա ինքը, իրաւունք չունէր Սուլթանը առանց նախապէս ստանալու Ռուսաստանի համաձայնութիւնը:

Ադրիանուպօլսի դաշնադրութիւնն էլ (1829 թ. սեպտեմբերի 2) ունէր մի յատուկ յաւելուած, որի մէջ արդէն մանրամասն և որոշ կերպով որոշում էին ներքին կատարեալ ինքնավարութեան սկզբունքները: Երկու իշխանութիւնները Թիւրքիայից բաժանում էին Դունայ գետով, որի ձախ ափին Թիւրքիան չը պիտի ունենար բերդեր և այլ ձեռնարկութիւններ: Նոյն իսկ մահմետականները չունէին իրաւունք ապրելու գետի ձախ ափում, բացառութեամբ մի միայն վաճառականների, որոնք առանձին ֆիրմաներով կարող էին ժամանակաւորապէս ապրել այդ կողմերում իրանց առևտրական գործերի համար: Թիւրքիան հանդիսաւոր կերպով խոստանում էր ոչ մի կերպ չը խառնուել երկու իշխանութիւնների ներքին գործերին: Սահմանում էր միայն տարեկան հարկ, իշխանութիւնները իրաւունք էին ստանում, ներքին խաղաղութիւնը ապահովելու համար, պահել պահնորդ զօրք, որի քանակութիւնը իրանք պիտի որոշէին:

Ադրիանուպօլսի դաշնադրութիւնից յետոյ Ռուսաստանը ձեռք բերեց շատ մեծ ազդեցութիւն Թիւրքիայի վրայ և Հունքար-Իսկէլէսիի դաշնադրութիւնը, որ 1833-ին կնքուեց այդ երկու պետութիւնների մէջ, Թիւրքիային տալիս էր, Ռուսաստանի վերաբերմամբ, համարեա ստորադասեալ վասսալի նշանակութիւն: Այդ ժամանակ էլ ռուսական ազդեցութիւնը սաստկացաւ Մոլդաւիայի և Վալաքիայի մէջ, որոնք շարունակում էին գրաւուած մնալ ռուսական զօրքերով: Մշակուեց երկու իշխանութիւնների համար էլ ներքին

կազմակերպչական կանոնադրություն, որ, չը նայած Ռուսաստանի տհաճութեան, ստացաւ եւրոպական գոյն, մտցնելով ժողովրդական ներկայացչութեան սկզբունքները կառավարութեան կարգերի մէջ: Այս կանոնադրութիւնը հաստատուեց Սուլթանի կողմից համաձայն այս բանակցութիւնների, որ վաղօրօք ռուսաց կառավարութիւնը վարել էր Կ. Պօլսում:

Ռուսական հովանաւորութիւնը Դանուբեան երկու իշխանութիւնների մէջ շատ ցայտուն կերպով բնորոշում են այն դէպքերը, որոնք տեղի ունեցան 1848-ի ֆրանսիական յեղափոխութեան ազդեցութեան տակ: Չը պէտք է մոռանալ որ Ռուսաստանի տէրն այդ ժանանակ Նիկոլայ I էր, անհաշտ թշնամի ամեն մի յեղափոխական գործողութեան: 1848 թուին Մոլդովիայում, բայց առաւելապէս Վալաքիայում տեղի ունեցան յեղափոխական շարժումներ, որոնց ղեկավարներն էին գլխաւորապէս Արևմտեան Եւրոպայում կրթութիւն ստացած մարդիկ: Գահընկէց եղաւ հոսպոդար Բիբեսկօն, կազմուեց ժամանակաւոր կառավարութիւն, որ դիմումներ արաւ եւրոպական պետութիւններին և նոյն իսկ Թիւրքիային, անտես անելով Ռուսաստանը: Նիկոլայ կայսրի պահանջով՝ թիւրքական մի խոշոր բանակ մօտեցաւ իշխանութիւնների սահմանին. բայց երբ յայտնի դարձաւ որ այդ բանակի հրամանատար Սուլէյման փաշան ատելի հակուած է դէպի յեղափոխականների կողմը, Նիկոլայ կայսրը իր զօրքերը մտցրեց իշխանութիւնների մէջ յեղափոխութիւնը ճնշելու և Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելու համար: Շարժումը խեղդուած էր: Բալթա-Լիման տեղում նոր դաշնադրութիւն կնքուեց Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ, որ գրկում էր իշխանութիւնների բնակիչներին հոսպոդարներ ընտրելու իրաւունքից և վերականգնում էր Սուլթանի հին իրաւունքը, որով նա նշանակում էր հոսպոդարներ:

Ղրիմի պատերազմը նշանաւոր փոփոխութիւններ մտցրեց և Մոլդավիայի ու Վալաքիայի վիճակի մէջ: Պարիզի դաշնադրութիւնը վերացնում էր Ռուսաստանի հովանաւորութիւնը. երկու իշխանութիւններն այնուհետև պիտի գտնուէին Եւրոպայի հովանաւորութեան տակ և նորից ստանում էին իրանց համար հոսպոդարներ ընտրելու իրաւունքը: Եւրոպական հովանաւորութեամբ ծագում առան ազգայնական ուժեղ շարժումներ, որոնք և ամբողջացրին այդ երկիրների պետական կազմակերպութիւնները:

Ամենից առաջ երկու իշխանությունները նշանաբան դարձրին միությունը մի իշխանութեան տակ: Այս հայրենասիրական շարժման չընդդիմացաւ և Ռուսաստանը, ուր արդէն վերջացած էր Նիկոլայ I-ի թագաւորութիւնը: 1859 թուին պէտք էր ընտրել հոսպոդարներ երկու իշխանութիւնների համար: Ազգային միութեան գաղափարն այնքան ուժեղացել էր, որ, չընայած Թիւրքիայի դիմադրութիւններին, Մոլդավիայում էլ Վալաքիայում էլ հոսպոդար ընտրուեց միևնոյն անձը-գնդապետ Կուզան: Մի քանի անպտուղ ձգձգումներից յետոյ Թիւրքիան ստիպուած եղաւ ընդունել այդ միացումը: Այնուհետև երկու երկիրները մի միացել իշխանութիւն էին կազմում՝ Մոլդավո Վալաքիա անունով: 1862 թուին բացուեց առաջին ընդհանուր օրէնսդրական ժողովը: Չորս տարի հազիւ անցած այդ ժամանակից՝ հասարակական շարժումները առաջացրին մի նոր երևոյթ. զգացում էր թէ տեղացիներից ընտրուող իշխանները անկարող են երկիրը առաջ տանել, ուստի անհրաժեշտ էր իշխանութիւնը դարձնել դինաստիա և հրաւիրել մի օտար իշխան: 1866-ին ընտրուեց Պրուսիայի թագաւորական տան իշխաններից մէկը, Կարլ Հոհենցոլլերն, իսկ երկու իշխանութիւններն ստացան Ռումինա ընդհանուր անունը: Դա կիսանկախ մի պետութիւն էր, որ ճանաչում էր իրան Թիւրքիայի վեհապետական իրաւունքներին ենթարկուած և վճարում էր նրան հարկ: Նոր պետութեան քաղաքական զարգացումն այնքան արագ առաջ գնաց, որ 1877-ին, երբ ծագեց ռուս-թիւրքական պատերազմը, Ռուսաստանի հետ դաշնակից դարձաւ և պատերազմին մասնակցեց նաև Ռումանիան: Պատերազմի հետևանքներից մէկն էլ այն էր, որ Ռումանիան դարձաւ անկախ թագաւորութիւն:

3. **Սերբիա** (2,450,000 բնակիչ): Սլաւոնական ազգերից առաջինը սերբերն էին, որ XIX դարի սկզբում իրագործեցին վաղուց ի վեր իրանց սնուցած ու փայփայած ազգային իղէալը-ապստամբութիւն թիրքական բռնակալութեան դէմ և ազատութիւն: 1804 թուականին սկսուած սերբիական ապստամբութիւնը առաջ մղուեց յաղթականօրէն՝ Կարա-Գիորգիի ղեկավարութեամբ: Սկզբում Սերբիան յոյս ունէր Աւստրիայի վրայ, բայց տեսնելով նրա թշնամական վերաբերմունքը, դիմեց Ռուսաստանին: Իսկ Ռուսաստանը այդ միջոցին քաղաքական հանգամանքների բերմունքով այնպիսի դրութեան մէջ էր Թիւրքիայի վերաբերմամբ, որ 1806-

ից պատերազմական գործողություններ սկսեց նրա դէմ: Սերբերը միացան ռուսների հետ պատերազմական գործողությունների մէջ: Ռուսաց զօրքերի հրամանատարը կամաւորների գնդեր կազմեց սերբերից և բուլգարներից, ապստամբութեան ղեկավար Կարա-Գիորգին ճանաչուեց սերբ ժողովրդի առաջնորդ և 1807-ից ռուսները պաշտօնապէս դաշնադրութիւն կնքեցին սերբերի հետ՝ պատերազմը միասին մղելու համար: Այս պատերազմը ընդհատումներով ձգձգուեց մինչև 1812 թուականը և վերջացաւ Բուքրէշի դաշնադրութեամբ, որ Աղէքսանդր I կայսրը շտապեց կնքել՝ Նապօլէօնի ծրագրած արշաւանքին դիմադրելու միջոց ունենալու համար, և այդ պատճառով էլ այդ դաշնագրի պայմաններից շատերը չէին կարող ռուսական շահերի տեսակէտից գոհացուցիչ համարուել: Սերբիայի վերաբերմամբ ռուսաց կառավարութիւնն այն միայն կարողացաւ անել, որ մտցրեց Բուքրէշի դաշնադրութեան մէջ խոստում Թիւրքիայի կողմից տալու սերբերին ներքին ինքնավարութիւն, այն է՝ բաւականանալ որոշուած հարկ ստանալով և չը խառնուել սերբերի ներքին գործերի մէջ: Կարա-Գիորգին ճանաչուեց էր սերբ ժողովրդի բարձրագոյն պետ:

Խոստումը չիրագործուեց իսկոյն, մանաւանդ որ դաշնադրութիւնը այդ խոստումը համարել էր «գթասրտութեան» գործ: Սակայն դաշնադրութիւնն ունէր այն կարևոր նշանակութիւնը որ այդ միջազգային գործով ճանաչուեց էին Սերբիայի իրաւունքները և բացի դրանից՝ Սերբիան դրուեց էր Ռուսաստանի հովանաւորութեան տակ, քանի որ վերջինս իրաւունք էր ստանում հսկելու թէ ինչպէս են կատարում Թիւրքիայի խոստումները, որոնք ձևակերպուած էին Ռուսաստանի թելադրած պայմանագրի մէջ:

Բուքրէշի դաշնադրութիւնից յետոյ Ռուսաստանը, սակայն, չը կարողացաւ իրական քայլեր անել յօգուտ Սերբիայի. Նապօլէօնի դէմ մղած պատերազմը կլանեց նրա բոլոր ոյժերը և սերբերը մենակ էին պահանջներ ներկայացնում թիւրք կառավարութեան: Սա, թելադրուած ֆրանսիական կառավարութիւնից, ոչ միայն մերժեց որ և է խոստում կատարելը, այլ և պատերազմական գործողություններ սկսեց՝ Սերբիան նորից նուաճելու համար: Նորից ապստամբութիւնը պայթեց այդ երկրում և ժողովրդի հերոսական կռիւր ազգային դրօշակի տակ հաւաքեց սերբերին զանազան կողմերից: Բայց յաղթեցին թիւրքերը: Երկրի մէջ նորից

հաստատուեց մահմետական իշխանութիւնը, Կարա-Գիորգին իր կողմնակիցների հետ փախաւ Ռուսաստան: Բայց այս դեռ ժողովրդական լքում չէր: Նրա տեղ ապստամբութեան գլուխ անցաւ Միլօշ Օրբենովիչը, որ և ազգային դատի ներկայացուցիչը դարձաւ: Այդ միջոցին, այսինքն 1815-ին, գումարուած էր Վիեննայի Վեհաժողովը, որ ինչպէս յայտնի է, Եւրոպայի համար քաղաքական կարգեր էր սահմանում Նապօլէօնի անկումից յետոյ: Սերբերը պատգամաւորութիւն ուղարկեցին Վիեննա՝ աղաչելու համար վեհաժողովի անդամներին որ ուշադրութիւն դարձնեն դժբախտ Սերբիայի դրութեան վրայ: Բայց ոչ ոք, նոյն իսկ Ռուսաստանը, ուշադրութիւն չը դարձրեց և պատգամաւորութիւնը ձեռնունայն վերադարձաւ: Ռուսաստանի վարմունքն այն պատճառն ունէր, որ նա, Սրբազան Դաշնադրութեան համաձայն, պիտի եւրոպական քաղաքականութեան հետ համերաշխ գնար, իսկ այդ քաղաքականութիւնը հիմնուած էր գոյութիւն ունեցող «օրինական կարգը», այսինքն գոյութիւն ունեցող պետութիւնները պահպանելու սիստեմի վրայ:

Այս հանգամանքն էլ չը յուսահատեցրեց սերբերին: Նրանք շարունակեցին փորձեր անել ուղղակի թիրք կառավարութեան հետ բանակցութիւններ շարունակելու: Վերջինս, չը կամենալով առիթներ տալ որ Ռուսաստանը միջամտութեան պատրուակներ ստեղծէ, մի ժամանակ զիջողութիւնների քաղաքականութեան դիմեց և համաձայնութիւն յայտնեց Միլօշ Օրբենովիչին ժառանգական իշխան ճանաչել, եթէ նա կընդունէ իր առաջարկած պայմանները: Այդ պայմանները ստորացուցիչ և վնասակար էին սերբ ժողովրդի համար, ուստի Կ. Պօլսի ռուսաց դեսպանը համոզեց Օրբենովիչին չընդունել թիրքական առաջարկութիւնը: 1820 թուին սերբիական մի նոր պատգամաւորութիւն գնաց Կ. Պօլսի՝ բանակցութիւններ վարելու թիրք կառավարութեան հետ: Ռուսաց կառավարութիւնն այդ միջոցին միայն այն օգնութիւնն էր հասցնում սերբերին, որ թոյլ էր տալիս այդ բանակցութիւնները վարել Կ. Պօլսի ռուսական դեսպանի միջոցով:

Սերբ պատգամաւորութեան առաջարկած պայմաններն էին. 1) Բոլոր այն քաղաքներն ու գիւղերը, որոնք Բուքրէշի դաշնադրութեան միջոցին գտնուում էին ապստամբական դրութեան մէջ, պիտի մտնեն սերբիական իշխանութեան կազմի մէջ, թէև չեն պատկանում

Բելգրադի փաշալըգութեան. 2) Ամեն տեսակ հարկեր, որ վճարում է Սերբիան Բ. Դրան, պիտի միացուին մի ընդհանուր գումարի մէջ, որ պիտի որոշուած լինի մի անգամ ընդ միշտ. 3) Սուլթանը Միլօշին կը հաստատէ Սերբիայի իշխանի կոչման մէջ, տալով իրաւունք յանձնել այդ իշխանութիւնը իր ժառանգներին և նշանակել հանրային վարչութեան համար անհրաժեշտ պաշտօնեաներ. 4) Սերբիայում օրթօդոքս դաւանութիւնը պիտի ստանայ կատարեալ ազատութիւն և իրաւունք կառուցանելու եկեղեցիներ ու վանքեր, բաց անելու դպրոցներ և հիմնելու տպարաններ. 5) Թիւրքերին արգելուած կը լինի բնակութիւն հաստատել Սերբիայում այն բերդերից դուրս, ուր թիւրքական զօրքեր կը մնան:

Բայց այս առաջարկութիւնները չընդունուեցին, որովհետև հէնց այդ ժամանակ պայթեց յունական ապստամբութիւնը և կատաղած սուլթան Մահմուդը հրամայեց բանտարկել սերբ պատգամաւորներին: Բանտից նրանք ազատուեցին միայն 1824-ին, այն էլ ռուսաց կառավարութեան կողմից առաջադրուած ուլտիմատումի ուժով: Սերբիական հարցը այնուհետև մէկ էլ արծարծուեց Ալքքերմանի դաշնադրութեան մէջ, ուր Ռուսաստանը պարտաւորեցրեց թիւրք կառավարութեան կատարել Բուքրէշի դաշնադրութեան 8-րդ յօդուածը Սերբիայի վերաբերմամբ, անելացնելով որ նկատի պէտք է առնուեն սերբիական պատգամաւորութեան կողմից առաջարկուած վերոյիշեալ պայմանները և թիւրք կառավարութիւնը պարտաւոր է հաշիւ տալ ռուսական կառավարութեան թէ ինչ է արել այս ուղղութեամբ:

Բայց այս պայմաններն էլ չը կատարեց Թիւրքիան, համարելով նրանց իւր մի պաշտօնական հաղորդագրութեան մէջ «հրէշաւոր և անիրագործելի»: Բայց մի երկու տարուց յետոյ Ռուսաստանը նորից այդ պարտաւորութիւնը դրեց Թիւրքիայի վրայ Ադրիանուպօլսի դաշնադրութեան վեցերորդ յօդուածով, որի զօրութեամբ Թիւրքիան այս անգամ արդէն «ամենահանդիսաւոր» խոստում էր տալիս իրագործելու Ալքքերմանի դաշնադրութեան կցած այն առանձին յաւելուածը, որ վերաբերում էր Սերբիային:

Շտուեալ տարին, այն է 1830-ին, հրատարակուեց սուլթանական մի ֆիրման, որ խոստանում էր Սերբիային շուտով իրագործել այն բոլորը, ինչ յանձն էր առնուած դաշնագրերով նրա օգտին: Բայց այս պաշտօնական յայտարարութիւնը դարձաւ անբովանդակ խոստում:

Սերբիական պատգամաւորութիւնը Կ. Պոլսում բանակցութիւններ էր վարում, բայց թիւրք կառավարութիւնը իրաքանչիւր քայլում խոչընդոտներ էր յարուցանում և գործը այսպիսով ձգձգուում էր: Այդ իսկ միջոցին Բելգրադի վեզիր Հիւսէին փաշան ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է գործ տեսնել թիւրքերի հետ: Նա անկեղծաբար յայտնեց թէ վճռական դեր կարող է կատարել միւսիայն սերբիական ոսկին: Ոչ մի դիւանագիտական քայլ, ոչ մի դաշնադրութիւն,-ասաց փաշան, չէ կարող այն ազդեցութիւնն անել, ինչպէս թիւրք իշխանաւորներին մատուցած կաշառքը: Միւսը իսկոյն դիմեց այդ միջոցին և նրա ծախսած գումարները միանգամայն հրաշագործ հանդիսացան: Նոյն 1830 թ. սեպտեմբերին ստորագրուեց Սուլթանի ֆիրմանը, որի զօրութեամբ 1) Սերբերն ստանում էին կրօնական կատարեալ ազատութիւն. 2) Միւսը Օրբենովիչը հաստատուում էր սերբ ազգի ժառանգական իշխանի աստիճանի մէջ. 3) Երկրի ներքին գործերի կառավարութիւնն անցնում էր իշխանին, որ գործում էր աւագների ժողովի համաձայնութեամբ. 4) Սերբիայի կախումը Թիւրքիայից արտայայտուում էր մի միայն նրանով, որ Սերբիան հարկ էր տալիս, իսկ թիւրք զօրքերը մնում էին մի քանի բերդերում. 5) Թիւրք պաշտօնեաներին արգելուում էր խառնուել իշխանութեան ներքին գործերի մէջ. 6) Իշխանին իրաւունք էր տրուում զօրք պահելու՝ երկրի հանգստութիւնը ապահովելու համար. 7) Սերբերն իրաւունք ունէին հիմնել հիւանդանոցներ, տպարաններ, դպրոցներ. 8) Դատելու իրաւունքը տրուում էր իշխանին. 9) Այն մահմետականներին, որոնք չէին պատկանում բերդապահ զօրքերին, արգելուում էր բնակուել Սերբիայի մէջ. 10) Սերբերին թոյլատրուում էր որ նրանք իրանք ընտրեն իրանց միջից մետրապօլիտներ և եպիսկոպոսներ, այն պայմանով, որ այդ ընտրութիւնները հաստատուեն Կ. Պոլսի պատրիարքի կողմից. 11) Սերբերին թոյլատրուում էր ունենալ Կ. Պոլսում իրանց գործակատարներին, յարաբերութիւններ ունենալու համար Բ. Դրան հետ այն բոլոր գործերում, որոնք վերաբերուում էին նրանց կիսանկախ պետութեան¹²¹:

Սերբիան այսպիսով ազատագրուած էր, ունենալով իր կախումը Թիւրքիայից և մնալով Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Միւսը հասնելով այսքան նշանաւոր յաջողութեան, իսկոյն

¹²¹ Жигаревъ- “Русская Политика въ Восточномъ Вопрось”, М. 1895, т. I с. 410.

ծեռք զարկեց երկրի համար գրաւոր օրէնսդրութիւն ստեղծելու գործին: Բայց այստեղ Սերբիան կանգնած էր իր հովանաւորի դիմադրութեան առաջ: Ռուսաստանը յանկարծ սկսեց անձեռնտու համարել Սերբիայի մեծացումը և ուժեղացումը, որ պիտի դրդէր նրան դուրս գալ Ռուսաստանի հովանաւորութեան տակից: Այս առիթով ծագեցին և ներքին խռովութիւններ, բայց վերջիվերջոյ 1835-ին գումարուած սկուպշչինան ընդունեց իշխանութեան համար խմբագրուած կանոնադրութիւնը: Այսպիսով Սերբիան դարձաւ սահմանադրական իշխանութիւն:

1860-ական թուականների սկզբում հարց ծագեց թիրքաց բերդապահ զօրքերի մասին. սերբիական իշխան Միխայէլը եռանդուն դիւանագիտական քայլեր արաւ, աշխատելով համաձայնութիւն կայացնել որ բերդապահ զօրքերը դուրս հանուեն Սերբիայից: Այս առիթով խոշոր անհամաձայնութիւն ծագեց Սերբիայի և Թիւրքիայի մէջ և թիրքերը 1862-ին ոմբակոծեցին Բելգրադը: Բայց և այդպէս, հարցը, եւրոպական պետութիւնների օգնութեամբ, լուծուեց յօգուտ Սերբիայի հետևեալ եղանակով. սերբիական կառավարութիւնը գրաւոր դիմում արաւ Բ. Դրան, խնդրելով իրան զիջել Սերբայի սահմաններում գտնուող բերդերը: Բ. Դուռը պատասխանեց թէ Սուլթանը համաձայն է տալ բերդերը Սերբիային, սակայն այն պայմանով որ սերբիական դրօշակի հետ ծածանուի և թիրքականը:

Այս արդէն մի մեծ քայլ էր դեպի անկախութիւն: Իսկ անկախութիւնը տեղի ունեցաւ 1878 թ. Բերլինի դաշնադրութեամբ, որի 34 յօդուածը վերաբերում է յատկապէս այդ առարկային¹²²:

4. **Սամոս կղզի** (45000 բնակիչ): Այս կղզին միացած էր Յունաստանին նրա ապստամբութեան և Թիւրքիայի հետ ունեցած երկարատև պատերազմների ժամանակ: Յունաստանն ազատուեց անկախ պետութիւն դարձաւ, բայց Սամոսը չէր կարող նրա հետ միանալ այդ նոր կարգի մէջ, որովհետև մի կղզի է դա, որ մօտ է Միջերկրականի թիրքական ափին: Այս պատճառով կղզին 1832 թուին ստացաւ ինքնավարութիւն և դրուեց, անկախ Յունաստանի նման, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հովանաւորութեան տակ:

Սամոսի ինքնավարութիւնը հետևեալ ձևն էր ստանում: Սամոսը Թիւրքիայի մի անբաժան մասն է և նրա բնակիչները Սուլթանի

¹²² Жигаревъ- “Русская Политика въ Восточномъ Вопросъ”, М. 1896, т. I.

հաւատարիմ հպատակներն են: Կղզու բարձր կառավարութիւնը բաղկացած է մի խորհրդից, որի անդամները ընտրուում են ազգաբնակչութեան երեսփոխանաց: Այս խորհրդի ձեռքին է կղզու ընդհանուր կառավարութիւնը. նա է որ կարգաւորում է վարչութեան բոլոր ճիւղերը: Խորհրդի նախագահը ընտրուում և հաստատում է Սուլթանը, տալով նրան Սամոսի իշխանի տիտղոսը: Իշխանը պիտի լինի կղզու բնակիչների կրօնին (յունադասն) պատկանող մէկը: Նրա հետ կղզի է գնում և մի էֆէնդի, ընտրուած թիւրք պաշտօնեաների միջից: Իշխանը veto-ի իրաւունք ունի: Կղզում գոյութիւն ունի միայն ոստիկանութիւն: Զօրքեր չը կան: Ազգաբնակչութիւնը թիւրք կառավարութեան տալիս է տարեկան «խարաջ» (հարկ) 400000 դրու: Կղզուց պատգամաւորներ պիտի գնան Կ. Պօլսի՝ արկանելու առ ոտս գահոյից Սուլթանի բնակիչների հաւատարիմ հպատակութեան զգացմունքները¹²³:

Այսպիսով՝ Սամոսը մի իշխանութիւն է, բայց ոչ ժառանգական:

5. Բուլգարիա (3154000 բնակիչ): 1877-1878 թ. ռուս թիւրքական պատերազմի գլխաւոր նպատակը Բուլգարիայի ազատագրութիւնն էր: Սան-Ստեֆանօի դաշնադրութիւնը ստեղծում էր մի մեծ Բուլգարիա՝ Դանուբի ափից մինչև Էգէյեան ծովը: Բայց դա դեռ մի անկախ պետութիւն չէր, այլ մի վասսալական իշխանութիւն, հարկատու Թիւրքիային, ունէր քրիստոնեայ կառավարութիւն և տեղական պահնորդ զօրք (միլիցիա): Բերլինի դաշնադրութիւնը, պահպանելով կառավարչական այդ ձևը, փոքրացրեց բուլգարական իշխանութեան սահմանները: Վասսալական կազմակերպութիւն ստանում էր հիւսիսային մասը, Դանուբից մինչև Բալկանեան լեռները: Իսկ հարաւային մասը բաժանուում էր, ստանալով Արևելեան Ռումելի անունը և մնում էր Սուլթանի իշխանութեան տակ իբրև վարչական ինքնավարութիւն (autonomie administrative) վայելող մի նահանգ:

Կիսանկախ Բուլգարիայի ազգաբնակչութիւնը ստանում էր ազատ իրաւունք իր համար իշխան ընտրելու և պիտի իր ներկայացուցիչներն ուղարկէր Տիրնով քաղաքը՝ հաստատելու համար այն սահմանադրութիւնը, որ կը մշակուի մինչև այդ: Մինչև իշխան ընտրելը և այնուհետև նոր կարգեր հաստատելը Բուլգարիայի

¹²³ A. Schopof-«Les Réphormes de la protection de Chrétiens en Turquie», Paris p. p. 579-580.

կառավարութիւնը յանձնում էր ռուսաց կայսերական կոմիսարին: Այդ բանի համար նշանակւում էր երկու տարի ժամանակ և այդքան ժամանակ էլ Բոլզարիայում պիտի մնար ռուսաց զօրքերից մի բանակ ոչ ակել 50000 հոգուց: Այսպիսով նոր ազատուած երկիրը իրապէս դրուած էր իր ազատողների պրօտեկտօրատի տակ: Ժողովրդի կողմից հաստատուեց բոլզարական սահմանադրութիւնը, ընտրուեց և իշխան, բայց ռուսները մնացին գլխաւոր դերակատարները վարչութեան մէջ: Դաշնադրութեան սահմանած միլիցիայի փոխարէն ռուս զենեարաւները կազմակերպեցին կանոնաւոր բանակ, իսկ միլիցիան, նոյն ռուսների ձեռքով, կազմուեց Արևելեան Ռումելում, որտեղից ռուսաց զօրքերը պիտի հեռանային ինն ամսուայ ընթացքում: Սակայն ռուսական այս խնամակալութիւնը ծանր էր գալիս բոլզարական ինտերմիզեցիայի մի մասին, որ տեսնում էր ռուսական ձգտումների մէջ վտանգ բոլզարական ազատութեան համար: Այս հողի վրայ ծագեցին երկարատև հակառակութիւններ ազատողների և ազատուածների մէջ, հակառակութիւններ, որոնք ծնեցրին Բոլզարիայում մի կատաղի ռուսատեսացութիւն (Ստամբուլով և ուրիշները), որ քիչ էր մնում պատճառ դառնայ մի ռուսբոլզարական պատերազմի: Այս հակառակութիւնները արգելք չը հանդիսացան որ Բոլզարիան շարունակ զարգանայ և ուժեղանայ¹²⁴: 1885-ին, յեղափոխութեան միջոցով, Արևելեան Ռումելիին միացաւ Բոլզարիային, հակառակ Ռուսաստանի բողոքներին: Տարիների ընթացքում բոլզարական բանակը դարձաւ պատկառելի ոյժ և դրա վրայ հիմնուելով, Բոլզարիան 1908 թուին, ուղիղ երեսուն տարի անցած իր ազատագրութիւնից, դէն ձգեց Թիւրքիայի գերիշխանութիւնը և դարձաւ անկախ մի թագաւորութիւն:

¹²⁴ Жигаревъ, Наз. Соч.

2. ԱՒՏՈՆՈՄ ՆԱՀԱՆՊՆԵՐ

6. **Լիբանան:** Այս լեռնաստանին նահանգական ինքնավարութիւն տալու պատճառ դարձաւ Նապօլէօն III կայսրը, որ թէև շարունակ դիմադրում էր Ռուսաստանին թիրջական գործերում, առաջ քաշելով այն սկզբունքը թէ պէտք է Թիրքիան բարեկարգել եւրոպական հիմքերի վրայ, պէտք է բարենորոգումներ մտցնել պետութեան ամբողջ ազգաբնակչութեան և ոչ թէ նրա այս կամ այն մասի համար, բայց երբ 1860-ին տեղի ունեցան Սիրիայի համբաւոր կոտորածները, ուրիշ մի ելք չը գտաւ կաթոլիկ քրիստոնեայ մարոնիտներին պաշտպանելու համար, բայց միայն ստեղծելով նրանց երկրի համար ինքնավարական կարգ: Այս դէպքում Նապօլէօնն, ուրեմն, ընդգրկում էր ռուսաց կառավարութեան սկզբունքները:

Յայտնի է որ Լիբանանում ապրում են մի քանի ազգութիւններ, որոնց մէջ գլխաւորներն են դրուզներն ու մարոնիտները: Սրանք համարեա մշտապէս պատերազմում էին իրար հետ: 1860-ին դրուզները մեծ կոտորածներ արին Դամասկոսում և այլ տեղերում: Ֆրանսիական մի զօրաբանակ ափ իջաւ Սիրիայում և թիրջաց կառավարութիւնը, այսպիսի դէպքերում իր սովորական երկդիմի խաղերից ոչինչ օգուտ չը ստանալով, ստիպուած եղաւ ընդունել Ֆրանսիայի պահանջները, որոնց միացան և միւս պետութիւնները: 1861 թուի յունիսի 9-ին պետութիւնների ներկայացուցիչներն ստորագրեցին Լիբանանի վերակազմութեան վերաբերեալ կանոնադրութիւնը, որ յետոյ վերամշակուեց 1864-ին: Այս կանոնադրութեամբ Լիբանանը կառավարում է մի ընդհանուր նահանգապետի ձեռքով, որ նշանակում է Սուլթանի կողմից և պիտի լինի քրիստոնեայ: Նա փոփոխելի է: Նրան է յանձնուում ամբողջ գործադիր իշխանութիւնը, հսկել կարգ ու կանոնի, հասարակական հանգստութեան վրայ, բաշխել հարկերը, նշանակել պաշտօնեաներ, հաւաքել վարչական մէջլիս և նախագահել այնտեղ: Վարչական մէջլիսը մի հատ է ամբողջ Լեռնաստանի համար և բաղկացած է 12 անդամներից: Դրանք ընտրուում են նշանակուած գաւառներից և պիտի անպատճառ պատկանէին կանոնադրութեան մէջ նշանակուած կրօններին. օրինակ, Ջէզին գաւառը պիտի տար մի մարօնիտ, մի դրուզ, մի մուսիլման, իսկ Մետտէն գաւառը-մի մարօնիտ, մի

օրթօդոքս յոյն, մի դրուզ և մի մետուալի:

Այդ կենտրոնական մէջլիսը տուրքեր է սահմանում, հսկում է եկամուտների վրայ և խորհրդակցական ծայն ունի նահանգապետի մօտ՝ սրա առաջադրած բոլոր հարցերի վերաբերեալ: Գաւառների գլխատւորներին նշանակում է նահանգապետը, իսկ գիւղապետները (շէյխերը) ընտրում են գիւղի ազգաբնակութեան կողմից: Ամենքը հաւասար են օրէնքի առջև: Կանոնադրութիւնը մանրամասն կերպով կարգաւորում է երկրի դատաստանական մասը: Դատաւորներին նշանակում է նահանգապետը: Դատարանները մի քանի տեսակ են, փոքր պահանջները քննում են գիւղական տանուտէրերը (շէյխերը), իսկ աւելի մեծ պահանջների համար հիմնում են դատաստանական երեք ինստանցիաներ: Քրէական դատավարութիւնն էլ յատուկ կազմակերպութիւն է ստանում:

Սովորական ժամանակ երկրում կարգ պահպանում է ոստիկանութիւնը, որի պաշտօնեաները հաւաքում են ազգաբնակութիւնից, հաշուելով 7 հոգի իւրաքանչիւր 1000 բնակչից: Ընդհանուր նահանգապետը արտակարգ դէպքերում կարող է դիմել Լիբանանից դուրս գտնուող պետական զօրքերի աջակցութեան: Երկիրը մտած զօրքերը պիտի հեռանան, հէնց որ ընդհանուր նահանգապետը կը հաղորդէ հրամանատարին, թէ այլևս կարիք չըկայ, որ նրանք մնան երկրում:

Լիբանանը հարկ է տալիս 3500 քսակ դրուշ և այս քանակութիւնը կարելի է աւելացնել: Բայց եթէ եկամուտները աւելի քիչ են, քան անհրաժեշտ ծախսերը, այն ժամանակ պակասորդ գումարը տալիս է պետական գանձարանը:

Հանրային աշխատանքների կամ ուրիշ արտակարգ ծախսերի վերաբերմամբ Բ. Դուռը պարտաւոր է վճարումներ անել այնչափով, որչափով որ նա նախօրէն տուել է իր համաձայնութիւնը այդպիսի ծախսեր կատարելու¹²⁵:

7. **Կրետէ** (300,000 բնակիչ): Այս հոչակաւոր հին կղզին, Թիւրքիայի տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ, շատ անգամ է փորձել ապստամբութեամբ ձեռք բերել իր կորցրած ազատութիւնը: Այդ ապստամբութիւններից մէկը սկսուեց 1866 թուին: Ապստամբութիւնը հերոսական էր և նպատակ ունէր կղզին միաց-

¹²⁵ Schopoff - «Les Reformes» p. p. 582-599.

նել Յունաստանին, որ և ամենաեռանդուն աջակցութիւն էր ցոյց տալիս ապստամբութեանը: Ռուսաստանի համակրութիւնն էլ կրետացիների կողմն էր, մինչդեռ Անգլիան և Ֆրանսիան պաշտպանում էին թիւրք պետութեան ամբողջութիւնը: Թիւրքիան այս անգամ էլ կարողացաւ ճնշել ապստամբութիւնը. բայց որովհետև Յունաստանը շարունակում էր պաշտպանել կրէտական ազատագրութիւնը և նրա յարաբերութիւնը այս պատճառով շատ սառը կերպարանք էին ընդունել Թիւրքիայի վերաբերութեամբ, ուստի երոպական դիւանագիտութիւնը դարձեալ միջամտեց և Պարիզում տեղի ունեցաւ դեսպանաժողովի մի շարք նիստեր՝ այդ սուր յարաբերութիւնները հարթելու համար: Արևմտեան պետութիւնները այդտեղ, իհարկէ, դարձեալ պաշտպանում էին Թիւրքիան, այնպէս որ վերջիվերջոյ Յունաստանը և մասնաւորապէս Կրետէն չը հասան իրենց նպատակին: Կղզին մնաց Թիւրքիայի տիրապետութեան տակ: Իսկ այդ տիրապետութեան դէմ եղած տրտունջներին վերջ տալու համար, թիւրք կառավարութիւնը 1868 թուին համաձայնուեց տալ կղզուն վարչական ինքնավարութիւն, որ, սակայն, գործադրութեան մէջ չը մտաւ, այնպէս որ Բերլինի Վեհաժողովը 1878-ին մտցնում էր դաշնադրութեան մէջ մի առանձին յօդուած (23-րդ), որով պարտաւորեցնում էր թիւրք կառավարութիւնը իրագործել Կրետէ կղզում 1868 թուին խմբագրուած կազմական կանոնադրութիւնը, մտցնելով նրա մէջ այն փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտ կը դատուէն նոր պահանջների համաձայն: Այդ փոփոխութիւններն էլ խմբագրուեցին 1878 թուին և այդպիսով լրացաւ Կրետէի կազմակերպական կանոնադրութիւնը, որ բաղկացած էր երեք մասերից՝ վարչական, դատաստանական և ընդհանուր ժողով:

Կղզին բաժանուում էր հինգ նահանգների որոնց գլխաւորները նշանակուում են Սուլթանի իրադէներով, իսկ ամբողջ կղզու կառավարութիւնը յանձնուում է մի ընդհանուր նահանգապետի, որ նոյնպէս նշանակուում է Սուլթանի հրամանով: Նահանգապետներն ընտրուում են թիւրքական կայսրութեան պաշտօնեաների միջից. կէսը մահմետականներից, իսկ կէսը քրիստոնեաներից: Գործադիր իշխանութիւնը պատկանում է ընդհանուր նահանգապետին, որի մօտ կայ վարչական մի խորհուրդ: Այսպիսի խորհուրդներ ունին և նահանգապետները նահանգներում, գաւառապետները գաւառներում, իսկ գիւղական համայնքները ունին ծերերի ժողովներ:

Ընդհանուր նահանգապետի խորհուրդը բաղկացած է երկու խորհրդականներից, որոնք նշանակվում են Սուլթանի կողմից և որոնցից մէկը քրիստոնեայ է, միւսը՝ մահմետական և երկուսն էլ ընտրվում են օսմանեան պաշտօնեաների միջից, ապա ընդհանուր հարկահանից, միտրապօլտից, արդարարդատութեան վերահսկիչից, երկու ընդհանուր քարտուղարներից ու վեց անդամներից՝ երեքը մահմետական, երեքը՝ քրիստոնեայ, որոնք ընտրվում են կղզու քրիստոնեայ և մահմետական ազգաբնակութիւնից: Ընդհանուր նահանգապետը չէ կարող վարչական զանազան ճիւղերի վերաբերեալ հրահանգներ հրատարակել, առանց վարչական խորհրդի համաձայնութեան: Նոյն այդ խորհուրդին է պատկանում վերահսկողութեան իրաւունքը:

Գանք նահանգապետներին: Եթէ նրանք քրիստոնեայ են՝ նրանց օգնականները պիտի լինեն մահմետական և հակառակը: Նահանգապետներն ունին նոյնպէս վարչական խորհուրդներ, որոնք բաղկացած են նահանգապետի օգնականից, հարկային տեսչից, դատաւորից, եպիսկոպոսից, երկու գլխաւոր քարտուղարներից և վեց ընտրուած անդամներից, դարձեալ երեքը քրիստոնեայ և երեք մահմետական: Միևնոյն տեսակ կազմակերպութիւն ունին և գաւառական խորհուրդները, այն տարբերութեամբ միմիայն, որ այդտեղ քրիստոնեայ հոգևորականութիւնը ներկայացուցիչ չունի:

Նահանգական խորհուրդների անդամներին ընտրում են գաւառները, իսկ գաւառական խորհրդի անդամներին ծերերի ժողովները:

Դատաստանական գործը կազմակերպուած է այն-պէս, ինչպէս պահանջում են ազգաբնակութեան կրօնական բաժանումները, այն է՝ մահմետականները իրար հետ դատ վարում են Շէրիի օրէնքներով, քրիստոնեաները՝ աշխարհական դատարաններում, որոնց համար մշակուած օրէնքներ արդէն գոյութիւն ունին պետութեան մէջ, իսկ երբ դատը քրիստոնեաների և մահմետականների մէջ է, կազմում են խառն դատարաններ: Առևտրական, քաղաքացիական և քրէական դատավարութիւնների համար էլ հիմնում են յատուկ դատարաններ, որոնք չորս տեսակի են, ինչպէս վարչական կազմն է: Գիւղերում տանուտէրն (շէյխ) է դատաւորը և նրան ենթակայ են փոքրիկ պահանջները. այնուհետև գալիս են գաւառական, նահանգական դատարանները

և մի հատ բարձր դատարան էլ ընդհանուր նահանգապետության կենտրոնում: Իւրաքանչիւր դատարան բաղկացած է մի նախագահից և չորս դատաւորից: Նախագահը նշանակւում է սուլթանական կառավարութեան կողմից իսկ անդամները ընտրւում են ազգաբնակութիւնից և փոխւում են ամեն տարի:

Ընդհանուր խորհուրդը ազգաբնակութեան կողմից է ընտրւում: Ամեն մի գազա ընտրում է չորս խորհրդական (պատգամաւոր): Եթէ գազայի ազգաբնակութիւնը բաղկացած է քրիստոնեաներից և մահմետականներից, այդ չորս խորհրդականների կէսը ընտրւում են քրիստոնեաներից, կէսը մահմետականներից: Իսկ այն գազաները, ուր ազգաբնակութիւնը ամբողջովին մի կրօնի է պատկանում, ընտրում են բոլոր չորս խորհրդականներին այդ կրօնին պատկանողներից: Բոլոր անդամները ընտրւում են ծերերի ժողովներից, որոնք այդ պատճառով հաւաքւում են գաւառական քաղաքներում: Պատգամաւորներն ընտրւում են երկու տարով: Ընդհանուր ժողովը գումարւում է ամեն տարի ընդհանուր նահանգապետութեան կենտրոնում. նրա նիստերը հրապարակային են, տևում են 40 օր և նախագահում է ընդհանուր նահանգապետը: Այդ ժողովի իրաւասութեան են ենթարկւում կղզու ներքին տնտեսական և վարչական բարեկարգութիւնները, հրահանգներ և ցուցմունքներ, որոնք վերաբերւում են երկրագործութեան հաղորդակցութիւններին մաքսային և հարկային սիստեմներին, առևտրին և այլն: Իւրաքանչիւր որոշումն, որ կղզու ընդհանուր շահերն է պահանջում կամ շօշափում, պիտի հաստատուին կենտրոնական կառավարութեան կողմից: Նոյն այս ժողովին էր յանձնւում նոյնպէս մշակել քաղաքացիական և քրէական օրէնսդրութիւն, որ վերջնականապէս պիտի հաստատուէր Սուլթանի կողմից: Այնուհետև ամեն մի փոփոխութիւն այդ կանոնադրութիւնների մէջ, որ մտցւում էր Ընդհանուր Խորհրդի կամ ժողովի վճիռներում, պիտի նոյնպէս վաւերացուէր Սուլթանի հրամանով:

Կղզին կազմակերպւում էր սեփական ոստիկանութիւնը, ժանդարմերիա, որի հրամանատարը նշանակւում էր Սուլթանի կողմից: Պետական զօրքերը միանգամայն անկախ էին տեղական իշխանութիւններից և հպատակւում էին իրանց հրամանա-

տարներին¹²⁶:

8. Արեւելեան Րումելի: Ինչպէս տեսանք, Բերլինի Վեհաժողովն էր, որ Բալկանեան լեռնաշղթայի հարաւային կողմում եղած երկրներից կազմեց այս անունը կրող մի նահանգ, որ, ինչպէս ասուած է Բերլինի դաշնագրի մէջ, «Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանի քաղաքական և զինուորական ուղղակի իշխանութեան տակ դրուած մի նահանգ է վարչական ինքնօրինութեան (autonomie administrative) պայմանով»: Նոյն դաշնադրութիւնը պարտաւորեցնում էր որ այս նահանգը կառավարուի մի ընդհանուր նահանգապետի ձեռքով, որ նշանակուում էր Սուլթանի կողմից և պիտի լինէր քրիստոնէայ: Մի խառն միջազգային յանձնաժողով պիտի խմբագրէր այդ նահանգի համար վարչական կանոնադրութիւն: Անմիջապէս Վեհաժողովից յետոյ նշանակուեց այդ յանձնաժողովը, որ և խմբագրեց մի շատ մանրամասն «Կազմական Կանոնագիր», որի հայերէն թարգմանութիւնն էլ ունինք մենք, տպուած Կ. Պօլսում:

«Կազմական Կանոնագիրը», հաւատարիմ մնալով Բերլինի Վեհաժողովի ցուցմունքներին, սահմանել է այնպիսի կարգեր, որոնք գրեթէ ամեն քայլում պիտի ցուցադրեն թէ Բոլգարիայից կտրած սոյն երկիրը Թիրքիայի անբաժան մասն է կազմում: Բոլոր վարչական կարևոր պաշտօնեաներին ընդհանուր նահանգապետը նշանակում էր Սուլթանի հաւանութեամբ, ասել է թէ այդ պաշտօնեաները պիտի հաստատուէին Սուլթանի հրամանով, այլապէս նրանք չէին կարող պաշտօնի կանչուել: Բոլոր դատաստանական վճիռները կայանում էին Սուլթանի անունով. նահանգը պիտի իր պատգամաւորներն ուղարկէր օսմանեան պարլամենտը և այլն: Բայց միևնոյն ժամանակ այդ ինքնօրէն նահանգն ունէր իր ընդհանուր ժողովը բաւական ընդարձակ օրէնսդրական իրաւունքներով, իր սեփական ոստիկանութիւնը և իր տեղական զօրքը (միլիցիա), որի հրամանատարներին և օֆիցերներին նշանակում էր Սուլթանը:

Նահանգի մէջ պաշտօնական լեզու էին ճանաչում թուրքերէնը, յունարէնը և բուլգարերէնը: Ազգաբնակչութիւնը վայելում էր քաղաքացիական ազատութիւններ: Նահանգի վարչութիւնը բաղկացած էր հետևեալ պաշտօնէութիւններից. 1) Ընդհանուր քարտուղար, տնօրէն ներքին գործոց, 2) Տնօրէն դատական գործոց, 3) Տնօրէն

¹²⁶ Schopoff, p. p. 559-637.

ելևմտից, 4) Տնօրէն երկրագործութեան, վաճառականութեան և հասարակային շինութեանց, 5) Տնօրէն հասարակային կրթութեան, 6) Հրամանատար տեղական զինուորութեան և ոստիկանութեան: Այս տնօրէններն էլ կազմում են ընդհանուր նահանգապետի խորհուրդը:

Ընդհանուր ժողովը բաղկացած էր երեք տեսակ անդամներից. 1) Իրաւամբ անդամներ, 2) Ժողովրդից ընտրուած անդամներ և 3) Ընդհանուր նահանգապետից անուանուած անդամներ: Իրաւամբ անդամներն են «1) Միւֆթին, հինգ քրիստոնեայ հասարակութեանց հոգևոր գլուխներն և նահանգին մայրաքաղաքը բնակող խախամապետը, 2) Դատական գերագոյն ատենից նախագահը, 3) Վարչական դատերու ատենին նախագահը, 4) Ելևմտից գլխաւոր քննիչ համարակալը»: Ժողովրդի կողմից ուղղակի և գաղտնի քուէով ընտրուում էին, երկու տարի ժամանակով, 36 պատգամաւոր, որոնց կէսը նորոգում էր ամեն տարի: Իսկ ընդհանուր նահանգապետն իր կողմից կարող է նշանակել տասն անդամ: Ընդհանուր ժողովը նստաշրջան ունի ամեն տարի, որի տևողութիւնը որոշուում է երկու ամիս:

Ընդհանուր ժողովը բաց է անում և փակում է ընդհանուր նահանգապետը: Ժողովը «կրնայ ուղերձի միջոցաւ ընդհանուր կառավարչին յանձնարարել այն ամեն խնդրոց քննութիւնն, որոց վրայ օրինաց ծրագրի մը կամ հանրօգուտ առաջարկութեան մը պատրաստութիւն ու ներկայացումն յարմար դատէ»: Ընդհանուր ժողովն ընտրում է մի մնայուն Յանձնախումբ, բաղկացած 10 անդամից, որ Ընդհանուր ժողովի կողմից «իրեն յղուած գործերն իւր ձեռնհասութեան սահմանին մէջ կը կարգադրէ և օրինօք իրեն յանձնուած ամեն խնդրոյ վրայ կը խորհի: Ընդհանուր կառավարչին իրեն յանձնուած կամ նահանգին շահուն համար իւր ուշադրութիւնը հրաւիրել պարտք համարած ամեն խնդրոյ վրայ իւր կարծիքը կուտայ»: Նոյն այս մարմինն իրաւունք ունէր ամեն տեսակ բացատրութիւններ պահանջել նահանգում գործող պաշտօնեաներից, նոյնպէս պահանջել ընդհանուր նահանգապետից, որ իր ցոյց տուած պաշտօնեաները դատի ենթարկուեն:

Կազմական Կանոնագիրը ամենամանրամասն հրահանգներ էր տալիս նահանգի զինուորական կազմակերպութեան մասին:

երկու տեսակ է այդ զինուորությունը. 1) Տեղային զինուորություն (միլիցիա) և 2) Ոստիկան զինուորություն (ժանդարմերիա): Տեղային զինուորությունը երկրի պաշտպանողական ոյժն է, որ իրագործում է ընդհանուր զինուորագրությամբ: Այդ զորքը ստորադրում էր ընդհանուր նահանգապետին իբրև Սուլթանի փոխանորդին: Հարկատու դեպքերում նա պիտի աջակցէ օսմանեան զորքերին պատերազմական գործողությունների մէջ, բայց միայն նահանգի սահմաններում: Խաղաղ ժամանակ տեղային զինուորությունը պիտի մնար իր տեղում, զինուորները ծառայում էին իրանց երկրում, մնալով տանը: Իրաքանչիւր տղամարդ՝ 18 տարեկանից մինչև 50 տարեկան, պարտաւոր էր պատերազմ գնալ՝ հայրենիքը պաշտպանելու: Եւ միայն մարմնական արատներն էին կարող ազատել մէկին այդ պարտականութիւնից:

Ոստիկան զինուորութիւնն էլ իր առանձին կազմակերպութիւնն ունէր. նա պիտի պահպանէր երկրի ներքին խաղաղութիւնը:

Արևելեան Րումելիի կազմակերպութիւնը շատ մանրամասնօրէն կանոնադրուած էր, շօշափում էր ինքնավար նահանգի վարչական և իրաւական բոլոր յարաբերութիւնները: Նա բաղկացած էր 495 յօդուածներից և բազմաթիւ յաւելումներից և առհասարակ կարող է լաւագոյնը համարուել այդ օրինակ օրէնսդրութիւնների մէջ¹²⁷: Սակայն նա երկար կեանք չունեցաւ: Խմբագրուելով և հաստատուելով երոպական պետութիւնների կողմից նշանակուած կօմիսէրների կողմից 1879 թ. ապրիլի 14-ին, Կազմական Կանոնագիրը գործադրուեց մինչև 1884 թուականը, երբ Արևելեան Րումելին յեղափոխութեան միջոցով միացաւ Բուլգարիային և դարձաւ նրա անբաժան մասը:

Սրանք են այն աստոնոմիաները, որոնք գործադրուեցին Թիւրքիայում: Բայց մենք ունինք դարձեալ երկու հատ այդպիսի կանոնագրեր, որոնք թէև գործադրութեան մէջ չեն մտել, բայց ներկայացնում են որպէս շատ հետաքրքրական նիւթ, քանի որ մշակուած են շատ ձեռնհաս և բարձր հեղինակութիւն վայելող դիւանագիտական մարմնի ձեռքով: Ինչպէս յայտնի է, 1876-ի վերջերում Կ. Պօլսում գումարուեց մեծ պետութիւնների ներ-

¹²⁷ Թարգմանուած է հայերէն և տպուած Կ. Պօլսի «Կազմական Կանոնագիր Արևելեան Րումելիի» անունով:

կայացուցիչների և դեսպանների խորհուրդ (կոնֆերենցիա) Բալկանեան թերակղզու ճգնաժամը շտկելու և ապստամբուած նահանգները խաղաղացնելու համար: Հարցը վերաբերում էր գլխատրապէս Բօսնիային և Հերցեգովինային և Բօլգարիային: Այդ քրիստոնեայ նահանգների համար եւրոպական դիպլոմատիան լաւագոյն վիճակ համարեց ինքնավար նահանգների դրութիւնը, ուստի և մշակեց նրանց համար կազմական կանոնագրեր: Այդ վաւերագրերը մենք պէտք է այստեղ դարձեալ լիջատակենք, քանի որ դրանք էլ նիւթեր են, որոնք ցոյց են տալիս թէ ինչ հայեացքներ ունէր դիւանագիտութիւնը Թիւրքիայի այն նահանգների վերաբերմամբ, որոնց հարկաւոր էր համարում ազատել թիւրքական լուծից և առհասարակ ինչ սկզբունքների վրայ էր հիմնում ատոնոմիաները: Հետաքրքրական պիտի լինեն նրանք մանաւանդ մեզ համար, որովհետև Ներսէս Պատրիարքի ծրագիրը բաւական մօտ է կանգնած նրանց և, ինչպէս երևում է, շատ է ներշնչումներ ընդունել նրանից:

9. Բոլգարիա: Ամբողջ Բոլգարիայից կազմում էր երկու նահանգ Արևելեան (Տիրնօվ մայրաքաղաքով) և Արևմտեան (Սօֆիա մայրաքաղաքով): Նահանգները կառավարում են ընդհանուր նահանգապետները (վալի), որոնք պիտի լինեն քրիստոնեայ, թիւրքահպատակ կամ օտարահպատակ և որոնք նշանակում են Բ. Դրան կողմից, պետութիւնների համաձայնութեամբ, հինգ տարի ժամանակով:

Վարչական կազմակերպութեան մէջ հիմք ընդունում է գիւղախումբը կամ գիւղական համայնքը, բաղկացած 5-10 հազար բնակիչներից: Այդ գիւղախմբերը կառավարում են ընտրուած մուդիրները (մէր): Մի քանի գիւղախմբեր միացում են և կազմում սանճակներ և սրանք էլ կառավարում են գաւառապետների ձեռքով:

Իւրաքանչիւր նահանգ ունի իր նահանգային ընդհանուր ժողովը, որի անդամներն ընտրուում են ազգաբնակչութեան կողմից առանց խտրութեան կրօնի և ազգութեան, չորս տարի ժամանակով: 30-40 հազար բնակիչների վրայ գալիս է մի պատգամաւոր: Ընդհանուր ժողովը գումարում է տարին մի անգամ և մշակում է բիւջէ, կանոններ նահանգի վարչական, տնտեսական և ելևմտական կեանքին վերաբերեալ:

Մաքսը, պոստը, հեռագիրը, ծխախոտի հարկը կախուած չեն նահանգային վարչութիւնից, որոնք այս դէպքերում պիտի հետևեն պետութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնքներին: Մնացած բոլոր հարկերի և եկամուտների 30% մտցում է պետական գանձարանը, իսկ մնացորդը կազմում է նահանգի սեփականութիւնը և ծախսում է նրա պէտքերի համար:

Իրաքանչիւր նահանգի համար պիտի խմբագրուի դատաստանական օրէնսդրութիւն: Դատաստանական գործը կազմակերպում է մի վերահսկիչ մարմնի ձեռքով: Գաւառապետները և գիւղական համայնքների կառավարիչները գործում են այն խորհուրդների հետ միասին, որոնք ընտրում են ազգաբնակչութեան կողմից:

Նահանգների մէջ կարգ պահպանելու համար, կազմակերպում են ոստիկանութիւն (ժանդարմերիա) և տեղական զինուորութիւն (միլիցիա): Երկու կազմակերպութիւններն էլ գտնւում են ընդհանուր նահանգապետի հրամանատարութեան տակ: Զինուոր վերցւում է իրաքանչիւր հարիւր բնակչից մի հոգի, առանց խտրութեան կրօնի և ազգութեան: Պետական զօրքերը կարող են մնալ միայն բերդերի և գլխաւոր քաղաքների մէջ, բայց նրանք գործ ածում են միմիայն արտաքին պաշտպանութեան համար, մէկ էլ այն դէպքերում, երբ ընդհանուր նահանգապետը խնդրում է նրանց աջակցութիւնը ներքին կարգի պահպանութեան համար:

Հաստատում է կրօնական պաշտամունքների կատարեալ ազատութիւն:

Երկրի ազգաբնակչութեան մեծամասնութեան լեզուն պիտի թիրք լեզուի հաւասար իրաւունքներ ունենայ դատարաններում և վարչական տեղերում:

10. Բոսնիա եւ Հերցեգովինա: Այս երկու շրջանները միացւում էին, կազմում մի նահանգ, որի համար առաջարկւում էին կազմական միւնոյն հիմունքները, ինչ մշակուած էին Բոլգարիայի համար: Տարբերութիւնը միայն այն էր, որ նահանգային Ընդհանուր Ժողովի մէջ սահմանւում էին որոշ թուով տեղեր բոլոր կրօնների համար - $\frac{2}{5}$ պիտի լինեն մահմետականներ, $\frac{2}{5}$ օրթոդոքսներ և $\frac{1}{5}$ կաթոլիկներ¹²⁸:

¹²⁸ Schopoff, p.p. 234-244.

Այս տասն դէպքերը միահամուռ վկայում են, որ եւրոպական դիւանագիտութիւնը հարիւր տարուայ ընթացքում գործադրել է Թիւրքիայի վերաբերմամբ ինքնավարութիւններ մտցնելու սիստեմը՝ իբրև լաւագոյնը և միակ հնարաւորը Արևելեան Հարցի զանազան մասնիկները լուծելու համար: Մենք տեսանք որ այդ ինքնավարութիւնները թէև տեսակ տեսակ են իրանց բովանդակութեամբ և ձևերով, բայց ամենքն էլ յանգում են խիստ որոշակի արտայայտուած սկզբունքի-ինքնավարութեան, որքան կարելի է լիակատար ձևով: Եւ ուր այս լիակատարութիւնը մտցնել չէ յաջողուել, այնտեղ եւրոպական դիւանագիտութեան համար կատարեալ Գորդեան հանգոյց է դարձել ռեֆորմների գործը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեոյի «Հայոց հարցի վավերագրերը» աշխատությունը ...3	
ԱԶԴ.....	23
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.....	24

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Գլուխ առաջին 1829-1878.....	47
-----------------------------	----

Գլուխ երկրորդ 1878.....	51
-------------------------	----

Վաւերագրեր

№ 1. Քաղուածքներ Գէորգ վ. Ռուսճուգելանի յիշատակարանից.....	52
№ 2. Աղերսագիր թիրքահայ ինն եպիսկոպոսների յանուն Ալէքսանդր Բ. կայսրի	57
№ 3. Սան-Ստեֆանօի դաշնագրի 16 յօդուածը.....	59
№ 4. Ալէքսանդր II կայսրին ներկայացրած ծրագիրը	60
№ 5. Ծրագիր կազմական կանոնագրի Օսմանեան Հայաստանի.....	61
№ 6. Յիշատակագիր Հայկական խնդրոյն վրայ	66
№ 7. Վիճակագիր Օսմանեան Հայաստանի.....	71
№ 8. Վիճակագրական ծանօթութիւն Օսմանեան Հայաստանի բազմամարդութեան վրայ.....	75
№ 9. Քանի մը ակնարկութիւնք Հայաստանի վարչութեան մէջ մտցուելիք բարենորոգմանց վրայ.....	79
№ 10. Պաշտպանողական դաշնակցութիւն Անգլիայի և Թիւրքիայի մէջ	86
№ 11. Քաղուածներ Բերլինի Վեհաժողովի արձանագրութիւններից	88
№ 12. Բերլինի Վեհաժողովի 61 յօդուածը.....	91
№ 13. Ատենախօսութիւն Տ. Տ. Ներսիսի Ս. Արքեպիսկոպոսի Պատրիարքի Կոստանդուպօլսոյ յԱզգային ժողովի Հայոց ի 21 յուլիսի 1878	92

Գլուխ երրորդ 1880-1895..... 105

Վաւերագրեր

- № 14. Ծրագիր բարենորոգմանց Կարին նահանգի, ուղղելալ առ բարձր պաշտօնէութիւնն բարենորոգմանց Կարին և Վան նահանգաց 106
- № 15. Ապէտին փաշայի 1880 յուլիս 5 թուականաւ ծանուցագիրն 123
- № 16. Եւրոպական վեց մեծ տէրութեանց դեսպանաց՝ Բ. Դրան մատուցած հաւաքական ծանուցագիրը..... 128
- № 17. Բ. Դրան 1880 հոկտեմբեր 3 թուականաւ ծանուցագիրն .. 137

Գլուխ չորրորդ 1895-1912..... 139

Վաւերագրեր.

- № 18. Ֆրանսիայի Հանրապետութեան դեսպան պ. Բ. Կամբօն առ պ. Հանօթօ, նախարար արտաքին գործոց..... 141
- № 19. Յիշատակագիր Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների Կ. Պօլսում՝ Հայաստանի ղեֆօրմների մասին..... 144
- № 20. Ծրագիր վարչական ղեֆօրմների..... 152
- № 21. Բ. Դրան պատասխանը Ֆրանսայի, Ռուսիայի, Անգլիայի դեսպաններու կողմէ մատուցուած հայկական բարենորոգումերու ծրագրին..... 167
- № 22. Պատրիարք Իզմիրլեան, անգլիական դեսպան Սըր Ֆիլիպ Քըրրիին 168
- № 23. Դիտողութիւններ 172
- № 24. Ֆրանսայի Հանրապետութեան դեսպան պ. Բ. Գամպօն առ պ. Հանօթօ՝ արտաքին գործերու նախարար..... 189
- № 25. Եպարքոսական նամակ 192
- № 26. Յուցակ բարենորոգման կէտեր պարունակող և կցեալ եպարքոսական նամակին 195
- № 27. Բանաւոր ծանուցագիր 204

Գլուխ հինգերորդ 1912-1914..... 208

Վաւերագրեր

- № 28. Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսը արտաքին գործերի մինիստր Սազօնովին..... 209

№ 29. Հայկական ռեֆորմների ծրագիր	212
№ 30. Նախագիծ ծրագիր Անատոլիայի մէջ մտցուելի ռեֆորմների	216
№ 31. Բնագիր համաձայնութեան.....	228
№ 32. Հրահանգ Ընդհանուր Տեսուչների իշխանութեան և ձեռնհասութեան մասին	233

ՅԱՎԵԼՈՒԱԾ

Ուրիշ ազգութիւնների օրինակները	245
---	------------

I ԱՒՏՈՆՈՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Եգիպոս	246
2. Մոլդաւիա եւ Վալաքիա	247
3. Սերբիա.....	250
4. Սամոս կղզի	255
5. Բուլգարիա	256

II ԱՒՏՈՆՈՄ ՆԱՀԱՆԳՆԵՐ

6. Լիբանան	258
7. Կրետէ	259
8. Արեւելեան Րումելի.....	263
9. Բուլգարիա	266
10. Բոսնիա եւ Հերցեգովինա	267

Լ Ե Ո

Հայկական հարցի վավերագրերը

ЛЕО

Документы Армянского вопроса

Համակարգչային շարվածքն ու էջադրումը՝ Կ. Չալաբյանի
հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Компьютерная верстка К. Чалабян
Изд. корректор Л. Оганнисян

Չափսը՝ 60x841/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպ. մամուլ 17: Տպաքանաքը՝ 300:

Формат 60x841/16. Бумага офсетная.
Тип. печ 17. Тираж 300.

ԵՊՀ հրատարակչություն
Երևան, Ալեք Մանուկյան 1

Издательство ЕГУ

Ереван, Ал. Манукяна 1

